

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

D. Pragndjuk

Tiplykh Inyul'evna

h. I

pppku - 1926

891.99

P-81



891.542-3

Բ- 81

ԾԵՐՈՒՆ ՑՈՐԳՈՄՅԱՆ

prof. Կիրառակ Մինայան

ՔՊՂՈՎՎԱԾՈՒ

ՅԵՐԿԵՐԻ

ՀԱՅՈՐ ԱՐԱՐՈՒ



ԹԻՖԼԻՍ

1926

91.542-3  
81

19 NOV 2011

ԱՄ

ԵԵՐՈՒՆ ԹՈՐԳՈՄՅԱՆ


ԺՈՂՈՎԱՆՈՒ

386428


Յ Ե Ր Կ Ե Ր Ւ

(ՊԱՏԿԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔ, ՎԵՊ)

ՀԱՅՈՐ ԸՆԴԵՐԻՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ռ Ո  
1926



## ԶԵԹ ԾԱԽՈՂ ԱԿՈ

Ամեն արշալույսին նրա բարձր, զրնգան ձայնը հնչում էր  
Սյդեստանի փողոցների մեջ.

— Ձեթ առեք, ձեթ, մեղրահոս, քաղցրահամ ձեթ...

Պառակ կիներն ու նորահարսերը հաղիվ անկողնից յելած,  
չոգել եյին թոնիրի շուրթը լավաշ թխելու կամ պղնձյա մեծ ա-  
մանի քով թևերը սոթտած լվացքն անելու, հաղիվ մութը լույ-  
սին մնաս բարով եր ասում ու աստղերը նվազում կապտալանջ  
յերկնքում, ձեթ ծախող Ակոն արդեն փողոցն եր, կոնսկին ձե-  
թով լիք կուժը, բարձր, հաղթանգամ մարդ, վորի գեմքին այնքան  
կնծիո կա, վորքան ընկուզի կճեփին և թուխ, խոշոր աչքերը այն-  
պիս անթարթ են նայում, վոր կարծեք ել ուրիշ առարկաներ  
չկան աշխարհիս յերեսին և յեթե կան, կարիք չկա նրանց նայել:

Նրա հազար անգամ կարկատած և բազում պատիկ լաթերով  
կախ ձիթագույն շալվարը, այնքան լայն ե, վոր մի քանի սրունդ  
կարող ե տեղափորել. իոկ յեթե փորձես ցայել, հավանաբար մի  
գրվանքա ձեթ ծորա պիտի միջից. Գլխի արախչին յերեսուն  
տարվա պատմություն ունի և հաստատապես վճռել ե մինչև նրա  
մահը գլխին բազմելու մեծագույն պատիվը վայելել. Յեթե կա  
Ակոյի անթրաշ արևկեզ գեմքին հետաքրքիլ բան, ատամներն են,  
վորոնք հաճախ կը բարեհաճեն ցույց տալ իրենց փայլուն ձեր-  
մակությունը:

Հապա շուն փախցնող նրա հաստ մահակը և լայնփոր կուժը,  
վոր մի փութ ձեթ բովանդակելու հավակնությունն ունի, այդ  
հողակերտ, բարձրավիզ, ձեթով պատած կուժը, վսր նրա անբա-  
ժան ընկերն ե, գուրգուրանքի առարկան, միակ իրը, վոր նրա  
կյանքին զին ու արժեք կուտար, իր սիրելի, մտերիմ կուժը:

Արդեն բացվում են դռները, վանեցի լաչակավոր կանայք  
գուրս են գալիս փողոցներից զուլաւ, զուլաւ զզզացող ջրերից  
լվացվելու կամ զիւ ձայնով կանչող շրջիկ առևտրականներից  
պտուղ ու կանաչ գնելու:

Ահա Ակոյին կանչում են, ուզում են ձեթ գնել, ով նրան չի ճանաչում, մուշթարին չի և չի հավանում նրա ձեթը: Թեև վերջին տարին մի մրցակից դուրս յեկալ, ձեթ ծախող քոս Մկոն (թաղ անիծի այն մարդը, ով փորձում է Ակոյի հացը մեջտեղից կիսել), բայց Ակոյի հաճախորդները հավատարիմ են, ուրիշ վաճառողից հազիկ թե գնեն:

Ահա տարիքոտ մի կին, Անթառամ խաթուն, մոխրագույն գլխաշորով ու ծաղկանիշ զպունով, դեմքին հազար ու մի դարուփոս, հրավիրում ե նրան:

— Ակն, ձեթդ քաղցրի. այս անդամ ել անցյալ որվա պես դառնահամ ու կծու չի:

— Չե, Անթառամ Խաթուն, արեիդ մեռնեմ. ձեթս այնպես քաղցրի, ինչպես Արտամետի կարմիր խնձորը, Ակոն դառնահամ ձեթ կը ծախի քեզ, մի համը նայիր խաթուն, շարբաթ...

Շարունակելով գովել իր ապրանքը, Ակոն մտնում ե հաճախորդի տուն: Բակում աշխատող հարսներն ու աղջիկները շրջապատում են նրան զվարթ դեմքերով, բոլորն ել ծանոթ են Ակոյին:

— Ակն, եսոր ձենդ ավելի անուշ կը հնչեր, խեր լինի, գործերդ անպատճառ աջող են:

— Եեր աստծուց, շառ մարդուց, խաթուն. մի կտոր հացի կարոտ չմնանք թաղ, մնացածը հարկավոր չի. եսորվա աշխատածը եսոր կուտեմ, վաղվան վաղը, ամեն մարդ իր քրտինքին հալալ: Թանի՞ փունտ կուզես Անթառամ խաթուն, այնպիսի ապրանք տամ քեզ, վոր կշտանաս ու համը բերանդ մնա:

Ակոն խոշոր կուժը իջեցնում ե ուսից, գոտուց կախված հողաշեն չափանով չափում ե ձեթը, վոր գեղնավուն ու լերթ ծոր ե տալիս ամանի մեջ:

Բայց աղջիկներն ու հարսները հանգիստ չեն թողնում նրան: Նրանք Ակոյի մոտ բաց են, համարձակ ու այնպես են վարդում ինչպես իրենց հարազատի հետ: Շատ անդամ տղամարդի տեղ չեն հաշվում նրան ու իրենց անգործությունն ու ծանծրույթը փարատում են քչփչալով ու կատակելով: Իսկ Ակոն մանկական իր միամտությամբ այնպես ե ժապում ու փափկում, վոր Վանի նորահարսներն ու հասած աղջիկները չեն, վոր պիտի կարմիրն ամոթխած, այլ Ակոն, վորի աչքերը խոնարհվում են, այտերը ալ կարմիր ներկում ամեն անզամ, յերբ հարսն ու աղջիկը չարաձի մի կատակ նվիրե նրան:

— Վոտքդ խեր լինի Ակոր ախպեր. անցյալ որը շառ բերիր

հետդ. ագռավը մեր տան կտուրին յերեք անգամ կուաց. մեր պզտիկ լաճի մարմինը դող ընկավ, յոթն անգամ սառը ջրով շփեցինք, հաղիկ դողն անցավ: Այսոր ագռավը չկուաց և արել փայլում ե վոսկու պես:

— Զանըմ, հըլբաթ խեր ե. Ակոն շառ բերող մարդ չի:

— Յերբ պիտի պսակես, Ակն. հարսնիքիդ քեֆ անել կուզենը. պար կը բռնենք ու կարմիր լաչակով աղջիկ կը գովենք. յերբ բարով-խերով պսակվես պիտի -հարցնում ե աղջիկներից մին:

— Ե՛, խաթուն, մեկ եղ եր պակաս: Ակոն իր չոր գլուխը պահեց, կողակից ել բերի: Ակոյին ով կը հագնի:

— Վահ, ինչեր ես ասում Ակն. թաղի ջահել աղջիկները խելքամաղ են քեզ համար, քեզ տեսնելիս բերաններից քաղցր ջուր կերթա. քեզնից աղեկ գլխավոր. բոլորի աչքը դուն ես, Ակոն:

— Ե՛, աղջիկներն ինչի՞ս պիտի հավանեն վոր: Ակոյի արել իր համար չի ծաղկում, ուր մնաց ուրիշի. գլուխս գնելու տեղ չունեմ, կնիկ ել բերեմ, չե, խաթուն, Ակոն այդքան բախտ չունի:

— Դե, լավ Ակո, այդքան մի տրորվիր. մննք գիտենք թե լեղիկի տակին ինչ անուշ խնձոր կա. կուզես, վոր գաղտնիքներդ տանը, համ... բացականչեց մի թխաներ, փափկամեջք աղջիկ:

— Թողեք. յես ասեմ, ջանըմ—միջամտեց մի ուրիշ աղջիկ—ապա կուսունը, որական քանի անգամ կուսունի դուռը կը չափիս. յերբ նրան տեսնես, ինչո՞ւ մարմինդ դող կնկնի, վոտներդ ծառս կենեն ու սիրտդ կը խա վանա ծովի պես:

— Երնեկ քեզի, Ակոր ախպեր, վոր կուսունի պես յար ունես. կանաչ, կարմիր յար, որական քառսուն անգամ աղոթում ե քեզ համար:

— Զանըմ, ինչեր եք ասում. Ակոր ախպորս ինչս ե պակաս վոր, Այգեստանի վոր աղջիկը մերժեն պիտի նրան, միայն յես անբախտ եմ, վոր Ակոր ախպերը յերեսիս անգամ չի ուզում նայել-հայտարարեց մի չարաձի աղջիկ և քրքջաց լիաթոք:

Քրքջացին նաև մյուս կանայք ու բակը լցվեց զվարթ ձայներով:

Ակոյի ամոթնար դեմքը շառագունել ե, աչքերը լայնապիշ խոնարհել. ձեռներն ու վոտները դողում են մեղմիվ. սիրում խրում ե ինչպես ալիքը ծովի ու տաք քրտինքը պատել մարմինն ամբողջ: Բոլորն ել իր գաղտնիքը գիտեն արդյոք: Ա՛խ, այդ

չարլեզու, ծակաչը կանայք, ինչպես շուտ կիմանահ ամեն բան-արկի տակ ձյունը կարող ե մնալ, բայց իր ցավը ծածուկ չի մնում: Ա՛յս, այդ թուխ ու խաժ աչքեր, կաս կարմիր պատած գողտրիկ թշեր, ծովի պես ալեծուփ կուրծքեր... Ակոն այնպես ե շվարել, վոր չգիտե վորտեղ կենարուացնե հայացը, վոր աղջիկ-ների համառ հայացըներին չհանդիպի:

— Տեսաք, թաղահարսի նման վոնց կարմիր հագան Ակոյի թշերը, ասածներս ուղիղ չեյթն—բացականչեց նույն աղջիկը ուրախ հնչյունով:

— Յերսեկ քեզի լուսուն, լեզուկ կծես. Ակոյի պես ապան յար ունիս թիկունքիդ:

— Լուսունին հրեշտակի պես պիտի պահի Ակոն, մարդրտի, մըջանի մեջ շաղ պիտի տա. ամենաընտիր կտորից շրջազգեստ կարե պիտի. ձեռքին վոսկեշար ապարանջան մտցնե. այ, դու բարեբախտ, յերջանիկ լուսուն:

Տեսնելով աղջիկների անվերջ կատակները և Ակոյի անելանելի վիճակը, Անթառամ խաթունն իրրե տարեց կին միջամտեց:

— Ինչ ուզում են, թող ասեն, Ակոր ախալեր. տասը խոսքից մեկին ականջ դիր. լսածներդ ել քամուն տուր թող տանի. սըրտիդ ցանկությունը կատարե, մուրազիդ կը հասնես: Լուսունն հարմար կտոր ե քեզ. առ ու մի ոջախ ել դու շինե...

Յեկ Ակոն շփոթ. դրամը տեղավորեց մեջքի քսակում. կուժը կոնակն, քայլերն ուղղեց գեպի դուռը ու հոգին խոռվ՝ փողոցը յելավ:

Բոլորն ել գիտեն արդյոք. իր սերը թաղի կանանց բերնի ծամոն ե գարձել: Ժամանակը չե արդյոք լուսունին ասել, թե քավ ե այսպես դու մենակ, յես մենակ. յեկ ու ինչպես Անթառամ խաթունն ասաց, մի ոջախ ել մենք սարքենք. լավ չե մի...

— Զեթ առեք, ձեթ, մեղրածոր, քաղցրտհամ ձեթ:

## II

Անանային խոնավ որ. Այգեստանի ուրիներն ու բարդեք տերեաթափ կը նայեն սպիոր կանանց պես: Ամայի փողոցի միջից քայլում ե Ակոն մտածկոտ ու կուրծքը զարնում ե ուժգին:

«Պսակվիր ու մի ոջախ ել դու սարքիր. ասաց Անթառամ խաթուն: Ուրիշներն ել քանի, քանի անգամ այդ խորհուրդն եյին տվիլ իրեն: Արդյոք ծաղրում եյին, ինչպես շատ անգամ չարաճի աղջիկներն եյին անում և Ակոն այդ ինդուքը բնական

համարելով լուսմ եր. նրանց ծաղլը շարժելու համար ստեղծված չեր միթե ինքը: Նույնիսկ հաճելի յեր այն միտքը, վոր նա հաճախորդներին զվարճանք կարող ե պատճառել: հիանալի բան: Արդյոք Անթառամ խաթունն ել չեր ծաղրում. մի սովորական կատակ. վաչ, Անթառամ խաթունն իրավունք ունի. պետք ե մի ոջախ ել յես սարքեմ. տղամարդ չեմ, խեղճ չեմ: Ամեն անդամ այսպիս մենակ, առանց մեջքը տաքացնողի, մտերիմ, հոգեկից ընկերի, անբույն թոչունի պես: Գիշերները ձիթհանքի քարերին շան նման թափալ տալով ուր պիտի հասնեմ:

Յեկ Ակոն լուրջ կերպով սկսեց մտածել իր մասին: Ո՞վ եր ինքը: Մանկությունը կը վերհիշեր շատ աղոտ. հայր, մայրը չեր ձանաչում: Աչքը բացել եր չորանության մեջ ու քսան տարի զյուղերում տավար եր քշել այս ու այն կողմը: Վերջին հինգ տարին քոչել եր քաղաքը իր մահակի և անբաժան գտակի հետ. ձեթ եր ծախում ու արեի տակ պահպանում իսան աղամորդու իր չոր գլուխը: Քաւասուն ամառ հազիվ եր համրում Ակոն: Ահա ամբողջ իր համեստ լցանքը: Սակայն Ակոն ել մարդ ե չե. բեխով, մոռուքով մարդ. ուրիշներից ինչով պակաս եր մնում վոր, կաղ ե, քիթը ծնուռ. վոչ, առողջ ու ժիր. ինչ տղամարդ, վոր կին չկարողանա պահել և վերջապես ինչու ուրիշներն ընտանիք ունեն, տուն ու տեղ, տաք անկյուն, իսկ ինքը այդպիս մենակ ու տխուր:

Ու խոր հառաչեց Ակոն...

Այգեստանի կանայքն ու աղջիկները խոռվում եյին իր հոգին. նրանց գեղեցիկ գեմքերը, զվարթ ձիչն ու ծիծաղը, գեղանի ու չինար հասակները, բազմածե հագուստների շրջունները. չե վար իր գործը նրանց հետ եր միշտ. Զեթ գնողները գլխավորապես կանայքն եյին և այդ շարունակական շփումը կնկա պես փափկել եր նրա սիրտը: Նախկին չորան մարդը, սարերի ու ձորերի այն վայրի թուչունը կին տեսնելիս այնպիս եր այլայլում, հայացը ըստնարհում ու հաճախ խոսելու ժամանակ լեզվակապ լինում, ինչպես դասը չսորված դպրոցական աշակերտը:

Այդ յերեսույթն ավելի ցայտուն կարտահայտվեր ամեն անդամ, յերբ նա հանգիպեր լուսունին: Մի փոքրիկ կին, անգլիական վոր ու այրի. ամուսինը վաղուց եր ձանապարհվել մյուս աշխարհ: Դրացիների լվացքն ու տան գործերն անելով եր պահում իր մենակը գլուխը. թեաթափ, խոնարհ կուշ:

Ակոն ել չի կանչում. մեղմիվ առաջ ե գնում փողոցով: Ահա մի փոքրիկ բակ և անկյունում մի մոռցված տնակ, լուսունի տնակը:

Դուռը փակ ե: Լուսունը տանն ե արդյոք: Ահա առաջին միտքը: Ակոն յերկար կանգնեց ջրի ափին բարձրացող ուռենու հաստ բունին թիկն, աչքերն հառած լուսունի դուռը: Զկանչել բարձր ու զիլ, ձեթ, ձեթ, վոր լուսունն իմանա և դուրս գա իրեն տես: Բայց ձայնը խեղդել են կոկորդում, կարծես հազարավոր աչքեր կան այս ու այն անկյունից նայող, թաղի ծուռ-շիտակ, չտես կանանց աչքերը: Նրանց ծիծաղները զնգուն և ձայները զվարթ աղմըկում են ականջում: Ակոն ամաչում ե: Կարծես նորահարս լինի. Ակոյի սիրալ այնպես ե խփում, ինչպես դարբին Մինասի մուրճը: «Չամել այսոր իսկ, թե արդեն ժամանակն ե, յեկ տուն, տեղ սարքենք... Բայց ինչպես ասել, յեթե մերժեց... կարող ե չմերժի, վորովհետև բոլոր կանանցից միայն լուսունն ե, վոր տարբեր աչքով ե նայում, զգում, ըմբռնում ե Ակոյին, ցավակցում, հոգում նրան: Քանի, քանի անգամ իր շորերը լվացել, կարկատել ե, փոխարենը Ակոն ձեթ ե բախշել նրան:

Ահա գուռը բացվեց ու մոխրագույն, հնամաշ զպունով մի կարճոյ կին նայեց նրան: Ակոն դողում ե, տաք քրտինքը թըրջում ե ակոսավոր ճակատը. լեզուն հազիվ ե շարժվում.

— Ձեթ պետք չե քեզ, լուսուն հորքուր, այսորվա ձեթս շաբարի համ ունի:

— Ձեթս բավ ե, շնորհակալ եմ, Ակոր ախաղեր—պատասխանեց լուսուն ու ժպտաց մեղմեվ: Նրա ծաղկահար գեմքը նախորդ որերի կորսված գեղեցկության հետքերն եր մատնում:

— Յեկ, Ակոր ախաղեր, ինչ ես կանգնել, ցուրտ ե, յեկ ու շախս տաքացիր. թոնիրիս կրակը թեժ ե այսոր:

— Ճիշտ վոր լուսուն հորքուր, մարմինս սառեց. այսոր ասիծած ցուրտալ շատ զորեց:

Ասաց Ակոն սրտապինդ ու աշխուժով, թեն ցուրտը այնքան ել չեր զորում, իսկ Ակոյի մարմինը թըջվել եր քրտինքի ջերմ կաթիլներով: Մտավ լուսունի խրճիթը: Պղտիկ, կիսալույս, հողածածկ սենյակ, մի անկյունում թոնիրն ե կարմիր վերմակով ծածկված, մյուսում աման-չաման, թաս ու թոփսին անխնամ դարսված: Ակոն կուժն ներքեւ առավ, հենեց պատին ու ձեռներն փչելով—վորպես թե սառել են,—մոտեցավ, նստեց ու հաղթ վոտները յերկարեց թոնիրն ի վար:

— Ոխաշ, ինչ լավ յեղավ. տունդ որհնվի թող, պայծառ գառնա լուսուն, տաքացա, թե չե սառույց պիտի դառնայի:

լուսություն:

— Այսոր առետուրդ ինչպես եր, Ակոր ախաղեր. քանի՞ ֆունտ ձեթ ծախեցիր:

— Փառոք մնաս, լավ եր. տասն ֆունտի չափ ծախեցի, մի քանի կոպեկ մնաց, ու հացի գին, ամեն որվա յեկամուտը մեկ չի լինում:

— Ի հարկե, Ակոր ախաղեր. մի որ շատ, ուրիշ որ քիչ. ինչ վոր ստանանք, այդ ե մեր բաժինը. վոչ շատին ուրախանալ վոչ քչին տխրել. չաշխատող մարդն ե, վոր գլուխը բարին կուտա, այնպես չե, ախաղերս:

— Այնպես ե, լուսուն հորքուր, այնպես. ամեն մարդ իր հալալ աշխատանքով թող ապրի. աչքը բոռանանրան, ով ուրիշի հացին աչք տնկի. քանի կոներում ուժ ունենք, աշխատենք ու մեր քրտինքը հալալ լինի. ես աշխարքում ախըր մի տեղ կունենանք գլուխը դնելու—ասաց Ակոն ուղցնելով թշերը ու քորելով մազառատ ծոծրակը: Կրկին լուսություն:

Ակոն ուղում ե խոսել քաղցր, անուշ բաներ զրուցել, բայց տնտեսնը չի իմանում ինչպես սկսի և ինչի մասին խոսի: Իսկ լուսունը թիկնել ե պատին ու գուլպան ձեռքին գործում ե արագ:

— Լուսուն հորքուր, ջանըմ, ինչ ես կանգնել ցավդ կտանեմ, յեկ նստիր, գու ել տաքացիր, թոնիրն ինձ համար միայն վառած խո չի, յեկ նստ զրուց անենք:

Ակոն թոնիրը ծածկող վերմակի ճոթը վերցրեց ու տեղ բացավ լուսունին: Վերջինս յեկավ վարանոտ ու անհամարձակ, նըստեց մի անկյուն, վոտներն յերկարեց ու առաջին նվագ նրանց վոտները թոնիրի միջ իրար դիման: Յելեքտրական սարսուռ անցավ Ակոյի ամբողջ մարմնով. աչքերին պատեց մեզ ու մըշուշ: Դեմքն ամբողջ կարմիր հագավ. վոտները հավեկ մի կողմ: Կյանքում առաջին անգամ թերեւ ունեցավ այն ախորժ զգացումը, վոր մարդս կունենա կնոջ մոտ:

«Մենք ել տուն, տեղ չունենանք, մարդամեջ չմտնենք»... մտածեց Ակոն ու հիշեց կրկին Անթառամ խաթունի խոսքերը, վորնք ցցվել եյին ուղեղում մեխի պիս: Սակայն ինչպես հայտնել լուսունին իր միտքը. ահա ծանրագույն վարկյանը, վոր հերոսաբար ապրեց Ակոն: Լուսուն հորքուրը մատների ճկուն շարժումով գուլպա յեր գործում: Վոտների անզգուշ հանդիպումից վախեցած, աշխատում եր վորքան կարելի յե տանել նրանք թոնիրի հեռավոր մասերը, իսկ կիսածածկ գեմքը այնպես եր շառագունել, ինչպես յերկինքն իրիկնապահին:

— Շորերդ բեր կարկատեմ, Ակոր ախպեր, պատառավել են, կարկատան շատ ունեմ, կը բավին—առաջինը խզեց լոռւթյունը Լուսուն հորքուրը:

Լույսի մի շող իջավ ու պայծառեց Ակոր կոշկուված գեմքը: Անհուն բերկանքից ճառագայթեցին աչքերը ու շրթունքները շնչացին մեղմիվ:

— Կը բերեմ, Լուսուն, մատներիդ մատաղ, մի լավ կարկատե, շենքնորքով մարդ գառնանք, այսպես կիսատ-պոատ ապրելը միտք չունի. պետք ե տուն, ոջախ սարքել, մարդու շարքն անցնել:

Յեվ Ակոն խիստ գոհ մնաց, վոր խելոք խոսեց. մասամբ կարողացավ միտքն արտահայտել, իսկ Լուսունը ըմբանելով նրա միտքը, նազանի մի ժպիտ խաղացրեց գեմքին ու վեր յելավ.

— Անոթի կը լինես, ախպերս, մի պատառ հաց բերեմ անուշ արա, ինչ վոր տանս գտնվեց:

— Զանց' մ, Լուսուն հորքուր, նեղություն մի քաշեք. քաղցած չենք. հաց ուտելու խոմ չեկանք,

— Ինչ նեղություն, ինչ բան. մի պատառ հաց ու մի բաժակ ողի. քեզ նման թանգարին հյուրը գա ու առանց հացիս համի, առնելու գնա. լսված բան ե:

Ակոն զմայլվեց Լուսունի խոսքերից ու սիրտը թրթոաց յերջանկությամբ արրշիու: Իր բովանդակ կյանքում նման յերջանիկ վարկանը չեր ապրել: Յերան և սա թե իրականություն և Ակոն դեռ ողին չխմած ձեռքից գնաց... Մինչ Լուսունը ճերմակ սփոռոցի վրա դարսեց լավաշ հաց ու պանիր, ժամփիկ ու սոխ, մի շիշ ել թունդ ողի: Յերջանկության շողերով պարուրված Ակոն լավաշն անուշ արաց և ողին խմեց Լուսունի կենացը:

— Թռղ տունդ շնու լինի ու պայծառ և գնացածդ տեղը կանաչի ու ծաղկի:

— Դու ել բարով գաս ու գնաս—ասում եր Լուսունը ուղղելով գլխաշորի ճոթերը:

Իրիկնապահին Ակոն յելավ, մի քիչ ձեթ տվեց Լուսունին, կուժն ուսեց և շնորհակալություն հայտնելով հեռացավ: Փողոցի դունը Լուսունը ասաց:

— Բարով գնաս, ախպերս, չար աչքից հեռու մնաս ու սըրտիդ խնդիրը կատարվի թռղ:

Ու մթնշաղի մեջ, գլխաշորի ներքեցից իր խաժ աչքերը բերկ-բալից հառեց հեռացող Ակոյին, վորին սկսում եր սիրել ու տեսչաւ հին, յերիտասարդ որերի սիրո պես և միակ բանը, վոր սկսում:

եր լրջորեն զբաղեցնել իր միտքը, վոր այդ մարդը, այդ անտուն, անկայան մարդը, կապեր տան, ոջախի հետ ու շենք շնորթով մարդ դարձներ:

## III

Ակոն վերադարձավ ձիթհանք: Նախ մտավ մի փոքրիկ սենյակ ձիթհանի տեր Մարութենց Սամսոն աղային հաշիվ տալու: Սամսոն աղան մի բարձր, չորացած բարդի, ճաղատ գլխով, այտոսկրները կես թիզ ներս ընկած, կենդանի, շարժուն աչքերով, հորթի պես յերկար ականջներով մի մարդ, նստել եր սեղանի մոտ փափուկ գորգի վրա և հաշվեմատյանում ինչ վոր գրում: Ակոն խոնարհաբար բարեկեց և առանց պատասխանը ստանալու սպասեց անկյունում փչելով ցրտից փետացած ձեռները: Յերկար սպասելուց ձանձրացավ և հոգնությունից սկսեց հորանջիւ մինչև վոր Սամսոն աղան բարեհաճեց բարձրացնել գլուխը:

— Հըմ, առուտուրդ ինչպես եր այսոր, վորքան ձեթ ծախեցիր:

— Մի փութի չափ ծախել եմ, աղա, այսորվա կսմեթն եղ եր:

— Վահ, եղքան քիչ. եղպես աժդահա բոյ ունես, ախմախես մնացել ու գլխումդ ճանճի չափ խելք չկա: Մկոն ավելի զոչախ ե. քեզնից ավելի շատ ե ծախում—ասաց Սամսոն աղան իր փոքրիկ աչքերը կկոցերով և համառորեն նայելով նրան:

— Մկոն ասաց, վոր իբր գու ամբողջ որը խաղ ես անում, այս ու այն կնկա հետ սիլի բիլի անելով ժամանակ անցնում, համ, հարամզադա, վրա համմար ե, վոր այդքան քիչ ես ձեթ ծախում:

Բայց Ակոն լավ գիտեր, վոր Մկոն իրենից ավելի ձեթ չեր կարող ծախել: Ակոն ավելի հին եր, հաճախորդ շատ ուներ: Սամսոն աղան ուզում եր լոկ նրա ինքնասիրությունը գրգռել: Ակոն ատամները սղմեց, բարկությունից զողացին ձեռները.

«Վայ շունշանվորդին, փուշի պես ցցվել ե ճամբիս, չի թողնում, վոր աճեմ, եղ վոսկոր կրծող ըռո Մկոն...»

Դրա համար ե, վոր ամեն անգամ, յերբ Ակոն հեռվից տեսնում ե նրան փողոցում, բռունցքները կազմած, արագորեն քայլում ե հանդիպելու նրան, բայց Մկոն վոնց վոր վախեցած կատու, փախչում պահվում ե մի վորես բակ կամ խանութ:

Սամսոն աղան սկսեց հաշվել: Մի փութ ձեթ եր ծախել Ակոն, փունտը տասնեհինգական կոտեկից հավասար ե վեց ոռելու, տա-

սից մեկն առհասարակ համառում եր ծախողին, ուրեմն Ակոյի այնոր-  
վա աշխատանքը հավասար եր վաթուուն կոպեկի։ Աղան տասն կո-  
պեկ վերցրեց բնակարանի վարձ (Ակոն ձիթհանքումն եր գիշերում) տասն կոպեկ ել դռնապանի, մաքրության և ուրիշ մանր մուսր  
ծախսերի համար, յերեսուն կոպեկ յերկու ֆունտ ձեթի գին, վոր  
Ակոն բաշխել նր կուտանին, տասն կոպեկի չափ ել ձեթեր թափ-  
վել ու փչացել ընդամենը վաթուուն կոպեկ...

— Ուրեմն մենք քվիթ ենք, ել առնելիք տալիք չկա—հայտարարեց Սամսոն աղան աշխուժորեն համրելով Ակոփ տված արձաթյա ու պղնձյա դրամնեսու:

— Հրամանք ես, աղա — կմկմաց Ալոն և ձեռնունայն վերադարձակ ձիթհան։ Հաճախ այդպես «քվիթ» եյին լինում և Ակոյի գրպանում — հակառակ ամբողջ որվա ծանր աշխատանքին — ու հացի գինը նույնիսկ չեր մտնում։ Ու մինչև այսոր ել Ակոն չեր կարողանում ըմբռնել թե յեթե տեղի վարձը առնում եյին, ել ինչու ինչ վոր դունապանի կամ մանր մունք ծախսերի համար պիտի վճարեր...

Զիթհանքը ընդարձակ, գետնափոր մի շինություն ե, վորի  
միջից մառախուղը վճռել ե յերբեք չհեռանալ: Այստեղ ձեթ են  
պատրաստում նահապետական ձևերով: Շոգու և յելեքտրականու-  
թյան փոխարեն աշխատում են դանդաղաշարժ հաստամարմին գո-  
մեշները և ջլաբազուկ յեզները, Դղրդացող, արագաթուչ մեքենա-  
ների փոխարեն, ծովորեն շարժվում են վողորկ ու խոշոր ջրաղա-  
ցքարերը և հաստաբուն գերանները: Քարերի ծանրության տակ  
կտավատը ճգմվում ե, մանրանում, լայնգիրկ գերանները քամում  
են և գեղնավուն ու լերթ ձեթը առվակները կազմած ծորում լայ-  
նափոր կարասների մեջ: Մի անկյունը շինված ե ընդարձակ փու-  
ռը, ուր կրակը շարունակ վառ ե աղնձելու համար իր լայնանիստ  
տանիքին փոված կտավատը: Բանվորները շարժվում են այս ու  
այն կողմը սևանար, դժգույն գեմքերով, ձիթոտ շորերով: Նրան-  
ցից սի քանիսը (վորոնք ցերեկն են աշխատել, ձիթհանքը գիշերն  
ել ե աշխատում) յերկնցել են փուռի տանիքին, մեջքը խրել տաք  
կտավատի մեջ, զրույց են անում կամ ծխում յերկարագունչ ծխա-  
մորդերից:

— Ակո ջան, բարով ի հետո:

բան, առուտուրդ ինչպես եր, վորքան փող վաստակեցիր. քանի՞  
հարս աղջիկ տեսար, քանիսին աշբով արիր, պատմիր մեկ-մեկ—  
հարցրեց յերեսնիվար յերկնցած մի ջանել բանվոր:

— Բարին քեզի, նոր բան չկա, վոր պատմեմ. առուտուրս  
լավ եր, մեկ փութ ձեթ ծախեցի, բայց մի կողեւկ չմնաց ձեռքս,  
համբած ընկուզի պես գնաց... պատասխանեց Ակոն վորչափ կա-  
րելի յե լայն բանալով հորանջող բերանը և հոգնությունից ծան-  
րագած աշքերը թարթելով:

— Սամսոն տղան կը թողնի, վոր գրամ մտնի գրապանդ. աղքատի սև գրողն և նա—ըրթմնջաց նույն ջահել բանվորը և միքանի բողեք լսելուց հետո ավելացրեց—ջանըմ, դու թազա բան պատմիր, լույս աշխարհից կուգաս:

— Ինչ թագա բան պատմի պիտի Ակոն վոր, աշխարհը ելի են հին գինին ե, հին կարասի մեջ. հին սայլը հին սոնին. ելի գառն ու գելը միասին են ապրում ու անխիղճ գելը ծվատում ե, լափում, չի կշտանում—ասաց մի տարիքոտ, խանձված բանվոր ու ծխամորճից բաց թողեց ծխի մի մեծ քուլա:

— Մեզ ի՞նչ թագա բան, յերբ մինք չենք կարող այս մութ վորջից ազատվել. գիշեր, ցերեկ կը բանենք, տուն, ընտանիքը սեհաց ու սոխով հագիսվ ենք պահում:

— Հըմ, ախ—հառաչեց մի սապատավոր մարդ—ուրիշների  
համար որ ու գիշեր աշխատիր, ձիթհանքի մրերը անուշ, անուշ  
կուլ տուր, ջիղ ու թոք մաշե և յերբ ուժերդ սպառվեն, ցախա-  
վելով փողոց կավլեն քեզ, հետո ել մի թիզ հող ու գնա նրանից  
հետո քեֆ արա...

Եսոր մեր աղա Սամանի աղջկա յերեխեն են կնքում, գիշեցանց տանը մեծ խնձույք կա. մի տեսնեք ինչ ճոխ սեղան կը պատրաստեն, վորքան հյուր, հրավեր, ինչ համով կերպակուրքալցրապինիք, իսկ գինին խո ջրի պես ե, հոսում ե վոնց վոր մեթաղի Զբոչու աղբյուրը.

— Իսկ զու եստեղ անոթի, անոթի զկռտա... Խրխոաց սապատավոր բանվորը և այնպես ուժգին փոնգտաց, վոր լորձունք հազարավոր կաթիները առատորեն մազվեցին այս ու այն կողմը

Մինչ ոջախի տանիքին հանգստացող բանվորները դեռ յերկար մտմտում, տրտնջում եյին իրենց հոգսերից ու նեղություններից, Ալոն կռնակին յերկնցած, հայացքն առաստաղի մի անորոշ կետին՝ մտածում եր իր գործերի մասին, այն մասին թե վաղքանի՞ Փունտ ձեթ պիտի կարողանա ծախել և ինչպես պիտի հան

զիապի Լուսունին: Վաղը իր շորերը տանի պիտի Լուսունին և վերջինս կարկատի ու լվանա պիտի: Այն միտքը, վոր մեկը կա այս աշխարհի յերեսին, վոր Ակոյի մասին և մտածում, նրա հագուստներն կարկատելու և լվանալու հոգաը բաշում, այդ միտքը բարձր և ամեն հրճվանքից և ամբողջ հոգին լցնում բերկրանքով ու խընդությամբ:

Ակոն այդպես յերկար մնաց մեկ կետի հառած աչքերը յերազուն, ձիթհանի համատարած աղմուկի, աղջամուղջի, գաղջ և ախորժելի ողի մեջ, մինչև վոր քունը հաղթեց նրան, անուշ յերազները խույս տվին և նա ննջեց ու խոմբաց, ինչպես տաքուկ տեղ թավալած գամբոը:

## IV

Ժամանակն անցավ: Այգեստանում ցուրտ և ու բուք: Փողցներն ծածկվել են կես արշին ձյունով: Կտուբներից և լուսամուտների յերկաթներից կախվեցին սառցե լոււաները: Կյանքը մարել և մարդիկ տանն են կամ շուկայում: Փողցներն ամայի, շան, գելու ասպարեզ:

Ակոն շամունացավ դեռ, չգիտես ինչու գործը գլուխ չեր գալիս և նա սրտմաշուկ թափառում եր: Հաճախ անցնում Լուսունի տան մոտով, յերկար նայում կտուրին ու փակ լուսամուտին ընկղմելով մտքերի ծով: Շատ ծանոթներ պսակվեցին, տունտեղ սարքեցին, բայց Ակոն մնաց նույն անրուն թոշունը՝ ծառի չոր վոստին կպած...

Իսկ անհոգի Սամսոն աղան՝ ամեն յերեկո հաշվում եր Ակոյի աշխատանքը ու հաճախ ըվիթ լինում:

Զեթ գնելիս Անթառամ խաթունը (թող հավիտյան ծաղկած մնա Անթառամ խաթունի ծառն ու ծառաստան) միշտ խոսք եր բանում ամուսնության մասին.

— Քլիսիդ ճարը տես Ակոր ախպեր, թե չե որերդ կանցնեն փուծ ու տիսուր, կյանքդ կը մաշես, ձյունը կը մաղի մաղերիդ ու բանը բանից կանցնի...

Ու իր բարի, ծերունազարդ աչքերը հառում Ակոյին, մեղքնում: բյասիր, անտուն մարդ ե, մտածում եր, թող ուրախ որ տեսնի: Ու մի անգամ Ակոն ավելի վճռական գնաց Լուսունի տունը և յերբ վոտները կախեց տաք թոնիրն ի վար, առանց վարանելու ասաց:

— Այսպես չի լինի, Լուսուն հորբուր, մի քաղցր խոսք չա-

միր դեռ, ուրիշների արել ծաղկեց, իսկ մերը դեռ չկա ու չկա: — Ե՛, ախպեր, դեռ ժամանակ շատ, մի որ ել մեր արել ծաղկի պիտի:

— Այդ բարի որը յերը և Լուսուն հորքուր, սպասելով կյանքս մաշվեց. մի անուշ խոսք ասա ու սիրտս հովանա թող. հերիք սիրտս երվի ու խորովմի...

Լուսուն հորքուրը ժապտաց մեղմիվ ու լուռ մնաց: Աչքերը խաժ խոնարհվեցին ու գլխաշորը քաշեց քիթնիվար:

Յերբ Ակոն յերավ մեկնելու, նա գորովագին ասաց.

— Վայ, թող քոռանան աչքերս. բաճկոնիդ կոճակները քանդվել են. վաղը բերեք կարեմ, Ակոր ախպեր:

Ակոյի սիրտը թրթուաց անհուն յերջանկությամբ ու ժապտաց խանդաղատալից ինչպես մասուկը մոր թերին և այդ ժպիտը ցընծագին, անսահման հաճույքով վարարեց նրա բովանդակ եյությունը:

Մի բանի որ հետո Անթառամ խաթունը Ակոյին ասաց.

— Երեկ Լուսունը լվացը եր անում մեզ մոտ. քու մասին խոսեցի հետը. լեզվից անուշ ջուր կերթա քեզ համար:

Ակոն լուռ եր. հայացքն գետնահակ, բերկրալից կունկնդրեր Անթառամ խաթունին:

— Լուսունին ասի, վոր Ակոն խեղճ ե. տեր տիրական չունի. յեկեք իրար առեք, տուն տեղ, ոջախ սարքեք, թռչունն առանց բույնի չի մնա, ուր մնաց մարդ արարածը. խոսքն առի. փետրվարին բարով, խերով կը պսակվեք, ել ինչ ես ուզում:

Ակոն ել վոչինչ չեր ուզում. զլուխն խոնարհեց և համբուրեց մեղմիվ Անթառամ խաթունի ձեռքը. արտասուքի մի խոշոր կաթիւներքի սահեց ու թրջեց նրա ձեռքը:

— Պարտքս եր կատարեցի—ասաց Անթառամ խաթունը զգացված—լավ մարդ ես, կուզիմ, վոր կյանքդ կանաչի, ուրախ որ տեսնես:

— Շնորհակալ եմ, խաթնեն... մըմնջաց Ակոն և աչքերն ուրախության արցունքով լի հեռացավ: Մինչև փետրվարը դեռ բավական ժամանակ, մի հավիտենականություն. ինչպես համբերի պիտի խեղճ Ակոն.

— Զեթ կը ծախեմ, ձեթ, շարբաթ ու շուռուր ձեթ:

## V

Ակոյի հագուստները կարկատած, մաքուր եյին. Ավելի զիւ զնդուն եր հնչում ձայնը: Ավելի ծանրդուխ դարձել: Զեթ վոր ու

շախի տեր դառնա պիտի: Յերեելի փոփոխություն իր խղճուկ կյանքում: Զարմանալի, գլխապառույտ նորություն: Ուշ, ուշ եր այցելում կուսունին: Պսակվող մարդը շատ ծանր պիտի կշռե իրեն, վոտքն ել կարճ պահե: Կուսուն հորքուրն ել այժմ ավելի ամոթիած ե, հպարտ, ինքզինքը թանգ գնահատող ապրանք. ծանր կը-նսուի, ծանր կը կանգնի: Ակոյին տեսնելիս գլխաշորը մինչև քիթը կիջնա: Ավելի շատ կը լսի և քիչ կը խոսի. խոսքերն ել ջոկված, հատիկ, հատիկ զորվող մարդարիտ: Մարդու պիտի գնա չէ. յերեելի բան...

Վորքան փետրվարը, այդ ճակատագրական ամիսը մերձենար, այնքան Ակոյի սիրտը կը թնդար: Իր աշխատած դրամով ու պարտքով վոսկյա ող գնեց ու տվեց կուսունին: Նշանվեցին: Թե ինչպես հարսանիքի ժամանակ նստի, կանգնի ու պահի պիտի իրեն Ակոն, ինչ ծանրախոն ու լուրջ գեմք ընդունե պիտի, յի՞րք սրա, նրա յերեսին նայի. այս ամենը յերկար մտորումների առիթ տվեց: Մտքում ծրագիր եր մշակում այս կամ այն ձև ու դիրք ընդունելու մասին: Լուրջ կերպով մտածեց այն հարցի մասին, թե կողակիցը փոխանակ իր տունը բերելու, ինքը կը գնա նրա ոջախը. տղամարդու գործ և արդյոք սա. ամոթ չե: Սակայն Անթառամ խաթուն ասել եր, վոր կը գնա տնիկեսա, վոր տղամարդն ուր ապրի, այնտեղ իր բույնը կը դառնա. տարորինակ չե. ուրիշներն ել կան այդպես: Ակոն հանգստացավ:

Հունվարի վերջերին մի տոնական որ Ակոն վճռեց այցելել կուսունին. բավական ժամանակ չեր տիսել. կարոտից այրվում եր. ջիգարի կարուտը... Առաջ գնաց սրտապող փողոցի յերկայնքն իվար, բայց կուսունենց դուռը փակ եր. փոքրիկ լուսամուտի վարագույրն իջեցրած: Մի քանի անգամ Ակոն գնաց յեկավ դուն տուած. հազար, փոնգտաց, կոկորդը մաքրեց, բայց դուռը չբացին: Յերկար սպասելուց սիրտը ճաքեց և աքլորի պես զիլ ու յերկար կանչեց, ձեթ առեք, ձեթ... Այդ կանչը կրկնվեց յերեք անգամ. իդաւր: Յերկար, անձկագին սպասում. շուրջ բոլորը ցուրտ ու բուրք: Իրիկուն յեղավ ու կուսունենց տանը ճրադ վառեցին. պատուհանի վարագույրից լույսի աղոտ ճամանչները դուրս շողացին: Կուսունը տանն ե յեղել... իսկ ինչու դուռը չի բանում. այս ինչ վերաբերմունք. հիվանդ չինքնի արդյոք: Հազար ու մի չար բան պաշարեց նրա միտքը: Ցուրտը պատել եր ամբողջ մարմինը, դողում եր, ատամները կափկափում: Մի պաղ քամի ել հենց հակառակի պես փչում եր, հա փչում: Արդեն գիշեր եր դառնում, իսկ այդպիսի:

ուշ ատեն դուռ բաղմելը անհարմար բան: Նկատողն ինչ պիտի ասի, բերնի ծամոնը դառնալու միտք չուներ Ակոն: Յեկ նա սրտամաշ, հողին հազար ու մի խոհերով խոռվ, վերադարձավ ձիթհանք: Մոռայլ եր, թթված, ինչպես շղթայված գաղան: Գիշերն ել խիստ անհանգիստ քնեց:

Հաջորդ որը կրկին գնաց կուսունենց դուռը. կրկին փակ: Ժամեր շարունակ այրող ցրտի ու ձյունի մեջ անցուդարձեց, հա-կաց, հազմզաց, ձայնեց ու ճաց, բայց դուռը մնաց փակ: Սաս-տիկ ցրտից բեկերի ու մազերի ծայրերից սառցե լուլաներ կախ-վեցին ու գողտողում եր մարմինն ամբողջ, ինչպես ջրաթաթախ հավը: Ճարը հատավ, բաղմեց դուռը և ով սարսափ, դուռը վոչ թե կուսունը բացեց, այլ միջահասակ, հաստիկ, ճաղատ գլխով, մոտ քառասունհինգ տարու մի մարդ, վորը վոտքից-գլուխը չափեց Ակոյին և գնթվնթաց.

— Մարդ չկա տուն. կուսունը գործի յե գնացել. իսկ ձեթ գնելու միտք չունենք:

Մի պահ այդ յերկու մարդկանց հայացքներն հանդիպեցին երար. վորքան կասկած, անհամբերություն, վորքան լուռ սպառ-նալիք նրանց աչքերում: Ակոյին դիտողը հիամոզվեր, վոր վճռական հարձակման կը պատրաստվի: Մահակն այնպես սեղմեց ձեռքում, վոր կարծես մոտագիր և վորեն մեկին հարվածել: Սակայն շուտով դուռը չըխկալեն փակվեց և Ակոն մնաց փողոցի ցրտում դողալու ու սարսապու:

Ո՞վ ե այդ մարդը. ինչ գործ ունի կուսունենց տանը. մի վորեն բարեկամ չինք:

Ակոն գլխիկոր վերագարձավ ձիթհանք: Ամբողջ գիշերը չքնեց. փորացավով բռնված յեղան պես անհանգիստ, շարունակ այս կողքին այն շուռ գալով մտածեց: Հազար, հազար միտք պա-շարել եր ուղեղը, տանջում, խոցոտում: Ձիթհանքի խոշոր քարը կարծես ծանրացել եր զլիին, ճգմում, բամում եր: Կես գիշերին հանկարծ նոր և սարսափելի բան գանողի պես վեր թուավ, մա-զոտ դոշը բաց, գլուխը ձեռներին հենած, մրմիջաց.

«Յարը չինք արդյոք, կուսունի յարը...

Այդ բառը լախտի ծանր հարվածներ իջեցրեց զլիին: Զի-բուխը վառեց և սկսեց ծինել անհապ: Ծուխը հավաքում եր կո-կորդի մեջ ու փշում քաղցած զոմեշի պես: Մի բանի բանվոր այս ու այն կողմ թափալած տաք կտավատի վրա խոմբում եյին որվա ծանր աշխատանքից խոնջած: Մի տարեց բանվոր, տակա-



վին արթուր ծխում եր, հորանջում և յերբեմն, յերբեմն արտասանում ինչ վոր անհասկամնալի հնչյուններ, վորոնք կորչում եյին կտավատը քամող ու ճզմող մեքենայի աղմուկի մեջ, Նկատելով Ակոյի անսովոր անհանգստությունը, մեղմորեն հարցրեց.

— Ակն, եղ ինչ մեծ դարդ ունես, զրուցե՛, ախալերս, բարե՛ մի ճար կարողանանք գտնել. մենք բոլորս ել դարդի մարդիկ ենք:

Բայց Ակոն լուռ ծխում եր. աչքերը լայնապիշ, մի կետի չուծ: Ճրագի վախտ ցոլքերի տակ պատկերվում եր նրա չոփած հաղթ մարմինը անշարժ ու մուայլ ժայռի պես: Իսկ տարեց բանվորն անպատասխան մնալով, մի քանի անգամ հորանջեց և եխ, ոխ կանչելով յերկնցավ մեջքի վրա ու սկսեց խոմբալ կոկորդային աններդաշնակ ձայներով:

## VI

Մի քանի որ Ակոն ձեթ չվաճառեց: Ուշվականի նման թափառում եր Լուսունի տան շուրջը: Հակառակ ձյունին ու բուքին, նա այստեղ եր և հավատարիմ շան պես դուռը հսկում: Ամեն անգամ, վոր մի բան շարժվեր ու ձայնը լսվեր, Ակոյի աչքերը մեկ տասը կդառնային ու ականջները սրվում, թե չինի Լուսունի դուռը բացին և ինքը չիմացավ: Բայց դուռը չեր բացվում ու վոչ վոք չեր յերևում: Չբաղխել, չմտնել ներսը. գուցե Լուսունը հիվանդ ե ու կարիք ունի ոգնության: Յեվ նա բաղխեց դուռը. ձայն չկա: Յերկրորդ անգամ բաղխեց: Ներսից մի տղամարդային ձայն գոռաց, թե Լուսունը տանը չե, թող թողնեն հեռանան ու չանհանգստեն: Ակոն յերրորդ անգամ բաղխեց. այս անգամ դուռը շրիկալեն բացին և նույն միջահասակ մարդը դուրս ուղարկեց իր ճաղատ գլուխը:

— Ո՞ւմ կհարցնեք:

— Լուսուն հորքուրին, գործ ունեմ հետը:

— Գնա, կորիր, թե չե զլուխտ սատանի կեր կդարձնեմ. Լուսունի կոշիկներն արժեն, վոր այսքան անհանգստություն կպատճառես:

Դուռը բացող մարդու աչքերն առկայծում եյին բարկության կրակով. կարծես ուղում եր Ակոյի վրա հարձակվեր, սաղ, սաղ կուլ տալ. Ակոն մի վարկյան շփոթվեց. ինչ եր ուղում այդ մարդը. ով ե Լուսունի տան այդ նորաթուխ պահապանը: Հանկարծ ուղեղում մեխի պես ցցվեց գիշերվա սարսափելի միտքը, «յարը

չենի արդյոք... Ու վորքան ծանր եր այդ միտքը, այնքան կատաղի վայլեցին աչքերը: Կայծակի արագությամբ կուժն ներքե իջակ ուսից, բուռնցք կաղմած ձեռները բարձրացան ու ինչպես գազագած ցուլ խուժեց գեղի մարդը. բայց վերջինս զգալով սպառնացող վտանգը, ճարպիկ վոստոյնով ներս ցատկեց և գուն ուժգնորեն զարկեց Ակոյի յերեսնի վար: Նրա ճախ թեր սաստիկ ցավ զգաց դուն ուժգին հարվածից: Մի պահ Ակոն մնաց կանգնած վակ դուն առաջ շփոթել ու մոլոր: Զջարդել դուռը, չխուժելներսը, տեղնուտեղը չխեղդել այդ անծանոթ մարդը, վորի մեջ թագնված եր մի ահարկու թշնամին:

Սակայն Ակոն փոխանակ այդպես վարվելու, կուժն ուսեց և քայլերն ուղղեց Անթառամ խաթունենց տուն (իսկ կուժը այն որ վերցրել եր նրա համար, վոր իբր ձեթ և վաճառում): Միայն Անթառամ խաթունը կարող եր Ակոյին պարզել այս տարորինակ յերեւյթը: Բայց նա ստիպված եր սպասել վորովհետեւ Անթառամ խաթունը կործով գնացել եր հարեանենց մոտ: Ակոյին տեսնելով ուրախ քրթիջներով հարսերն ու աղջիկներն յեկան շրջապատեցին:

— Ես մեր ես կորել Ակոր ո սպեր, վորքան ժամանակ ե, վոր չես յերեւում ու ձայնդ ել չի զնդում. մոռացմար մեզ, ինչ ե:

— Առանց քեզ տխուր ե, Ակոր ախալեր, բո տեսությանը կարուտ ենք մնացել:

— Զանըմ, Ակոն հարսանիքի պատրաստությամբ և զբաղված, թագավոր գանաւալ կուղի, աշխարքի տեր, ել մեր յերեաներին նայելու կարիք ունի:

— Իրավ, Ակոր ախալեր, ինչ ես պատրաստել հարսիդ համար, վոսկի, մարգարիտ թե մրջան. յերնեկ քեզի Լուսուն, սարի պես յար ունես:

Մինչ Ակոն գլխահակ, մարմինը դողդող, այնպես խղճուկ կանգնել ե նրանց մոտ, վոր թվում ե, թե վախենում ե վորեն ծպտուն հանել, աչքերը հասել են ինչ վոր կետի, իբր թե ուրիշ մոքերով ե զբաղված: Յերեւմն նույնիսկ աչքերի խորքում խաղում ե մի ցուրտ, թախծոտ ժպիտ. իսկ ուղեղում մի չարագուշակ զանգ զբնդում ե շարունակ

«Յարը չենի արդյոք...

— Բայց Լուսուն հորքուրն ուրիշ մարդ ե ճարել. նոր մարդ. վորպես թե Ակոյին չի համում, իբր նրանից լավն ե դտել, մուխսի Ահամկը—ասաց ջանել կանանցից մեկը:

Ակոյի աչքերը խոշորցան բուի պես, զլուխն սկսեց պառյու

տալ. կարծես կանգնած չեք. հողը վոտների տակից շարժվում երթվաց թե մեկն ուժգին հարվածեց իր գլխին ու տարավ ձգելու հեռու, հեռու տեղ:

— Ճիշտ ես ասում, ախչի—բացականչեցին լսողները հետաքրքրությամբ—այդ ինչ նորություն. սեալոր կուսունը տես, Ակոյի պես մարդուն մերժի. հողեմ գլուխը, թող Ակոյի ձեռքն պաչի զնի գլխին, ինչն և պակաս վոր...

Անթառամ խաթունն յեկավ. կանայքը կամաց, կամաց ցրվեցին իրենց գործերին. Անթառամ խաթունը դիտեց պատի տակ, գլուխը կախ, հուսահատորեն նայող Ակոյին, վշտակցեց ու հասակն առած կնոջ փորձառությամբ ըմբռնեց, թե Ակոն ինչի համար ե յեկել:

— Ե՛, Ակոն ախպեր—ասաց նա ծանր ու հատիկ, հատիկ—աշխարքը մի մեծ չարխ ե, մեկ այս մեկ այն կողմը շուռ կըգար, մեկ որ լավ, մյուս որ վատ. մեր ձեռքը կարճ ե, դժվար է չարիը մեր կամքով շարժել...

Մի քանի ըոսկե լոռությունն և Անթառամ խաթունը նորից շարունակեց խոսքը:

— Ամերիկայից վերադարձել ե կուսունի հեռավոր բարեկամը, Մուխսի Սահակը. տուն, ընտանիք չունի, բայց քիչ վոսկի յերեկել հետը, ասում են առևտրի մարդ ե, խելքն ամեն բանի կհասնի. կուսունին՝ հավաեց և կուսունը նրան և զնում... Յես կուսունին ասի, վոր արածդ լավ բան չե, Ակոյին խոսք տվիր, ինչ մարդ ել լինի, խոսքիդ տեր կաց, խոսքն ամեն ինչեց բարձր ե. մարդուն բեղամաղ մի անի: Բայց կուսուն հորքուը ինձ այսպիս պատասխանեց, թե Ակոն խեղճ ու կըակ մարդ ե, անփող, անտուն, անճրագ. ձեռներս լվացք անելով և խալխի տան գործերը կատարելով չորացան. ձեթ ձախելով տունը չի պահվում: Մուխսի Սահակը փող ունի, գործի մարդ ե. տուն, ընտանիք պահել գիտե...

«Շատ դարդ մի անի Ակոր ախպեր. սիրտդ ամուր պահե, լավ մարդի վերջը լավ կլինի...

Յեվ Անթառամ խաթունը վոսկյա ողը կամացուկ սահեցուց Ակոյի ձեռքը: Ակոն նայեց այդ մատանուն, վորպես իր փշրված բախտին: Ծով արցունքները հոսեցին աչքերնի վար և մատանին գցեց հեռու, հեռու...

Անթառամ խաթունը խիստ հուզված տեսավ թե ինչպես Ակոն

այլայլված ու մոայլ հեռացավ, փողոցի մեջ գծագրելով իր հաղթ, տիրակալ հասակը:

## VII

Ակոն շտապեց գեպի կուսունենց տուն: Մի պահ նրա ուղեղում ցցվեց այն միտքը, թե ուժով պետք ե ներս խուժել կուսունի խրճիթը, փշրել անձանոթ ախոյանի գլուխը և կուսունին ստիպել, վոր կատարել իր խոսքը, յեթե վոչ իրենց յերկուքի կյանքին ել վերջ տալ: Այս ծրագիրն Ակոն անշուշտ կարող եր գործադրել. իր կյանքը մի խղճուկ բան եր դառել իր աչքին, մի թևաթափ թըռչուն: Բայց նա վերհիշեց կուսունի այն խոսքերը, թե ձեթ ծախելով տունը չի պահվում, շենք-շնորհով մարդ և պետք: Մուխսի Սահակը փող ունի, վոսկի... իսկ ինքը ով, վոստից պոկված, հողմակոծ մի տերե, ձիթհանքի փոան տանիքին թալալող անկայան շուն...

Ակոյի ձեռները թուլացան. սառն քրտինքը թոջեց մարմինն ամբողջ և հուսահատորեն զգաց, վոր կուսունը մեղավոր չե...

Մտախոհ ու մոայլ կանգնեց կուսունենց տան մոտ ձյունածածկ ձյուղերով ուռենու ատաջ, հայացքն անորոշ կետի: Ինչ անել. այս ճակատագրական հարցը մի ըոսկե լարեց ուշագրությունը: Կուսունը այլևս կորտծ ե նրա համար, ոջախ սարքելու բաղձանքը փշրված: Ձիթհանքի խավար մթնոլորտն ել ճնշող ու մաշող: Այստեղ սպասում ե Սամսոն աղայի թթու գեմքը: Մի քանի որ ե, վոր Ակոն ձեթ չի ծախել. գրապանում սև կոպեկ չկա. ինչպես պիտի վճարի տեղի, դոնապանի և ուրիշ պետքերի գինը... Աղան խիստ բարկացած կլինի և ուրիշ մարդ գտած ձեթ վաճառող, գուցե այլևս չթողնեն նրան փոան տանիքին ապաստանել..

Ակոն խոր հառաչեց: Հայացքն մոլոր ու շփոթ ուղղեց հեռու, հեռու, գեպի քաղաքից գուլս տարածվող մշուշապատ հորիզոն և լեռներն ձյունապատ, վորոնք փովում են շղթայածե ու լայնանիստ:

Մի պահ մթագնած դեմքին շողաց լույսի աղոտ ճառագայթը: Մի ինչ վոր ցանկություն հեղեղի պես վարարեց բովանդակ եյությունը: Մի բութ, սպառնական հայացքով առաջ վաղեց գեպի կուսունենց գուռը և կանքի մեջ վերջին անգամ, բոլոր ուժերով ձայնաց:

— Ձեթ առեք, ձեթ...

Յեվ ուսից վար առնելով կուժը, մոլեգին ցասումով զարկեց

գետին: Կուժը փշրվեց մի քանի տասնյակ կտորների վերածվելով և հատակում լերթացած ձեթը թափվեց, ձյունի վրա կաղմելով դեղնավուն գծեր:

Ակոն նայեց իր կուժի ջարդված կտորներին՝ աչքերն ատելության ու բարկության կայծերով բոցկլառուն և շուռ գալով ձյուների միջից արագորեն քայլեց փողոցի յերկայնքն ի վար, հաղթմարմինն առաջ ծուած, դեմքի մկաններն ուսուած ու կապույտ, ձեռներն բռունցը սպառնական:

Աղմուկից մի քանի դոսեր բացվեցին և մարդիկ նայեցին հետաքրքրությամբ:

Բայց լուսունի դուռը փակ մնաց...

Ակոյի այդ արարքից վոչ վոք վնասվեց, բայց ոգտվեց քոռ Մկոն, վորովհետև հաջորդ որը ամբողջ Այդեստան ում նա մնաց միայն ձեթ վաճառողը:


Այնուհետև քաղաքում Ակոյի մասին բան չիմացվեց: Մի անգամ միայն Անթառամ խաթունը մի գյուղացու ձեռքով ստացավ չորացած սեր և մի քանի զրվանքա պանիր.

— Ես մեր գեղի չորան Ակոն ուղարկեց, շատ, շատ բարեկաներ:

Անթառամ խաթունը շնորհակալություն հայտնեց և յերբ ճամբու դրավ գյուղացուն, ալեմազ գլուխն թոթվելով մտմտաց.

— Խեղճ Ակօ, մուրազիդ չհասար ու կրկին մնացիր անբռն, անկայան կուշ...

1917 թ.



## ԼԱԶԱԿՍ ԳԼԽԻԴ ԼԻՆԻ ԹՈՂ

Իրիկվա մառախուղը, թանձր ու մռայլ, իջել եր մեկ մյուսից բարձր, շղթայաձև լիսներին: Սեպացած ժայռերի գրկում ձգվում եր Աբաղայի դաշտը տանող յերկարածիք, անդնդախոր ձորը, վորի խորքից ոճապտույտ, քարքրոտ մի նեղ ճանապարհ գալարվում եր առաջ:

Փախստակտների մի խուռն բազմություն, հողմակոծ տերեների պես հևասպառ ու ցանուցիր, շտապում եր վորչափ կարելի յե շուտ աղատվել այդ ստվերախիտ, ահալի ձորից: Նրանց հրկիղված, խոշտանգված զեմքերը, փոշեպատ, գզգզված մազերը, կիսամերկ, վոսկրացած մարմինները ցույց եյին տալիս, վոր նըրանք հնապոր վայրերից եյին գալիս, հուրի ու սուրի միջից:

Բնագուրկ թոշունների պես թևաթափ, ժանդ ու մահասփուռ փոթորիկից բշվող ծովածավալ ամբոխին խառնված՝ քայլում եր գյուղացի հարութի ընտանիքը: Քառասունն անց, հաղթանգամ, լայն, արեառ ճակատով հարութը զնում եր զլխանակ, մտքերի ծովում, կարծես վերասլացել, փոխազրվել եր հուսահատորն ու կսկիծով լրած հայրենի գյուղն ու լեռը, հանդն ու ջուրը: Կոնակին նստել եր իր յերեքամյա, վոսկրացած տղան Զավենը, յերկար ու տաժանքոտ ուղերությունից հալումաշ, զեմքն ցերեկփառ տապից խանձված, փաթաթվել հոր վզին, աչքերը մեկ խրում, մեկ բաց անում անմտորեն նայելով շուրջը: Կինը թեհան, միջահասակ եր, զլխին ծաղկանկար գեղջկական լաչակ, լեռնական կնկա հալարո, տիրական հայացքով, վոչ գեղեցիկ համարվելու չափ ել տգեղ կարծվելու չափ անկանոն զիմագծությամբ: Քայլում եր ամուսնու կողքն ի վար հուսարեկ ու ճնշված, կրծքին կապած քաղցից մորմոքող ծծկեր յերեխան:

Մի կույր, սպառնական բան, մահարեր, արյունասափյուռ ձեռք, մղում եր նրանց շարունակ առաջ: Լեռների ստվերախիտ լանջերում, խավարապատ ծործորների մեջ, պահվել եր մի մահաշունչ դե, վոր ահա, վորտեղ վոր ե պիտի հայտնվի ու իր տարերային շունչով ավերի ու վոչնչացնի ամեն կենդանի եյակ: Ու տասնյակ հազարավոր մարդիկ, ջուրն ընկած տաշեղների պես

հորձանքվում եյին՝ շնչապատառ վազում հրվելով, կոխուավելով, վշտից ու յերկյուղից գազազած։ Մութի մեջ լսվում եյին համատարած մահասարուս հեք, անսառւնների ու մարդկանց խուլ, խայտարդեա ձայներ, վոտների բազմաձայն դոփյուն։ Կենդանիներն անգամ շտապում եյին սարսափով լցված, հոգնատանջ, ականջներն յերկյուղից ցցած, աչքերի մեջ հիմար, անմիտ փայլ։ Վուլը կոտրված մի ձի ընկել եր ձամբի յեղերքին, տանջանքից գլուխը բարձրացնում եր ու փնչացնում, հեռում ուժապա։ Մի քանի յեզ ու հորթ խրտնած, պոչերը վոլորելով վազում եյին այս ու այն կողմը, հրվելով ամբոխի խիտ շղթայից։ Մայրն աղեկտոր ձայնով, կորցրած վորդուն եր կանչում. վորդին ճամբամոլոր մորը։ Մեկն ուժապա մնում եր ձամբի յեղերքին ինքինը հանձնելով բախտի բամահածույքին, մյուսը բարերի արանքում մերձիմահ հեռում ու տնքում։

— Ես յոթն որ և կբալենք ու կբալենք վախճան չկա, ուժերնի հատան, հալ ու մաշ յեղանք—մրմնջաց Ռեհանը հուսահատորեն նայելով չորս կողմը։

— Կերթանք ուր վոր աչքը բռնեց, անասունի պես անբան դարձած—պատասխանեց Հարութը և քիչ լոելուց հետո ավելացրեց։

— Թող մեր տուն բանգողը կանգուն չմնա, ինչնու, ինչ մեղքի համար ևս որին զցեցին մեզ. աշխատանքով ու քրտինքով ապրող ունչպար մարդ՝ եսոր եսպես մալ տավարը թողած, բնտվեր հավքի պես կրոչենք առանց հաշիվ տալու։

Ռեհանն ընկղմեց գառն խոհերի գիրկը։ Մի պահ նա սլացավ իր տուն, այնտեղ ամեն բան մնացել եր բախտին, անտեր. ահա հավերդ լիքն բակը, մի անկյունում բազկատարած, սաղարթախիտ ընկուղենին. ախոռում կովս ել հորթն ել կապված եյին մսուրից, հիմա խոտը սպառած կլինի մսուրում, հորթը, այն ձակատը բաշ, թրվուն հորթը, բաղցից կբառաչի, ինչի չարձակեցի կապը, բռնանան աչքերս թող... Փախչելու առավոտ հաց եր թխում ու հացը մնացել եր թոնիրի շուրթին փակած։ Կաթը ուզում եր մերել մածունի համար. հիմա վոնց փչացել, թթվել ե... Զլպառտիկ, թխամազ այծերը մնացել եյին բակում, այժմ դուրս յեկել գնացել են, ով գիտե վոր բլրի ու սարի դոշին արածելու...»

Նրա մտքերի թելը կտրեց մի խուլ սարսալի վոռնոց։ Դա Բանդիմահու գեան եր, վոր գարնանային անձրեներից վարարած

խշալով ու փնչալով կտրում, անցնում եր ձորը։ Մի սառն ըըրտինք պատեց Ռեհանի մարմինը։ Թվում ե, թե գետի այդ խուլ վասնոցում թագնված և մի չարագուշակ բան, վոր խուժում ու մղձավանջի պես ծանրանում և մարդկանց մտքերի վրա։ Շուրջ բոլոր տիրեց խորհրդավոր լսություն։ Մարդկիկ, նույնիսկ կենդանիները, չեյին համարձակում ծպտուն հանել և ահարեկ ունելուղում եյին հսկա գամբռի պես վոռնացող գետի ձայները, վորոնք հազար ու մի արձագանքներով գնում, մարտում եյին լեռների հեռավոր խորշերում։

Սպասողական գրություն...

Հարութի հոգնած ընտանիքը նստեց գետի մոտ մի խոշոր քարի վրա, մի քանի ըոտի հանգստանալու։ Ռեհանը չորացած սարինքներն բացած սկսեց յերեխային կերակրել. իսկ ամուսինը շալակի յերեխան դրել ել կողքին, վոր նիհար մատների մեջ մի կտոր սև հաց պահած կրծում եր, իսկ ինքը զլուին խոնարհած անգիտակից, ըութ հայացքով նայում։

Կես գիշերի մոտ Խավարը զիզկել եր ձորամիջում ու թանձր փեշերի տակ ծածկել ամեն ինչ։ Զրի ալիքներն հորձանքվում եյին ու ամեն պղպջակ ու կոհակ մի սարսալի բան շնչում։ Ամենքին տիրել եր մի չարատանջ զգայություն։ Բոլորը ուշըն լարած սպասում եյին ինչ վոր ճակատագրական, գերբնական բանի։

Հանկարծ մի ձայն ուժգնորեն հնչեց.

— Փախեք տղեք, անցեք գետը...

Մի քանի ձիավոր կամավոր պատուելով ամբոխի շղթան արագորեն անցան գետից։ Չորը հսկող մթաստիեր սարսալանջերին չարագուշակ, աղոտ լույսեր փայլատակեցին ու ճարճատեցին հարյուրավոր հրացաններ, զնդակների տեղատարափ թափելով ճանապարհի վրա։ Ամբոխն ելեքտրականացալի, սարսեց։ Տեղի ունեցավ մի աննկարագրելի բան, տարերային խուճապ։ Մարդկային մի հսկա ալիք խուժեց գետի գետը։ Զրում յեղած մարդիկ քարացան, մնացին սարսալից ինելանեղ, վրփրաղեց հորձանքներին մատնվելով։ Վոմանք շալակի յերեխաները զցեցին. Ուժեղները կուրծքելնին ջրի կոհակներին գեմ տալով հակառակ ափն հասան։

Ռեհանն ու Հարութը լեռներում դարանած թշնամու համազարկից հանկարծակիի յեկած, վեր թռան ու առանց հաշիվ տալու ձգվեցին ջուրը։ Հարութը համատարած իրարանցումի այդ մակատագրական պահուն, Զավենին թողեց քարի վրա և մոլեգ-

նորեն ճեղքելով ալիքները մյուս յեզերքն անցավ: Ռեհանը մթության մեջ չնկատեց այդ, ծծկեր յերեխան պինդ կապեց կրծքին և ամուսնու հետեւից մտավ գետը: Մի պահ սարսուաց նա, դեմ առ դեմ գալով Բանդիմահու ցրտաշունչ, լիռնացող կրհակներին: Մինչև մեջըն հասնող ջուրը հրում եր նրան հոսանքն ի վար և նա գերմարդկային ճիգերով հազիվ եր կարողանում հավասարակըշուությունը պահպանել: Յերեխայով ծանրացած լեռնական կնոջ դիմացկուն կուրծքը, հերոսաբար դիմացրում եր փրփրադեղ հորձանքներին, ազատության ճամբար բանում: Խորտակվող լաստի պես գողողում եր ջրի յերեխին ու թվում եր, ահա ինքն ել ուրիշների նման պիտի քշվի անզուստ ալիքներից ու տարվի պիտի ով գիտե ուր խեղդամահ ու ջարդված: Չուրը խեղդված մարմիններ եր բերում, վորոնք յերբեմն զարնվում եյին Ռեհանին: Ով գիտե քանի մտյօ ուժահատ, վորդեկորույս, քանի ծնողազուրկ յերեխա կամ ծվատված ջահել կյանքեր, կուլ գնացին այդ գիշեր Բանդիմահու մարդակուլ յերախին:

Ահա հասավ նա մյուս յեզերքը, բոլորովին թրջված ու ցըրտահար: Այնտեղ ճանապարհի յեզերքին նստեց հոգնաբեկ և լարված ուշադրությամբ ամուսինը փնտուց: Ռեհանի ճանգստացած վայրը համեմատաբար ապահով եր վտանգից, վորովհետև լեռնալանջերին դարանած թշնամու գնդակներն ուղղված եյին գետի մյուս ափը: Մթության մեջ զծագրվեց ահա Հարութի հաղթ մարմինը, լուռ ու մոայլ, վորպես ուրվական: Ուրախության ժպիտը խաղաց կնոջ վշտակոծ դեմքին:

— Ե, Հարութ, լավ պրճանք թշնամու գյուլաներին:

Բայց ամուսինը չպատասխանեց, այլ քարաժայոնի պես անշարժ մեխված մնաց միենույն տեղում:

— Յեկ, ախպերս, ինչ ես կանգնել սառած ու թթված: Նստիր քիչ շունչ առնենք և ապա շարունակենք մեր անիջյալ ճամբան:

Հարութը շարժվեց. յերկու ձեռքով բռնեց գլուխն և ճանրաշունչ հառաջանք արձակեց: Կնոջ մարմինն ելեքտրականացավ, սիրտը վորովց մայրական գորովը:

— Ծո, մարդ, ինչի յես քար կտրել, վորդիս ուր ե, ձենը չկա:

Յեկ տեսնելով ամուսնու հանցապարտ լուսւթյունը և մութի լուսնշաղ ծալքերում նշանակող նրա սարսափը, ցավագին կասկածից խայթված վեր թուավ, շոշափեց մարդու կռնակը և վոչինչ

դտնելով այնտեղ, խելագարի պես սկսեց վազվզել շուրջ բոլորը, ձուտը կորցրած թոչունի մոլեգնությամբ, աչքերն կատաղի բոցերով կայծծկուուն...

— Կորավ, գնաց ձեռքես վորդիս, Զավենսս...

Մըմնջաց Ռեհանը հուսահատորեն կոծելով կուրծքը և նայելով խավարածած ճամբու յերկարությամբ: Ապա առյուծի կատաղությամբ կանգնեց տմուսնու առաջ և նայեց նրա աչքերին:

— Ա՛խը ուր թողիր տղեն, Հարութ, ինչի՞ բերնիդ փականք դրել փակել ես:

— Ինչ պահեմ աստծուց բեզնից, տղեն թողի գետի են մյուս ափը, մեր նստած տեղը: Յերբ հրացանները պայցեցին, խելքս կորցրի ու չըերի հետո—թոթովեց Հարութը սարսափից զարնված նապաստակի պես դողահար, զլուխն ձեռներին, քարացած, շշկված:

— Ծո, անխիղճ, սիրտ քարից և շինված, հողեմ զլուխտ, հայրական դութ չունես, ինչ ե: Հիմա տղես ինչ հալի յե. վախից սիրտը ճաքած կլինի...

Յեկ սկսեց լայ, կոծել կուրծքը, խառնել մաղերը: Ծծկեր յերեխան ել դողահար սկսեց ձչալ, հեկեկալ սրտմաշուկ: Իսկ Հարութը շրջապատը տիբող իրարանցումից և խուճապից ուշքի յեկած, նայելով փախչողների հետեւից, կմկմաց.

— Ռեհան, տղի վախառը դտար, տես, բոլորը կը փախչես, մենք ել գնանք, թե չե ուշ կլինի:

— Դու գնա կաշիդ ազատիր, անաստված. բայց յես հեռացովը չեմ...

Ու հեկեկում եր Ռեհանը դառնապին, անձար: Այդտեղից պատահաբար անցնող միջահասակ մի զինվոր կանդ առավ, մութի թանձրախիտ ծալքերում պատկերվեց նրա բարյացակամ դեմքը: Կնոջ աղեխարշ հեծկատանքներն շարժեցին նրա զգայուն հողին և յերբ իրողությունը մանրամասնորեն տեղեկացավ, մի բոպե լուռ մնաց, ամփոփվեց իրերը սառնարյուն դատելու համար, ապա շտապ քայլերով առաջացավ դեպի գետը:

Զրի մյուս յեզերքին շարունակվում եր հրաձգությունը նույն թափով: Մահն եր շրջադաշտում ամենուրեք արյունախում ու վոճակավ, առատորեն հնձելով մարդկային հողմակոծ արտը: Մահն գաժան մանգաղից խուսափող ամբոխի աղեկտուր վայնապանը, գետի շոնդակից վոռնոցին և հրազենների ճարճատյուններին խառնված՝ վայրագորեն արձադանքում եր նեղ ձորի յեր-

կայնքն ի վար ու թվում եր, թե ճակատագրական, հոգևարքի որհասական ճիրաններում հետագող աշխարհի գլխապատճյա մի անկում եր պատրաստվում:

Յերիտասարդ զինվորը ջուրը մոռավ և պատրաստվեց լողալ, յերբ շեշտակի նետված մի զնդակ վզզալեն յեկավ և նրան շատ մոտ գտնվող մի մարդի վար գլորեց, տաք ու հորդառատ արյունը գուրս ժայթքեց ընկնողի մարմինց և ջուրը ներկեց կարմիր յերանգով: Մի թույլ, ցավագին հծծյուն թուավ ու մարեց ալիքների աղմուկում: Զինվորի աչքերը մթնեցին, մարմինը փշարաղվեց, վստաների կորովը նվազեց և ակամա հետ դարձավ, գործի հսկայական ծանրությունը շոշափած մարդու սառնասրտությամբ:

— Դժվար է, — ասաց նա մոտենալով Հարութի ընտանիքին, — զնդակները կարկուտի պես կտեղան, խորհուրդ կտամ ձեռք քաշել ու հեռանալ:

Ռեհան նորից սկսեց մազերը ճեպէել, հեծկլտալ ու կանչել, կարծես ականջներին եյին զարնվում ալիքների մոնչյունի միջեց անոգնական տղի սրտակտոր ճիչերը.

— Ախ, յես մեռնեյի թող, ինչ սե որ յեկավ զլխիս. հրեն տղես կաղավրի անձար, անտայագ...

Հանկարծ ներքին մի ույժ վարարեց ամբողջ եյությունը, Զգնալ, չբերել Զավենը... Այս միտքը կայծակի պես փայլատակեց ուղեղը: Արագորեն արձակելով կրծքի կապոցը, փոքրիկ յերեխան տվեց ամունուն:

— Դու խոմ տղամարդու սիրտ չունես, արունդ կաթ և գտաել. քեզ պետք է նստել տուն իլիկ մանել. յես հրեն կերթամ, տղես կը բերեմ:

Ու դեպի Բանդիմանուն վազեց շնչակոտոր, հերարձակ:

Հարութի մի պահ քարացավ յերկմտանքի ու վարանումի մատնված մարդու թուլասրտությամբ: Բայց անա ներքին անհական մի ուժ հորդեց յերակների մեջ. թե առավ, մի ակնթարթի մեջ հասավ ջուրը մանել պատրաստվող Ռեհանին, յերեխան՝ վերագրձրեց և վճռական ասաց.

— Արի, Ռեհան, յետ դարձիր, նամուսիս վրեն մոխիր մի ցանիր. յես կերթամ ու Զավենը կը բերեմ...

Նրա վճռականությունը տեսնելով Ռեհանը նախ ապշահար մնաց, ապա հիացմունքի և ուրախության զգացմունքով լցվեց: Նա ըմբունեց իր կանացի ուժերի անզորությունը և առնական մի ուժի

միջամտությունը այդ գործում: Յերեխան գիրկն, կանգնեց գետափին ու սպասեց սրտատրոփ, հուզված:

Հարութը սիրտը դող, ջուրը մտավ. այնտեղ ավելի մոտ և ավելի բարձրագոչ հնչեց ականջին մահ զողանջող գնտակների ոճապատճյա թշոցը, փախտականների սրտամշուկ հեծեծանքները. զգաց այլանդակված դիակների ծածանումը ալիքների թևերին. ցայտցայտող փրփուրների արյունոտ զույնը տեսավ և տարերային, բնազդական մղումով ընկրկեց հետ ու հետ: Կոհակների մի մեծ գեղ լեռնացավ շուրջը և տաշեղի պես տարուրերեց նրան և նա զորավոր ճիգով հենվելով գետի մեջտեղը ցցված մի քարաժայուի, անշարժացավ: Տաք քրտինքը պատեց ճակատին և հոգին չարչարեց վարանումի մղձավանջային զգացումը: Դառնալ թե շարունակել ճամբան...

Վերագառնալ... իսկ Զավեն, մնա այնտեղ անտեր, անպաշտպան, ինչպես արդարանա պիտի իր խղձի առաջ, քանի վոր սեփական ձեռքովն եր լքել նրան. ինչ պատասխան պիտի տա Ռեհանին, ինչպես ինչպես այնուհետեւ համարձակ պիտի նայի նրա աչքերին...

Շարունակել ճամբան... Բայց գուցե չկա այլևս իր վորդին. գուցե մի մոլար գնտակ պատառուտել և նրա գեռաւի կուրծքը. իսկ յեթե իր կյանքն ել զուր տեղ զոհվի կամ կատաղած թշնամիներին գերի ընկնի... Ո՛, այդ գաղափարը սարսափելի յե թվում նրան:

Ցեվ ահա մի զնտակ մթնոլորտան ակոսելով, մահարեր սուլուցով անցավ ականջի մոտից և Հարութը զիվահարի պես, միտքը շփոթ ու ժխոր, աչքերին մեզ ու մշուշ, հետ դարձավ ու ջրից դուրս նետվեց:

Ռեհանը, վոր գետեզրին կսպասեր անհամբեր, տեսավ նրան դատարկածեն ու գլխիկոր, կապոցի մեջ ամփոփած յերեխան տեղավորեց մի ապահով վայր և այս խոսքերն արտասանելով նետվեց գետը.

— Լաչակս զիւիդ լինի թող, կինարմատի սիրտ ունես...

\* \*

Դիշերվա խորը մթության մեջ Բանդիմանու վայրենի հորձանքներին կուրծք տալով, լողում եր մի կանոցի մարմին: Զգեստների մեծ մասը թաթախվել եյին ջրի մեջ և հովի ալիքներից ուռչելով առազաստի պես վերև քարձրանում մերթ կծկվելով, մերթ

փեշերն լայնացնելով։ Զղապիրկ թևերը չեյին հոգնում ճամբարանալուց, հոգին չեր ալեկոծվում մահարեր գնտակների անախորժ սուլումից։ Գիշովության գագաթնակետին հասած մայրական խանդաղատանքը հրդեհել եր ամբողջ եյությունը և հրում շեշտակի դեպ առաջ։ Յերբեմն, յերբեմն քշվում եր կուտակված ալիքների հոսանքից, դողովում ու ծածանվում ինչպիս տաշեղ ու կը թվերթե, ահա ջրամույն պիտի լինի, բայց բաղուկների քառապատկած ուժերը ճակատ առ ճակատ մաքառելով բնության տարերքի գեմ՝ հաղթահարում եյին նրան։

Յեկ նա գնում եր անգիտակից, անզգա, շուրջը տիրող սարսափին անհաղորդ նրա հոգին, կարծես փոխարքվել եր մի ուրիշ, մտքից ու զգայությունից զուրկ մշուշապատ աշխարհ...

Ահա վոտները կոխեցին ավազոտ ափը և սիրտը սկսեց բաղխել ուժգին։ ճուար փնտող թռչունի հոտառությամբ այս ու այն կողմն ընկած մարմիններն ու քարերը շոշափելով առաջ անցալ։ Ճանապարհը դատարկվել ամայացել եր, տեսնվում եյին միայն արյունլվա, խոշանգված դիակներ, վիրավորներն ցավատանջ աչքերով նայում եյին հիմարորեն կամ սողոսկելով քարերի միջից ուշացող մահվան անեծք կարգում։ Ահա Ռեհանի մատները գիպան Զավինի մարմնին, վոր մայրը կորցրած ճուտի պես, հրազենների պայթումներից խելանեղ, կծկվել եր մի քարի տակ և աչքերն հառել անորոշ կետի։ Ռւրախությունից խենթացած Ռեհանը խոտեց վորդին, այտերից կարոտի բոցավառ մի համբույր քաղեց ու գրկում սեղմած նետվեց գեղի գետը։ Նորից նրա լեռնական կուրծքը ճակատեց բնության ամենի տարերքի գեմ։ Վորպեսզի զավակը չըթրջվի՝ ձեռներով վեր կբարձրացներ ջրի մակերեսույթից և այդպիս դանդաղորեն առաջանում եր դեպի հակառակ ափը։ Հողին լին եր վորդին ազատելու անհուն բերկրությամբ և աչքերի մեջ կը չողային ներքին հրճվանքից արցունքի փոքրիկ կաթիլները։

Ահա գետափը և նրանը փրկված են։ Բայց ավագ... Հաղիվ Ռեհանը վոտքը դրեց ափին, մոլորուն մի գնտակ թունավոր ոձի պես ֆշալեն գալով դիտապատ գետին զլորեց նրան և նա առանց ձայնի, ձեռներով պինդ գրկեց յերեխան ու աչքերն փակեց...

Բանդիմահուն վոռնում եր անոելի մոլոցըով և ալիքները փրփուր փսխելով խուժում եյին դիակի վրա, վոտներն ու ջրաթախ հագուստի փեշերը լիզում և արյունը խմելով հետու հետ փախչում։ Ռեհանը ընկել եր մեջքի վրա, մազերը ցրիվ, անկանոն, աչքերը կիսաբաց, վորոնց բիբերի միջից կարծես կայծկըլ-


տում եր մայրական գերազույն կամքը։ Վոտներն ու փեշերը խաղալով կոհակների հետ, համբուրում եյին սառնորակ կաթիլները։ Խավարի մեջ, մարդկային մի ուրվական ցցվեց, վորը կուանալով Ռեհանի անշնչացած դիակին, խելագարի նման լայն բացած աչքերը հառեց նրա պաղ, մեռելային դեմքին և դեղնահարշթունքներին, վորոնց վրա զարհուրանքով կարդաց հետեւյալ խոսքերը։

— Լաչակս գլխիդ լինի թնդ, կինարմատի սիրտ ունես...

«Բայց յես կինարմատի սիրտ ունեմ» մ...

Այս միտքը դաժանորեն շանթահարեց Հարութի ուղեղը...

1917 թ.



## ԾԱԻԹ ՎՈՍԿՈ

**ՄԵծ յեղբոր՝ Աշոտի հարսնիքին,** Արշակն այնպես տխուր եր,  
մտածկոտ, վոր կարծես ինչ վոր վատ բան եր պատահել: Քսան-  
հինգամյա ջահել, բարձրահասակ, թրվուն մի տղա, թաղի ամու-  
րիների թագն ու պսակը, նստել եր սենյակի մի անկյուն և տար-  
վել տխուր մտքերով, իսկ շուրջ բոլորը, ամենքը կթավային,  
կերգեյին, կծծկտային ու վանի չալկին կնվագեր ուրախ ու պայ-  
ծառ:

**Մայրը, Մարիամ խաթունը, մոտեցավ նրան և ասաց.**

— Արշակ ջան, տղա, ինչո՞ւ այդպես տխուր ես թազա հարսի  
պես, վեր յել, ամոթ ե, յեղբոր հարսնիքին ուրախության փոխա-  
րեն այդպես մի անկյուն կնստեն, ըե՞ն ես պահել, ինչ ե, տեսնողն  
ինչ պիտի մտածի... .

**Տղան չպատասխանեց, թուիս, խոշոր աչքերը հասեց ինչ վոր  
կետի:**

— Հա, զիտեմ, տղիս սիրու կթոթուա, կողակից կուզի, թե  
չե այսպիսի փառավոր որ Արշակս լուս նստողը չեր, — շարունա-  
կեց մայրը քնքշությամբ, — լավ, մի որ ել քեզ կպսակեմ, ջանս, դեռ  
հասակդ բնչ ե վոր, դալար վոստ: Որ շատ, տարի շատ, քեզ չը-  
պսակած գերեզման իջնողը չեմ...

**Տղան անհանգիստ շարժում գործեց և վեր յելավ:**

— Թող, մայրիկ, վոչինչ չկա, զլսացավ եր, անցավ...

Արշակը մի վարկյան կանգնեց բարացած, իրեն եյին հա-  
ռել մի զույգ սեռորակ, հիանալի աչքեր... Յերանուհին, նորեկ  
հարսը, վոր նստել եր սենյակի մի անկյուն՝ ծիրանեգույն շղարշի  
մեջ, հասակը չինար, ունքերը նուշ, զեմքը Արտամետի խնձորին  
պես ալ: Բայց ինչո՞ւ Արշակի մարմինը սարսուաց անգուստ ։ Մի  
կարմիր ալիք հորձանքեց անմազ զեմքը և սիրու բարախեց ա-  
րագ ու արագ: Ու այն հոգեկան խոռվը, վոր մշուշել եր միտքն  
այն որից, յերբ հայտնի դարձավ, վոր Յերանուհին կամուսնանա  
եր յեղբոր հետ, այժմ ավելի ցնցեց նրան, մղավանջ դարձավ...

Վաղուց կճանչնար Յերանուհուն: Հարեաններ եյին, ման-  
կության խաղընկեր: Քանի, քանի անգամ պահվըտուք եյին խա-  
ղացել պարտեզի ծառերի տակ, ջուրերի յեզերքը, ընդարձակ բա-  
կին մեջ, իսկ յերբ Յերանուհին մեծ աղջիկ դարձավ, հասունա-  
ցավ, Արշակի սրտում գրավեց ամեննեն զգայուն տեղը և ամեն  
անգամ Յերանուհու անունը հնչելիս, սիրու կխշար ու կթըր-  
թուար, ինչպես լարը ճութակին: Արդյոք կը սիրեմ, ջահելու հրայը-  
քոտ հասակի բովանդակ զգացմունքով, թե մանուկ որերի քաղցր  
հուշերի մի անդրադառնեն եր միայն... Յեկ սակայն Յերանու-  
հին ավին իր յեղբորը, ինչ կընար անել, յեղբայրն յերեք տա-  
րով իրմեն մեծ, պսակվելու կարգը նրան եր: Յերանուհու ձեռքը  
ինդրեցին, տվին: Սովորական բան...

Սենյակի ճակատին հյուրերի մեջ նստել եր Աշոտը, փեսան,  
որվա հերոսը ու չընաղ մի աշխարհ տիրակալողի պես՝ կնայեր  
հաղթական, ինչու չե, թաղի ամեննեն գեղեցիկ աղջիկը կըները  
կին, բախտավոր մարդ...

Ահա նա կանչեց Արշակին իր քով, բայց վերջինս չլսելու  
տվեց, դուրս յելավ սենյակից: «Ծաղիկը ձեռքես խեցին, տա-  
րան»... մրմիջաց ինքնիրեն և արտասուքի հորձանքն աչքերում  
իջավ բակը, բայց այստեղ մարդիկ կային: Իսկ Արշակը կուզեր մե-  
նակ մնաւ մենակ իր խոների հետ: Արտասվել կուզեր...

Պարտեզը գնաց ու թիկնելով կեռասենուն, լացավ:

«Զեռքես յելավ, զնաց...

Յեկ սակայն ինչ կարող եր անել, պետք եր հաշտվել իրու-  
ղության հետ: Մի քանի հյուրեր զրունում եյին պարտեզում: Նա  
ինքինքը զսպեց: Սըրեց արտասուքը աչքերի և վերադարձակ  
սենյակի:

Այն գիշերը նա բազմաթիվ անգամ պարեց, յերգեց, ցըն-  
ծաց, բայց յերբեք չնայեց Յերանուհու կողմը:

Յեկ Յերանուհին մնաց նրա սրտի խորքում, վորպես թա-  
գուն, բաղցրիկ հուշ...

## II

Արշակն ինչպես պիտի ապրեր յեղբոր հետ, միենույն առաս-  
տազի տակ, յերբ ամեն ըոտե պիտի հանդիպեր Յերանուհուն:   
Վորոշեց բաժանվել: Աշոտի պսակվելին մի ամիս չանցած, Արշակը  
իսոսքը բացավ այդ մասին, առարկելով, վոր տունը նեղվածք եւ  
յեղբորը չի ուղում անհանգստություն պստծառել: Աշոտը թեև

աշքի լույսին պես կտիրեր նրան, չառարկեց և բաժանվեցին: Արդյոք յեղբայրը կասկածում եր վորեւ բան, հայտնի չե: Արշակը մոր հետ բնակվեց մի ուրիշ բնակարանում:

Մարիամ խաթունը վշտացավ, արտասվեց:

— Ոջախս կուզեն քանդել, տրորել, յերկու մասի յեն բաժնում ոջախս...

Ու հիշեց ամուսինը՝ Մարկոս աղան, վորի յերջանիկ հոգին վաղուց եր ապաստանել մյուս աշխարհը, վոր անշուշտ ոջախ շինել եր վոչ թե նրա համար, վոր այսոր վորդիները կիսկեն, յերկուրի բաժնեն...

Արշակը հիանալի կերպով կարող եր տուն պահել. աշխատունակ, կտրիճ տղա, լավ արհեստ ուներ ձեռքը, դերձակություն, մուշթարիները շատ, գործը հաջող: Սկզբի որերին Մարիամ խաթունը վշվաց, տրանջաց, հետո վարժվելով նոր կյանքին, լրջորեն սկսեց մտածել տղու ապագայի մասին:

— Պիտի պսակեմ Արշակս, տարիքն հասել ե, լավ աղջիկ ճարեք, տղիս հարմար ապրանք:

Ասում եր նա հարևան կանանց ու նրանք միասին կսկսելին քննության առնել Սյդեստանի աղջիկները, աչքի ականջն անցնել:

— Կալոյենց աղջիկն ուզե Մարիամ խաթուն, շատ գեղեցիկ ե, չինարի բոյ, նշանեւ աչք-ունք ունի:

— Ինչիս ե պետք գեղեցկությունը, թող բնավորությունը լավ լինի, ձեռքից աշխատանք գա, կերակուր յեփել, լվացք անել, մարդու հետ վարդել գիտենա, այդպիսի աղջիկ կուզեմ:

— Վոր այդպիս ե, յես քեզ կիամենամ Մանուշակենց Վոսկոն, համեստ, խոնարհ աղջիկ՝ ինչպես գառը, լեզուն կարճ, ձեռքն յերկար, ամեն բանի ընդունակ, տան իսկական հարս, — հայտարարեց դրացուհին, վոր չարն ու բարին զանապանող կին եր:

Սյդ որվանից Մարիամ խաթունը լուրջ կերպով սկսեց մտածել վոսկոյի մասին, հարցուփորձել:

— Ծնողներն վոսկի մարդիկ, ամենքի հետ նստել, կանգնել զիտեն. լավ գերգաստանից հարս բեր, վոր նամուսով լինի և ոջախող վառ ու պայծառ պահե:

— Զանը, յես ել այդպիսին կուզեմ, տունը պահող, ծաղկեցնող ապրանք:

Դրացուհին յերկար դրվատեց վոսկոյի բարեմասնությունները: Ճարտարախոս կին եր, համոզեց Մարիամ խաթունին: Հետաքրքրությունը շարժեց:

Յերբ մայրը վորդուն հայտնեց իր ծրագիրը նրա ամուսնության մասին, վերջինս նախ հուզվեց, վոր մայրն ինքնագլուխ ծրագրեր կը կազմե, հետո խնդաց նրա վրա և ապա լռություն պահեց: Բայց այդ բոլորը Մարիամ խաթունին մազաչափ չագդեցին:

— Զե, վորդի, քեզ չպսակած գլուխս հողի տակ դնելու չեմ. լավ ժամանակն ե, տունդ շենցնող հարս և պետք:

Արշակը կրկին խնդաց և առանց պատասխանի հեռացավ, նրա ժպիտը համարվեց համաձայնության նշան: Վերջապես, այդ դործը կիներուն կլատկաներ ու Մարիամ խաթունն աշխուժ գործի անցավ: Շատ չափեց, չափչից, քաղաքի ծանոթ ու անծանոթ աղջիկները քննության առավ ու վերջը վոսկոյին ընտրեց.

«Լավ աղջիկ ե, կըսեն, հին, նամուսով տան շառավիդ...

Ու սկսեց համոզել վորդուն: Արշակը կզգար, վոր ամուսնության ժամանակն ե, մայրը ծերացել ե, աշխատող ընկեր և պետք: Բայց նվազ եր վոսկոն, վոր այդքան կը գովկեր մայրը: Մանկուց աղոտ կը հիշեր, պղտիկ, թիւահեր մի աղջիկ, այժմ չեր կարող լավ պատկերացնել. անշուշտ լավ բան լինելու յե, վոր մայրն այդքան կոռվարանե, մայրն իր վատը պիտի ցանկա և վերջապես լինչ ել մինի, չի հավասարի Յերանուհուն... Յերանուհին ուրիշ եր, ձեռքես գնաց... Տրտմության մի թանձր ամպ մշուշեց նրա հոգին:

Նա ել հարցուփորձեց վոսկոյի մասին, բայց վատ բան չլսեց: Մի անգամ ել հաջողվեց տեսնել նրան, նույն պղտիկ, թիւահեր աղջիկ... Յեզ դեռ վորեւ յեղբակացության չհանգած, յեկավ նշանութը որը, մայրը շատ եր շատապում, իսկ վոսկոյի բարեկամներն ուրախությունից չգիտեյին լինչ անել. հաջող փեսա եյին ճարել, համեստ, աշխատավոր ձեռք:

Նշանութը Արշակի համար անցավ լինչպես մի մշուշապատ մնուրջ: Բոլոր արարողությունների ընթացքում՝ Արշակի հոգում պայծառացած մնացին իրեն հառած զողարիկ, զարմացող աչքերը...

Յերանուհին նստել եր իր կողքին, վոսկոյինց ասնը: Մանիշակուցն զլսացորի տակից կպսպղար մետաքսյա նուրբ գեմքը, ինչպես լուսինը ձերմակ ամպի ծվեններից: Յերբ վոսկոն մոտեցավ նրանց ձեռքը թոթվելու, Յերանուհու աչքերը մի պահ շուշացին ու կինարունացան Արշակի վրա ու կարմրավարդ այտերին գծագրվեց մի թեթև ժպիտ, վորը մի պահ փայլատակեց շառաւունած գիմքը... Արշակի ամբողջ մարմնովը մի սարսուռ անցավ, ինչու Յերանուհին այդպես համառ նայեց իրեն ու ժպտաց: Ար-

դյոք հեզնեց, վոր վոսկոն իր պես չինարի բոյ, աստղաշող աչքեր չունի, կարճ, թմբլիկ, սեռակ մի աղջիկ, թե ափսոսաց, վոր ինքն Արշակի կինը չեղավ, Արշակի կինը...

Ու մշուշվեց հայացքը տղի, մտքերը բոլոր խառնվեցին շփոթ ու սիրտը գողաց, ինչպես տերեն հողմակոծ:

### III

Մայիսյան մի պայծառ որ կատարեցին հարսանիքը, յերբ ամբողջ Այգեստանը զուգվել եր գարնան հրաշալիքներով, ծաղկել, յերբներանգ քողով պճնվել: Հաղար ու մի միտք պաշարել եր Արշակին, չգիտեր ուրախանալ, թե տրտմել այդ որը: Տունը լեցուն եր ջահեների բազմությամբ, սաղի ու յերգի ձայնը բռնել չորս աշխարհը և ասեն վոք կվաղեր, կթրվուր, կպարեր ու ծափ կուտար: Իսքը նստել եր սենյակի անկյուն, լրջախոհ, հանդիսավոր դեմքով, տոնական շորերով, իր պղտիկ, շղարշված հարսի կողքին:

Կղիտեր հրավառված լույսերի տակ շարժվող բազմությունը, վոր կը վետվետեր ինչպես ծովական ալեկոծ ու գեմքերը ժպտուն, մարմինները բազմաձև, վորոնք կանցնեցին շարժական ստվերների պես: Կունկնորեր վանա սաղի ուրախ թրթիւներն ու հեծկլտամնը բը սրտակեղ, արեւելյան յերգերի այն խուժող ու նվազողներդաշնակությունը: Իսկ վանի ջահել աղջիկներն ու հարտները, թե առ թե, բոլորաձև կպարեյին շարժելով ֆիստանների յեղերքները, կուրծքերնին արձակ, գեմքերով ժպտուն:

Բայց նա յերբեք չմոռցավ ու չպիտի մոռնա այն վարկյանը, յերբ Յերանունուն մեջտեղ բերին ու սափակեցին պարել, յերբ բազմությունը մեծ շրջան բացավ ու իր ծիրանելվառ շրջազգեստին մեջ, գեղաչվի ու չինարի բոյ Յերանունին թուավ ու ինչպես արաբական նժույգ, շրջան գործեց, շարժելով մարմինը բարեձև և հիտնալի մեջքը, թափահարելով թևերն արձակ, փայլեցնելով գեմքը լուսնկա:

Ամենքը կծափեյին և կղիտեյին լարված ուշադրությամբ ու կկանչեյին ձայները բարձր ու հաղթական:

— Հեյ, ջան Յերանունի, կեցցես դու Յերանունի...

Յերանունին կթոեր ու կծփար կուրծքն ալեկոծ, վորպես հորձանքող ծով. զեղեցիկ գեմքը շառագունել եր յերկնային ճաւանչով. այդ նշանավոր վարկյանին ի մի հափաքելով իր բոլոր գրավչությունները, նա կուզեր ցույց տալ, թե տեսեք, յես ուր,

ձեր թագա հարսն ուր, ինձ ել նայեք, նրան ել ինչպես վայրի կակաչը վարդին, այնպես ել վոսկոն ինձ հետ համեմատեցնք...

Արշակի մեծ յեղբայրը, կնոջ հրապուցրներն ու հաջողություններն գոհ, ձեռներն բաճկոնի գրապահները գրած, այնպես կնայեք, ինչպես հաղթությունը տարած զորավարն իր զորքին, կարծես մի ամբողջ չքնաղ աշխարհ եր դավթել, անհաս, յերանելի աշխարհ...

Մարիամ խաթուն ընկղմել եր թավիշյա բազմոցի մեջ, իրեն տարեկից խաթունների հետ, ուսած ու վրկած այն գիտակցությամբ, վոր յերկու տղաները պատկել, սրտի փափակը կատարել, ուրեմն ամենեն յերջանիկն եր այն որը:

Իսկ Արշակի սիրաը կճմլվեր, գլուխը կպտույտեր հողմաղցի պես: Զեռները գողացին, իսկ աչքերը թրջվեցին արցունքների խուժումից, չկրցավ համբերել, կամացուկ գուրս յեկավ սենյակեն, պարտեզը գնաց: Թող վոչ վոք չտեսնե զինքը, վոչ վոք... ու վղձկաց Արշակն այնպես աղու, այնպես սրտմաշուկ, արցունքները հոսում ելին անզուսպ ու հորդ...

«Քնաց ձեռքես, զնաց...»

Ու թաշկինսակը պինդ հպեց աչքերին:

Մայրն իջավ ներքե վորդուն փնտոելու, պարտեզը գնաց ու գտավ նրան, թեև արշակը հանկարծակիի գալով, աշխատեց այնպես ցույց տալ, վոր վոչինչ պատահած չե, բայց մայրը նկատեց նրա հուզմունքը:

— Վախ, աչքերս քոռանան թող, յեղնիկո, իմ փառքն ու պսակը, այդ ինչ ե պատահել ըեղ:

Ու անսահմանորեն սիրող աչքերը ըթթելով նրան, սրտաձաք, համբուրեց մեղմիվ աղի գլուխը: Մի վարկյան չանցած, մի ուրախ գլխաւճագյթեց խորշումած գեմքին:

— Ա՛, հասկացա, այժմ զիտեմ, թե ինչու դառնացել ե սիրուղի, յես ել պսակելուս որն ուրախությունից կուլայի, հանաք բան չե պսակվելը:

Տղան լուռ մնաց ու մոր հետ վերադարձավ սենյակ, բայց նրա հոգին ձմռան յերկնքի պես մնաց մառախուղված...

### IV

Ամուսնությունից հետո Արշակը փոխվեց: Ել տուաջվա կենսուրախ, թրվառն ջահելը չեր, այլ ծանր գլուխ, աշխարհի չարն ու բարին տեսած մարդ: Աշխարհի ցավը ու չոռը, կարծես նրան ելին

տվել: Առավոտը կանուխ գործի կերթար, մինչև իրիկնամուտը ասեղ կղարներ ու ամեն մեկ ասեղ զարնելուն՝ մի հառաջանք կը թռչեր կրծքեն, խոր հառաջ: Հաճախ, իր հոգին մութ ամպերով կմթագներ ու կալեկոծվեր փոթորկված ծովի պես: Իրիկունները տուն կուգար հոդնած, վաստակաբեկ: Կճաշեր լուռ: Թիշ կղրուցեր մորն ու կուջ հետ, յերբեմն դժկամակությամբ կպատասխաներ արված հարցերին: Ճաշից հետո սրճարանը կերթար, կնսուեր մինչև ուշ գիշերը ու կղնար տուն, յերբ բոլորը քնած եյին վագուց:

Մարիամ խաթունը կոկիծով կհետեր վորդու մեջ կատարվող այդ փոփոխության, շատ քիչ կխոսի տղան, տանը չի նստում, մոր և առաջլա Արշակը... Ծծղկառն իր Արշակը:

— Տղիս աչքի տվին, չար աչքի, փոխվեցավ գնաց, թող այդպիս արողի տունը ավեր դառնա:

Կմտմտար ու տրտմորեն կճոճեր ալեմազ գլուխը: Հարսից թեե գոհ եր, թեե Վոսկոն ամեն աշխատանքի զառան պես լուռ ու մունջ կվագեր, բայց Մարիամ խաթունը Յերանունուն ավելի կոիրեր կան Վոսկոյին:

— Յերանունիս արլան-թարլան, հատը չկա քաղքին մեջ:

— Վոսկոն ել թայը չունի, բայց Յերանունիս ուրիշ բան ե...

Խոսում եր Վոսկոյի ներկայության, յերբ առիթ լիներ այս կամ այն բարեկամին՝ հարսների մասին կարծիքը հայտնելու:

— Ե՞ն ջանըմ, ամեն մարդ իր ճակտի գրին, իրեն սահմանագած գծին, մեկը լավ, մյուսը վատ, աշխարքի բան...

Ու Մարիամ խաթուն այսպիսով կփակեր խոսակցությունը:

Հաճախ, յերբ տղան գիշերները կուշանար կամ դժկամ կխոսեր մոր հետ, վերջինս կսրանեղեր, մայր եր չե, աշխարք տեսած, փափկասիրտ կին, ու իր հոգու դառնությունը պիտի արտահայտեր չե, տղի վրա չեր կարող, վորովհետև նա իր վորդին եր, ջիգարը ու սրտնեղության առարկան կղառնար Վոսկոն:

— Այ աղջիկ, ինչ կարձ բոյ ունես, մի թիզ, մորդ բոյն ել այդպես եր, հարսնիքդ չտեսած մեռավ, յերջանիկ լիներ հարսնիքը կտաներ, հետո կմեռներ:

Կամ՝

— Յերեսներդ ինչո՞ւ այդպես պուճուր են, յերկու մատ, թուշ չունես, ինչ ե:

Վոսկոն լուս կլսեր կեսրոջ խոսքերը: Ասենք նա առարկել չպիտեր, յեթե պնդեյին, վոր մածունը սև ե, կհամաձայներ չա-

ուարկելու համար, թեե համոզված եր, վոր մածունը սև չե ու չե կորող լինել: Առարկելը նրա համար նեղություն եր, զլխացավանք: Վոսկոն հենց սկզբից զգաց, վոր ինքը սիալ տեղ և ընկել, վոր թե կեսուրը և թե մանավանդ ամուսինը չեն ախորժում իրան: Բայց իր բախտն եր, կյանքը, պիտի քաշեր: Նա կղզար և այն ել վաղուց, վոր ինքը կարձ հասակ ունի, մի թիզ: Մարմինն ել փոքր, կճատ ավել: Դեմքը պղտիկ, բոլորակ, աչքերն ու շրթունքներն այնքան են մերձեցել իրարու, վոր այտերին շատ քիչ տեղ են թողել: Ուրիշները գեղեցեկ եյին ծնվել ու հասակնին ձգել ինչպես բարդի: Բայց ձեռքունքն ինչ կար, աշխարհի խոնարհ: Հոր տանն ել քչխոսիկ, շատաշխատիկ աղջիկ եր:

Սակայն Վոսկոն տվին Արշակին: Քչերն ելին հավատում, վոր նրա բախտը կարող և այդպես կտրուն լինել: Թաղի ամեննեն փնտոված ջահեներից մեկի կինը... Այն Վոսկոն, վոր հոր տանը ժամերով նստում էր սենյակի մեկ անկյուն, անձպտուն գուլպա գործում ու կարելի յեր չխմանաւ, վոր այստեղ մարդ կա նստած, կենդանի արարած...

Բայց Վոսկոն ել սիրտ ուներ չե, մարդ եր, մարդու աղջիկ ու այդ ամենի մասին միտք կաներ, մաշող, անազմուկ միտք...

Յերբ Յերանունին կգար իրենց տուն, այդ խուրնի հրեղեն հարսը, Մարիամ խաթունի սիրեկանը, կնսուեր ժամերով կեսրոջ հետ կխոսեր ու յերբեք Վոսկոյի կողմը չեր նայում, իրը թե նա չկա: Յեթե նայեր, վերից վար կշափեր սուր հայտքով: Կհեղներ, ծաղկ կաներ...

Մարիամ խաթունը Յերանունու հետ կխորհրդակցեր, նրա կարծիքը կիմանար տան գործերի, լվացթափի, կերուխումի, ամանչամանի մասին: Տան բոլոր գաղտնիքները կհաղորդեր նրան ու մարդու տեղ չեր հաշվում կրտսեր հարսին: Կարծես Արշակի տան հարսն ել Յերանունին և: Վոսկոն հեշ, գոյություն չունի... Հաճախ, կեսուրը Վոսկոյին կհրամայեր.

— Աղջի, վեր յել, հաց բեր, պտուղ ու քաղցրեղեն բեր, յեղնիկս անուշ անի:

Ու Վոսկոն կվազեր լուս ինչպես աղախին, կբերեր ամենաընտիր անուշեղինները ու կշարեր տագեր կնոջ առաջ: Վայ նրան, յեթե վորեւ բան պակաս թողներ, ուտելեղենը թափեր պատահար կամ ափսեները ծուռ զասավորեր.

— Հըմ, հող գլխիդ, ուշագրությունը վրեն կպահի վոր, բան սովորեցնող ել բերենք պիտի:

Յերանուհին սուր կերպով կնայեր Վոսկոյին, քթին տակ կինդար ու փայլում եյին նշաճե, սևորակ նրա աչքերը: Մինչ Վոսկոյի մարմինը կղողար, ջղայնությունից չգիտեր ձեռներն վորտեղ պահել, կեսրոջ խոսքերը տագեր կնոջ ներկայությանը, վորին ատում եր իր հոգու բովանդակ ուժերով, մուրճի պես հարվածում եյին ծանր ու դաժան:

— Անուշ արա, ջնաս, այդ աղվոր աչքերիդ մատաղ. տանս դուռը կրնկի վրա բաց ե քեզի, գնա, յեկ...

Մարիամ խաթունն այնպես կխոսեր, վոր կարծես Յերանուհին եր այդ տան տերը, իսկ Վոսկոն ծառայելու համար եյին բերել, գին չունեցող մի ապրանք, վոր կամ չկա տան մեջ, մեկ ե: Յել յերը կեսուրը հարցնում եր ավագ հարսին գործերի մասին.

— Պետք ե այսպիս անել, խաթուն, — պատասխանում եր Յերանուհին ինքնավստահ ու անմիջապես կհետեւ էսրոջ յեղակացությունը:

— Կեցցես, թայը չունի վոր, վոր քաղքին մեջ մեկ հատիկ հարս ե, անգին բան, վոսկի...

Այս բոլորը կազդեյին Վոսկոյին, սիրտ ուներ չե՞ ու կմղոներ, կաղնձվեր լուս, հոգեմաշ, ինչպես ներսից միսացող ծառ...

## V

Ժամանակն արագ անցավ, յերկու տարի: Աշխարհն եր շըրջանն արագ միենույն թափով, հետեւ քարշ տալով մեր վողորմելի կյանքը: Բայց Վոսկոյի վիճակը դեպի լավը չգնաց: Արշակի վոտքն ավելի ու ավելի կարվեց տնից: Հաճախ գինետներն եր ընկած, յերեմն ել հարբած կզար տուն: Շատերին զարմանք ու ցավ պատճառեց նրա այդ կյանքը, անհասկանալի բան: Մարիամ խաթունի մազերն արագործն ձերմակում եյին ու դեմքի կնճիռները բազմապատկվում սրտի մորմոքից:

— Պատկեց տղաս թե չե այս որն ընկավ, իմ ազիզ, ծծղետուն տղաս—մտմատում եր ձեռները ծունկերին զարնելով:

«Ուրեմն յես եմ մեղավորը... մտածեց Վոսկոն ու այդ միտքը կամրանար, կամաց, կամաց կհիմնավորվեր ուղեղում:»

Արշակը իր յերեսին չեր նայում, զիշերներն ուշ կպառկեր անկողին, մեջքի վրա կխոմքար. թող Վոսկոն կծկվի անկողին մեկ անկողուն, չորսա ու պապանձվի, ինչ հոգ...

Գարնան վերջերին նրանց տան մեջ տեղի ունեցավ մեծ փոփոխություն: Արշակի մեծ յեղայրը գյուղերում հողեր

ուներ, մալ տավար, վար ու ցանքսով կզբաղվեր: Մի անգամ գյուղը գնաց ու չվերտարձավ. լուր բերին, վոր քրդերը ճանապարհին սպանել են, ավազակային սխրագործություն...

Յերանուհին այրիացավ: Մարիամ խաթուն յերկու շաբաթ մե շոր կապեց զլխին, արտասկեց, քիչ կերավ: Ու յերբ սուզը վերջացավ, Արշակին ասաց.

— Յերանուհին մեզ մոտ բերենք, մեր հարսն ե, մեր նամուսը, պետք ե մենք պահենք, յեթե ծանրություն լինի, ջահել կնիկ ե, կարող ե մարդու գնալ:

Արշակը գլուխը թեքեց վորպես համաձայնության նշան, սակայն նրա սիրտը խայթեց ինչ վոր բան... Վոսկոն սարսափահար նայեց կեսրոջ աչքերին և ուզեց ինչ վոր ասել, բայց լոեց, լեզուն չեր շարժվում, իր ձեռքին ինչ կար վոր, իզուր եր իր միջամտությունը:

Այն որ կարելիս Արշակի ձեռքը հաճախ գողաց և ասեղը սխալ զարկավ, Յերանուհին իր տուն, ինչ անակնկալ, յերազի մեջ խոժ չլինի, սիրտը սկսեց զարնել բերկալից և սակայն ինչու ուրախանալ, իրեն ինչ, ուրիշի կինը չե՞ր հաշվում հանգուցյալ յեղորդ կինը և վերջապես չե՞ վոր ինքը կին ունի, Վոսկոն... Յել մտքում անիծեց այն որը, յերբ Վոսկոյին իր տունը բերավ:

Սակայն ինչպես ապրեն պիտի նրանքին հարկի տակ. ինչպես պիտի պահն իրեն, վոր տան մեջ թյուրիմացություններ չպատահեն: Ծանր մտքերը պաշարեցին Արշակին ու հոգու վրա ծանրացան մառախլապատ ամպերը, սիրտն այնպես կզարնե, ինչպես ժամացուցի սլաքը, ուրախությունից... Ասեղը կթոշի մատներեն, կսահի ու չի հնապանդում. սխալմամբ մի քանի անգամ ձեռքը ծակծկեց, արյունը գուրս ծորաց: Ու ամբողջ որ անհանգիստ եր, զարնան վարարած գետի պես:

Յերեկոյան վաղ տուն յեկավ: Զանազան տեսակ պտուղ ու քաղցրավենիք բերեց հետը, կարծես մի նշանավոր հյուր ունեյին:

Վաղուց չեր տեսել Յերանուհուն, վերջինս այն ժամանակ կայցելեր իրենց, յերբ Արշակը բացակա յեր անից: Արշակն ել կիսուսափեր յեղորդ տունը յերթալուց: Իսկ այժմ Յերանուհին յեկել ե արդին իր տունը և պիտի ապրի այնտեղ, յերազում չինից արդյոք...

Յերանուհին նրան գիմավորեց շառագունած այտերով և անուշիկ ժպիտով: Սև հաղուստի մեջ, այնպիսի չընալ փայլ ուներ

նա, վոր պատահած դժբախտության արտահայտությունը չկար, նախորդ որերի նույն պայծառությունը, նույն հմայիչ, դյութական ժպիտը...

Տղին տեսնելով Մարիամ խաթունը փղձկաց.

— Յերանուհին մեզ մոտ յեկավ, այրիացավ յեղնիկս, ախ, իմ խեղճ, իմ սիրելի Աշոտ, թող գնդակը սրտիս դիպչեր ու քեզի վոչ, այս վոր քարսրտի ձեռքը բարձրացավ վրադ...

Ու հեկեկաց աղիողորմ Յերանուհին տրտում ու լուս, գլուխը խոնարհեց: Վոսկոն թաշկինակն աչքերին սեղմեց, արտասվեց: Վոչ վոր չիմացավ, թե ինչո՞ւ կարտասվեր Վոսկոն...

Արշակի կոկորդն ել սեղմէեց, գնաց պարտեղն ու յերկար, յերկար թափառեց ծառերի միջին, խաղողի թուփերի արանքը: Երա սիրալ չեր դառնացն վշտի արցունքները չեյին հոսում, հոգին այնպես վճիռ եր ու խաղաղ, ինչպես անամպ յերկինքը, աչքերի խորքում կհուրհուրար բոսոր մի ճառագայթ, այրող բոցը...

## VI

Զարմանալի նորությունն այն եր, վոր Արշակն այնուհետեւ դորձատեղից շուտ կվերադառնար և իրիկուններն ել տանը կը նստեր: Տարորինակ փոփոխություն ու չգիտեր ուրախանար Վոսկոն: Ուրախանալու առիթ չկար, յերը ամուսինն առաջվա պես չեր խոսում հետը, բանի տեղ չեր գնում, իր գորությունը տան մեջ մեկ եր նրա համար: Գիշերները թող Վոսկոն մեն մենակ կծկտեր անկողնում, շուռ մուռ գար այս կողքին այն, հաղար, հաղմզար, տխուր մտքերով տոչորվեր, ինքնիրեն հեծկլտար ու մղղներ...

Ամուսինը վոչ միայն կանուխ տուն կըգար, այլ հաղար ու մի բարերով բնոնված, դեմքին ուրախ ժպիտ, սափրած ու թարմ:

— Յերանուհու վոտքը բախտավոր յեղավ: Տղիս միտքը դուրսը չի, դեմքին ցնձալից ծիծաղ կա, չար աչքը կուրացավ...

Մարիամ խաթունը բերկրանքով կհետեւր վորդու մեջ կատարված փոփոխությանը:

Յերանուհին յեկավ թե չե, սկսեց այնպես վերաբերվել Վոսկոյին, ինչպես տիրուհին իր աղախնուն: Կարծես Վոսկոն ձայն չուներ տան մեջ:

— Վոսկոն, այս շորերը լվա, ամանները մաքրե, սկսյակի հատակն ավլե ու գորգերը թափ տուր, Վոսկոն:

Կամ Մարիամ խաթունին դառնալով.

— Վոսկոյին կարգադրե՛, թող այս բանը այսպես անի, այն բանը այնպես:

— Դու տանը պղտիկն ես, կրտսեր հարսը, ամեն ինչ դու պետք ե անես, տան լուծը կրտսեր հարսի վզին ե...

Կհայտարարեր Մարիամ խաթունը: Մեկ ել Յերանուհու կափսուար:

— Խուռնի հրեղեն ե, բերանս չի բռնում գործի գնել...

Այս, Յերանուհին թանգ ապրանք ե, նրա ձեռները լվացքի համար ստեղծված չեն, վոչ ել ավելի կոթը բռնելու: Նուրբ, գյուրաբեկ մեջքը կառուցած չեն հատակին ծոելու: Հագուստները մհամաքայա, միշտ մաքուր ու նոր, թողի համար կարված չեն: Իսկ Վոսկոն վոչ միայն կրտսերն եր, այլ Վոսկոն, մի հնազանդ գառ: Անբարբառ մի աղջիկ, հասարակ շորերով, ձեռները կոշտ, աշխատանքի համար ստեղծված հոգի:

Որ ու դաղար չուներ Վոսկոն, բավական եր մի պահ հանգիստ շունչ առներ, Մարիամ խաթունի ձայնը կհնչեր բարձր, տղամարդային:

— Աղջի, սեասիլոտ, փոշին բռնել ե տունս, չմաքրե՞ս, կապերաները չթոթափե՞ս, ձեռներդ թուլացե՞լ են, ինչ ե, քեզ տունս բերի, վոր շենշենլիք գցես, ձրի հաց ուտողը չբերի, հողը գլխիդ:

Յեթե պատահեր, վոր Յերանուհին վեր կենար ու տնազներ անելով ավելն առներ ձեռքը:

— Թող, անուշիկս, յեկ նստիր քովս, ավելին ձեռք տալը քեզ չի վայելում: տանս փառքն ես, յեկ նստիր:

Ու Յերանուհին կգար, խաթունի նման կրազմեր կեսրոջ կողքին՝ թափիցա բազմոցների վրա:

Վայ Վոսկոյին, վոր ուշանար կամ թերի կատարեր գործը: Մարիամ խաթունի ձայնը կհնչեր տիրական, բարկությունից ձեռները կդուզային ու դեմքի խորշոնների թիվը կրազմապատկեր: Սիրաը գող, Վոսկոն կվազեր գործի, աշխուժ ու ժիր, վոր կեսրոջ սիրաը խոշ լինի: Աշխատելու ժամանակ, հաճախ կը թվեր թե կեսրոջ աչքերն իրեն են հառել, կպսպղան, կիրամայեն, իսկ Յերանուհու աչքերը կհեգնեն թունոտ ու կփայլեն գեղեցիկ... Որերը կանցնեյին այսպես ու Վոսկոյի բերնից գըժգոհության խոսք չեր թոշում, անբարբառ թոչուն: Աղջիկ ժամանակն ել չխոսկան եր, յեթե խոսեր ել՝ այն ատեն, յերբ կարեք չկար, այդ նյութի մասին արդեն խոսել վերջացըրել եյին: Յերբեմն

կըժպտար, յերբ բոլորը ժպտացել եյին արդեն, և յերբ ընկերուն էին երը կինդային վրան, ինքն ել կինդար, համարելով այդ ամենը բնական: Ամեն բանի մեջ կուշանար Վոսկոն, ինչ անենք, վոր ուշ կմբոներ, հինգ բոպե հետո, բայց կաշխատեր, իր գործին եր:

Վոսկոն տանջանքով կղզար, վոր կեսուրն ու ամուսինը իրավացի չեն: Յերանուհին ել պետք եւ աշխատի, ինչով եւ ավել վոր, թե ձրի պահեն և թե ձեռքը կոնակին ժուռ գա, արդարություն եւ: Մի անգամ իր բարեկամներից մեկը հյուր յեկավ և տեսնելով Վոսկոյի վիճակը, չկրցավ զսպել ինքնիրեն, ասաց.

— Վոսկոն, փոխանակ Յերանուհին ծառայելու, ինքդ կծռայես նրան, չե՞ վոր բո տանը կապրի, վրադ են նստել Վոսկոն, աչքդ բաց...

Բայց իւեղձ Վոսկոն ինչպես աչքը բանար: Ամուսինը պետք եր պաշտպաներ, թեթիկունը դառնար իրեն: Մինչ Արշակը նրա յերեսին անգամ չի նայում ու թողնում ե, վոր խեղճը մեջքը կրի, վիզը ծոփ ու հոգսերի մեջ մաշվի, գնա...

## VII

Յերանուհու կյանքն այժմ ավելի լավ եր քան առաջ: Առաջ ինքն եր տուն պահողը, այժմ կեսուր ունի ու մանավանդ Վոսկոն, վոր կաշխատի ինչպես մեքենա: Ամուսնուն չեր սիրած բնավ, այդ լայնթիկունք, չեչոտ գեմքով մարդուն. վորքան տարբերություն նրա և Արշակի մեջ: Արշակը պարթի, հետաքրքիր, ծծղկտուն մարդ, մինչ ամուսինը մռայլ եր, իր գործերի ու հաշիվների մեջ ընկղմած:

Այժմ Յերանուհին տիրուհու պես կապրի: Առավոտներն ուշ վեր կիենա անկողնից ու ժամեր են պետք, վոր մազերը հարդարի հայելու առջև, ապա գուլպան ձեռքն դուրս կըգա այգին, այս ծասի տակ, այն կանաչ թումբի վրա կնստի, կգուշապայի ու կնայի հեռու, հեռու, այգեստանի կանանչ, կապույտ հետուները կամ դրկեց հարաների հետ զրույցի կրոնվի, բաղարի այս կամ այն աղջկա չարն ու բարին կրննի:

Ամուսնու մահը նրանից մի քանի կաթիլ արցունք խլեց, արցունքները խլեց, վորովհետեւ պետք եյին, չարտասվեր ուրիշների աչքին կզարնվեր: Սրա նրա մոտ վշշաց, հանաչեց, իրը թե մեծ, անբուժելի վիշտ ունի: Ժամանակն անցավ, ամուսնու մահ դարձավ հին պատմություն, մոռացված հուշ: Այժմ Յերա-

նուհին ուրիշ հոգսեր ունի, հուզումներ, ալեծուփ, գլխապտույտ մտորումներ... Արշակի հայացքը...

Յերբ ճաշի կամ ընթրիքի նստենք, աչքը իմ կողմն ե, դուրս գալուն ինձ կնայի, ինչպիսի վասվող աչքեր... կկարմրի ձիշտ այնպես, յերբ յես աղջիկ եյի ու նա ինձ հետ պարտեզում պահանջուր կխաղար: Այդ թիղկես Վոսկոն պիտի լիներ Արշակի կինը...

Ու կծփա Յերանուհին, հոգին մրրկահույզ կալեկոծվի: Կարմիր ալիքը կշառագունե գեմքը, յերբ հայացքն Արշակին առնե ու չի կարող նրա համառ հայացքներից աղատվել: Շատ լավ կղզա, թե ինչու Արշակը վաղ տուն կգա, իրիկուները տանը կանցնի և ամեն տեսակ բարիքները հետը կբերե: Վոսկոյի, այդ կծատ աշելիքն համար, ով յերեսին կնայի վոր, Արշակի պես ջիվան տղմն, նրա հոգին վաղուց կծանչնար, այդ դյուրագրգիռ, փոթորկոտ, առնական հոգին:

Այս մտորումների մեջ Յերանուհին, հաճախ յերկար կնստեր այգում կեսասինու կամ ինձորենու տակ, յերբ կիջներ մթնշաղը, Այգեստանի հիանալի, խաղաղ իրիկուն: Աստղերը կրանային վուկեզոծ աչքերը, կշողային կապույտին մեջ ցանված բյուրավոր աղամանզների պես: Գեփյուռը կթռչեր, կմատնահարեր ծաղիկների փակված թերթիկները: Յերանուհին ձեռներն յերեսին կոթնած անուշ յերազներով կորորվեր...

Բայց ահա մթնշաղի մեջ մի ստվեր... մարգերը թեթև խըշշացին, ովկ հ, մութին մեջ մի զույգ աչքեր համառորեն կնային:

— Յերանուհի...

Արշակին ե: Յերանուհին իսկույն կկանգնի, գլուխը պտույտ կուտա, աչքերը կմթնանան ու սիրուը կխշա Վանա ծովի պես:

— Յերանուհի, յես եմ չվախինաս, բարի յերեկո:

— Բարի յերեկո... կշնչա Յերանուհին ու գլխահակ, շփոթված լուռ կմնա:

— Յեկա տուն քեզ չտեսա, սիրտս նեղացավ, պարտեզն յելա հանդիպեցի քեզ, միս, ինչպես սաստիկ կզարնե այժմ սիրտս ու հոգիս կըերկրի ուրախ...

Յերանուհին ժպտաց: Նրա ժպիտը թեև չնկատեց, բայց զկաց Արշակը:

— Իսկ իմ սիրտը միշտ տիսուր ե, լավ որ չտեսած անտեր թուչուն դարձա:

— Այս, Յերանուհի, այդ ինչեր կխոսեն, ով քեզ անտեր

կթողնի. ինձ յեղբորս տեղը հաշվե, աչքիդ վերև հոնք ասող չկա, տունս, ջանս քոնն ե, ծաղկի պես կզահեմ քեզ...

Յերանուհին բերկրանքով լցվեց, ժպտաց նաղանի:

Արշակն ավելի մոտ յեկավ: Մարմինն ամբողջ կզողար ու սիրտն այնպես ուժգին կզարներ, վոր Յերանուհին անգամ կլսեր նրա սրտի ձայնը:

— Կհիշես Յերանուհի, յերբ դեռ պլտիկ եյիր, փոքրիկ, առուշիկ աղջիկ, ինչպես կվազվեյինք միասին ծառ ծաղիկներու մեջ, կանաչին վրա, ջուրերու յեղերքը. կհիշես...

— Ինչպես չե, ախ, յերանի այն որերը,—մըմնջաց Յերանուհին ու թեթև հառաջեց:

— Կհիշես Յերանուհի, յերբ մի անգամ պահվըտուք խաղացինք, դու պահվեցիր վարդի թուփերի մեջ ու յերկար փնտուելով հազիկ գտա քեզ, վարդի փշերից խայթվել եյին ձեռներդ, արյունոտվել և յես համբուրեցի ձեռներդ, կհիշես...

Յերանուհին ամեն ինչ կհիշեր մանրաման, պայծառ, բայց յերբ շատ մոտ զգաց Արշակի հրաբորոք աչքերը, սարսուռով լցվեց, նայեց շուրջ շոլորը, կարծես հազար-հազար աչք կնայեր ու հաղար հաղար ականջ ունկն կդներ... Արագորեն շուռ յեկավ:

— Կերթամ տուն, խաթունը կսպասե ինձ, ուշ յերեկո, տեսնողն ինչ պիտի ասի...

— Կաց, Յերանուհի—շնչաց տղան: Բայց Յերանուհին անհայտացավ ինչպես ուրու:

Նա մենակ մնաց:

Յերկար, շատ յերկար զբոսնեց Արշակը ծառուղիների յերկայնքնի վար, շվաց, սպողաց, մտորեց և անուշ անրջեց: Այն գիշերը, նաև հաջորդ գիշերները հանգիստ չեր կարող քնել. այս կողքին, այն շուռ կգար ու կխոկար: Վոսկոյին ինչ, կծկվել եր անկողնի անկյունը, փայտայող, սիրտ տվոր չկար, առանց արեի շողի՝ սովոր կանցներ որը: Վոսկոն չլրցավ իմանալ, թէ ինչու Արշակն անհանգիստ ե, քիչ կքնի, իսկ վոր Արշակը չեր սիրում իրեն, վաղուց հայտնի յեր Վոսկոյին...

### VIII

Յերանուհու հողին փոթորկվել եր ինչպես ծով... Արշակի հանդիպումները մեկ չեր, վոչ ել յերկուք, շարունակական եյին: Պարտեզում թէ տանը, բավական ե, վոր մենակ մնար, Արշակն

այնտեղ եր, նրա հրաբորք աչքերն իրեն հառած, վառում, խորովում եյին այդ համառ աչքերը ու ամեն տեղ, ծառի թե թուփի տակ, տերեւների մեջ, Արշակի շրջունն եր, Յերանուհի...

Յեկ Արշակն իր տագրն եր, ամուսնու յեղբայրը...

Մի ժամանակ ինչպես նա տենչում եր նրան, յերբ ինքը հասած աղջիկ, ծանր ու բարակ, վայելուչ ու գեղեցիկ, կոպասեր յերջանիկ այն որվան, յերբ հարս պիտի զնար ու այդ սպասումների ժամանակ քանի, քանի անգամ յերազել եր նրան, բայց բախտն այնպես դասավորեց, վոր ամուսնացավ Արշակի յեղբոր հետ: Իսկ այժմ, յերբ իրերի ընթացքն անսպասելիորեն փոխվեց ու նա յեկել ապաստանել և յերազված մարդու ոջախը, յերջանկության գուռը, վորը սակայն ամուր փակել և վոսկոն, մի ձպտած հավ... ինքը պիտի լիներ Արշակի կողակիցը, վոր արժեր...

Յերանուհին ամբողջ հոգով ատում եր Վոսկոյին, ծաղրում ու հեզնում նույնիսկ Մարիամ խաթունի ներկայության, ինչ ողուտ, ինչ զուրս կգար դրանից, ճակատագրական մի հարված եր պետք ապատվելու նրանից, մահը... իսկ այդ յերբ և ինչպես. զրանից ել ինչ շահ, կարող եր այդպիսով հասնել նպատակին, ամուսնանալ Արշակի հետ: Լսված բան ե, վոր կինը ամուսնու յեղբայրն առնե. անհնարին և խայտառակ բան...

Այս մտածումներն ահա տանջում եյին նրան, ջղային, դյուրագրգիռ գարճում:

Իրիկուն եր: Անհամար աստղերը կշողային յերկնակամարին: Մեղմ, զովաշունչ զեփյուռ շոյելով, գուրգուրալով կանաչներն ու տերեւները սլոլում եր հեռու, հեռու: Նստել եր Յերանուհին պարտեզի մի անկյուն, ընկուզենու թանձր ստվերի տակ ու անըրջում իրիկվա անդորրության գրկում:

— Ինչ հրաշակի յես Յերանուհի, յերկնային կուշ, ծաղիկների փունջ, քեզ փնտուելով հոգնեցի, հանգիստ խլեցիր, դադար ու քուն չունեմ:

Ասաց Արշակը նստելով նրա կողքին և ջղայնորեն վեստելով ընկուզենու լայն տերեւները:

— Դու կին ունես Արշակ, Վոսկոն, իմ ճամբան ուրիշ ե, քոն ուրիշ, բախտը մեզ զատել և վաղուց:

Պատասխանեց Յերանուհին ուշագրությամբ դիտելով բոլորիքը:

— Կին ունեմ, այս, բայց վոր չեմ սիրում. ախ, Յերանուհի, չգիտես թե ով ե սիրու այրողը, քեզ համար կմխա հոգիս...

— Իսկ Վոսկոն:

— Վոսկոն... — շնչաց Արշակը ու հառաչեց խոր, լեզուն կապվեց, չեր իմանում ինչ ասեր, յեթե այդ վարկանին Վոսկոն ձեռքն ընկներ, մազերից բանելով քարշ պիտի տար, խեղդեր: Այժ, Արշակը պատրաստ եր այդ անել Յերանուհու մոտ, վորպեսզի ցույց տար նրան, վոր Վոսկոն վոչինչ արժե իրեն:

— Դու կին ունես, Արշակ, չի կարելի, մեկ ել դու իմ տապըրն ես, — մրմիջաց Յերանուհին մութի մեջ համառորեն նայելով նրան:

— Ե, ինչ անենք, փորձանք յեկավ գլխիս, կին ունեցա, բախտի բան, բայց յես քեզ կը սիրեմ, Յերանուհի, կյանքիս արեն ես դու, ծաղիկ բուրաստան, իմ սերը. ուժերիցս բարձր ե տանել այս ցավը...

Լոռություն:

— Նա կինս ե, գուն իմ յարը, սրտիս սիրեկան, իմ աղիզ յարը. առանց քեզ ինձ կյանք չկա, Յերանուհի... շնչաց Արշակն ու մեղմիվ գրկեց նրա իրանը: Յերանուհին հանկարծակիլ յեկած թոշունի պես թպրտաց նրա թևերում, մի պահ սմքեց, կծկվեց... ապա զարհուրելի հայացքով շուրջը նայեց, կարծես ամեն ծառ ու ամեն տերե լուռ և ուշագիր նրանց եր հետեւում: Խոկույն դուրս թռավ Արշակի գրկեց ու փախավ դեպի տուն, ինչզես արագավազ յեղնիկ:

— Յերանուհի, պոկեցիր սիրու, այրեցիր ինձ, իմ աղիզ յար...

Անցնելով խավարամած ու յերկարաձիգ ծառուղիներից և ուրախանալով, վոր վոչ վոք չնկատեց իրեն, Յերանուհին յեկավ տուն իր սենյակը, յերկնցավ անկողնի վրա ու գլուխը բարձին՝ մութի մեջ հեծկլտաց... Յար, թոթովկեցին շրթունքներն ու հոգուն պատեց մի անհուն բերկություն: Կարծես ամբողջ աշխարհի յերշանկությունը փնջել իրեն եյին տվել ու այդ յերշանկության արցունքներն եյին, վոր կցայտեյին ու կվարարեյին նրա աչքերը:

«Աղիզ յար, Արշակի յարը... շնչաց մեղմիվ ու շոյեց այսերը, վորոնք կայրվեյին կրակի պես, դեռ չչորացած համբույրից...

նոր շոր կարել տա: Մարիամ խաթունը ճաշի ժամանակ Արշակին տաց.

— Յերանուհուս համար մի ձեռք գեղեցեկ հագուստ, մետաքսյա լինի, լավագույն ապրանքից:

— Աչքիս վրա, ինչ պետք ե ասեք — պատասխանեց Արշակը, ժպատաց ու հրաբորը հայացքն ուղղեց Յերանուհուն:

— Կրկնում եմ, լավ կտորից լինի, այնպիսի ապրանք, վոր մատով ցույց տան հարսիս: Թող բոլորն ասեն, կեցցէ Արշակը, յեղբոր կինը պահել գիտե:

Մարիամ խաթունը Վոսկոյի համար վոչինչ չպատվիրեց, կարծես նա չկա: Վոսկոն դառնացած հոգով, արցունքներն աչքերի մեջ խեղելով, սեղանը հավաքեց ու յերբ ամուսինը հեռացավ անից, կհորոջն ասաց քաշքայլով.

— Ապա ինձ, խաթուն, յես մարդ չեմ, ինձ ել շոր ե պետք:

— Ե, գուն ել, մուկն ել մեջ ընկապ. հագուստդ բավական ե քեզ, ինչի՞դ ե պետք նորը, տեղդ նստիր ու գործիդնայե — սաստեց կեսութը:

— Դու խոմ անից գուրս չես գնում, քեզ ինչ հարկավոր ե նոր շորը — ասաց Յերանուհին հեղնական ժպիտով:

— Զե մի, քածին թանգադին շոր կարենք պիտի, աբրեշումն հազուստ. թիզկես ըոյին մտիկ տամ ուրախանամ, մեկ իրեն նայեք, մեկ ել ախորժակին: Նոր շոր հագնե ու գործը թողած ձեռնապար յելնե առջես:

Ամպերը կուտակվել եյին սրտին, Վոսկոն փղձկաց. արցունքներն հոսեցին վարար ջուրի պես ու հեկեկանըն աղեխարշ՝ լցրեց ամբողջ տունը:

Յերանուհին քահ, քահ ծիծաղեց ու նույնիսկ գոհ մնաց նրա ւացից:

Մարիամ խաթունը գլխաշորի տակից վոսկոր քիթը դուրս յերկարեց ու ձչաց ջղային:

— Յեկ ու սրա լացին մտիկ արա. պղտիկ յերեխա բերինը տուն, վոր ուղած ատենը լաց լինի: Փոշին բոնել և սենյակները, ավող չկա. գնահ ու գործի կանգնի:

Մի շարաթ չանցած Յերանուհին փայլեց նոր շորերի մեջ. փայլեց իր գեղեցկության և հրապույրների բովանդակ ուժովը: Մետաքսյա ամենալավ գուլպաներ, յերկարաձիտ, փայլուն կոշիկներ հագավ: Վոսկոյին մի թաշկինակ միայն տվին, ավելորդը Յերանուհու շորերից, մի փշուր կուտ այդ մոռցված թոշունին: Թող

Յերանուհին լավ զուգվի, հյուրերի ներկայության սենյակի ճակատին բազմե, որորվի ու շորորվի, իսկ Վոսկոն շարունակ նույն հնամաշ հագուստի մեջ աղախնություն անե, աշխատի ու արորվի իր սեփական տան մեջ, Արշակի կիսը, Վոսկոն...

Իր անձի հանդեպ ցույց տրված մեծ անարդարությունները ճնշում ենին նրա հոգին, կրում ինչպես ձյուների կույտերից ծանրաբեռնված ծառի դալար ճյուղը:

## X

Ամառվա որերին Վոսկոն նկատեց, վոր ամեն որ ճաշից հետո Յերանուհին թաշկինակը ձեռքին (նա թաշկինակ նախշել գիտեր) այգին կերթա ու մինչեւ ուշ յերեկո չի վերադառնում: Մարիամ խաթունն արևմուտին կը պառկի, իսկ Արշակը տուն գալով, շտապ կճաշի և սուս ու փուս կենե այգին... Վոսկոյի հոգին թրթփաց, անախորժ բան վկայեց սիրառ: Զար աչքից հետութող լինի մարդ, բայց նրա հոգին յերբեմն չարն ու բարին առաջուց կղզա: Վոսկոյի սիրան անհանգիստ կզարնե, վատ բան չլինի...

Ու մի անգամ ել Վոսկոն կամացուկ գնաց՝ այգին: Մութ յերեկո յեր: Ծառերի թանձր ստվերների տակից զգուշությամբ անցավ դողդող քայլերով. աչքը չորս մեկ բացած փնտում եր ինչ վոր բան. թող վոչ վոք չիմանա ինչ կփնտոեր Վոսկոն: Կարճ բոյսվ, ձեռների վրա սողաց թփերի տակից ու կանգ առավ այգու մեկ անկյուն. ինչ վոր մեզմ շշունջ, խոտերի և տերեների շրջուն լսեց, ականջ դրեց ու նայեց, հաստաբուն ընկուղենու լայնատարած ճյուղերի տակ նկատեց մի ստվեր, վոր կշարժվեր, բայց շարունակ միենույն տեղում: Շարժուն ստվերը յերբեմն յերկուքի կրածնվեր ու կրկին կմիանար. յերկու մարդ կքչիչային իրար հետ, բայց չկրցավ զանազանել թե նրանք ովքեր եյին. առաջ զնալ չեր համարձակում, սիրա չեր անում ու մնաց տեղնուտեղ սմբած: Ովքեր եյին նրանք, ինչ գործ ունեյին իրենց ընկուղենու մոտ. գողնալու բան չկար, վոր գողեր լինեյին:

Յեվ սակայն... ինչ վոր բան ձգմեց Վոսկոյի սիրառ, մշուշվեցին աչքերը, չար նախազգացումը մղձավանջի պես ծանրացավ հոգուն: Վաղուց գոյություն ուներ այդ մոայլ նախազգացումը, վոր միշտ համարվում եր անկարելի բան, չտեսնված ու չլսված... Վոսկոն աչքերը պշտեց, սուր աչք ու ականջ ուներ ու սպասեց ջղագար, սարսուալից: Վարկյանները սահեցին իրար յետեկից, յեր-

կար վարկյաններ, բայց ընկուղենու տակ պահված ստվերները դուրս չեկան:

Հանկարծ մուրճի հարված տվին գլխին: Ճակատագրական մի ցնցող հարված: Թուքը բերնում չորացավ, կապ ընկավ լեզուն... Ահա շարժվեց ստվերը և վերածվեց յերկուքի: Վոսկոն տեսավ, ձանաշեց և ով լինի, աստված իմ... Կարելի՞ բան եր այդ, տեսությունը չխաբեց արդյոք: Խելքը գլխից չի թռել. ինչո՞ւ վոտների տակի՝ հողը դղրդաց, շարժվեց, տերենները բոլոր սրսփացին ու մի խիստ դող պատեց բովանդակ մարմինը...

Ստվերներն արագորեն հեռացան, գնացին տան կողմը: Եւ ձայն ծպտուն չկա: Վոսկոն աչքերը լայն չոած մեկ կետի գունաթափ ու դողդոջուն ցամքեց...

«Ճարն ե ուրեմն, Արշակի յարը...»

Այն ինչ վոր այդ իրիկունը տեսավնա, թող թշնամու գլխին չզա, մտքից խելքից դուրս բան եր:

Վոսկոյի ծունկերը թուլացան, ուժը հատափ, գլուխն ձեռների մեջ առավ ու չոգեց մնաց տեղնուտեղը:

«Ճարն ե ուրեմն...»

## XI

Տուն դառնալով Յերանուհին ու Արշակը ընթրել ուղեցին, բայց Վոսկոն չկար, ընթրիք բերողը: Յերանուհին չեր ել իմանում, թե ուր եյին դրված այն որվա ընթրիքի պարագաները: Արշակն իր սենյակը գնաց, տնտղեց անկողինը, բայց Վոսկոն չկար:

— Վոսկոն չկա տանը, ուր ե գնացել.

— Չլինի՞ թե... այգին յեկած լինի, — շնչաց Յերանուհին վախեցած:

Արշակը մի վարկյան մտածեց, գունատվեց և արագորեն մեկնեց այգին: Չլինի՞ իսկապես Վոսկոն հետապնդած լինի իրենց, անակնկալ բան, ով կսպասեր այդ միամիտ, աստծու խոնարհ գառից: Շատ փնտոեց, խաղողի թուփերի միջից անցավ, ինձորենիների ու տանձենիների շարքից, մարդ չկար: Բայց յերբ մոտեցավ ընկուղենուն, վոտքը մութի մեջ փափուկ բանի դիպափ, կանգնեց ու ձեռներով շոշափեց.

— Վոսկոն...

Վոսկոն շմեր, քարացել եր, աչքերը մի կետի, գունաթափ, ու շրթունքների մոտ մի ցասկոտ ժպիտնկարված, հուսահատության

դալուկ ժպիտ... Յերբ ձեռք տվին, ցնցվեց, թվաց թե խայթեցին  
ու շնչաց ինքնիրեն.

«Ո՞չ... ոչ ե մտել առւնս...

Արշակը կրկին խտտեց.

— Վոսկն, ինչ ես անում այստեղ:

Վոսկն ուշը յեկավ, աչքերը բացավ ու մի բութ հայաց-  
քով չափեց խավարը, մի անորոշ, մռայլ տարածություն և գլուխն  
կրկին ձեռների մեջն առնելով մրմնաց.

«Բախտ չունեցա, զարկեցին գլխիս. ջահել կյանքս խամրեց,  
գնաց...

Ու փղձկաց նա դառն, սրտմաշուկ, կարծես մի անդամից  
գուրս ժայթքել կուզեր լեռնացած ցավը:

— Կեր յել, սատանի կին, ինչ դործ ունես դու այստեղ, ուշ  
գիշերին. ամոթ չունես ինչ ե:

Կանչեց ամուսինը բարկաճայթ ու վոտքով հրեց նրա մեջը:

«Ո՞չը տունս մտավ, թունավորեց կյանքս, կտրտեց, փետտեց  
սիրտս...

— Ինչ ոչ, ինչ բան, լսողն ինչ պիտի մտածի, այդ ինչ ան-  
կապ, անկապ դուրս կուտաս գլխեց:

Բայց Վոսկն կուլար, կվշվար անդադար, կանաչների վրա  
չոգած, ձեռներն խաչածե, ծունկերին հենած, կատաղությունը բըռ-  
նեց Արշակին. այդ կինն և միակ գլխավոր խանդարիչը իր յեր-  
շանկության. արյունը սրճնթաց խուժեց գլուխն ի վեր, կրակ-  
ցավ, ձեռները բունցք կազմեցին ու աչքերից կայծեր թռան:

— Քեզ ասում եմ վեր կաց, արյունս պղտորել կուզես, մուր  
քսել ճակատիս, հոգիդ կհանեմ...

Ու կատղած շան պես բռնեց կնոջ վիզը սղմեց, ատամները  
կրճատով: Վոսկն թույլ ճիչ արձակեց, թպրտաց ինչպես մորթու-  
վող հավ, վերջին ուժերը հավաքեց ու ատամների միջից ասաց.

— Արշակ, խիզմ չունես, սաղ, սաղ կիսեղդես կինդ...

Արշակի ձեռներն թուլացան, ձայնը խղճին զիպավ: Թողեց  
նրան և մտացրիվ, բարացավ մնաց: Վոսկն հազար ու սկսեց շոյել  
սեղմած վիզը, թրխուաց մի քանի անգամ: Քիչ անց վեր յելավ  
ու գողդողալով գնաց տուն: Հետևեն ամուսինը կքալեր զիսահակ,  
մտածկոտ: Զե՞ վոր Վոսկն կինն եր, որինավոր կինը և նա ու-  
զում եր հարազատ կինը խեղդել... Լսողն ինչ պիտի մտածի, խայ-  
տառակություն... Ամոթից աչքերը գետնից չբարձրացան...

Պարտեզի դոանը Յերանուհին սրտատրով դիմավորեց Ար-

շակին: Վոսկն նրա մոտից լուր անցավ: Թե Վոսկոյի միտ-  
քը բոլորովին այլ տեղ եր, ուրիշ բաների մասին եր մտածում  
այդ պահին. կքալեր ու չգիտեր կքալէր արդյոք, ուր կնայեցին  
աչքերը, այս ինչ մուժ ու մառախուղ ե շուրջը, ինչ անձունի ու  
անձեւ սովերներ են, վոր շարժվում, մթագնում են տեսողու-  
թյունը: Ահա իր սենյակը, ձեռներն ակամա գնացին գեպի կո-  
ճակները, բանդեցին: Մեկ, յերկու ու կրկին մեկ, յերկու, միքանի  
անգամ նույն կոճակները կոճկեց, նորից արձակեց, հանեց հա-  
գուստը. Ավելի շուտ ձեռներն եյին հանում, իսկ ինքն ուրիշ բանի  
մասին եր խոկում, կարեռ բանի: Պառկեց, ինչպես հոգնել եր,  
ծանր, շատ ծանր բեռ եր շալակել, գլուխն ինչ վոր մերենայի  
տակ գրած կճզմեցին ու մի կատաղած, մոլեգնած դեմք նայում եր  
իրեն սպառնագին...

«Խիզմ ունեցիր Արշակ, կինդ չեմ...

## XII

Դուան քով Արշակը զգաց մութի մեջ իրեն հառած Յերանու-  
հու անուշ հայացքը, կանգնեց և ասաց.

— Բնկուղինու մոտ գտանրան: Մեկ տեսել ե: Լավ բան չեր...

Յերանուհին ըմբռնեց Արշակի հուզմունքը, ժպտաց ու շնչաց.

— Ե՞ս, դու ել վախեցմար, ում պիտի ասի վոր, թուչունի  
լսելք ել չունի, սիրտդ միամիտ պահե, անուշիկս...

Յեկ խավարի գրկում յերկնցավ, ձեռներով բռնեց Արշակի  
գլուխը և պինդ պինդ համբուրեց նրա ճակատը: Արյունը հորդեց  
Արշակի յերակներում: Գիրկն առավ Յերանուհու նուրբ իրանը, սեղ-  
մեց կը ճքին.

— Յերանուհի, իմ յարը, սիրունիկ, խորոտիկ յարս: Իմ  
կյանքն ես դու, սրտիս բանալին:

Ու մի յերկար, ջերմ համբույյը քաղեց նրա վարդապույն  
շուրթերից...

Յերբ ներս մտան, Մարիամ խաթունը կիսոմբար:

## XIII

Վոսկն կծկվել եր անկողնի մի անկյուն, վերմակի ճոթին  
տակ, աչքերը հառած մի կետի...

Կես գիշերն անց եր: Տաք, խեղդիչ ոդը կանգնել եր սե-  
նյակում, ճնշում: Բաց պատուհաններից զովությունը չեր խաղում,  
պլաղում եյին աստղերը լուր ու խորհրդագոր:

Յերկու ստվեր դուրս յելան ընկուղենու շուքից, յեկան միավորվեցին, գրկվեցին, կրկին բաժանվեցին. նորից ձուլվեցին իրար, շնչացին, քչքչացին...

«Յար... մըմնջաց Վոսկոն. Արշակը նրա յարն ե, իր երիկը... ու հանկարծ վեր թռավ Վոսկոն այսահարի պես, ճշաց. զիւ, յերկարատև ձիչ:

Արշակը զարթնեց իսկույն ու վախվորած նայեց կնոջ, Վոսկոն նստել եր անկողնում, մազերը ցաք ու ցրիվ, սարսափահար աչքերով:

— Ինչու ճշացիր, ինչ պատահեց քեզ, այ աղջի-կանչեց Արշակը ու զայրացավ, վոր խանգարեցին անուշ քունը, յերաղները քաղցր, յերբ կրքոտ կհամբուրեր Յերանուհու գողտրիկ այտերը...

Վոսկոն ուշքի յեկավ, մազերը հավաքեց, վերմակը գլխին քաշեց. նորից կծկվեց, իբր թե քնել ե, վոչինչ չի պատահել վոչինչ, թող հանգիստ մնա Արշակը...

Ամուսինը թքեց, հայհոյեց ու մեջքի վրա շուռ գալով խըսմբաց:

Վոսկոն չկարողացավ քնել, գլուխն ընկղմել եր բարձի մեջ, աչքերը բաց, չուած, չեյին փակվում ու կարմիր սև բծերը կիւռունվեյին, կանցնեյին: Հազար հազար միտք շփոթվել եյին ուղեղում, ժխորում ինչպես բազմությունը բղեգների. պարտեզ, ծառ, ծաղիկ, թփեր, ծոմոված, այլանդակ դեմքեր, շարժական պատկերների պես միավորվում, այլանդակվում եյին ու հանկարծ ընկուղենին՝ լայնաճյուղ, թեատրած ընկուղենին, ճակատագրական ծառը... Ապա դուրս թռան իրար պլլված յերկու ստվեր: Յար, Արշակի յարն ե, վայ գրնջը, հոգեառու... ինչպես փաթաթվել, գըրկվել են: Արշակը յերբեք Վոսկոյին այդպես չեր գրկել: Ո՞հ, ինչես կհամբուրվեն, Արշակը իրեն չեր համբուրել այդպես յերբեք, յերբեք... ու ինքը մնաց միշտ անուշադիր, մի անկյուն շպրտված, մոռացված ու անտեր հավք, մի...

Յարն ե, սիրեկանը... տես ինչպես պինդ, պինդ են փաթվել. աչքերը նրանց վասվում են կրակի պես... Արշակն ինչպես կոիրե, հոգի կուտա նրա համար, կյանքն անդամ չի. ինսայում: Վաղը ամենաթանգ ապրանքից նոր շորեր կլարե, ալմազ ականջողերով, ադամանդակուռ զարդերով կզուգի սիրեկանին— Յերանուհու...

— Ա՛մ...

Վոսկոյին մի կողմ են շպրտել ավելորդ լաթի պես, ամենքը խոսքը մեկ, նրա դեմք են ծառացել, թշնամի յեն, կխեղպեն, կտանչեն, կուղեն, վոր Վոսկոն չլինի, վորպեսզի Յերանուհին սրտի փափակին տիրանա, փառավորվի, իր ոչախը զավթի և վոտները լայն փոխ, թագուհի դառնա...

Ո՞ձ... Յերկար, վոլործուն մի բան, ողակ ողակ յեկավ կանգնեց դեմ առ դեմը բարձի մոտ, ահա զալարվեց նա, աչքերը կանանչ իրեն հառեց. ահա հոնդաց, վոստնեց, փաթաթվեց իր վեզը և սեղմեց ամուր...

— Ե՞յ, հասեք, ոգնեցեք, ոձը կծեց, ոձը...

Դիվահարի պես Վոսկոն բարձրացավ անկողնում, զլուխը բանեց պինդ ու գոռաց ամրող ձահնով... խելահեղ, յերկարածիդ ձիչ:

— Աղջի Վոսկո, գժվեցի՞ր, եդ ինչ պատահեց, չպիտի թողնես, վոր քնենք հանգիստ:

Ասաց Արշակը զարթներով ու նստելով անկողնի մեջ.

— Խայթեց, թունափորեց կյանքս, ոգնեցեք, հասեք...

Ամուսինը վառեց ճրագը. անկողնի վրա պատկերվեց Վոսկոն լայնաբաց, սարսափահար աչքերով, մերկ ուսերին մազերի սև խորձ, դեմքը գունատ ինչպես մեղրամու:

— Յերազ ես տեսել, յերազումն են խայթել քեզ, ուրիշ բան չկա:

— Ոձը մտել ե տունս ու մարում ե կյանքս, չահել ու դաւար կյանքս:

«Շան աղջկա բերնից ավելորդ բառ չթուչի... մտածեց Արշակը, կատաղությունը բռնեց վողջ մարմինը. մոլեգին հայացք նետեց ու վոտքով հրեց կնոջ մեջքը:

Սակայն մայրը բռնեց նրա ձեռքը, Մարիամ խաթունն աղմուկից արթնցել յեկել եր.

— Ինչ ես անում այ տղա, անտեր աղջիկ ես գտել, ինչ ե:

Դուան արանքում պատկերվեց Յերանուհին գիշերային ճերմակ շորերի մեջ, թեթե բողով պլլված:

— Ո՞ձ, ոձը յեկավ, ազատեք ինձ. խայթեց, թունափորեց...

Մարիամ խաթունը վրդովվել եր այդ անսովոր պատահարից, նայում եր իր թումած աչքերով անկողնում կծկված հարսին ու չեր իմանում ինչ անի.

— Ինչ պատահեց հանկարծ, աղջի, կես գիշերին, յերբ վողջաշարհը քնել ե, այդպես ճշաւ, կանչել ւսված բան ե:

— Ինչ պատահեց վոր, խելքը պակսել և խեղճին, հիվանդ ե...  
փնթփնթաց Յերանուհին, Վոսկոյին շեշտակի հառելով սուր  
հայացքը:

Վոսկոն գլուխը վերցուց ու հիվանդագին, աղջուն աչքե-  
րով մի գարկյան նայեց Մարիամ խաթունին. կեսուրն եր վեր-  
ջապես չե, չհայտնել գաղտնիքը, չբանալ խոցված սիրտը... բայց  
Վոսկոյի կոկորդը սղմվել չորացել եր, լեզվակապ եր, չնշանատ:  
Ի՞նչ ասեր Մարիամ խաթունին, վոր Յերանուհին Արշակի յարն  
ե... Մի սոսկալի, ամոթալից բան, ով պիտի հավատար, ավելի  
շուտ կեսուրը կտպաներ նրան, բան կհավատար. ավելի շուտ  
խելքից պակաս կհամարեր Վոսկոյին՝ բան վորպես ճշմարտություն  
կնդուներ նրա խոսքերը, և սակայն... Իսկապէս յեղել և այդ  
բանը. աչքերը լավ տեսան, լսողությունը չխարեց, սխալմունք  
չլինի՞ հանկարծ կամ ցնորքու յերազ, ինչպես Արշակն եր ասում,  
արդյոք հիվանդ չե Վոսկոն ու փոխանակ սիրտը բանալու,  
փղձկաց ու հեծկլուց աղիողորմ...

Ամուսինը, վոր ջղայնորեն կանգնել եր բաց պատուհանի մոտ  
ու սրտագող կհետեւեր դեպքերի ընթացքին, միամտվեց. ճգնա-  
ժամն անցել եր, կերմակը նրա ուսերին բաշեց կոպտարար ու խիստ.

— Քնիր սատանի ձագ, ինչ ամենքին անհանգիստ կանես  
այսպես ուշ գիշերով:

Մայրը պատվիրեց վորդուն, վոր այնուհետև կնոջ վրա  
ձեռքը չբարձրացնի.

— Մեղք չե, ուժու նրա վրա յես փորձում:

Ամեն ինչ խաղաղվեց ու ամենքը նորից շտապեցին քնելու:  
Կես գիշերն անց եր, հեռվից լսվում եյին վոստիկանների սույլերը  
և աքաղաղների ընդհատվող կանչը:

Մարիամ խաթունը գերադարձավ իր սենյակը: Յերանուհին  
պառկելիս կը կին հիշեցրեց, վոր Վոսկոն հիվանդ և և խելքից  
պակաս: Կեսուրը ձեռներն խաչաձենց, ալեվոր գլուխը շարժեց և  
թոթովեց ատամների տակ.

— Տղիս բախտը չբանեց, կեղծ ապրանք տվին, խարեցին.  
աստված կամհցողի տունը քանդի թնդ...

#### XIV

Վոսկոն անկողնից վեր չելավ: Այն գիշերվա դեպքը և Ար-  
շակի հարվածներն իրենց գործը տեսել եյին, մեջքը կցավեր,  
կտնքար Վոսկոն:

Ամուսինն այլևս ձեռք չտվեց նրան, և նույնիսկ մեղքավ,  
զղջաց, վոր հարվածել եր: Մի քանի որ մոայլ մնաց, մտախոռ.  
իրիկուններն ուշ յեկավ տուն:

Յերանուհին վախեցած Արշակի փոխվելոց, սկսեց ավելի  
հաճախ հանդիպել նրան, անզուսպ տրփանքով սիրել, համբույր-  
ներով ու փաղաքշանքով գրավել և Արշակը նրա ջերմ գրկում  
մոռանում եր ինքինքը, սաղ աշխարհը, ամեն, ամեն բան...

Տան մեջ Յերանուհին ձեռք ձեռքի չտվեց, ջուրն անգամ զլա-  
ցավ հիվանդին, «թող անտեր մնա, սատկի, չլինի, ինչացո՞ւ. յե  
այդ քածը...»

Մարիամ խաթունը միայն կխղճար Վոսկոյին, կխնամեր, կհո-  
գար, հաճախ մեջքը կզփեր. իր հարսն եր չե: Յերկու շաբաթ  
տևեց Վոսկոյի հիվանդությունը, առողջացավ ու հակառակ Յերա-  
նուհու բուռն ցանկության, թողեց անկողինը: Բայց Վոսկոն ել  
հախիկնը չեր, առաջվա ժիր, առույգ Վոսկոն: Առաջ լարված մե-  
քենայի պիս կաշխատեր, այժմ այլևս չեր կարող, ժամերի ըն-  
թացքում հազիվ մի փոքրիկ գործ վերջացներ, մեկ ժամ միայն  
ավելը կը թոթվեր ու միենույն տեղը կավեր շարունակ. հայաց-  
քը մի կետի յեր բենվում, կարծես ել ուրիշ կետեր չկային և յե-  
թե կային, կարիք չկար նրանց նայելու կամ այդ կետը այնպի-  
սի արտակարգ հետաքրքրություն ունի, վոր անհնար և աչքը  
հեռացնել նրանից: Լվացքն անելու ատեն, յերբեմն ժամերով մի-  
այն չորի մեկ մասը կլվար ու կցայեր, կարծես շորի այդ մասն  
եր միայն անմաքուր: Սոխ, հաց կամ խնձոր կճպելու ու կոտրա-  
տելու ժամանակ, մոռանում եր չափը, հավասարակշռությունը  
կորցնում ու անվերջ խստակում եր, կոտրատում, մինչեւ վոր կե-  
սուրը նկատելով կկանչեր.

— Աղջի, այդ ինչ ես անում, բավական չեղավ կիսկոն,  
ուշագրությունը վղբանեղ ե:

Յերբեմն ել Վոսկոն հանկարծ գործը կթողներ, գունաթափ  
աչքերը կը թթեր մի անորոշ կետի, ձեռներով ջղայնորեն կրոներ  
կլուխն ու կմրմնջար ինքնիրեն.

«Ո՞ւ. թունավոր ո՞ւ ե մտել տունս...»

Մարիամ խաթունը հաճախ կգուար վրան:

— Ես ինչ ե, ջանըմ, պատուհաս, ժամերով մի գործ ե  
անում, չնչին գործ ու պրծնում չկա:

— Հիվանդ ե խաթուն, խելքից պակաս, — կիսթփնթար հեգ-  
նորեն Յերանուհին:

Վոսկոն մեղավորի պես գլուխը կծռեր, հիվանդ չե՞ ինքը, ինելից պակաս... յեթե խելոք լիներ, ինչու ևս որին կնկներ: Գլխում, ուղեղի մեջ, ինչ վոր բան կմեխվեր ու չարագուշակ բառը կրզզային շարունակ ականջներն ի վար.

«Հիվանդ չլինեմ, խելից պակաս...

Վոսկոն կսուզվեր մտքերի ծովը, մտքերը շատ, բյուրապատիկ, բաղմազան, սարից, ձորից, հեռվեհոռու, վորքան կուզեք, վորոնք խումբ առ խումբ կուզային, կպաշտեյին զինքը, կաղմկեյին ու կժխորեյին: Մերթ մանկության որերը կպատկերվեյին, մերթ ամուսնությունը, այդինու ծառեր, վերջապես ճակատազրական ընկուզենին...

Վերջերս ամենից ավելի կվերհիշեր մանկության որերին պատահած մի տխուզ գեպը, յերք Վոսկոն տասներկու տարու մի փոքը աղջիկ, մի իրկուն հորից դույլով ջուր հանելիս, թոկը կտրվեց, վոտքը սայթաքեց և ընկալ հորի մեջ, հայրը շտապով հանեց նրան ու Վոսկոն հորի յեղերքին դողողում եր, հեկեկում ինչպես ջրաթաթախ հավ...

Զգիտես ինչու, այս պատահարը հաճախ աչքի առաջն եր, բալելու ժամանակ՝ թվում եր, թե հորի յեղերքին և կանոնել ու ոլիտի սայթաքի, զլորվի մեջ... Այս մտակատկերը համառորեն հաւածում եր նրան:

Մինչ Յերանուհին որավուր կպարդարվեր, կչաղանար, կզեղեցկանար ու հաճախ կուզվեր, դուրս կդար, բարեկամների քով կամ վորեն տեղ զբոսանքի:

## XV

Վոսկոն նստել կարում եր, թեն ասեղի միջից անցնել ուշեց, չկարողացավ, վորքան չարչարվեց, ուշադրությունը լարեց, բայց անզուտ:

— Թեն ասեղից անցուցելն ել մոռացել ե մեր հարսը—կմկմաց Յերանուհին ու կոպտարար խլելով նրանից ասեղն ու թելը, սարեց ու նորից տվեց նրա ձեռքը: Վոսկոն ամոթահար գլուխը կախեց և սկսեց կարել: Հանկարծ նրան այնպես թվաց, վոր ճանձ և նստել շորին, մատներով հետեւ սկսեց ճանձին, բայց ուր վոր մատները գնում եյին, ճանձը խույս եր տալիս ուշեց տեղ, չկարողացավ բռնել ու քշել նրան: Յերկար տեղեց այդ աշխատանքը, յերկար, շատ յերկար մատները խաղում եյին շորի վրա, մինչև վոր կեսուրը գուաց ու զբգեց շարունակել կարը:

Ճաշից հետո, կեսրոջ հետ սեղանի վրա ափսեներն ու պատառաքաղներն եյին մաքրում, հանկարծ Վոսկոն ինչ վոր ծիծաղելի պատկեր վերհիշեց, յերեխա ժամանակ մի որ տեսել եր լարախաղացի խրտվիլակին, գույնզգույյն ներկած դեմքով, շորերը ծաղկանկար, ու պոչավոր գլխարկեն զանգակները կախ: Ամեն վոտտնելուն դեմքը կծռմռվեր և զանգակները կղնգային, ծիծաղելի տեսարան: ամենը կիսնդային, Վոսկոն ել խնդաց քահ, քահ, ծռմռեց գեմքը: Լորցունքը սկսեց հոսել բերնից: Մարիամ խաթունը նայեց նրան, աչքերը խոժուսեց, բայց լուս մնաց: Սակայն Վոսկոն զգաց, վոր Յերանուհին ել մյուս կողմից կնայի, շփոթվեց, կարմիր ալիքը ներկեց նրա գունատ գեմքը: Մի պահ այնպես թվաց, վոր Յերանուհու աչքերը խոշորցին, ծռմռվեցին ու բիբերից գուրս թոչելով մի բան ցատկեց գեալ իրեն:

— Վայ, կծեցին, ոձ, ոձ... կանչեց Վոսկոն, պատառաքաղները սեղանին ձգեց, դիվահարի պես վեր թռավ, հագուստներն սկսեց թոթափել ու աթոռի շուրջը պտույտ զալ:

— Ինչ ոձ, աղջի—բացականչեց Մարիամ խաթուն ու վախից տեղնուտեղը ցամքեց մնաց:

Յերանուհին արձակեց յերկարատե քրքիջ ու հանգստացրեց լեզապատառ կեսուրը:

— Յերապ ե տեսել Վոսկոն, խելը չկա վրեն:

— Աղջի գու ծո՞ւռ ես, միտքդ ուր ե գնացել, ցնորվեցի՛ր — կանչեց Մարիամ խաթունը բարկաճայթ:

Վոսկոն ուշքի յեկափ, թվում ե թե ծանր, մղձավանջային յերազից կարթնար: Նստեց աթոռին, զլիսիկոր, գլխաշորը քիթն իվալ իջեցուց, կամ կարմիր գարճավ, Ամոթից չգիտեր ուր նայիր, ինչ աներ...

— Սատանան տանի— մրթմրթաց կեսուրը—շենք շնորքով հարսի կարու մնացի. մեջը զի և մտել, ծուռ ե, կապելու ծուռ...

«Ծուռ... շնչաց Վոսկոն, արյունը սառեց մնաց յերակների մեջ, գլուխը պտույտ գործեց, ծանրացավ ջաղացքարի պես, իսկ բերնից լորցունքի մի յերկար շղթա կախվեց ու հոսեց շրթունքներն իվար:

— Թուրքդ սրբե անիծած, պղտիկ յերեխա լինի կարծես, լորցունք սրբող պետք ե բերենք...

## XVI

Հաջորդ որը Վոսկոն շատ ուշ զարթնեց:

— Մինչև կեսուրը քնելու միտք ունի մեր հարսը, խանում

և դարձել, իսկ ավելուցքն ու փոշին բռնել են չորս կողմը—նկատեց կեսուրն դժգոհ:

Վոսկոն ավելը ձեռքին սկսեց սենյակն ավել, բայց այդ աշխատանքը շատ յերկար տևեց և անդուռ, մինչ կեսուրը գլխավերել կանգնած, քրթմնջումեր:

— Տունս ավլող ել բերեմ, մեր հարսը խաթուն դառնալ կուզի:

Սենյակի մի անկյուն մաքրելիս Վոսկոն յերկար, յերկար նայեց ինչ վոր տեղ.

— Այդ ուր կնայես ծուռ, սատանա կա այնտեղ:

Վոսկոն պիշտ սայելն թողեց և քիչ հետո քրքջաց:

— Ծաղր զյուր կուգա մեր ծոռւն:

— «Ծոռո»... շնչաց ինքնիրեն Վոսկոն ու նորից ինդաց. այս անգամ յերկարատես, ջղային:

Մարիամ խաթունն ահարեկ աչքերով Յերանուհուն նայեց, վերջինս խորհրդավոր կերպով զլուխն որորեց և կծու, չարա-լինդ ժպիտը խաղաց դեմքին:

## XVII

Յերեկոյան այգին եյին ջըռում: Արշակը մերկ վոտներով մտել եր ջուրը ու ավագից թումբը կաղմում բահով: Յերանուհին լապտերը ձեռքին կլուսավորեր բոլորտիքը.

Մարիամ խաթունը նստել եր ծառի տակ, կանաչ մարգերի վրա: Վոսկոն մնացել եր տուն:

— Կնոջ մասին ինչ կմտածես աղա, իսելը գլխից թուավ. ձարը տես, թե չե կուշանաս:

— Ես ինչ կարող եմ անել, ջանը՝ մ. ձեռքումս ինչ կա վոր ասաց Արշակը դժգոհ, ամրացնելով ավագակերտ պատնեշը:

— Այսոր արդեն գժվեց բոլորովին, թուքը կշռա բերանից, սատանա կա մեջը, — քրթմնջաց Մարիամ խաթունը, հառաչեց, ձեռքով ծունկերին զարկավ:

Տիրեց լուռթյուն:

Քիչ հետո Մարիամ խաթունը վեր յելավ.

— Գնամ տուն, տեսնեմ Վոսկոն ինչ ե անում, իսկ դու Յերանուհի, մինչև վերջը կաց. լույս տուր, ոգնիր տղիս:

Յեղ Մարիամ խաթունը վերադարձավ տուն:

Արշակը բահը թողեց և նայեց Յերանուհուն, վոր գիշերային շորերի մեջ ձերմակ փերի պես կանգնել եր ջրի յեղերքին, չա-

րաճճի ու նազանի շարժումները գործում, կատակում, հրճվում արտույտի պես:

Յերանուհի, ճրագը մարե՛, քաղցր, շատ քաղցր բան պիտի զրուցեմ քեզ:

— Զե, չեմ մարի—պատասխանեց Յերանուհին, լապտերը հեռու տարավ ու խնդաց զրնգուն, անուշ: Հրաբորը աչքերով զրկեց Արշակը նրա մեջը ու մարեց լույսը, Յերանուհին ընդդիմացավ, ձեռներով թույլ հարվածներ տվեց նրա յերեսին, ճովուղեց ինչպես անհունն ի վեր թեղող թոշուն և ընկավ նրա թեերի մեջ:

— Ինձ համար սրճագույն հագուստ կգնես ճերմակն ու մանիշակագույնը ունեմ, սրճագույնն ել կուզեմ:

— Քեզ համար կյանքս ել կզոհեմ, իմ հոգին ես դու, յարս, Յերանուհի...

Քիչ հետո նրանք կրկին վառեցին լույսը ու սկսեցին խաղողի թուփերը ջրել:

## XVIII

Վոսկոն միայնակ նստել եր գահավորակին, միաք եր անում: Իսկ ինչ եր մտածում, կարելի՞ յե մեկ մեկ թվել, հազար ու մի բան: Յերբեմն դալուկ դեմքին խաղում եր մի անփայլ ժպիտ, իսկ կիսարաց շրթունքներին գրյացել եր լորգունքի փոքրիկ լակ: Տուն գալով Մարիամ խաթունը նայեց նրան, որորեց ալեմազ զլուխը, ասաց.

— Վեր կաց աղջի, վեր կաց քնի՞ր:

Մեքենայարար վեր յելավ Վոսկոն, մոտեցավ անկողնին ու սկսեց արձակել շրջազգեստի կոճակները: Առաջին և յերկրորդ կոճակներն արձակեց ընդհատումներով ու յերկար, կարծես շատ դժվարին աշխատանք լիներ, իսկ հայացքը գնում սառում եր մի անորոշ կետի: Յերրորդ կոճակն արձակելիս, հայացքը լուսամուտից գուրս ընկավ, այգում լույս տեսավ և լույսի մեջ Յերանուհին. ճեռներն թուլացան ու յերրորդ կոճակը մնաց ասանց քանդվելու. լսվեց մի ճիչ սուր, աղիողորմ...

— Ոձ, կծեց, ոձ ե մտել տունս:

Մարիամ խաթունը գնացել եր մյուս սենյակը և պատրաստվում եր քնել, շտապեց յեկավ, Վոսկոն դիմահարի պես վաղեց վաթաթվեց կեսրոջ փեշերին, ձեռքով ցույց տվեց այգին:

— Խաթն ոձ, հրեն կանգնել ե ողակ-ողակ, կկծի:

— Ինչ ոճ, ինչ բան, աղջի:  
 — Յերանուհին, խաթուն, Արշակի հետ, տես խաթուն...  
 — Ե, ինչ կա վոր, ածուներն են ջրում:  
 Վոսկոն աչքերը չոեց ու կարկամեց շնչահատ:  
 — Զե, խաթուն, յարն ե, Արշակի յարը...  
 — Այդ ինչեր գուրս կուտաս, աղջի, ինելքդ գլուխդ ժողվե:  
 — Մտել ե տունս, կթունավորե զիս, խաթուն:  
 — Սըս, ամոթ ե, բոլորովին գժվեցիր, ծուռ, Յերանուհուն  
 Կոշիկներն արժեն, մուր կըսես ճակատին:

Վոսկոն խղճալի գուխը թեքեց, լալկվեց, պապանձվեց.  
 Ժուռ ե յեղել ինքը, խելքից պակաս. և առանց հանվելու պառկեց  
 քնելու:

Մարիամ խաթունը քթի տակ ինչ վոր քրթմնջաց, աղոթեց  
 Վոսկոյի համար, թթվեց հազար ու մի կնձիռ ունեցող զեմքը,  
 Քայց յերեք մտքից չար բան չանցավ, կարելի՞ յէ հավաս ըն-  
 ծայել Վոսկոյի խոսքերին. ծուռ յերևակայություն. իր ամոթխած  
 տղան ու յեղնիկ Յերանուհին թայը չունին. յերեկի Վոսկոյի սիրաը  
 Վորեե պատճառով նեղացել և Յերանուհու վրա, թե չե կհամարձակ-  
 վե՞ր այդպիսի ցնդաբանություններ անել. ծուռը խելոքին, տգեղը  
 գեղեցկին միշտ կնախանձի. բերանն կառնի ու մուր կուզե քսել  
 ճակատին. Ուրիշներին ավելորդ բան չասի՞ հանկարծ, ինչ ամոթ,  
 Քայց գժի խոսքերին ով կհավատա...

«Զար աչքը զարկեց. խեղճը գժվեց, ձեռքից գնաց, ախ,  
 ախ...

Ու մեղմիվ արտասվելով Մարիամ խաթունը կոչին վերա-  
 դարձավ իր սենյակ:

### XIX

Մարիամ խաթունը պաշտոնապես հայտարարեց, վոր պետք  
 ե միջոցներ ձեռք առնել բժշկելու Վոսկոյինքանի ուշ և քանի  
 հասարակության մեջ չի տարածվել նրա ցավը: Բժիշկ կանչեցին,  
 մի լայնթիկունք, ակնոցավոր մարդ, յերկար քննեց, իսկ Վոս-  
 կոյի զեմքին ժպիտ կար թառած, կծծղատար, ինչու համար, վորի  
 վրա կինդար Վոսկոն, ինքն ել չգիտեր. հենց այնպես, ծիծաղն  
 յեկավ ծիծաղեց, ինչ կա վոր: Իսկ աչքերն անթարթ հառել եյին  
 բժշկի ժամացույցի վոսկե շլթային, կարծես, շատ գեղեցիկ և ա-  
 խորժելի բան եր շղթան, բայց ուշագիր դիտողը կզար, վոր

Վոսկոյի հայացքն ուրիշ տեղ ե, դեպ անձն, անորոշ տարածու-  
 թյուն...

Հանկարծ քրքջաց ջղայնորեն, լարախաղացի խրտվելակը  
 միտքն ընկավ, նրա գունավոր հագուստը, ծուռ ու մուռ շար-  
 ժումները ծիծաղեցրին նրան, ծաղրի բան եր չե, ու լորցունքը  
 շրթունքներին հավաքված՝ սյունի պես ներքեւ կախվեց: Կեսուրն  
 ամոթհար՝ թաշկինակով սրբեց նրա բերանը:

Բժիշկը դեղգիր գրեց, խորհուրդներ տվավ ու գնաց: Մա-  
 րիամ խաթունը իրատեց հարսին:

— Կինարմատ ես, ամոթ ե, տեսնողն ինչ կմտածի, կասի,  
 վոր ծուռ ե:

Ծուռ... մրմնջաց ինքնիրեն Վոսկոն, ինդաց ու խորասուզվեց  
 մտքերի ծով:

Անցավ մի ամիս, յերկուս. բժիշկներն յեկան գնացին, ա-  
 նոգուտ: Մարիամ խաթունն ահաբեկ չեր իմանում ինչ անի.

— Դե ե մտել մեջը. բժիշկն ինչ կարող ե անել վոր:

Ասում եր Յերանուհին. կեսուրը սարսափով լսում եր ու  
 մտածում գիմել վանքերին ու սուրբերին: Վորքան մոմ վառեց,  
 զառ մորթեց, տերտերի ու վարդապետի ձեռքը Վոսկոյի գլխին  
 դրավ, իգուր:

Տոներին հյուրեր յեկան իրենց մոտ, ամբողջ ընտանիքը  
 տանն եր: Յերանուհին ողու գավաթներով բեռնված արծաթա-  
 պատ ափսեն ալեց Վոսկոյին հյուրերին հրամցնելու: Վոսկոն վողջ  
 առողջ ափսեն ձեռքերն հերթով մոտեցավ հյուրերին: Բոլորը նա-  
 յում եյին, մեկի աշքերն այնպես սուր փայլում եյին, վոր բիչ  
 մնաց ծիծաղեր Վոսկոն. ծաղրի բան եր. նրա ուշադրությունը  
 գրավեցին մի տիկնոջ ականջի վոսկյա ողերը, վորքան փայլուն  
 եյին նրանք ու ինչ խոշոր, ծաղրի բան եր... Մարիամ խաթունը  
 սիրտը գող հետևում եր նրա շարժումներին ու խիստ ըարկացել  
 մտքում Յերանուհու վրա, վոր Վոսկոյին այդպիսի գործի յե լծել:  
 Արշակը անհանգիստ շարժում գործեց, նախազգաց, վոր ինչ վոր  
 ափսեն առնել նրանից, յերբ հանկարծ կինը ճշաց, դիմքը ծա-  
 մածովեց, հայացքը գնաց առաստաղն ի վեր:

— Թունավորեցին, հալ չթողին վրես...

Ու ափսեն թուավ ձեռքից, բաժակները ցրիվ փշրվեցին, ողին  
 թափեց հատակին: Կեսուրը քարացած եր, ամոթից լեզուն կառ  
 ընկել: Արշակը բռնեց կնոջ ձեռքից ու գուրս տարավ սենյակից,

լորցունքը կախվել, կչուար շրթունքներից: Բարկությունից ամուսինը չեր իմանում ինչ անի: Ուժգին շարժումով կնոջը հրեց մյուս սենյակ, մի հարված տվեց ու անից հեռացավ աչքերը կատաղությամբ բոցկլտուն:

Հյուրերը—Այդեստանի ծակաչը կանայք, խորհրդավոր հայացքներ փոխանակեցին, ուրեմն ճիշտ եր այն լուրը, վոր վաղուց շրջում եր հասարակության մեջ, թե Արշակի կինը խելքից պակսել ե ու չեն իմանում ինչ անեն...

— Վոչինչ, խաթուն, հիվանդ ե, քիչ հիվանդ, մրսելու հետևանք, շուտով, շատ շուտով կանցնի, բան չկա:

Այսպես եր համոզում հյուրերին Մարիամ խաթունը հանցավորի պես, կարծես նրանից հաշիվ եյին պահանջում, Բայց Վուկոյի ձայնը լսվում եր մյուս սենյակից. ամուսնու հարվածը ծանը եր: Մարիամ թաթունը չկրցավ համբերել գնաց տեսնելու, հյուրերն ել հետեւեցին նրան հետաքրքրությամբ: Վուկոն ընկել եր տախտին կողքի վրա, մաղերը ցաք ու ցրիվ, քթից արյուն կլաթեր, բերնին թուրք կպղղջար առատորեն:

— Քա, ամոթ չի. մարդ իր կնոջն ել զարնի, անսիրտ բան...

Նկատեց հյուրերից մեկը, մի տարեց կին. մյուսները լուս եյին. ապա վերադասն կը կին, և պատշաճությունը պահելու համար քիչ ել նստեցին, խորհուրդներ տվին լացակամած Մարիամ խաթունին ու գնացին: Մեկնելիս ամեն մեկը նրանցից շատ և շատ գոհ մնաց այդ այցելությունից, վորովհետև «մեծ» զաղանիքը պաշտոնապես հաստատել եյին և պիտի պատմեյին աջ ու ձախ, թե Արշակի կինը ծռել ե...

Մարիամ խաթունը բարկաճայթ աչքերով նայեց Յերանունուն և կյանքին մեջ առաջին անգամ բոռաց վրան.

— Քեզ ով ասաց ափսեն նրան տուր, քու խելքն ել իսոմ չի պակասել...

Հարսը լուս մնաց, բայց սրտի խորքում ուրախ եր, վոր Վուկոն այգպես խայտառակվեց բոլորի առաջ:

Յերեկոյան մայրը վորդու վրա յել բարկացավ:

— Ծեծելով բան դուրս չի դա, բժշկելու մասին մտածիր, կինդ ե չե, սիրտ չունես...

Արշակը գլխարկն առավ ու ձնշված, խոռված հոգով դուրս յելավ.

— Գնամ ոի բաժակ գինի խմեմ, թող սիրտս հովանա... մտածում եր նա գինետան ձանալարին:

## XX

Աշխարհը իր շրջանն արավ անխռով: Շատերն ուրախացան ու իրենց բաժինը վայելցին այս յերանելի աշխարհում, իսկ Վուկոյի գործը միշտ գեպի վատը գնաց: Նրա հիվանդությունը զարգացավ անցնելով մի քանի աստիճաններից: Առաջ սուս փուս եր, քչխոսիկ, հեղ, հետո սկսեց ինքնիրեն խոսել, ջղային անկապ շարժումներ գործել, քիչ բան կհասկցվեր նրա խոսակցությունից, ծառերի, թուփերի, ոձի, յարի մասին, հաճախ ընկուզենու անունը կուտար:

— Նստել եյին ընկուզենու տակ, գիտե՞ս, համբուրգեցին, խեղդեցին ինձ, սազ, սազ կերան...

Տան մեջ տիրում եր ջղայնություն ու անհանգիստ կյանք: Յերանուհին ավելի դյուրագոզիո եր դարձել, ծանը մթնոլորտ եր տիրել ու ձնշում նրան. տան բոլոր գործերն իր և կեսորոշ ուսերին եյին կուտակվել: Քաղաքի մեջ բերնի ծամոն եյին դարձել: Վուկոյի պատմությունը ամենուրեկ կհոլովվեր. հետաքրքիր մի նորություն պարապ մարդկանց և խոսել շատ սիրողների համար: Ամենըը կքննեյին խնդիրը և պատճառի մասին զանազան յենթագրություններ կանելին:

— Զե, սա քաշվելիք կյանք չե, խայտառակվենք պիտի մի որ—ասաց մի անգամ Յերանուհին:

— Ինչ անել, բժշկել չենք կարող, մեր ձեռքում բան չկա, պատասխանեց Արշակը մտախոն:

— Բայց մնա այսպես, չար սատանի նման ամբողջ որը տանջի՞ մեզ, չենք կարող...

— Ինչ չենք կարող,—ասաց Արշակը խոր նայելով Յերանունու աչքերին, վորոնը խորհրդավոր կպլազին:

— Մեկ միջոց կա միայն, խեղդել, որ մը խեղդե պրծնի գնա...

Արշակը լուս մնաց, մոայլվեց, սարսոաց:

— Ինչից կվախնաս վոր, կասենք, խենթ եր, մենակ մնալով իրեն իրեն խեղդեց, յես տղամարդ լինեյի, մի բոպի չեյի սպասի:

— Զե, Յերանուհի, ձեռքս չի բարձրանում, կինս ե, խեղճ արարած,—թոթովեց Արշակը թույլ ձայնով:

— Կի՞նդ, հա, հա... ծուռ Վուկոն Արշակի կի՞ն...

Յերանուհին քրքջաց թունոտ, չարախինդ: Արշակը ջղայ-  
նորեն բեխերն վոլորեց, բայց լուս մնաց:

— Կինարմատի սիրտ ես ունեցել, Արշակ, յես չգիտեյի,  
վոր այգբան թուլամորթ ես:

Արյունը մոլեզնորեն հորձանքվեց Արշակի գլուխն ի վեր,  
ինչ վոր միտք ճառագայթեց, վարարեց ուղեղը, չխեղդել, չա-  
զպատվել նրանից, ճիշտ չեր Յերանուհին: Սակայն ով խնդիր  
վկուկն, իր կի՞ն... ինչ անենք, վոր խենթ ե, իր որինական կինը  
չեր... աշխարքում խայտառակ դառնամ... վոչ այդ մեկը չեր կա-  
րող անել Արշակ, խիղճ ուներ չեր, ամոթ ու վախ և վրդոված ա-  
սաց:

— Ինչ կուգես հրամայե, յես կկատարեմ, Յերանուհի, բայց  
այդ մեկը վոչ, ել չխոսես այդ մասին...

Յեկ գրկելով Յերանուհու իրանը, ջերմագին համբուրեց այ-  
տերը բոցավառ:

## XXI

Մարիամ խաթունը հուսահասությունից ինքն իրեն կու-  
տեր: Որ ու գիշեր դադար չկար ու շարունակ Վոսկոյի մասին  
կմտածեր: Շատ շատերին հարցուփորձեց, նորանոր միջոցների  
դիմեց, ծանր խոներից ու վշտերից վոսկոր դարձավ, հանաբ բան  
չեր, մանավանդ վոր քաղաքի մեջ անուն եր հանել Վոսկոն: Թող  
վոսկոն խենթենալ, բայց ուրիշները չիմանային, հազար չար ու  
բարի չպատմեյին իր ոջախի մասին: Արշակն ել եր նիհարել,  
ամոթ բան եր չեր ու իր տղենն ել կարող եր ձեռքից գնալ: Այս  
միտքը կահաբեկեր նրան:

Վոսկոյի հայրը մահացել եր, իսկ խորթ մայրը նորից մարդու  
գնացել, ծնողներից վոչ վոք չկար մտածող նրա մասին:

Մարիամ խաթունը շատ խրատներ կարդաց հարսի գլխին.  
համոզեց, աղաչեց, վոր խելոք մնա, ավելորդ բաներ չխոսի, ծա-  
մածություններ չանի, բերանում պահի թուքը, ամոթ ե. իզուր...

Մի որ ել հարսը ճշաց, դուռը շրխկալեն փակեց, իջավ բակը  
ու կորսված բան վորոնողի պես մի բանի անորոշ շարժումներ  
գործեց, ապա այգին գնաց ու չվերադարձավ: Այգին տակն ու  
վրա արին, բայց չգտան նրան:

— Հիմա ել դուրս ընկավ, խալիսի դուռը: Թող գերեզմանը  
իցնելի և այս սե որվան չհասնեյի:

Մարիամ խաթուն առատ արցունք թափեց և կոծեց ծուն-  
կերը:

Մինչև ուշ գիշեր Արշակը փնտռեց կինը ու ձեռնունայն  
վերադարձավ տուն:

Հետեւյալ որը Վոսկոյին գտան քաղաքի հրապարակում, ա-  
մենաբանուկ տեղը, քարի վրա նստած, յեկող անցնողին եր նա-  
յում, ամենքին ժպտում, ձրի ժպիտ, շրթունքից լորցունքի սյունը  
կախ: Փողոցի չարաձճի տղաները և մի քանի կանայք հավաք-  
վել եյին նրա շուրջը և զվարձանում, զվարձալի չեր: Յեթե ծուռ  
ե, պետք ե խնդալ, ծուռը խելոքի ծիծաղը շարժելու համար ե:  
Յեթե Ակոն կխնդա, Մկոն ինչու չպիտի խնդա վոր: Ու կհճ-  
վեյին, կբերկեյին շրջապատողները:

— Քա աղջի, սա ով ե:

— Ով, հըմ, գերձակ Արշակի կինն ե, Մարիամ խաթունի  
հարսը:

— Ծոռել ե, ինչ ե:

— Նայիր տես, ծոռու ե թե խելոք:

— Յերես կապ, ամոթիսած կինը այդպիս կվարվի, որը ցե-  
րեկով, մազերը ցրիվ, հավուսաները անկարգ, քաղաքի հրապա-  
րակում կնատի, խելոքի վարմունք ե այդ:

— Հա, հա... ծուռ Վոսկո:

Վոսկոյի ձեռքից բռնեցին, առաջնորդեցին տուն: Ո՞վ եր  
առաջնորդը, ուր կտանեն, կերթա թե կմնա, միենույն չե, ովկ-  
քեր են այսքան մարդիկ, կին, յերեխա, ինչու յես հավաքվել.  
ինչու բոլորն ել իրեն կնայեն, զարմանալի բան: Վոսկոն լուռ ու  
մունջ քալեց, քալեց ու նայեց յերկնքին: կապույտ եր թե կար-  
միր յերկինքը: Զախ կողքն ի վար վոտաբորիկ ու գլխաբաց մի  
տղա աշքն ընկավ, կմնդար, ինչ սպիտակ ատամներ ուներ, ինքն  
ել խնդաց, հա, հա, ծաղրի բան եր... Յերբ խրավիլակը վոստ-  
ել լարախաղացի վոտների մոտ, պոչավոր գլխարկը շարժվեց  
ու բոժոժները գնդինգացին, ծաղրի բան եր չե, հա, հա...

— Քեֆը Վոսկոյին ե, կինդա:

— Իսչի չպիտի խնդա վոր, մղն ե պակաս, թե մաղը:

— Ծափ տվեք, թող վեր վեր թոչի:

— Վեր վեր թոչի ու ջան գյուլում պարե:

Վոսկոն այդ խոսքերն արտասանողին ուզեց նայել բայց  
հայացքն ուրիշ տեղ գնաց, ինչ վոր տանիքի կտուրը, կտուրին  
կանգնել եր աքաղաղն ու կթափահարեր թևերը: Հանկարծ աքա-

դազը խոշորցավ, առաջ վագեց ու խրտվիլակի փոխվելով սկսեց պարել, ծամածուել դեմքը, զնդալ, զբնդալ, հա, հա, ծաղը ե, ծաղը...

Բա վոնց չխնդա Վոսկոն:

Փողոցում համարյա բոլոր տների դոսերը բացվել եյին ու պատուհաններից հետաքրքիր գլուխները գուրս յերկարել, նայողը շատ, հազար չտես աչք, բան եր հարկավոր, վոր նայելին, բերնից բերան լուրը տաքածվեց, ծուռ Վոսկոյին կտանելին:

Իրար հրելիս ամբոխի միջից մեկի թեւը դիպավ Վոսկոյին, յետ դարձավ, նայեց ու շրթունքներից թուքը կախվեց ներքեւ:

— Ընկուղենու մոտ տեսա, խայթեցին, տեսնելու բան եր, քա...

— Ծուռ ե, չար սատանա կա մեջը—ձայնեց մեկը:

— Ծուռ... կանչեց Վոսկոն ու քրքջաց ջղային:

Ցուրայինները լսելով յեղելությունը, ընդառաջ վագեցին փողոցում: Մարիամ խաթուն ամբոխին նայեց ահարեկ, ձեռները թուլացան, պաղ քրտինքը պատեց ամբողջ մարմինը, ինչ որի յեր հասել հարսը, Արշակի կինը: Արշակը կինը ներս տարավ ու դուռը փակեցին, ամբոխը դուռն առաջ, դուռսը, ջղային ձայներ եր արձակում, խանդարեցին, տարան իր հրճվանքի առարկան...

Սենյակում Արշակը Վոսկոյին զցեց թախթին ու հրեց, նրա աչքերում վասկում եր բարկության թեժ կրակը, ամենքին ծաղրի նյութ եր դարձել կինը, ամոթից գլուխը խոնարհել, չեր իմանում ինչ անի ու մինչև իսկ խորհրդավոր ժամանով դեմն յեխող Յերանուհուն նետեց սպառնական, խոժոռ մի հայացը:

Վոչ վոք չխմացավ, թե գիշերը վորտեղ եր յեղել Վոսկոն...

## XXII

Վոսկոն տնից խույս տվեց, չկարողացան զսպել, Այգեստանի վոր մասում չեյիք հանդիպի նրան, վոր դուռն առաջ, խանութների մոտ ու մասավանդ քաղաքի ծայրամասերում դտնվող կիսափուլ տների մեջ: Ի՞նչ եր անում այնտեղ, ինչպես եր ապրում: Հաճախ փողոցի տղաները ընկնում եյին հետեից, նա կըքքքջար ու խույս կտար, կվաղեր կպահվեր մի գաղտնի անկուն:

Փողոցում ծաղրում եյին նրան, կտակում:

— Վոսկո, ինձ չես առնի, յարս չես դառնա, ինչ անուշիկ բան ես դու, Վոսկո:

— Անուշիկ ասիր պրծմար, հատը չկա սաղ աշխարհում:  
— Քեզ համար գիշեր ցերեկ բռն չունեմ Վոսկո, սիրոս խորովեցիր, մաշեցիր, վրես չես նայում:

— Վոսկոյի կոշիկները չարժեք, վոր փչեց կթռնեք, ջուրն ուրիշ ջրից ե:

Այս չարաձճի խոսքերի համար Վոսկոն կբերկրեր, կուրախանար, կարծես մի ամբողջ աշխարհ իրեն եյին տվել: Ինչու չպիտի ուրախանա Վոսկոն, ինչն ե պակաս վոր, խոսել չգիտե, յերգել, պար գմլ:

— Զուռնա վիշենք, ձեռնախաղ չես պարի Վոսկո, թուչունի թե ունիս, կթռչես, տինկլա տինկ, տինկ...

Վոսկոն կծափեր, փեշերը կթափահարեր ոգի մեջ ու կարձագանքեր:

— Տինկլա, տինկ, տինկ...

Տղաները կիրհուային ու պլատիկ քարեր վերցնելով կսկսեյին կոնսակից նետել, վորպեսզի նա հուզվի, ջղայնանա, ճշա: Այդպես ել լինում եր:

— Փշտա, սատանի լաճ, թհւ...

Կգոռար ու կփախեր ուրիշ տեղ, ավելի ապահով վայր: Ամենքը մտերմացել եյին նրան, ընտելացել, իր պատմությունը վաղուցվա բան եր, հսացել: Կակսեյին խղճալ, հաց տաւ, կերակրել: Անտեր, անբուն կնիկ ե—ասում եյին—ե, ինչ անենք, վոր խենթ ե, ցավտլի բան: Գիշերելու տեղ ել կուտային:

Սև հագուստով, կարձիկ, գլխին մոխրագույն արախչի, վորը վաղուց բազմել եր այնտեղ և վորոշել գեռ յերկար, շատ յերկար ծառայել նրան: Աչքերը խորն ընկած, գունաթափ, ինչպես աշնանար տերե, ատամերն ձեփձերմակ, հայացքն անորոշ ու տարտամ: Բոլորի հյուրն եր, անվաս գառը, միայն իրենց տուն չեր գնում ու խույս եր տալիս այնպես, ինչպես գառը գայլից: Վոչ վոք չեր մտածում, թե Վոսկո կա, բայց բոլորը գիտեյին, Վոչ վոք չեր մտածում, թե Վոսկո կա, բայց բոլորը գիտեյին, թե այն ինչ վոր կա Վոսկոն ե: Թող ապրի, աշխարհին ինչ վնաս գոր, այնքան ծանր բեռ չե, իսկ յեթե ծանրություն լինի, ընդունուրին ե, հասարակացը:

Տնեցիք ել չեյին հետաքրքրվում, հետապնդում, անցած գնաց բան եյին համարում, ինչպես կապրի, ուր կապրի, մեկ գած բան եյին համարում, ինչպես կապրի, մոայլե, ինքնամփոփ: Բան: Թեեւ Արշակն այժմ գլխահակ կքալե, մոայլե, ինքնամփոփ: Մարիամ խաթունը մեռավ գնաց, վողորմի հոգուն, խեղճը շատ դարդ տեսավ ու դարդի մեջ ել հետացավ այս աշխարհից:

Յերանուհին եր այժմ գերձակ Արշակի տան տերը։ Շատ ինդրատուներ յեկան, բայց մարդու չգնաց. չհավան ե, ասում եյին ու փառավոր կերպով գեշերը փոեց, վոտներն յերկարեց, նստեց Յըշակի տուն... Իսկ հետո, յերբ այս ու այն կողմից սկսեցին խոսել, բամբասել, Արշակն ու Յերանուհին գաղթեցին Ամերիկա...

Վոսկոն կամաց կամաց վարժվեց նստկան կյանքի ու աշխատանքի։ Գործի կդնեյին նրան։ Սրա նրա տանը լվացք եր անում, սենյակները մաքրում կամ այգում կանաչեղենի ածուները սեղերից ու վայրի խոտերից խոտակում։ Յերբեմն հոգնությունից թե ինչպես աշխատանքը թողած կնստեր մի տեղ, գլուխը ձեռներին կհեներ, մալուկ աչքերը կհառեր մի անորոշ կետի ու մի յերգ կմրմռար քթի տակ։

«Ըսկուղենին կանաչել ե, ճյուղերը տարածել, յար,  
«Արշակը նստել, յար կսպասեր, յաման յար  
«Յարն յեկալ, ծոցը մտավ անուշիկ յար,  
«Ու դառնալով, յեկալ խայթեց, յաման յար...  
— Այդ ինչ յերգ ե, ում գովքն ե Վոսկոն։  
Կհետաքրքրվեյին կանայքը։  
— Այս յերգը, այս յերգը Վոսկոյի յերգն ե հա, հա... Վոսկոյի յերգը։  
— Իհարկե, ջանըմ, Վոսկոն մարդ չէ, յերգել չգիտե, բըլրուլի ձայն ունի Վոսկոն։

Ամառվա որերին Վոսկոն ամեն տեղ եր, գյուղում, դաշտում, թե այգիներում, վորտեղ հասներ կապրեր ու կապաստաներ Զմեռները կապաստաներ տաքուկ ախոռներում, թառմաների վրա կթավալեր։ Յերկար գիշերներին կզրուցեր մշակների հետ։ Յերբեմն մշակները կպաշեյին նրա դալուկ այտերը ու Վոսկոն կինդար, խելքամաղ կլիներ ու շատ, շատ գոհ եր այս յերանելի աշխարհից։

Մի որ ել Այգեստանում այլևս չերկաց Վոսկոն։ Հեռավոր գյուղերն եր գնացել, թե պատահական ավազակները փախցրել եյին նրան։ Բան չիմացվեց։ Մոռացվեց Վոսկոն և հետքն ու փոշին չմնաց։

ՀԵյ զի՞րի ծուռ Վոսկոն։

1918 թ.



## ՈՐԻ ՈՐԴԻ ՈՒ ՍՊԸ

Որիորդ Ռիման Թիֆլիսի դպրոցներից մեկում վարում ե յերկրորդ խմբակը։ Քառասունհինգ ժիր, չարաճճի փոքրիկների մի բազմություն։ Պետք ե մտնել դասարանը տեսնելու Ռիմային շըրշապատված այդ կայտառ բայիկներով, վորոնք թռչունների պես ծլվլում են ու աղմկում բարձրածայն։

Քառասունն անց, միջանասակ, դեմքը խորշոմապատ, շրթունքներին թեթև աղվամազ, աշնան գորշ յերկնքի նման մի աղջիկ, վորի մտքից վաղուց, շատ վաղուց ե անհետել մարդու զնալու անհույս ձգտումը։ Քիթը քիչ տափակ ե, կարծես ինչ վոր ծանրությունից ձզմված, վերեք հանգստանում և վոսկեպատ շրջանակներով պենսնեն, վորի ձոթից սկ թելը իջնում, ամրանում ե կրծքին։ Հաճախ ներքեւ և սահում պինոնեն և Ռիման ձեռների ջղոտ շարժումով բարձրացնում, ուղղում նախկին տեղը. իսկ այդ միշտ տհաճություն ե պատճառում նրան, դեմքին իջնում և մի ծիրանիկույն փայլ։ Այդպիսի փայլ ընդունում ե դեմքը, յերբ Ռիման խոսում ե գըպշը վարիչի կամ վորեե տղամարդու հետ, նման դեպքերում հայցըը խոնարհվում ե և պատկերում իր բովանդակ համեստությունը։

Ահա զանգը հաչեց։ Ռիման մտնում ե դասարանը լուրջ ու հանդիսավոր դեմքով։ Բացականերին արձանազրում ե։ Այդ աշխատանքի ժամանակ ինսունի չափ սկ, փայլուն աչքերը իրեն են հառել և զլուկները, մարմինները բազմաթիվ, հորձանքվում, ալեկոնձում են ինչպես փոթորկված ծով։

— Որիորդ, որիորդ Ռիմա...  
Յերեխաների խայտարդետ ձայները ժխորում են չորս կողմից։

— Այժմ, հանդարտ փոքրիկներ, անցնենք մեր դասին։  
Հնչում ե նրա միորինակ, տղամարդային ձայնը։ Մի պահ լուրթյուն տիրում։  
— Դե, պատմեցեք տեսնեմ, ինչպիսի կենդանի յե ձին։

Մի քանի տասնյակ մատ առաջ են ցցվում:  
— Զին չորս վոտ ունի:  
— Չորս վոտ:  
— Այն, որիորդ մենք տեսել ենք, չորս վոտ ունի:  
— Այն, այն չորս վոտ:  
— Որինրդ, ձին պոչ ել ունի:  
— Սըս, յերեխեք, մեկ, մեկ խոսեցեք:  
— Յես ասեմ, յես ասեմ...  
— Աշնառ դու ասա:  
Կանգնում ե մի թմբվիկ կարմրաթուշ տղա.  
— Որինրդ, ձին...  
Հազիվ բերանը բաց ե անում, յերբ յետեկ շարքերում տիւրում ե աղմուկ:  
— Որինրդ, չեն թողնում, վոր լսենք.  
— Վայ կողքս, խփեցին:  
Ռիման քայլերն ուղղում ե աղմուկի կողմը, բայց մի ուրիշ անկյունում յերեխաները խոնգում են: Նա ճանապարհը փոխում ե, առջևի շարքերում մի տղա գրասեղանին կանգնած ծամածություններ ե անում:  
— Հա, հա... բրքջում ե ամբողջ խումբը:  
— Յերեխաներ, լուսություն, թույլ տվեք դասը շարունակել. Ժխորի միջից լսվում ե վարժուհու բամբ ձայնը:  
— Որինրդ, գրքիս վրա բան են գրում:  
— Ո՞վ ե գրում:  
— Սարգիսը.  
— Սարգիս, հազար անգամ ասացի հանգիստ պահիր քեզ:  
— Վաղգենը հաց ե ուտում:  
— Վաղգեն, ինչպես ես համարձակվում...  
Վաղգենը կայծակի արագությամբ բերանից դուրս ե հանում հացի պատառը:  
Լուսթյուն:  
— Այժմ—տիրող լուսթյունից քաջալերված շարունակում ե Ռիման—պետք ե խոսենք ձիու մասին. ձին...  
— Որինրդ, Գեղամը մտավ սեղանի տակ:  
— Գեղամ, դուրս յեկ սեղանի տակից:  
Մոխրագույն բաճկոնակով, հաստիկ մի տղա արագորեն դուրս դալով սեղանի ներքեց նստում ե իր տեղը, ձեռները կռնակին կանթած անշարժվում, իբր վոչինչ չի պատահել: Ռիման նայում ե

գեմքը սիրթնած, ձեռները դողում ջղայնորեն. պենսնեն շարժվում ե ու սահում ներքեւ կավում ե յերեխաների մի անզուսպ հրհոց: Նա բարկությամբ հանգստացնում ե պենսնեն նախկին տեղը: Լը-սություն:  
— ԴԵ, ասեք տեսնեմ, այն ով եր ծիծաղեց և խանգարեց դասը:  
— Յես չեյի, որինրդ.  
— Յես ել չեյի.  
— Ասացեք, թե չե բոլորիդ կպատժենմ...  
Բարձրաձայն կանչում ե վարժուհին և այդ կանչից դոզդում ե նրա նիհար, վոսկը կային մարմինը:  
— Սուրենն եր—ձայնում ե աշակերտներից մեկը:  
— Սուտ ե խոսում, ինքն եր—արդարանում և Սուրենը:  
— ԶԵ, չե որիորդ, Սուրենը չե, Հրայրը—գոսում են մի քանիսը:  
Ռիման քայլերն ուղղում ե դեպի Հրայրը, վերջինս ցատկում է նստած տեղից և շառագունած բղավում:  
— Որինրդ, յես չեյի, յես հանգարտ նստել եյի, թող ընկեր-ներն ասեն:  
— Այն, որիորդ, նա չեր, նա հանգիստ նստել եր:  
Ռիման կանգ ե առնում յերկմտանը մեջ: Դասարանը լուս ե. սպասողական գրություն:  
— Զեզ հազար անգամ չեմ ասել, վոր հանգիստ մնաք դասի ժամանակ:  
— Ճիշտ ե, որիորդ, ասել եք—ասում ե մեկը ու շրթունք-ներն պինդ կծկում չփղձկալու համար:  
— Այսպիսի անկարգության մեջ կարելի՞ յե պարապել, հը...  
— Ի հարկի վհշ—բացականչում են մի քանիսը:  
Վարժուհին կոնակը դարձնում ե փորձում վերադառնալ իր տեղը, յերբ դասարանի մի անկյունում յերեխաների ժխոր և գրասե-ղանի կափարիչների շփշիոց ե լսվում, շրջվում ե, լուսթյուն, կար-ծես վոչինչ չի պատահել:  
— Անպիտաններ, դուք արժանի չեք այստեղ նստելու:  
Լուսթյուն:  
— Ո՞վ կարող ե ասել թե ձին...  
— Որինրդ, մատիտս ներքեւ ընկավ, վերցնեմ.  
— Քեզ ով ասաց մատիտս ներքեւ զցիր, հը.  
— Վայ, յես ինչ անեմ, ինքնիրին ընկավ.

— Որինրդ, թույլ տվեք դուրս գնամ, կարեռ ե,  
 — Սպասիր, շուտով դասը կվերջանա.  
 — Շատ կարեռ ե, որինրդ, չեմ կարող սպասել.  
 — Գնամ—գոռում ե Ռիման ու զայրագին հայացքով դուրս  
 գնացող յերեխային հետեւում:  
 — Զի՞ն...  
 — Որինրդ, ինձ ել թույլ տվեք դուրս գնալ,—խնդրում ե  
 մի ուրիշ յերեխա:  
 — Վաչ, չի կարելի, դասը կիսանգարվի, ել թույլ չեմ տա:  
 — Իսկ ինչու մյուսին թույլ տվիք, յես ել եմ ուզում դուրս  
 գնալ:  
 Համառում ե յերեխան և արդեն պատրաստվում ե գնալու:  
 — Չեզ ասում են վաչ, դասը կիսանգարվի...  
 Վարժուհին ճշում ե ու պենսնեն ձայնի ուժից դողալով թեք-  
 վում ե ու պատրաստվում ընկնել: Նա ջղայնորեն պահում է: Դա-  
 սարանում տիրում ե ժխոր, աղաղակ, գրասեղանի թխլոց...  
 — Եղ ովկ խփեց սեղանին:  
 — Յես չեյի, որիորդ.  
 — Յես ել չեյի.  
 — Դուք բոլորդ չարաձձիներ եք, անկարգներ:  
 — Վոչ, որիորդ, յես լավ աղա յեմ—ձայնում ե մի յերեխա:  
 — Յես ել, յես ել—կանչում ե ամբողջ խումբը:  
 — Չեր ճնողներին պիտի հայտնել:  
 — Վոչ, որինրդ, ներեցեք, մենք խելոք կմնանք:  
 Լոռություն:  
 — Չին այն կենդանիներից ե, վոր...  
 — Մենք մի ձի ունենք, բայց պոչը շատ կարճ ե—ասաց  
 յերեխաներից մին:  
 — Չիու պոչն յերկար կլինի...  
 — Սը՛ս, լոռություն:  
 Ռիման ձեռքը խփեց սեղանին և դառնալով դեպի խոսող  
 տղան, ասաց ցասկոտ.  
 — Չեզ հազար անգամ կը կնել եմ, վոր նյութից չշեղվեք:  
 — Յես ձիու մասին եյի խոսում:  
 — Որիորդ, ձիու պոչը յերկար կլինի, թե կարճ—աղաղակե-  
 ցին մի քանիսը:  
 — Մ՛ս, ՀՀ... լսվեց ընդհանուր աղմուկի միջից վարժուհու

ձայնը, բայց աղմուկն հեշտ կերպով չդադարեց, դուրս գնացող  
 յերեխաները վերադարձան և դուռը շրխկալեն փակեցին:  
 Ռիման բարկացավ նրանց վրա:  
 — Սխալվեցինք, որինրդ, ներողություն:  
 Մյուս կողմից սեղանները շփշփացին և միքանիսը փոխեցին  
 տեղերնին:  
 — Հանգիստ, յերեխեք, հանգիստ:  
 — Վարդուշն իր տեղը փոխեց, որինրդ:  
 — Վարդուշ, տեղդ նստիր:  
 — Դրաստամատն ել տեղը փոխել ե:  
 — Դրաստամատ, դու ել վերադարձիր տեղդ:  
 — Որինրդ, այստեղ ավելի լավ ե, թույլ տվեք:  
 — Դրաստամատ...  
 Դրաստամատը գեմքը ծոմոելով տեղը վերադարձավ, սպառ-  
 նագին մի հայացք ձգելով վարժուհուն:  
 — Չին այն կենդանիներից ե, վոր մեծ ոգուտ ե պատճառ...  
 — Որինրդ, Որինրդ...  
 — Չես թողնում լսել:  
 — Վերջապես եղ ովկ ե խանգարում դասը:  
 Լոռություն:  
 — Աստղիկ, այդ դու յես անկարգություն անում:  
 — Ա՛յ, խաթա, յես այնպես հանդարտ նստել եմ վոր.  
 — Ապա ովկ ե, դեհ, ասացեք:  
 — Մենք ինչ գիտենք, որինրդ, դուք ինքներդ իմացեք:  
 — Մենք մատնիչներ չենք:  
 — Վայ, անպիտաններ, վայ...  
 — Դե, շարունակեցեք, որիորդ, դամս անցավ:  
 Ասացին մի քանի հանդարտ յերեխաներ:  
 — Միշտ ել այսպիս ե, դասը չենք կարողանում պարագել:  
 — Մեղավոր դուք եք—կանչեց Ռիման պենսնեյի շրջանակի  
 վրայից ամբողջ դասարանի վրա թարթելով դժգույն, թախծու-  
 աչքերը—հանդարտ մնացեք, կպարագենք:  
 — Լավ, լավ, որիորդ, խելոք կմնանք:  
 — Հա, ձին ամենահավատարիմ կենդանին ե—շարունակեց  
 վարժուհին սրտապնդված:  
 — Շուն ել հավատարիմ ե, այնպես չե, որիորդ:  
 — Չին...

- Մենք մի շուն ունեցինք, վորտեղ գնայինք մեզ հետ կը-  
դար:
- Զին...
- Մենք ել շուն ունենք, անունը Լուլիկ ե:
- Լուլիկ, հա, հա...
- Յերեխնք, նյութից մի շեղվեք...
- Մեր շան անունն ել Տուտիկ ե:
- Հա, հա...
- Լություն, անպիտաններ, չարաճճիներ...
- Զղայնությունից վարժուհու ձեսները դողում են, դեմքը կաս-  
կարմիր կտրել:
- Զեզ բոլորիդ պատժեմ պիտի, թույլ նշանակեմ:
- Հիմա այլևս լուռ կնստենք, մի բարկանաք:
- Դե լավ, ուրեմն ձին...
- Զանգ: Դասամիջոց ե: Յերեխանները դուրս ցատկեցին տե-  
ղերից և խուռներամ վազեցին բակը խաղալու:
- Որիորդ Ռիման պորտֆելը թէին տակ, նիհար կուրծքը դեպ  
առաջ գցած, դուրս յեկավ դասարանից հոգնած ու մոայլ...

1919թ.



## Հ Ն Ա Վ Ե Ճ Ա Թ Ո Ս Մ Ա Ն

Թիֆլիսում շատերն են ճանաչում հնավաճառ Ոսմանին: Կար-  
ճահասակ, կորաքամակ, դեմքը թուխ, ներքեկի շրթունքները կախ,  
ծուռ սրունդներով մարդ: Գլխին ու, քառակուսի փափախ, հա-  
զին մաշված բաճկոնակ, դեմքը խոժոռ, թթու, կարծես քացախ  
խմած լինի: Քայլում ե զլխաճակ, մտքերի ծովում: Մարմինն ա-  
ռաջ և ձգվում ճոճելով բաճկոնակի ամուր չկարփած կոճակները:  
Մի ձեռքը կըծքին, թևին հին շորերի բազմություն:

Յերբ հաճախորդի հանդիպի կամ հազվագյուտ զեպքում հա-  
ճառ հայացք նետող կանանց, Ումանը ժպտում ե, դեմքի բոլոր  
մկանունքներից հյուսելով մի հլու ժպիտ, իբր ծանոթ լինի, հին  
ծանոթ...

Ամեն հիսուն քայլին կանգնելով, կովի պատրաստվող աքլորի  
պես զուրս և ձգում ուսերի մեջ խրված վիզը, զննող մի հայացք  
նետում պատուհաններն ի վեր, կոկորդը մաքրում ու զիլ, յերգա-  
աց ձայնում:

— Ըսթառի վեշշ՝ չ փաքուփայու, ըսթառի վեշշ՝ չ...

Հետո մտնում ե հանդիպող տան բակը, կանգնում ամենա-  
կենարոնական վայրը, զլուխը յես գցած, պզտիկ, փայլուն աշ-  
քերը շարքով պտտեցնում բալկոններին ու լուսամուտներին, ա-  
տամներն սպիտակ պսպղացնում ինչպես յերկշար սատափ, ներ-  
գաշնակում ե մի փոքրիկ վոտանափոր իր արհեստին շուրջը հյուս-  
ված, վորի բառերն արագաթուիչ, վազում են արձագանքվելու բո-  
լոր կենողների ականջին:

— Սթարի վեշ փաքուփայու, քարավաթ, ըսթու, ըսթու,  
փաթինքի, քարզինքի, գաթուշքի, աթյալի, փինջաքի, փիրյուքի...

Այդ մի քանի արագախոս բառերը, զընգալով գնում, տա-  
րածվում են տան ամենախուլ անկյունները, ակամա հետաքրքրու-  
թյուն կամ ծիծաղ պատճառելու:

Վոչ մի հին շոր վաճառող չի կարող նրան աչքաթող անել:  
Յերեմին այս կամ այն դուռը բացվում ե ու ձայնում են.

— Ստառի վեչ, ա ստառի վեշ...

— Փրիթու, փրիթու...

Կանչում և Ռամանը և ափալթափալ բարձրանում սանդուխներն ի վեր, սիրտը բարախուն, աչքերը ծոր տալով, ձեռները ճոճուն աջ ու ձախ:

Մի հետաքրքիր, զփարձալի տեսարան ե, զփտել նրան հին շորը գնելիս կամ վաճառելիս, փոշեթաթախ, կարկատած շորն ուսեն վար և առնում ասելով.

— Փիրինջի շոր ե, ապրանք, վալլահ հատը չկա, անգին բան...

Յերբ գնողը ծիծաղում ե.

— Վալլահ խարոշ, եյ բոխ, փերվի սորթ...

Պատահում ե, վոր մի միամիտ կին հավատալով նրան՝ գնի ապրանքը և ահա այդ սակավադեպ առևտուրիցն և ոգտվում Ռոմանը: Իսկ յերբ ինքն ե գնորդը, ապրանքը դես ու դեն շուռ և տալիս, ժպտում թուխ դեմքի բոլոր մկանունքներով.

— Վալլահ, գին չունի, փթած ե, նեխարոշ, եյ բոխ...

Ու սկսում ե իր կոտրտած ոռւսերեն և հայերեն բառերով խառն մի միջազգային բարառով սակարկություն անել, վատաքանել, վորչափ կարելի յե աժան գնելու համար ապրանքը: Լինում են դեպքեր, յերբ նրան հաջողվում ե առևտուրից ոգտվում: Իսկ հաճախորդները ձանձրացած, հաշտվում են աժան ծախելու մտքի հետ, վորչափ կարելի յե շուտ ազատվելու համար նրա շատախոսություններից, դեմքի և մարմի ծամածություններից, քսու ժպիտներից, դուռը շրխկալեն փակում: Այդպիսի գեպքերը չեն ազդում հնավաճառին և նա հանդարտորեն հեռանում ե, մի քանի կոպեկ շահելու անհուն յերջանկությամբ:

Հաճախ հանդիպում եք նրան փողոցում այս ու այն դռան մոտ կամ պատի տակ, վոտներն յերկարած փոշեծածկ մայթին, հին իրերին կրթնած, նայում ե մի անորոշ կետի: Միտք ե անում, թե հենց այնպես մտացրիվ նայում, վոչ վոք չգիտե: Անցնում են շատ վարկաններ, յերբեմն դեմքին նկարվում ե մի փոքրիկ ծիծաղ, արդյոք ապրանքն եժան գնելու կամ թանգ ծախելու հաջող փորձի արտահայտությունը: Յերբեմն ել մոռայլվում ե, թըթվում ինչպես ամպամած յերկինք: Պարզ ե, վոր այն որը Ռոմանի դործը թարս ե գնացել: Մեկ ել հանկարծ քնից սթափվողի պիս վեր ե թռչում, կանչում լիաթոք ու շարունակում ճամբան:

Յերբ արել պահվում ե մոտակա բլուրների կռնակը և մութը

իջնում հանդարտ քաղաքի վրա, Ռոմանը քայլերն ուղղում ե զեպի մայրենի թաղ — Շեյթան բազարը: Այնտեղ մի խուլ անկյունում գտնվում ե ծերուկ Խալիլ ողլու ճաշարանը, ուր լուլա քարաբի թեժ հոտը, սոխի ու կանաչի հոտին միախառն, լցրել ե ամբողջ մթնոլորտը: Նստում ե մի փոքրիկ կեղտոտ սեղանի մոտ, վորի վրա գեռ թափթփված մնում են բարաբի մանրունքները:

— Խալ ողլի, բեր փորցի բարաբր:

Ծերուկ Խալիլը, վոր սպիտակամազ դեմքին հազար ու մեկ դար ու փոս ունի, իսկ կոնակին լեռնացող մի սապատ, բերում ե քարաբը լավաշի մեջ փաթաթված, սոխի կանաչ բաշերով շըրշապատված:

— Յախշի՞ գըր.

— Յախշի, քեզ մատաղ, մեր քարաբն ամենահամեղն ե քարաբը:

— Սաղ ու, խալողլի:

Ռոմանը կտրում ե լավաշի մեծ կտորը, փաթաթում սոխի հետ քարաբը ու վոլորելով ձեռքում սկսում ուտել, ճպճպացնելով բերանը, թշերն ուռեցնելով ոդափամփուշտի պես, իսկ ճանճերը վորսի յելած սեղանի վրա, թափառում են սանձարձակ:

Ճաշից հետո սովորաբար խմում ե մի բաժակ թեյ և ապա գնում իր սենյակի, վորը գտնվում ե Քուսի ափին մի նեղ ու կեղուսոտ փողոցում:

\* \*

Ռոմանի միորինակ կյանքն խոռվեց մի կին: Դա մոտ քառասուն տարեկան չեչոտ դեմքով կին եր, Մարտուսիան, վոր ծառայում եր վորպես աղախին մի ունկոր ընտանիքում:

Մարտուսիան ճանաչում եր «սթարի վեշ» վաճառողին: Մի անգամ հրավիրեց նրան վերե, տանը մարդ չկար, ուղեց ծախել մի հնացած սյուրտուկ: Յերկար սակարկեցին: Ռոման շընչին գին եր տալիս ու սովորական դարձվածքներով վատարանում ապրանքը:

— Ա՛խ, տի դուռակ, նաստայաշչի դուռակ...

Բարկացավ Մարտուսիան, ձեւներով թեթև խփեց Ռոմանի մազոտ կղակին և յերբ նկատեց, վոր այդ հարվածը ոյուր յերկավ նրան, ժպտաց ու թոթվելով նրա ուտը, ասաց.

— Դու կին ունեմ, ա ծերուկ:

— ԶԵ, մենակ եմ,—պատասխանեց հնավաճառը ու աչքերը  
փայլեցնելով:

— ԱՌ, դու հին աղջես, թուրքն առանց կնոջ կապըի:

— ԵՅ բոխ չունեմ, վալլահ...—ու սկսեց յերդվել ծեծելով  
կուրծքը:

— Բա, ինչու այդպես ժշատ ես, ում համար ես փող աշ-  
խատում:

Մարուսիան յուրահատուկ համարձակությամբ բռնեց Ոս-  
մանի ծոծրակը և մի լավ թափ տվեց...

— ԱՌ, դու ավանմկ...

Յեկ քրքջաց լիաթոք:

Ոսմանին ավելի զյուր յեկավ այդ բան, աչքերն անորինակ  
կրակով լցվեցին, սիրտը սկսեց բարախել ուժգին, գլուխը պտույտ  
դալ, մթնում եր ամեն ինչը, խառնակվում... Ու Մարուսիան, վոր  
կանացի հոտառությամբ լավ ըմբռնեց նրա հոգեվիճակը, ոգտվեց  
առիթից և իր պահանջած գնով ծախեց սյուրտուլը:

Առաջին անդամ հնավաճառը խարվում եր և այդպես թանգ  
գնում ապրանքը:

— ԴԵ, հիմի գնա, մի լճվ կանչի, սատանի ձայն ունես:

Մարուսիան ուրախ, ուրախ ճամբու դրավ նրան ու դուռը  
ծածկեց:

Ոսմանը յերկար ժամանակ նստած մնաց այդ բնակարանի  
աստիճաններին՝ հին սյուրտուկը թեփ տակ, մտամոլոր... Յերեմին  
հառաջում եր ապրանքը թանգ գնելու համար, յերեմին ել բերանը  
լայն բացած ժպտում, ու թվում եր թե Մարուսիայի ձեռքը մեղ-  
միվ շոյում ե իր մազոտ ծոծրակը:

\* \* \*

Այնուհետև Մարուսիան նկատեց, վոր հնավաճառը հաճախ և  
անցնում իրենց փողոցով, յերկար կանգնում ե իրենց ընակարանի  
առաջ և առանձին թափով ու վոգենորությամբ ձայնում:

«Սիրահարված խոժ չինի՞ վրես...

Մտածեց նա և ինքնաբավականությամբ շոյեց ձեռները:

Մի որ ել տեսափ, վոր Ոսմանը պպզել և իրենց տան մուտ-  
քի քարե աստիճանին և հայացըն ուղղել լուսամուտին:

«ՉԵ, եղ ավանակի մտքում մի բան կա...

Ներքե իջավ: Ոսմանը տեսնելով նրան ցնցվեց և ուրախու-

թյունից լեզուն կապ ընկավ, իսկ նրա թուխ, մոնգոլական յերկ-  
նաձիգ դեմքին փայլեցին աչքերը և ճերմակ ատամները:

— Հը՛մ, ծերնեկ, լավ կնիկ եմ չե, հավանում ես.

Ասաց Մարուսիան պինդ սեղմելով նրա ձմուկ քիթը: Ոսմանը  
դեմքը ծոմոեց, թևերը թոթափեց և հոհուց մի անզուսպ, ինք-  
նուրախ քրքիջով:

— Քեփդ գալիս ե, հա, դե վոր եղանակ ե, իմ խոսքերին պի-  
տի լսես, հասկանո՞ւմ ես:

Նա ձեռքն Ոսմանի ուսին գրեց և ուղիղ նայեց աչքերին.

— ԴԵ, խոսիր տեսնեմ, կանեմ ինչ վոր ասեմ.

— Կանեմ, բիլլահ կանեմ, եյ բոխ:

— Ինձ համար մի դեյրա կերեմս, համ...

Մի վարկյան Ոսմանի դեմքն լրջացավ, ամփոփվեց, ձեռնե-  
րով պինդ բռնեց զրպանը, ծանր բան առաջարկեցին, իսկ ծանր  
եր այն, ինչ կապված եր դրամի հետ, թեկուզ մի կոպեկի:

— Հը՛մ, դժվար ե, ավանակ, եղանակ ես սիրում ինձ, հը՛մ:

Ասաց Մարուսիան և այնքան մոտ կանգնեց, վոր Ոսմանը  
զգաց նրա տաք շնչառությունը: Նրա դեմքը փայլեց նորից, նո-  
րից պսպղացին ատամները սաղափ:

— Տի խարոշ, շատ խարոշ յես, յես...

Հանկարծ աչքերը հուրհատեցին, մարմինը դող ընկավ ինչ-  
պես փետրաթափ հավ ու թևերն ոճապտույտ գալարվեցին կնոյ-  
մեջքին, վորը իսկույն աղատվեց նրա գրկից ջղուտ շարժումով.

— ԱՌ, դու ոյինբազ, սիրադ կնիկ և ուղում, իսկ դեյրամն...

— Կբերեմ եյ բոխ, վալլահ կբերեմ...

Հաստատ խոսք առած Մարուսիան ուրախ յերգ մոմուալով  
քթի տակ բարձրացավ վերև:

\* \* \*

Ոսմանը սենյակի խորշից դողգողութիւն և հագար անգամ յերկ-  
մտալով մի վոսկի հանեց, գնեց դեյրան և տարավ Մարուսիային:  
Վերջինս շատ ուրախացավ և թույլ տվեց, վոր Ոսմանը գնա  
հանոց: Որը կիրակի լինելով տան տերերը գնացել եյին պտույտի:  
Ոսմանը բերկրանքով նստեց մի անկյուն և դիտեց, թե ինչպես  
Մարուսիան ափսեները մաքրեց, տեղավորեց և հագավ դեյրան:

— Լավ եմ, կհավանես,—ասաց կինը տնազներ անելով:

— Տի խարոշ, վալլահ, բիլլահ ոչին խարոշ...

— Ա՛խ, դու արջի քրթոթ, — հայտարարեց Մարուսիան և կանգնեց հայելու առաջ:

Իսկ Ոսմանը յոթն յերկինք վերասլացած, զմայլանքով նայում եր, աչքերը խոշոր բացած, ինչպես վորսի սպասող գազան:

Յերբ քիչ հետո Մարուսիան յեկավ կանգնեց նրա քով, նախրուաց յուրահատուկ բըրիջով, շարժելով մազոտ դունչը:

— Ես դեյրեն միայն բավական չի, վոր քո Մարուսիան լավ զուգվի, սիրունանա, հա, հա... պետք ե մի ջուխտ տուփլի:

«Թուփլի՞...»

Բացականչեց ոձից խայթվածի պես Ոսմանը, դեմքը վայրկենապես սփրթնեց, մկանները գողացին, ակամա սեղմեց ժիշետի ծածկարանում պահված փողը, կարծես պատրաստվում եյին խլել:

— Տուփլի, ավանակ և վոչ թուփլի... Հըմ, ելի նեղն ընկար: Եդ ե քո սերը, մի քսան, յերեսուն ոռուլի խնայում ես:

— Թվացըթ, թրիցըթ... ա, ա... — Սղաղակեց Ոսմանը ավելի սարսափած, վոտները շարժվում եյին ջղայնությունից, ինչպես քաղցած ձիռ վոտ:

— Բաս ինչ, լավ տուփլին այդքան արժի, ինչ ես վախեցած գայլի պես աչքերը ճոռթած նայում:

Ոսմանը գլուխը քորեց, մի թվաչափ բարձրացնելով փափախը, մի քանի անգամ մաժեց ծնոտը, հետո բերանն այնպես լայն բացավ ու հորանջեց, վոր Մարուսիան սկսեց ծիծաղել: Հորանջումը նշանակում եր, վոր Ոսմանը շատ ծանր գործի յեր լըծված:

«Թրիցըթ րուփլի, վայ աման, տունս քանդվեց...»

Մարուսիան ավելի մոտ յեկավ, յերկու ձեռքով բռնեց նրա գլուխը և նայեց նրա սարսափից չուծ աչքերին:

— Ա՛խ, դու խոզ, սիրել չես իմանում, ապա համբուրիր տեսնեմ, հըմ...

Ոսմանի այրված շրթունքներն իջան նրա այտերին և յերկար նրանք մնացին փաթաթված:

— Դե, տուփլին յերբ կըերես, ասա:

— Կըերեմ, եյ բոխ, վալլահ կըերեմ...

Եշնջաց Ոսմանը նրա ականջին:

\* \* \*

«Թրիցըթ րուփլի, տունդ չքանդվի Ոսման, եդ ինչ ես անում...»

Մամտում եր ու քայլում Ոսմանը փողոցի յերկայնքն ի վար: Այդ որը նա չկանչեց և առուծախս չարավ, այլ շարունակ մտածում եր ու քայլում:

«Թուփլի... վայ աման...»

Իրինագիմին, լուլաքարաբն ուտելուց հետո, գնաց նստեց մեյզանի մի անկյուն, մսավաճառի փակ խանութի առաջ ու դարձյալ մտածեց:

«Թրիցըթ րուփլիի...»

Ու սարսափից մեկ աչքը կիսախուփ հառեց մի անորոշ կետի: Մարմինն ամբողջ պատել եր մի պաղ սարսուռ, թվում ե, թե մրսում եր:

Հանկարծ մուայլ դեմքը բացվեց և թուխ այտերի արանքում նկարվեց փոքրիկ, կենաւուրախ ժպիտ:

«Խարոշի, ոչեն խարոշ, եյ բոխ...»

Ու հոգու մեջ պատկերվեց այն դեպքը, թե ինչպես ինքը փաթթված համբուրում եր Մարուսիային:

«Վայ աման...»

Մամտաց ու փայլատակող աչքերին նկարվեց կնոջ այտերը մսու ու պարանոցը ջերմ. նրա յերեակայությունը վառվում եր, հըդեհվում:

Քիչ հետո, անցորդները նկատեցին մի փոքրիկ թուրք, պատի տակ քառակուսի պազպած, մսագունդված, թեսերը ծունկերին, զեմքը ծիրանեվառ, կանացի բաս ձայնով յերգում եր ու այդ յերգը հաղիվ ինքը լսում:

«Վայ աման...»

«Եյ բալամ, բալամ, այ բալամ,

«Ղուրբանըմ սանա, զյոզալ սան,

«Եյ բալամ, բալամ, այ բալամ...»

\* \*

Մարուսիան կոշիկն ու դեյրան հագավ, զուգվեց: Դրացիները զարմանում եյին, թե վորտեղից ե ձեռք բերում դրամը:

— Եդ ինչ ես այդպես զարդարվում, ինչ նոր բան, — հարցում եյին հարեանները:

— Մարդու յեմ զնում, — պատասխանում եր Մարուսիան ծիծաղելով զվարթ:

Ամեն որ տեսնում եր Ոսմանին: Ամեն անգամ ել քիթը կըճառում կամ կզակին հարվածում, իսկ այդ շատ ախորժելի յեր նը-

բան, ցանկանում եր, վոր Մարուսիան կատակե և չարաճճի հարգածներով գուրզուրա իրեն։ Մարուսիան ողտվելով այդ հանգամանքից, ավելի ու ավելի յեր պահանջկոտ դառնում։

— Այսոր կինո պիտի գնամ, փող տուր։

— Զիա, եյ բոխ, վալլահ, չկա։

— Ա'լ, դու խորամանկ աղվես, դու փող չունենաս, տուր տեսնեմ, հայդա։

Ու Մարուսիան սկսում եր մանրազննին խուզարկել Ոսմանի փոշոտ գրպանները։

— Զիա, վալլահ…

— Հըմ, եղակս են ինձ սիրում, հա՞, ուզում ես, վոր խռովեմ, ել քո Մարուսիան չլինեմ, դե՛ յավ…

Ու հեռանում եր մի կողմ, աչքերը խոժոռում, իբրև թե նեղացել եւ։

Ոսմանը նայում եր նրան վախեցած և ձեռքը տանելով ժիշտի գրպանը, կանակը դարձնելով հակառակ կողմը, քաշը վելով ու զգուշությամբ, վոր չնկատեն, շորի մեջ կոլուված գրամից տամս եր պահանջված գումարը։

— Դու լավն ես, լավ, յես քեզ միշտ պիտի սիրեմ, իմ սիրուն ծերուկ…

Բացականչում եր Մարուսիան ուրախ և հարվածներ տեղում նրա կղակին։

— Խը՛, խը՛, խը՛…

Խըսում եր Ոսմանը բերանը կիսարաց, աչքերը փալփլուն, կայծկլտուն…

\* \* \*

Մարուսիան վոչ միայն զուգվեց, այլ յերեկոները սկսեց հաճախել կինո ու բացակայել տնից։ Մի յերեկո նրա բացակայությանը մի քանի իրեր զողացան խոհանոցից։ Տիրուհին ջղայնացավ։

— Խանում ե դառել գլխիս, հագնվում ե ու տան գործերը թողած՝ կինո գնում։

Յեվ հրամայեց իրերը հավաքել և խսկույն հեռանալ։ Մարուսիան արտասուբն աչքերին աղաչեց, վոր ներեն, տեղ չունի գընալու։

— Ուր կուզես գնա, միայն հեռացիր։

— Այսքան աշխատանքիս վարձն ե այդ։ Մինչև հիմա մի կոպեկ չեք տվել, հացը բերան ամեն ինչը արել եմ, լվացքը, սե-

նյակներն մաքրելը, ճաշն պատրաստելը ու այժմ դուրս եք անոնմ այսպես անխիղճ։

— Լսել չեմ ուզում, հայդա…

Գոռաց գազազած տիրուհին ու դուռը փակեց վրան։ Շորերը թեին տակ Մարուսիան դուրս յեկավ փողոց, հանկարծակիի յեկած, շշմած։ Ուր գնաւ, ում դուռը բաղիւել. վոչ ծնող ուներ, վոչ բարեկամ…

— Հսթարի վեշչ, քարավաթ, մաշինքի, աթյալի…

Փողոցի ծայրից հնչեց Ոսմանի զիլ ձայնը, վոր փրկության զանգի պես թրթուց նրա հոգում։ Արագորեն գնաց և ընդառաջեց նրան ուրախ։

— Հըմ, ծերուկ, հսոր ձենդ ավելի զիլ և հնչում, արլորի պես, աքընքի ձայն ունես։

Ոսմանը ժպտաց և վոչինչ չասաց։

— Յես ուզում եմ քեզ մոտ հյուր գալ, կընդունեմ։

Ոսմանը լայն բացեց աչքերը։ Չեր հավատում ականչին։

— Յես հավատո՞ւմ։ Մարուսիան վճռել և քոն լինել, քոն։ Քեզ շատ ե սիրում, դու լավ, շատ լավ ավանակ ես։

Ու չարաճճի աչքերը հառելով նրան, իր սովորական հարվածն իջեցրեց կղակին։

— Խի, խի, խի… հոհուց Ոսմանը և կայծկլտեցին աչքերը։

— Տես, շորերս հետս եմ բերում, ել տիրուհու մոտ չեմ ապրի, կղառնամ քո կինը։ Հիմա համոզվեցիր։

Նա թեանցուկ յեղավ Ոսմանին և բայլերն ուղղեց փողոցի յերկայնքն ի վար։

— Դե, գնանք քեզ մոտ, լավ պիտի պահես, չե…

— Գլխիս վրա, — ասաց Ոսմանը ցույց տալով թրաշած գլուխը — աման ձիշտ ես ասմաւ։

— Վալլահ, բիլլահ…

Բացականչեց Մարուսիան և նրա պես ծեծեց կուրծքը։

Նրանք բայլերն ուղղեցին դեպի Շեյթան բազարը, թեանցուկ, յերկուսն ել կարճբոյ, մեկ մյուսին հարմար։ Ոսմանի հոգին վերասլացել, թոշում եր տուն։ Յերազի մեջ չլինի։ Սա ի՞նչ ե կատարվում իր հետ։ Կուրծքն այսպես ե խփում, մարմինն այսպես ե թարմացել, յեռանզով ու շունչով լցվել։

«Վայ ամանն…

Ահա մեյդանը, Դեպի աջը ծովող մի կեզտոտ, ծուռ ու մուռ

փողոց և Ոսմանի տունը: Կիսամութ սենյակ, փոքրիկ, անձուկ, հին, փոշեթաթախ իրերով լեցուն:

— Ֆռւ, սա ինչ տեղ է, խոզանոց...

Ասաց Մարուսիան դեմքը խառնելով, բայց ինչ կարող եր անել, ճարս ինչ: Շորերը տեղավորեց մի անկյուն և նստեց ճըռճըռան թախթին:

— Հիմի տեսամբ, համոզվեցի՞ր, ավանակ...

Ոսմանը խոխոաց անսահման հաճույքից, թև առավ, յերիտասարդացավ. հավաքեց, մաքրեց սենյակը, հին հագուստները տեղավորեց մի անկյուն, ապա յեկալ նստեց Մարուսիայի կողքին՝ դեմքը բոցավառ, կարմիր:

— Հըմ, ուրախ Ես, տունդ կնիկ յեկավ, քեզ պահող, գըգվող, քեֆ արա, իմ սիրուն ծերուկ...

Եյն որը լուլաքաբար ծախող Խալիլ ողլին զարմանքով նըկատեց, վոր իր մշտական հաճախորդ Ոսմանը չեկավ ճաշի: Զլինի խեղճին բան և պատահել, մտածեց նա անհանգիստ:

\* \* \*

Մի քանի որ անցավ: Մի անգամ սովորականից ուշ վերադարձ Ոսմանը: Առետուր շատ ուներ: Մի քանի հին հազուստ ծախսեց և գնեց. վերջին մուշթաբին հաստվուխ մարդ եր, յերկար վիճեց ու համոզեց մինչև վոր մի մաշված շալվար փաթթեց շլինքին: Ճանապարհին գրպանում համրում եր վաստակած դրամները և մտմտում ինքնագոն.

«Իր մանաթ, բեշ մանաթ... Սաղ ու Ոսման:

Քայլում եր արագ. շալվարի ծայրերը ծվեն, ծվեն կախընկած ճոճվում եյին աջ ու ձախ, կարծես մի գազազած շուն պատառտել եր: Փոշեթաթախ կոշիկի ճիտերն այնպես եյին ցցվել, ինչպես հեռափոր մի ճայնի ունկնդրող հորթի ականջները:

«Հիմի Մարուսիան նստել կսպասի, կգտմ այ ազիզ, քիչ ել համբերի, ջննս...

Մեկ շունչով անցավ Շեյթան բազարի ծուռ ու մուռ փողոցները: Ահա իրենց հարյուրամյա անցյալ ունեցող հին տունը. բարձրացավ զառամած մարդու ատամների պես խարխլած սանդուխի աստիճանները: Սենյակում լույս չկա, զարմանալի բան. քնել և անուշա...

— Մարուսա, մ Մարուսա, քնել Ես...

Զայն չկա, անկողինն ել պարապ, Ուրի և գնացել: Մի բան

պոկվեց Ոսմանի սրտից. կանգնեց շփոթ ու շվար սենյակի միջտեղ, խավարի դրկում, թերթին բռնած հին շորերը: Ապա հանկարծ լուսնոտի պես վազեց սենյակի մեկ անկյուն: Արագորեն հրեց տախտը ու պատի արանքում բըքրեց ինչ վոր բան... Բայց վոչինչ չգտավ ու սիրտը, վոր բարախում եր ուժգին, սառեց մի վարկյան և արյունը կանգնեց յերակների մեջ:

«Վայ աման... տունդ բանդվի Ոսման...

Զեռներն խփեց ճակատին, ներքի շպրտեց հին շորերն ու կերկերաձայն կանչեց.

— Յուզ մանաթ, վայ աման...

Մի պահ ծանր իրողությունը պայծառացավ աչքերին. գրամի գաղանի պահարանը թալանել եյին, տարել իր ամբողջ հարստությունը, 10 վուկին... Ոսմանը նորից փնտուեց, բըքրեց անկյունները բոլոր. իզնուր... ու խեղճացած, փետրահար հավի պես, առաջ անցավ վիզը ծուռ, դեմքին հազար ու մի մսոտ ալիք, բըսունցքի մի քանի հարված տվեց կրծքին ու ծալապատիկ նստեց մի կապոցի վրա:

«Դև եր, տունս մտավ տարավ, հարյուր մանաթ...

Վերհիշեց վերջին որերը, յերբ Մարուսիան շարունակ գրամի մասին եր խոսում: Վոսկի շատ կունենաս, ասում եր, բա ինչ կնիկդ եմ, վոր ցույց չես տալիս... Ուզում եր պահարանիս տեղն իմասնալ շան աղջիկը. իսկ յես խոմ կաթնակեր յերեխա չեյի, վոր ցույց տայի տեղը: Բայց ինչպես գտել ե... Ա՛, իմացա, յերեկ գիշերը, յերբ յես մի վոսկի եյի հանում ապրանք գնելու, արթուն և յեղել, սատանի պես հետեւել և ու իմացել տեղը...

— Ծը, ծը... յուզ մանաթ. Ոսման, սատանան քեզ տանի, ծը, ծը, ծը...

Սկսեց հեկեկալ խոխոացնելով կոկորդի մեջ ու խոշոր կաթիներն արտասուքի հոսում եյին մազոտ յերեսն ի վար: Գլուխը ձեռների մեջն առավ, կոլովկեց և ինչպես վոզնի կծկվեց...

«Տարան, վայ տարան հարյուր մանեթս...

Քիչ հետո, կարծես ինչ վոր բան հպեց իրեն, աչքերը բացավ ու հառեց մութ կետի, ապա ինչ վոր ժպուրեկան, կենդանի ստվեր պատկերվեց առաջ ու մի զյուրեկան, ախորժելի բան շոյեց կըսպատկերվեց առաջ ու մի զյուրեկան, ախորժելի բան շոյեց այն զայն: մի վարկյան փայլեցին աչքերն ու մտքում գծազրվեց այն վարկյանը, յերբ ինքը դրկել եր Մարուսիայի մեջը...

— Գնաց ձեռքես, վայ աման ուրիշ բան ել...

Ուժից խայթվածի պես վեր թուավ, սկսեց շուրջպար գալ սե-

Նյակի յերկայնքնիվար: Մի ինչ վոր մղձավանջային միտք ցցվաց  
ուղեղում չգնա՞լ չվաղել յետելից, չվնառել չգտնել նրան...

«Գնաց ձեռքես, թռավ աղունիկո... յուզ մանմթ, վայ աման  
Ոսման...

Ուղեղում հազար ու մի միտք շփոթ ու քառո, բռնցքահա-  
րելով ողը, վազեց ինչպես կատաղած ցու, վերցրեց ձեռնափայտն  
ու անդլխարկ, բաճկոնի ոձիքը բաց՝ սենյակից դուրս յեկավ:

Փողոցում արագ անցնելիս չիմացավ թե ինչ եր կատարվում  
շուրջ բոլորը: Մարդ, կառք, տուն բոլորը խառնվել, մշուշվել եյին  
աչքերին: Ահա Մեյզանը, հարյուրավոր ճրագ և լույսերի մեջ նրա  
դեմքը կասկարմիր փայլում եր, ինչպես հնոց դրած պղինձը: Մայ-  
թի վրա պատահաբար հրեց ծերուկ Խալիլ ողլուն, վոր ճաշարանը  
կողպած վերադառնում եր տուն:

— Բարով, Ռոման, այդ ուր ես, այ մարդ. ել չես գալիս  
լուլաքաբար ուտելու:

Ռոմանը մի բութ, սպառնալից հայացք ձգեց նրան ու լուռ  
առաջ անցավ:

— Արա, Ռոման, այ քիչի, լուլաքաբարը չես ուղում մի ուտի  
ախպեր, բարեկի ել արժան չեղանք, վայ աման աշխարհ...

Ու Խալիլ ողլին անատամ բերանը ճոռթած, յերկար մոտմտում  
եր նայելով արագորեն հեռացող Ռոմանի յետելից:

1920 թ.



## ՄԻ ՄԱՆԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Փոքրիկ Սմբատը շատ անհանգիստ եր, յերբ դասարանից  
դուրս յեկավ դասամիջոցի: Դասի ժամանակ, նորից կրկնվեց այն  
ցավալի դեպքը, վոր հաճախ տանջում եր նրա դեռատի ու-  
դեղը.

«Ախըր ինչն այդպես յեղավ, չե՞ վոր յես լավ եյի սովո-  
րել...

Ու բազմաթիվ կաթիներն արտասուքի ի մի հավաքված՝  
սպասում եյին մի պատրվակի՝ դուրս խուժելու: Զեռները բաճկոնի  
գրպանում, գլուխը կախ, մտախոհ բայլեց բակի մեկ անկյուն ու-  
մնաց այնտեղ մենակ, մտքերի ծովում մինչև հետեւյալ դասի սկիզ-  
բը: Յերբ զանգեցին, մեքենաբար առաջ անցավ դեպի դասարա-  
նը՝ դեմքը խոժոռ ու մռայլ:

Բանը նրանումն եր, վոր յերբ յերկրաչափության ուսուցի-  
չը հարցրեց նրան դասը, բոլոր ընկերների հայացքներն բենովե-  
ցին իրեն, իսկ ուսուցիչը սովորական իր սուր, փայլփլուն աչ-  
քերն անթարթ հատել եր պենսների միջից և չնայած, վոր Սըմ-  
բատը լավ եր ըմբռնել յերկրաչափական տեսությունը, շփոթվեց,  
կարմրեց և չկարողացավ արտահայտվել: Դասատուն դեմքը խո-  
ժոռեց և ասաց.

— Նստիր, բթամբիտ, խաղը ժամանակ չի տալիս դասերդ  
սովորելու:

Յերեխան նստեց հուզված, ընկճված: Ընկերներից մի քա-  
նիսը հեգնորեն ժպտացին, նույնիսկ փղձկացին իրար ուսին տա-  
լով: Ա՞իս, այդ Սուրենն ու Վահանը, նախանձոտ դասընկերները,  
վորոնք հբաժում են ամեն անդամ, յերբ Սմբատը շշկլվում ե, նը-  
կատողություն ստանում կամ մի վորեե անպատեհ դրության մեջ  
ընկնում:

«Շատ գիտոսիկն ե իրեն յերեակայում, քիթն ել բարձր,  
հպարտին մեկը:

Բամբասում եյին ընկերները, վորովհետեւ Սմբատը քիչ եր

խոսում նրանց հետ, սիրում եր մենակություն, կարծես բազմաթիվ խոներ ուներ, մտածումներ, բարդ խնդիրներ, վորոնք քննելու համար ընկերների ներկայությունը խանգարում եր:

Ա՛ն, այդ յերկաշափության դասատուն, վորի սուր հայցքը, վոսկեշրջանակ պեսնեն, վոսկրոտ, արծվային քիթն ամեն անգամ շփոթում ելին նրան ու վորքան սովորեր դասը, միենույն և կլրդովկեր, կշշկվեր կորցնելով մտքերի թելը: Արդեն ուսուցչի դիմումը բավական եր, վոր դեմքը դժգուներ, բարախեր սիրու և կատ ընկներ լեզուն:

— Դուք սովորել եք դասը:

Կամ

— Միևնույն ե, ժամասպառություն կլիներ ձեզ դաս հարցնելը, վորովհետեւ առհասորակ չեք սովորում:

Այդ ուսուցիչն այն համոզումն ուներ, վոր Սմբատը յերեք դասը չի սովորում, ծույլ ե, ծանծաղամիտ, և իր կարծիքն ընդհանրացնում եղ մյուս գասատուների շրջանում: Յերբ պատահարար ուրիշ գասերի ժամանակ այս կամ այն հարցին Սմբատը չկարողանար ճիշտ պատասխան տալ, դասատուն փնթվնթում եր. «իրավունք ունի յերկաշափության ուսուցիչը, բթամիտ յերեխա յեք...»

Իսկ Սմբատը ջղայնանում եր ու հոգեպես ճնշվում:

Դասերից հետո յերբ զնաց տուն, փոքր քույր Նազիկը արդեն յեկել եր դպրոցից, դժգոն եր, վորովհետեւ խիստ քաղց եր զգում:

— Մեր ճաշը միշտ այսպես ուշանում ե, հայրիկն իսկի ուշադրություն չի դարձնում:

Ասաց Նազիկը մայլ յեղբայրը նայեց նրան կարելից հայցքով, ինքն ել հոգնած եր ու քաղցած, տրամադրությունը վատ Մի պահ մեծ ցանկություն զգաց գրկել քույրը ու պատմել սըրտին ծանրացած դառն խոները, բայց զսպեց ինքինը: Դրբերը տեղավորեց պահարանում, ձեռներն յերկարեց ողնիվեր, հորանչեց ու քայլել սկսեց սենյակի յերկայնքնի վար, իսկ Նազիկը պատշգամբում, յերկաթյա ճաղերին հենած, փողոցն եր նայում:

Կես ժամից յեկավ Արուսյակ մորաքույրը: «Տեսնես ելի վերտեղ և գնացել ման գալու», մտմտաց Սմբատը դիտելով մորաքոյ գեղեցիկ հագուստը, ծաղկապատ, լայնեղը զլխարկը, պըսպըզուն վոտնամանները: Մորաքույրը հագուստները փոխեց, տնային շորերը հագավ և ձեռնարկեց ճաշի պատրաստության: Սըմ-

բատին կարգադրեց ջուրը բերել և փայտը կոտրատել վառարանի համար: Սմբատը դժգոնությամբ տապարն առավ ու մի գրկաչափ փայտ տարավ բակը մանրելու:

— Աղա յեն դառել զլխիս, առածներս չեն կատարում:

Փնթվնթաց մորաքույրը, դժգոն նայեց նրան և ինքը գնաց ջուր բերելու: Սմբատը փայտ եր ճեղքում, հոգին ստվերել եյին մոայլ մտքերը: Այդ կինը չափազանց ջղայնացնում եր, խոմ պարտական չեն նրա համար միշտ ջուր բերել, փայտ կոտրատել, վառարան վառել, քիչ մնաց կերակուր ել յեփի... Միշտ նկատողություն ու հայնոյանք, յերբեմն ել այնպես և հանգիմանում ե, հեկեկում, նրա աղախինը խոմ չի, վոր ինչպիս ուղի, վարվի հետը:

— Բոյը զցել, յերկարել ե, բայց զլխումը խելքի մի կտոր չկա, խանում և ուզում լինել:

Այսոր ել մորաքույրը նույն խոսքերը կրկնեց, հրամայելով Նազիկին գետնախնձորը լվալ ու կճպել: Ախը՛ր, քաղցած, բեղարած քույրը, այդ ինչնը տարեկան յերեխան, բռնի գործի յեն լըծում, անտեր ե, ինչ ե... Բարկությունից Սմբատի ատամները սեղմվում եյին ու ձեռները գողում. չգնալ, կացինը չի ջեցնել եղ քայլթառի զլխին, վորին հոգու բովանդակ ուժերով ատում եր:

Ա՛խ, յեթե մայրիկը վողջ լիներ, այսպես ծանր չեր լինի կյանքը: Յերկու տարի յե ինչ մայրը վախճանվեց, իրենց զըստությունը միանգամից փոխվեց, միշտ գեպի վատը զնաց: Հայրիկը ծառայության և զնում ու շարունակ ուշ գալիս տուն, յերբեմն ել հարբած վերագանուում, յերեխաներին յերեսի վրա յե զցել շատ քիչ ե հոգում: Գոնե հայրիկը հոգատար լիներ... Այս, յեթե հայրիկը ուշադրություն գարձնի, իրենց վիճակն ավելի կթեթեղանա և մայրիկի բացակայությունը այդպես զգալի չի լինի: Սմբատը վերհիշեց նորից մայրիկին, ցնցվեց ամբողջ եյությունը, աչքերի խորբում պապղացին արտասուրի յերկու կաթիլ և սահցին մեղմիվ նրհար այտերն ի վար:

Արուսյակը վառարանի կողքին քրթմնջում եր ու փայտի սպասում: Սմբատը փայտերը բերեց, ապա գնաց սենյակը և յերկընցավ թախթին, հոգնած ու սոված մարմինը մեծ թուլություն եր զգում:

— Մեր աղան պառկել ե կռնակին, իսկ տանը հաց չունենք, հանգստանալու ժամանակին ե, գնացեր հացի ու կանաչի, հայդա:

Սմբատը զբան առավ և ուղղվեց բազար, իսկ նազիկը գեռ

գետնախնձոր եր իստակում, մաքրում իր պղտիկ նիհար մատներով:

Ճաշից հետո Սմբատը սկսեց դասերը սերտել. եղ անիծած մատեմատիկայի խնդիրները չարչարում եյին ուղեղը, թվերն ու գծերը հաջորդում եյին, բայց խնդիրները չեյին լուծվում: Յերեկոյան հրամայեցին ինքնայեռը պատրաստել: Թեյի ժամանակ հայրիկն յեկավ, սիրալիր բարեկեց մորաքրոջ, իրենց կողմն իսկի չնայեց, կարծես միայն Արուսյակը լիներ տանը: Թեյից հետո հայրիկն ու մորաքրոյը գնացին հարևան սենյակը և յերկար խոսում եյին իրար հետ: Սմբատը նորից սովորում եր, այս անգամ շարադրություն եր գրում, վորը առնասարակ հաջողվում եր նըրան, բայց այն որը մտքերն անկապ եյին ու ցրիվ: Ինչ եյին այդպես յերկար զրուցում հայրիկն ու մորաքրոյը հարևան սենյակում, շինո՞ւ մորաքրոյն ելի իր մասին ե խոսում, բամբասում հայրիկին, թե ծույլ ե, չարաճճի, չի ոգնում իրեն, ինքը մենակ ե աշխատում և չափազանց հոգնում: Ա՛, յերեկի այդ պատճառով ե, վոր հայրիկը խոժոռ ե նայում: առաջվա պես սիրալիր չե, կոնֆետները չի բերում, առաջ հայրիկը շարունակ կոնֆետ եր բերում հետը: Շուտով նրանք յեկան մյուս սենյակից և հրամայեցին յերեխաներին ընել:

— Փիլիսոփա յեն դառել, յերբ պետք ե սովորել, չարություն են անում, իսկ յերբ պետք ե քնել, սովորում են, դրա համար ել ուսուցիչները գտնոն են:

Այսպես մըթմըթաց մորաքրոյը: Յերեխաները լուս հանվեցին ու պառկեցին իրենց անկողնում: Նազիկը շուտով սկսեց խոմբացնել, բայց Սմբատի քունը չեր տանում, հազար ու մի միտք շրջապատել եր նրան, մտածում եր որվա անցքերի և իրենց վիճակի մասին և դառնանում եր հոգին: Նորից առաջն յեկավ մոր սիրելի պատկերը, յերբ մայրիկը կենդանի յեր, Սմբատը վաղվըզում եր ուրախ, կանչվաստում, չարաճճի խաղեր սարքում, իսկ նազիկը հոհուում եր ու փաթաթվում մայրիկի վիզը: Մայրը ժըպտում եր, գրկում, փայփայում և ջերմ համբույրներ գրոշմում այտերին, այժմ... այժմ վոչ վոք չի սիրում նրանց, հայրիկն ել խոմ խորթացել ե, ոտար լինի կարծես: Այդ բոլորի մեղափորը մորաքրոյը ե... այն, այդ խոժոռ, չար կինը, իզուր տեղ իր մայրիկը մեռավ, իսկ այդ կինը մնաց, վորպեսզի շարունակ տանջի նրանց:

Ու վերմակի ներքեւ ձեռները բառնցք կազմեցին, կարծես պատրաստվում եյին հարվածել վորեն մեկի:

Հայրիկն ու մորաքրոյը նորից մյուս սենյակումն եյին: Իսկ Սմբատը մտորում եր ու քնել չեր կարողանում: Սենյակի լուսության մեջ լսվում եյին նազիկի փոքրիկ, խզմզվող շնչառությունը և պատի ժամացույցի սովորական հնչյունները:

Դուռը մեղմիկ բացին, հայրիկն և Արուսյակը ներս յեկան կամացուկ.

— Դեռ չեն քնել — վախսաց Արուսյակը:

— Այո, քնել են արդեն — շշնջաց հայրիկը դիտելով յերեխաների գեմքելը: Սմբատն այնպես ցույց տվեց, վոր իբր քնած ե:

— Ինչ լավ ե, յերբ մարդը յերեխա չունի, նրանք խանգարում են, չեն թողնում աղատ շունչ բաշել:

Այսպես խոսելով մորաքրոյը մոտեցավ պահարանին, վերցրեց գինու շիշը, ուտելեղենն և նրանք վուների ծայրերին քալելով, անշշուկ, նորից վերադարձան մյուս սենյակ: Այստեղ յերկար, յերկար խոսում եյին ու հաճախ լսվում եր Արուսյակի զիւղընդուն քրքիջը:

Նման քրքիջները նա շատ անգամ եր լսել կողքի սենյակից, վորոնք վրդովում, զղանացնում եյին Սմբատին: Այս զիշերը քունը խոռվել եր, փախչում նրանից ու մտքում համրում եր յերկար ու ձիգ բոպեները: Իսկ ժամացույցը տկտկում եր միորինակ ու ձանձրալի: Շուտով նրա կոպերը ծանրացան, աչքերը փակվեցին և ել վոչինչ չլսեց:

2

Հաջորդ իրիկուն դարձյալ նույն յերեւույթը կը կնվեց: Այս անգամ Սմբատը վորոշեց չքնել: Այն որը ավելի յեր ջղայնացել Արուսյակի վրա: Դպրոցից հոգնած ու բեղարած հաղիկ եր վերագրձել ու մի պատառ հաց կերել, մորաքրոյը հրամայեց կարդինան վերցնել և հետեւել իրեն: Նրանք գնացին շուկան և մտան բազմաթիվ խանութներ: Մորաքրոյը իրեն նոր հագուստ և գըլխարկ գնեց: Առաջոտ Սմբատը նկատել եր, թե ինչպես հայրիկը նրան մի բուռ թղթաղրամ տվեց... հայրիկի փողերովն ե զուգվում, մինչդեռ նազիկի շրջապատուն արդեն վաղուց ե մաշկել, վոտնամանները ճաքճաքել են, իսկ իր լնկերները, որինակ իր կողքին նստող Արուսյակը արդեն նոր, փայլուն բաճկոնակ ունի հազար, իսկ իր բաճկոնակը խունացել ե ու թերբի տակը մաշ-

վել: Իրենց մասին մտածող չկա: Ուրիշ յերեխաները լավ են հագնվում, մինչդեռ իրենք շարունակ հին շորերով մնում...

Խանութներում յերկար սպասեց, մինչև վոր մորաբույրը վերջացրեց գնումները: Այդ ձանձրալի սպասումները ջղայնացրին նրան, իսկ ճանապարհին մշակի պես տանում եր մորաբրոջնոր շորերը. քայլում եր ընկճած ու գիտում նրա բարեձև հասակը, սև, զրավիչ աչքերը, փայլուն կոշիկները ու սրտի խորքում նախանձում, տուում: Անշուշտ Սմբատը շատ կուղենար, վոր մորաբույրն այդպիսի գեղեցիկ աչքեր, բարձր հասակ և վարդագույն թշեր չունենա...

Գիշերն Սմբատի քունը չեր տանում. հայրիկը գտնվում եր հարեան սենյակում, Արուսյակի հետ կամացուկ զրուցում ու քչփշում եյին: Ի՞նչ գործ ուներ հայրիկը մինչև այդքան ուշ ժամանակ Արուսյակի սենյակում: Ջղայնությունից չեր կարողանում քնել ու շարունակ շուռ ու մուռ եր գալիս անկողնում: Ահա մորաբույրը բարձր ու զիշ բրբջաց: Ուրախացել ե ավանակը. ով գիտե հայրիկն ինչպիսի անուշ ուտելեղեն ե բերել նրան, ուտում ե և ուրախանում, իսկ ինքն ու քույրը յերեկոյան հաց ու պանիր կերան ու քնեցին: Զե, հայրիկն յերեսը դարձել ե իրենցից ու նրան ե սիրում, նրան ե կոնֆետ բերում,.. վայ ավանակ: Անզուսպ մի ցանկություն գրգեց Սմբատին իջնել մահճակալից և լրտեսել նրանց: Կամաց ներքեւ սահեց և մերկ վոտների ծայրերով անշշուկ մոտեցավ հարեան սենյակի դռան, դուռը քիչ բաց եր և արանքից նկատվում եր ամեն ինչը: Արուսյակը նըստել եր հայրիկին խիստ մոտ և զլուխը թեքել նրա ուսին. հայրիկը գինի յեր խմում, ահա նա ժապատաց, կարմբակալած դեմքը թեքից գեպի մորաբույրը և... և համբուրեց նրան, իսկ մորաբույրը գլուխն խոնարհեց և ծիծաղեց զվարթ... Յերկինքը ճայթեց Սմբատի գլխին և մի վարկյան աչքերը մինեցին... մինչև այժմ հայրիկը վոչ մի անգամ այդպիս չի գրկել ու համբուրել Սմբատին: Իր սիրելի հայրիկին կարծես խլում եյին ու տանում, տանում եյին հայրիկին ու թողնում իրենց վորք, մենակ...

Սաստիկ ցանկություն զգաց ճչալ, ոգնություն կանչել, բայց զսպեց իրեն, ուժ չկար վրան, ննջել կուղեր, հանգստանալ: Թըզվում ե թե ինչ վոր ծանր բեռ եր կրել, հոգնել. մեկ ել կուղեր մտքերն ամփոփել, յեղակացության հանգել: Անշշուկ վերադարձավ ու պառկեց:

«Ա՛խ, չար սատաննա... մրմնջաց ինքնիրեն Սմբատը և զայրույթից ձեռներն ըսունցք կազմեցին, գանակոծեցին ողը:

«Թող քեռին գն (յերեխաներն Արուսյակի ամուսնուն քեռի եյին անվանում), յես նրան բոլորը կպատմեմ, բոլորը...

Քեռին ծառայության գործերով գնացել եր ուրիշ քաղաք: Յերեխաները սիրում եյին նրան, լավ մարդ եր, ուշադիր յերեխաների հանդեպ, շարունակ փայտայում եր նրանց, նվերներ բերում: Նրա ներկայության կինը չեր համարձակվում գոռալ, վերափորել:

«Բոլորը, բոլորը կպատմեմ նրան... Մրմնջում եր Սմբատն ատամները սեղմած:

### 3

Ժամանակն անցնում եր դանգաղ ու միորինակ: Սմբատն ավելի ու ավելի յեր մոայլվում, թթվում: Դպրոցում աշակերտներից շարունակ առանձնանում եր ու մտածում, կարծես աշխարքի բոլոր հոգսերը նրան եյին տվել:

«Ճգնավոր ե ուզում դառնալ», — ասում եյին ընկերները ծաղրելով նրա առանձնանությունը: Դասերին, յերբեմն կորցնում եր ուշադրությունը, յերբ անհրաժեշտ եր լարված լսողությունը, հանկարծ նրա ձեռները ձգվում եյին, դեմքի նիհար մկանները կենտրոնանում աչքին պատկերվում եյին մորաբույրն ու հայրիկը, նրանց ուրախ քրքիջներն ու համբույրը... Շրթունքները մրմնջում եյին ցասկոտ: «Թող Մինաս քեռին գն... Հայացքը ցրված գնում, բեկնովում եր առաստաղի մի անորոշ կետին:

— Սմբատ, ձեր ուշադրությունը վնրտեղ ե:

Յերբ ուսուցչի բամբ, ազդու ձայնը լսում եր, մեծ ձիգով ուշադրությունն ամփոփում եր դասին:

— Առաստաղի վրա ճանձ ե փնտում, — վախում եր չարաձձի Սուրենը ու փղձկում, այդ ավելի յեր ջղայնացնում նրան, քան ուսուցչի նկատողությունը: Ա՛խ, մի թողնեյին, այնպես ապատակեր պիտի այդ չարկեզու Սուրենին...

Մորաբույրը ճետղետե ավելի յեր ուշ գալիս տուն, ծնողների կամ ծանոթների տանն եր լինում: Ճաշն ուշանում եր կամ յերեխաներն մնում եյին առանց ճաշի, հացով ու պանրով անցնում որը:

— Զե մի, ամեն որ ճաշ պատրաստեմ աղային ու խանումին, քրթմնջում եր Արուսյակը թթվեցնելով գեմքը:

Նազիկը զանազան կարիքների համար յեղբորն եր դիմումը Վերջինս հետևում եր նրան ուշադիր, սփոփում նրա մանկական հոգու գառնությունը այն գիտակցությամբ, վոր հայրիկը չի նայում, իսկ մորաքույրը բոլորովին ոտար մարդ, և Սմբատը զգում եր իրեն միակ հոգատարն ու պաշտպանը Նազիկին:

Յերեկոյան հայրիկն ու Արուսյակը գնացին թատրոն: Նազիկը քննեց: Իսկ Սմբատը կարգում եր մի հետաքրքիր գիրք, այնտեղ նկարագրված եր հեռավոր աշխարհում ընկած մենակ մարդու կյանքը: Յերանի ինքն ել նրա նման ընկներ հեռու, հեռու տեղ, մենակության մեջ ապրեր, չլինելին տունը, դասերը, մորաքրոջ խոժոռ գեմքը...

Ժամը տասերկուսին կարդալուց հոգնեց և պառկեց, գրքի հետաքրքիր մասերը գրավում եյին մանկական յերեակայությունը, սլացնում հեռավոր յերկրներ, անհուն, անեղք ծովեր, սաղարթախիտ, հսկա անտառներ, ուր գաղաններն են ապրում վայրի և ոձերը թունավոր: Ավելի լավ և ապրել վայրի գաղանների և ոձերի մեջ, քան այնպիսի տեղ, ուր մարդիկ տանջում են միմիանց, նախանձում... մտմտում եր նա:

Դուռը մեղմիկ բացվեց: Ներս մտան Արուսյակն իր մետաքսյա, հրաշալի շորերով և հայրիկը, վոր գլխարկն հանեց և ելեքտրական հորդ լույսի տակ փայլեց նրա սափրած գլուխը: Սմբատն աչքերը փակեց, իբրև թե քնել ե, բայց ուշադիր հետևում եր նրանց շարժումներին: Նրանք նստեցին մի կտոր բան կերան, ինչ վոր խոսեցին, ապա Արուսյակն գնաց իր սենյակը: Հայրիկն իրենց սենյակումն եր քնում: հագուստները հանեց և հանգցրեց լամպը, տիրեց լուսություն: ապա մեկը մութի մեջ անշշուկ և արագ անցավ Սմբատի մահճակալի մոտով, մեղմիկ բացավ դուռը և մտավ մորաքրոջ սենյակը: Հետո ամեն ինչ լուեց: Դա անշուշտ հայրիկն եր, ել ուրիշ ով կարող եր լինել և կասկածն ոձի պես կծեց Սմբատի հոգին, մի պահ սպասեց ամբողջ ուշը լարած, բայց լուսություն եր համատարած: Ապա անշշուկ յելավ անկողնից, մոտեցավ հայրիկի մահճակալին, ձեռներով շոշափեց, դատարկ եր... Նա համոզվեց իր կասկածի մեջ, ուրեմն հայրիկը խարում ե մեզ ամեն գիշեր և ուրիշ տեղ և քնում... Յետ դարձավ, պառկեց և զղայնությունից սկսեց արտասվել... Նա ինքնինքը վորը եր զգում, լրված, անպատված... ու հորդացող արցունքները հովացնում եյին դառնացած սիրտը:

«Ա՛խ, յեթե մորաքրոջ ամուսինը, Մինաս քեռին գա, ինչպես, ինչպես պիտի պատմի նրան...

Հետևյալ որերը նա շատ մոայլ եր, մտածում եր, թէ ինչպես Մինաս քեռին պիտի ընդունի այդ լուրը, մեծ, խորհրդավոր գաղտնիքը, ինչ ամոթ... վորքան անպատիվ բան, յերը հայրիկը գիշերներն գնում և Արուսյակ մորաքրոջ սենյակը... Զե, հայրիկն ել առաջվանը չի, յերը մաման վողջ եր, ինչ բարի, լավ մարդ եր հայրիկը, այժմ բոլորովին փոխվել ե, ուրիշ մարդ ե դարձել, ոտար մարդ...

Թանի Սմբատը նորից նաստատում եր խորհրդավոր գաղտնիքը, այնքան հայրը ցածանում, ընկնում եր աչքից: Հաճախ յերեխան նույնիսկ զղայնանում եր, յերը թեյի ժամանակ նայում եր հորը, այդ բարձրահասակ, միշտ սափրված, թըլահներ մարդուն: Առաջ նա ավելի հետաքրքիր և հարազատ եր թվում: Այժմ նրա ականջներն յերկարել են, գեմքին բազմաթիվ ավելորդություններ, խորշուներ կան, մանավանդ գանդի մազաթափ, ճաղատ տարածություններ, խորշուներ կան, մանավանդ գանդի մազաթափ, ճաղատ տարածություններ, խոսակություններ մի տեսակ կեղծ եր հնչում...

«Ել մեր բարի, լավ հայրիկը չկա...»

Արուսյակի դիմ այժմ ավելի համարձակ եր խոսում: թնդանություն չերկարի, թէ չե ամեն բան կպատմեմ: Մինաս քեռին յեթե իմանա, նրան կսպանի, մազերը թել թել կպոկի... Ո՛, յեթե քեռին իմանա...

Այսպես եր մտածում Սմբատը և խոսքի տակ չեր մնում: սպանագին, ցամկոտ հայացըներ նետում և Նազիկին պաշտպանում մորաքրոջ լեզվահարձակություններից:

«Թող Մինաս քեռին վերադառնա, յես քեզ ցույց կտամ...»

Յեկ Սմբատը սղմում եր բռունցըները, ատամները մոլեգնորեն կրծտացնում:

Իր կարգացած պատմությունն առանձին վողերությամբ պատմեց Նազիկին, վերջինս մեծ հետաքրքրությամբ ունկնդրեց: Նրա աչքերը փայլեցին և մանկական վառ յերեակայությունը թև առավ, շքեղ գույններով ներկվեց:

Յեղբոր խանդակառը ներկաթը լսելուց հետո Նազիկը նոտեց զիվանին և սկսեց խաժալ փոքրիկ, խաժաչվի կատվի նետ, փայփայում եր, գուրգուրում նրա նուրբ, թափիշյա մորթը: Կատուն այդ հաճելի գգվանքներից յերես առած, տնաղներ եր անում, թաթիկները չարաձձիորեն շարաձձիորեն շարաժում:

Սմբատը յերկնցել մահճակալին, ձեռներն զլխատակ, միտք եր անում: Խաղաղ, անաղմուկ իրիկուն: Հայրիկն ու մորաքույրը գնացել եյին հյուր:

Յերկար լոեց Սմբատը, հայացքն անորոշ կետի, ուղեղը պաշարված հաղար ու մի մտքերով. իսկ մտքերը շատ աշխարհի մեջ, վորքան կուղեք: Քիչ հետո հորանջեց, ձեռները թափահարեց և թիկնելով բարձին, ասաց.

— Եհ, մեր կյանքն ել խոժ մի քանի նման չի, լավ որ չտեսանք, վոչ լավ ուտել կա, վոչ հագնել, մորաքրոջ քիթ մոռւթն ել չի քաշվում..,

— Մեր փիսիկին խածել են հարևանների կատուները, խեղճի թաթիկը ցավում ե:

— Ի հարկե, չի կարելի տանել—շարունակեց խոսել Սմբատն ականջ չկախելով քրոջ գանգատներին—ես դասերն ել հոգիս հանեցին, մանավանդ յերկրաչափական խնդիրները, զորի բան խո չի, չեմ կարողանում լուծել, մտքի հանգստություն կա, վոր կենտրոնանամ դասերիս. բաճկոնիս թերը պատուիել են, կոշիկներիցս ջուր և մաղվում, ով և նայողը...

— Մեր դասերն ել դժվարացել են: Այսոր ուսուցիչը պահանջեց, վոր տետրերն ու դասագրքերը պատրաստենը:

— Հըմ, ով և քեզ տեսոր ու գիրք գնողը. հայրիկն ուրիշ վրա յե փողերը ծախսում:

Պատասխանեց Սմբատը մոայլ: Բույրը մի քանի բոպե լոեց և ասաց:

— Հայրիկն ու մորաքույրը այսոր ուշ են տուն գալիս:

— Յերբ են շուտ յեկել վոր, միշտ ուշ են գալիս—ասաց յեղբայրը և հանկարծ աչքերը բոցավառվեցին. մի վարկյան մեծ ցանկություն զգաց պատմել իր գաղտնիքը. քիչ թեքվեց գեպի քույրը, բայց զսպեց ինքինքը, ամոթ ե, մամտաց. մեկ ել Նազիկը փոքր ե, բան չի հասկանա, յերեխա յե... իսկ յեթե հասկանա, այնպես պիտի վշտանա, տիսրի խեղճ նազիկը...

Յեկ խանդաղատանքով նայեց բրոջը, վորին միայն սիրում եր այս աշխարհում:

— Պատան ասալ, վոր գոները կողպենք ու քննենք:

— Լավ, քննենք,—պատասխանեց Սմբատը և յելավ դոները փակելու:

— Ե՞ս, մեր պապան խոժ առաջվանը չի, փոխվել և մեր պապան—ասաց քույրը թողնելով կատվին, հանելով հագուստները:

— Ե՞ս... հառաչեց Սմբատը քրոջ խոսքերից զգացված ու սկսեց հավաքել սեղանի վրա մնացած թեյի ամանները:

#### 4

Տօներին, Մինաս քեռին վերադարձավ և յերեխաներին նվերներ բերեց, նրանք ուրախացան և խանդաղատանքով շրջապատեցին մորաքրոջ բարի ամուսնուն: Նա միջահասակ, մաղերը կիսովին ալեվորած, կարճ վզով, ակոսված դեմքով մարդ եր: Սմբատը վոգեռովեց, հենց նույն յերեկոյան պատրաստվեց քեռուն պատմել սրտին ծանրացած նշանավոր գաղտնիքը, բայց նաբավոր չեղավ. հայրն ու Արուսյակը տանն եյին և անվերջ խոսում նրա հետ: Գիշերը Սմբատն անհանգիստ քնեց, մտածում եր, թե պէտք ե հայտնել քեռուն թե վոչ, յերկար միտք արավ և վերջն այն համոզման հանգեց, վոր չի կարելի նման գաղտնիքները պատմել, ամոթ ե, խայտառակություն: Նա խղճաց Մինաս քեռուն, յեթե լսի կարող ե խելազարվել կամ մի ուրիշ վատրան անել: Հայրիկն ել խեղճ ե: Վերջապես լավ թե վատ իր հայրիկն ե չե... Յեկ Սմբատը վորոյ յեղրակացության հանգելով, կլուխը ծածկեց վերմակի տակ ընելու համար:

Այնուհետեւ հայրիկն իրենց սենյակումն եր քնում, իսկ Մինաս քեռին ու իր կինը մյուսում:

Մի բան, վոր զարմանալի յեր թվում յերեխաներին, այդ մորաքրոջ վերաբերմունքի բացահայտ բարեփոխումն եր, այլևս քիչ եր հանդիմանում, փնթինթում, դեմքը թթվեցնում, քաշվում եր ամուսնուց, իսկ հայրիկն ավելի ու ավելի յեր ուշ գալիս տուն. յերեխն ել չեր գալիս. ուր եր գնում և ինչու չեր գալիս, գաղտնիք եր:

Այն համոզումը, վոր Արուսյակն անպատիժ մնաց և իր մեծ զաղտնիքը չի կարելի հրապարակ հանել, Սմբատին հոգեպես ձնշեց և տրամադրությունը բոլորովին ընկալի: Այժմ ավելի յեր ատում նրան և կյանքը մի անիմաստ ձանձրույթ թվում: Դպրոցում գործերը միշտ գեպի վատն եյին գնում: Տարեկերջին մի քանի գասի քննությունից կտրվեց, մանավանդ մատեմատիկայից, վորի գասատուն հաղթանակեց իր այն կարծիքի մեջ, թե Սմբատը ծույլ ծանծաղամիտ աշակերտ ե: Սմբատը մնաց մինույն գասարանում, չփոխադրվեց: Նա շատ վշտացավ, արտափեց, հայհոյեց ամբողջ գպրոցն և ուսուցիչները, յերբ տուն վերադարձավ մի չնչին պատճառով ընդհարվեց մորաքրոջ հետ և

վորոշեց այս անգամ ինչ ել վոր լինի հայտնել Մինաս քեռուն խորհրդավոր գաղտնիքը, բայց քեռին կես գիշերին տուն յեկավ, յերբ Սմբատը արդեն քնել եր:

Հետեւալ որ ուշ գերկացավ անկողնից, քեռին արդեն գնացել եր: Արագ հազնվեց, մի պատառ հաց կերավ և գուրս յեկավ փողոց: Այդ որ ցանկություն չուներ գպրոց գնալու և սկսեց թափառել փողոցներում: Յերկար զբոսնեց աննպատակ: Կանգ եր առնում խանութների առաջ, նայում խոշոր ապակիների յետեւ դարսված բյուրավոր իրերին, նախանձ եր զգում, վոր մարդիկ այդքան ապրանք ունեն, իսկ ինքը վոչինչ չունի: Մի տան մոտ նկատեց բաղմություն: Մարդիկ բարձրանում եյին յերկրորդ հարկը և իջնում գլուխներն շարժելով, ինքն ել բարձրացավ: Ընդարձակ սենյակում մահճակալի վրա անշարժ պառկել եր մի յերիտասարդ: Նա այնպիս հանգիստ և անշարժ եր, վոր զարմանք պատճառեց Սմբատին: Դեմքը դժունել եր, ականջի ու քթի ծայրերն աշնան տերեկի պես թոշնել: Աջ կուրծքը բաց եր: Յերկում եր մի փոքր, արյունոտ փոս: «Ինքնասպանություն և գործել», — ասում եյին ներկաները:

«Խեղճը ձանձրացել ե յերեի կյանքից և մի գնդակով, մի բոպեյում վերջ տվել իրեն, — ասաց մեկը:

Սմբատն առաջին անգամն եր տեսնում սովանված մարդը: Սպանությունն ու մահը առաջ խորհրդավոր բաներ եյին թվում, բայց յերբ դիտեց այդ յերիտասարդի հանգիստ դեմքը, վորը նըման եր ննջող մարդու, մահվան դաժանությունն ու խորհրդավորությունը չքացան աչքից:

«Զարմանալի հեշտ բան ե յեղել մեռնելը, մարդս կարող ե մի գնդակ տալ կրծքին և բոպեյապես կվերջանա ամեն ինչ, ել չի մտածի վոչ կյանքի և վոչ ել զանազան ձանձրալի բաների մասին...»

Շուտով բժիշկն յեկավ վոստիկանության հետ և ժողովրդին հեռացրին: Սմբատը շատ դժոն իջավ փողոց: Նա կուզեր դեռ յերկար մնալ ու դիտել այդ հանգիստ պառկած մարդը: Մարդի ծովում կրկին թափառեց փողոցներում և յերբ սաստիկ քաղց զգաց, վերադարձավ տուն, լուռ ձաշեց և յերկնցավ դիվանին: Մի գնդակ ու խաղաղ կընես, ել վոչ վոր չի խանգարի քեզ, վոչ վորից կախում չես ունենա... Մտորում եր, աչքերը կիսախուփ, դեմքը մոայը, ինչպիս ամպամած յերկինք:

Յերեկոյան յերեխաները շուտ պառկեցին: Մինաս քեռին

Սմբատյակի հետ նստել եյին սեղանի շուրջը և զրուց անում: Սմբատյակը ինչ վոր եր կարում: Սմբատը դեռ չեր քնել և վերմակի տակից լավ տեսնում եր մորաքըն սև աչքերը, յերկայնաձիգ, զրավիչ դեմքը: Նրա ամուսնու գլխին նույնպիսի անմազ հրապարակ կար, ինչպիս հայրիկին: Այդ ճաղատ տարածությունը վորոշ չափով նսեմացնում եր իր համակրությունն առ Մինաս քեռին: Շուտով խոսակցությունը դարձավ յերեխանկերի մասին, քեռին հետաքրքրվեց, թե ինչպիս են սովորում:

— Նազիկը բավական լավ և սովորում, բայց Սմբատից շատ դժոն են: Դասարանը չի փոխել, ծույլ ե, ասում են, բթամիտ, — ասաց մորաքույրը թելն անցկացնելով ասեղի միջից:

— Եդ յերեխեն — պատասխանեց քեռին — վերջերս փոխվել և չչիս, ավելի յե նիհարել, մտախոն, լուակյաց դարձել հիվանդ չինի:

— Ինչու պիտի հիվանդ լինի վոր, ինչն և պակաս, արդեն մանկությունից այզպիս ծույլ, յիսասեր տղա յե յեղել:

— Ընդհակառակին — առարկեց ամուսինը, նա շատ աշխատասեր, ընդունակ տղա յեր, մի բան կա, վոր հիմա փոխվել ե:

— Եհ, դուն ել լավ ես ճանաչում մարդկանց:

Սմբատը, վոր լսում եր խոսակցությունը, ուզեց գլուխը գուրս հանել վերմակից և ասել.

«Քեռի, յես քնած չեմ, գիտեք ինչ, յես ուզում եմ մի մեծ գաղանիք պատմել, զիտեք ձեր կողքին նստողն ով ե, նա ձեր կինը չե, յեթե ձեր կինը լիներ, ամեն գիշեր հայրիկը նրա մոտ չեր գնա: Լավ իմացեք, թե ում հետ և ձեր գործը...»

Կամ թե՝

«Յես վատ տղա չեմ, բայց կյանքը լավ բան չի տվել, քեռի միթե այդպիս հանգիստ և մահը...»

Բայց քեռին գնաց մյուս սենյակ, իսկ Սմբատը, վոր կատաղությունից ուզում եր վար ցատկել, խոյանալ գեղի այդ կինը, փետակ մագերը նրա, պատմել ամեն ինչ, ամեն ինչ, ատամնը, իբրար փակցը չփղձկալու համար, վերմակի ճոթը սեղմեց դիմքին և լուռ, սրտամորմոք արտասվեց...

Հետեւալ որը ճաշից հետո, մորաքույրը գնաց ինչ վոր տեղ: Սմբատը դուն արանքից նշմարեց, վոր քեռին իր սենյակում ինչ վոր փայլուն իր և մաքրում: Ուշադրությունը լարեց և իմացավ, վոր փայլուն իր և մաքրում:

թե ինչ եր մաքրում քեռին։ Դուռը բանալով կամացուկ ներս մըտավ։ Քեռին նկատեց նրա ներս մտնելը։

— Հըմ, Սմբատ, ինչ ես շինում։

Սմբատը թեթև ժպտաց, կարմրեց և հետաքրքրությամբ դիմեց փայլուն իրը։ Դա սպիտակ, փոքրիկ ատրճանակ եր։

— Քեզ հետաքրքրում ե. ուզում ես դուն ել գործածել չերալիկ, դու դեռ շատ փոքր ես։

Ասաթ քեռին և իր խաժ, բարի աչքերը հառեց նրան։

— Հա, քեռի, յես ել կուղենայի մի ատրճանակ ունենալ։

— Ինչո՞ւ, չինի՛ ուզում ես մարդ սպանել։

Քեռին ինդաց և ակոսավոր դեմքն ընդունեց բարի արտահայտություն։

— Խոմ, թշնամիներ չունեմ։

Ավելացրեց նա քիչ լուելուց հետո, համառ նայելով յերեխային։

Սմբատը հայացը խոնարհեց և ուզում եր ասել. «այն, ըեռի ունեմ, իմ թշնամին իմ մորաքույրն ե, չնեղանաք, նա թեև ձեր կինն ե, բայց... բայց դարձյալ նրա ուզեղում մեխի պես ցցվեց այն վորոշումը, թե ամոթ ե, խայտառակություն, նման բաները չպետք ե հրապարակել։ Բարեբախտաբար քեռին հայացքն հեռացրեց և զբաղվելով ինչ վոր գործով կատակներ արավ Սըմբատին։ Բայց ինչո՞ւ այդպիսի ճաղատ գլուխ ունի քեռին, աղեղ բան, մտածում եր յերեխան նայելով նրան։

Մինաս քեռին ատրճանակը թազգրեց պահարանում, ապա հորանջեց ձեռներն ձգելով ողն ի վեր, դուրս ցցելով փոքրը ու վիզն այնպես կարճացավ, ինչպես թերելը թափանարող հավը։

— Դու այս տարի վատ ես սովորում, բո մասին գանգատ կա—առաց նա մոտենալով Սմբատին։

Յերեխան լուռ նայում եր նրա ժիշեալին հուլորեն ընկած ժամացույցի վոսկեպատ, պսպղուն շլթային։

— Բայց առաջիկա տարի, հույս ունեմ, վոր ել նույնը չի կրկնվելու, հասկացմար, չարաձնի, դպրոց հաճախողը պետք ե լով սովորի։

Սմբատն իր զլխին և ուսերին զզաց նրա ձեռքի ախորժելի շոյանքը։ Յերբեք հայրիկն այդպես տաք ու սրտագին չեր փայտակել։ Նա զդացվեց և ուզում եր փաթաթվել քեռու մեջքովը, խոսք տաւ, վոր ավելի լավ կսովորի, կրծքին լեռնացած ցավերը պատ-

մել, բայց Մինաս քեռին գլխարկն առավ, նայեց ժամացույցին։

— Վահ, ուշացել եմ։

Ու դուրս զնաց արագ. իսկ Սմբատը հուսախար, վոր չաջողվեց զգացումներն արտահայտել դեմքը մոայլեց և ձևները շալվարի գրապաններում ձեմել սկսեց սենյակի յերկայնքն ի վար. Ա՛յ, յեթե յես ել ունենայի այդպիսի փայլուն իր... Յեթե ունենայի, կղառնայի ամենառութեղ մարդը, ել վոչ վոք չեր համարձակի վիրավորել ինձ, վոչ ընկերները, վոչ Արուսյակը... վոչ ել նույնիսկ յերկրաչափության ուսուցիչը, յեթե իմանար, վոր յես ատրճանակ ունեմ...»

Այս միտքը մի վարկյան ճառագայթեց և հրապուրեց Սմբատի հոգին. կանգ առավ, աչքերն անորոշ կետի հառած, ինքնարավականությունը արտահայտող ժողիար փայլեց շրթունքներին։

Յերեսակայությունը թե առավ և զանազան գունագեղ պատկերներ զծագրեց։ Ահա, նա ատրճանակը ձեռքին կանգնել և աղդու, սպանում և սպանել յերկրաչափության ուսուցչին, վոր թըռչունի պես կծկվել, զողում ե, իսկ մորաքույրը ծունկ և չոգել, փաթաթվել վոտներին, աղերսում ե, վոր ինայի... Սմբատը վեհանձնորեն ներում ե բոլորին... Հա, հա... ինչ փառավոր միտք։

Նիհար այտերին դարձյալ թառեց մի փոքրիկ ժողիա և աչքերը փալիկցին անորինակ շողով։

Կրկին սկսեց քանել։

Իսկ յեթե մի այսպիսի բան անեմ. ձեռքը հենց ճակատին, հոնքերն ամփոփվեցին մի դժվար խնդիր լուծելու. հայացքը ծանրացավ մի անորոշ կետի, դեմքն ավելի ու ավելի մառախուղեց, մթագնեց։

«Յեթե այն յերիտասարդի նման կրծքիս ուղղեմ ատրճանակն ու նրա պես խաղաղ, անզորը ննջեմ և վոչինչ չի մանամ աշխարքից...»

Մոտեցալ պահարանին, շոշափեց, փակ եր, ապա իսխատ մըտածելու գլխարկն առավ ու զուրս յեկավ տնից և դարձյալ անսպատակ թափառեց փողոցներում։

Քայլում եր ու մտածում. ուղեղը հոգնել ել մտքերի բազմությունից, վորոնք հորձանքվում եյին ծովի պես։ Ահա կանգնեց անուշեղների խանութի առաջ, վարքան քաղցրավենիք, խորտիկներ կան զարսված ապակյա գարսկեների վրա։ Մի ժամանակ նրանցից շատ եր ուտում, յերբ մայրիկը վողջ եր և հայրիկը յես չեր դարձրել նրանից։ Իրեն հասակակից լավ հազնված մի

տղա խանութից դուրս յեկավ շոկոլագի տուփը ձեռքին, ուտում եր և քմծիծաղով նայում Սմբատին։ Շաղը ում եր, վոր ինքն այդպիսի համեղ բան ունի, իսկ Սմբատը վոչ, Զգնալ, չլանել ձեռքից ու փախչել... Վհչ, դա ստորովթյուն ե, ականատեսներն ինչ պիտի ասեն. պիտի կարծեն, վոր Սմբատն ավազակ ե գարձել, ավազակ...

Մինչ նա յերբեք այդպիսի բան չի մտածել ու փորձել իր կյանքում։

Առաջ անցավ տիուր և քայլեց մեծ պողոտայի ընդարձակ մայթերով։ Վերջալույսի աղոտ ցոլքերը վողողել եյին մեծ շինությունների թիթեղյա տանիքներն և փալիլում բոսորագույն։ Յերկնքի կապույտ լանջն ակոսված եր ամպերի փոքրիկ ծվեններով, վորոնք վոսկեղոծ ժապավենների պես, լողում եյին լայնածիր տարածության վրա։ Զբոսավորների մեծ բազմությունը լցվել եր փողոցում և զանազանագույն ու բազմաձեւ հազուսների, գըլխարկների առատությունը շլաշնում եր աչքը։

Մի փոքրիկ հրապարակում հավաքվել եյին Սմբատին հասակակից մի բանի տղա, ծխում և ըրքչում եյին կենսուրախ։ Մեկը նրանցից, մի զանգրաճեր, կայտառ տղա, պապիրոսը շրթունքներին ծուռ պահած անհապօրեն ծծում եր և բաց թողնում ծխի առատ ըռւլաները։

Սմբատը վարակվեց նրանց ցնծությամբ և մի անզուազ ցանկություն զգաց ծխելու։ Կյանքում յերբեք չեր ծխել։ Գրպանները խուզարկեց, յերկու կոպեկանոց գտավ. ծխախոտավաճառից յերկու գլանակ գնեց, վասնեց մեկը և ապահորեն ծխեց։

Զբոսնեց ծխելով։ Իրիկուն եր։ Ելեքտրալույսերի ճամանչներով վողողվել եյին մայթերը։ Իսկ կառերն ու ավանները սուրում եյին աղմուկով ու շփշփոցով։ Յերկար բալեց, հոգնություն զգաց . և զլացավ. Վերադարձավ տուն։ Բոլորն ել տանն եյին ու թեյում։ Հայրը հուզված ման եր գալիս սենյակում ձեռներն կռնակին կանթած։ Մինաս քեռին թեյում եր ու վոսկեկող ակնոցները քթին՝ նայում ինչ վոր թղթի։

— Հըմ, յեկար, մեր եյիր մինչեւ այժմ, վչացած։

Կանչեց կոպտաբար հայրիկը, բարկաճայթ աշքերը հառելով ներս մտնող Սմբատին։

— Դասերգ չես սովորում, փողոցներն ես չափում. ինչ փուչ, անպետք յերեխա զատար։

— Մեղավորը դնեք եք, յերեխաներին թողել եք իրենց բախտին, դրա համար ել վերջն այդպիս կլինի։

Ասաց ըեռին զլուխը բարձրացնելով և ակնոցների վրայից հայրիկին նայելով խստաղեմ։

— Հարբեցողությունը դարձրել եք սովորական բան։ Յերեխաներն զուրկ են զուրգուրող, խնամող ձեռներից։ Այդպիսի մըթնոլորտում նրանք չեն դաստիարակիվ։

Քեռու կծու խոսքերից հայրիկը ջղայնացած գլխարկը վերցրեց և ասաց։

— Փաստաբան դառաք գլխիս, լավ, լավ խրատներ եք տալիս...

Յեկ դուռն ուժգնորեն փակելով հեռացավ։ Մինաս ըեռին դժգոհ նայեց նրա յետեկից, զլուխն յերերեց և արագորեն խմելով թեյն անցավ իր սենյակ։ Քիչ հետո ձեռնափայտն առած դուրս գնաց։ Յերեխաները լսեցին, թե ինչպիս նա կնոջը հայտնեց, վոր մի կարեռը զործի պատճառով գիշերը շատ ուշ և վերադառնալու։

Մորաքույրն հայելու մոտ մազերը հարգարեց, գեմքն ոճեց անուշանու յուղերով և շտապ հեռացավ տնից։

Մնացին միայն յերեխաները, վորոնք թեյում եյին մի մի կտոր հաց առաջներին։

— Հայրիկն ու քեռին շատ յերկար վիճեցին։ Քեռին բարկացել և հայրիկի վրա—ասաց նազիկը վեր կենալով սեղանի մոտից և նստելով գահավորակի վրա։ Յեղբայրը լուռ մնաց, այդ բուրը նրան միորինակ եր թվում։ Թեյից հետո մեծ ախորժակ զգաց յերկրորդ պապիրոսն ել ծխել։ Յերբ նա սկսեց ծխել, բույրը զարմացած նկատեց։

— Եղ ինչ նոր բան, ծխում ես, չես ամաչում։

— Մի փորձիր, տես ինչ լավ բան և ծխելը. մարդու ջղերը կհանգստանան, — պատասխանեց Սմբատը ագահորեն ծծելով և դուրս թողնելով մուխի թանձր քռւլաները։

— Բա, չես վախենում, յեթե հայրիկը տեսնի։

— Ե՞ն, բան ասաց. հայրիկից ով կվախենա, նա ինքը ծըխում և ու հարբում. մեկ ել հայրիկը...

Բայց չշարունակեց Սմբատ իր խոսքը, ամաչեց և կրծքի խորքից հառաչեց։

— Ի՞նչ եյիր ուզում տեսէ, Սմբատ, խոսք կիսատ թողիր— հարցը նայելով յեղբորը։

— Դու դեռ փոքր ես. չես հասկանա այն, ինչ ուզում եյի ասել, յերբ ավելի մեծանաս, բոլորը կպատմեմ քեզ:

Նազիկի հետաքրքրությունը վառվեց, բայց Սմբատը մնաց անդրդվելի: Չասաց:

— Իսկ քեսուց չեմ ամաչի, յեթե նա տեսնի քո ծխելը:

— Նա վորտեղ պիտի տեսնի վոր, յես նրանից թագուն կը-ձիսմ—հայտարարեց Սմբատն ինքնավստահ:

Ծխելուց հետո, նա յերկնցավ մահճակալին և ընկավ մոքելի ծով: «Դասերն ել չեմ սովորի, գլխացավանք բաներ են... մտմտաց նայելով ելեքտրալամպին, վոր առատորեն լույս եր ցնցուղում սենյակում: Իսկ ինքնայեռն յերկար, յերկար ճրճրթաց և ապա հոգնեց ու լոեց:

Մորաքույրն աճապարանքով վերադարձավ, հավաքեց սեղաւը և հրամայեց յերեխաներին քնել:

— Ինչ եք նստել եսքան ուշ գիշերը, զահլա տանում...

Փնթինթաց նա, նայելով Սմբատին:

— Դլիսներիս իշխանուհի՝ յեք դառել, ինչ ե, զահլա դուք եք տանում—ասաց Սմբատը բարկությունից կայծկլտող աչքերով:

— Բնը, մի բոյին մտիլ, մեկ ել լեզվին. տեսնք, վորքան յերկար ե դրա լեզուն:

Բացականչեց Արուայակը ջղայնորեն նայելով:

— Իսկ ձեր լեզուն. ձեզ նման կնոջ վրա իմ լեզուն պիտի շարու լինի:

— Ինչ ասիր, ինձ նման կին,—ասաց մորաքույրը խիստ հուզված, ձեռները խփելով սեղանին—ձեզ պահում, ինամում եմ ու հետո եղպես հաշում եք. յես քեզ ցույց կտամ, լեզուդ պիտի կտրել ուրիշ վոչինչ:

— Զեր ինամըը մեղ հարկավոր չի, ավելի լավ կլինի հեռանաք ես տնից:

Այդ բոպեյին դուռը բացվեց և հայրիկը ներս մտավ: Արուայակն արտասուքն աչքերին, խիստ վրդովված հայտնեց հայրիկին Սմբատի խոսքերը: Իսկ հայրիկը փոխանակ բանի եյությունը քննելու, մոտեցավ Սմբատին և մոլեզնորեն գոռաց.

— Կորիք աչքից, փուչ տղա, մեկ ել ավելորդ, ավելորդ խոսես, քեզ դուրս կշպրտեմ. զնա փողոցի յերեխաների հետ ման յեկ..:

Վորդին աչքերը խոնարհեց, մեծ ճիգով զսպելով արտասուքի ուժեղ հորձանքը և մատներով սկսեց մահճակալի յերկաթյա ճա-

ղերը խտակը ջղայնորեն: Նազիկը, վոր մինչ այդ լուռ և անհանգիստ հետևում եր, փղձկաց դառնազին հեկեկանքով և ծածկեց դեմքը ձեռների մեջ: Հայրը մի բութ հայացք ձգեց նրա վրա, բայց վոչինչ չասաց: Մինչ մորաքույրն ինքնազո՞ւ ժամկանքին անցավ իր սենյակը:

Հայրիկը ձեռներն կոնակին խաչաձեւած, մի քանի բոպէ գնաց յեկավ և ապա յերեխաներին հրահանգեց քնել:

— Քնելը եկի, կես գիշեր ե, գլուխ եր ցավացնում:

Յերեխաները լուռ հանվեցին և պառկեցին: Բայց Սմբատի քունը չեր տանում, յերկար ժամանակ շուռ ու մուռ եր զալիս անկողնում և ամբողջ մարմինը պատել եր մի ցուրտ սարսուռ: Վերմակի ներքեցից նկատեց, թե ինչպես մորաքույրը կրկին վերադարձավ իր սենյակից և ուրախ, ուրախ ինչ վոր փսփսաց. հայրիկի գեմքին ժամանակ խաղաց: Նստեցին սեղանի մոտ: Յերկար զրուցում, քչփշում եյին խիստ կամաց և Սմբատը չեր կարողանում լսել, վորովհետեւ սենյակն ընդարձակ եր, իսկ իր մահճակալը մի անկյունում: Նա ընկավ խոր մտածումների գիրիը. բազմաթիվ գեպքեր և մտքեր խոնվում եյին ուղեղում, շփոթվում, իրար խաչաձեւում: Իսկ աչքերին պատել եր մլար ու մշուշ:

Մեկ ել հանկարծ նկատեց, վոր հայրիկն ու Արուայակը չկան. յերեի մյուս սենյակումն են...

Նորից ականջին ննչեցին մորաքը քրքիջները, նորից պատեկերացան անցյալ գիշերները... Արյունը հորդ ու վարար խուժեց յերակներից և կատաղության կայծերն աչքերում, մրմնջում եր ցասկոտ:

«Խեղճ քեռի, ինչպես խարում են ձեզ...

## 6

Առավոտյան ուշ զարթնեց: Արեի վոսկիհուր ձառագայթներն առատորեն թափվել եյին սենյակում: Արծաթակող մեծ հայելին ճաճանչում եր այդ ցոլքերի տակ: Հայրիկն տանը չեր: Նազիկը գրում եր ու թերթում տեսրակը: Մորաքույրը հայելու մոտ հարդարում եր մազերը:

Խոհանոցում լվացվելիս Սմբատը պատուհանից նկատեց, ինչպես մորաքույրն և ամուսինը թևանցուկ իջան սանդուխներից: Լվացվեց, նստեց թեյելու. ախորժակ չկար: Ինչ վոր բան սեղմում եր կոկորդը, չեր կարողանում ուտել: Հարցրեց Նազիկին, թե ուր զնացին քեռին ու մորաքույրը:

— Հրավիրված են ճաշի, յերեկոյան ուշ կվերադառն ան:  
Ասաց քույրը և շարունակեց գրել:

Սմբատն անցավ մյուս սենյակը. ուշադրությունը գրավեց մի բան ու սիրար բարախեց արագ: Քեսին բանալին մոռացել եր պահարանի վրա... ինչ վոր բան պոկվեց կրծքից և մի անհուն սարսուռ պատեց բովանդակ մարմինը: Մոտեցավ, բացեց արկղը. այնտեղ շատ իրեր կային անխնամ թափված, բայց աչքերը կենտրոնացան պապուն առարկային և ագանորեն հառեցին նրան... Վերցրեց ատրճանակը, զգուշությամբ գիտեց. լիքն եր գընդակներով: Նայեց գեպի դուռը, վոչ վոր կար: Մի միտք փայլատակեց և բենավեց ուղեղում, աչքին պատկերվեց սպանված յերիտասարդի խաղաղ դեմքը, կարծես հենց հիմա յե տեսնում երեն խիստ մոտ, քեռու մահճակալին լինի պառկած...

Կողըի սենյակում թրսկոց լսվեց. ատրճանակն իսկույն թագցըրեց արկղի մեջ և գնաց մյուս սենյակ: Նազիկը վեր եր կացել, ինչ վոր բան վորոնում: Սմբատի սիրոը բարախում եր ուժգին, վտիտ գեմքը ցուցադրում ներքին ծով հուզմունք:

— Դու գնալու յես, թե տանը նստում.

Հարցրեց նա մոտենալով քըոջը:

— Ինչու, — հարցրեց քույրը թխորակ, նշաճե աչքերը հառելով նրան:

— Հենց այնպիս, հարցնում եմ.

— Յես ուզում եմ ընկերունուս մոտ գնալ, իսկ դու տանը կաց:

— Լավ, յես տանը կմնամ, դու կարող ես գնալ:

Ասաց Սմբատը սարսուռով: Անհամբերությունից և հուզումից ատամներն իրար ելին զարնվում: Յերբ քույրը շարժվեց գեպի դուռը ինչ վոր գիրք թնի տակ, մի անհուն ցանկությամբ վարարած ուզում եր ցատկել, գրկել, համբուրել այդ փոքրիկ, անուշիկ աղջիկը, կարծես յերբեք չեր տեսնելու նրան... Բայց քույրը շտապ դուրս յեկալ. նա լուսամուտից նայեց բակը, մինչեւ վոր նազիկը հեռացավ, առա թեթև, զգուշավոր քայլերով (կարծես խանդարելիս լինելին նրան) կողպից մուտքի դուռը և գնալով մյուս սենյակը, նորից ձեռքն առավ ատրճանակը:

«Ինչ սիրուն ու փայլուն խաղալիք... մտմտաց ու ժպտաց սառն, ջղային: Բոսորագույն մի բան հրդենից աչքերում, սիրոը ավելի ուժգին բարախեց, իսկ սպանվածի պատկերը հակառակի պիս յեկել, ցցվել եր դիմացը, չեր հեռանում:

«Խեղճ քեռի, վորքան պիտի վշտանա ու պղջա, վոր բանաւին մոռացել և պահարանի վրա...

Այդ վարկանին մի շնորհ գրավեց ուշադրությունը: Լուսնոտի պիս վեր թուավ, թվաց թե մարդիկ են ներս մտել. շտապով գնաց, զննեց փականքները: Այդ իրենց փոքրիկ փիսիկն եր, վոր չարաձնի խաղում եր այս ու այն կողմը ցատկելով: Մի անձյր բարկություն հեղեղեց նրա հոգին. ատրճանակի բերանն ուղղեց գեպի կատուն և ուղեց կրակել:

«Ինչպես ճշա պիտի և ցատկի ցավից... մտածեց Սմբատը չարախինդ ծիծաղով: Բայց կատուն տիսնելով փայլուն իրը, մի ակնթարթում թուավ և պահարանի տակ, անտեսանելի անշուն: Սմբատն ավելի զայրացավ, նստելով գիշանին սկսեց թեթև սեղմել ատրճանակի բլթակը: Սիրոն այրվում եր ուժգին խփելուց: Անա, պայթի պիտի ատրճանակը, հետաքրքիր բան... Բում... թնգաց մի ձայն նրա հոգում, գեմքին սահեց ցրտաշունչ բրտինք. իսկ յերբ համոզվեց, վոր այդ յերեակայական խարկանը եր, ջըշայնորեն ժպտաց և աչքերը վառվեցին բոսորագույն:

«Ճիշտ այստեղն եր կպել գնդակը... ատրճանակի փողը գարձրեց ուղիղ ձախ կրծքին: Մի փոքրիկ, կարմիր խոռոչ կար, արյունի չորացած կաթիլներով յեղերված, իսկ նա այնպես խաղաղ, անդորր նաջել եր... Բլթակը նորից հրեց թեթև, բայց վերջինս շարժվեց: Ե՛ն, ինչ ամուրն ե, յերկի յերբեք ել չտրաքվի...


Սակայն գեռ սպասիր: Խեղճ նազիկ, ինչպես պիտի լաց լինի. չե վոր ամենից ավելի ինձ և սիրում: Նրան այնպես հոգացող չի չե վոր ամենից ավելի ինձ և սիրում: Նրան այնպես հոգացող չի լինի, ինչպես յես: Քեռին ել կվշտանա, բարի մարդ ե, նույնիսկ լինի, ինչպես յես: Քեռին միենանցն ե նրան յես կամ կարտասվի... Իսկ հայրիկը. արդյոք միենանցն ե նրան յես կամ կարտասվի... Յեթե իմանա, վոր յես գիտեմ նրա գաղտնիքները, գուցե թե վոչ: Յեթե իմանա, վոր յոչ հայրիկը հայրիկ ե, նա ել լաց կլինի: Այնքան չշշված, բայց վոչ հայրիկը հայրիկ ե, նա ել լաց կլինի: Մորաքույրն վոնց պիտի ուրախանա. ախ, մի հանդիպեր այժմ ինձ, չեյի թողնի նրա փոշին, յերբեք, յերբեք...

Լավ վոր բլթակն այսպես ամուր ե, թե չե տրաքած պիտի լինի մինչեւ հիմա, իսկ սիրու ել այնպես ե խփում, վոր իբր վաշեցել եմ. չե մի, իսկի ել չեմ վախենում, ինչ կլինի, լինի... Բլթակն ավելի պինդ հաեց. նրա մտքերի թելն այդ պինդ սեղմումից և սպասողական զրությունից կտրվեց և նա ինքնիրեն զգաց բոլորվին ուրիշ տեղ, անգիտակից, շնամած: Ապա աչքին ընկալ պահարանի զլիմին պապած մարմարակերտ փոքր արձանը.

— Տումուած գեմք և ճմած քիթ ունի, տղեղ բան... մտածեց և ինչ ծումուած գեմք և ճմած քիթ ունի, տղեղ բան...

ուզեց մատը թուլացնել բայց ականջը խլացրեց ինչ վոր ուժեղ,  
սարսալի թնդուն. աչքերից դուրս ցայտեցին հազար, հազար  
կայծ, գեմքը ծածկվեց ծխի քուլայով, ապա զգաց, վոր մեկը ճշաց  
խիստ մոտիկ և մի ծանր բան ձեռներից ներքե սահեց: Զեռներն  
ու վոտները ուժգին հարվածով պոկեցին ու մի յերկաթյա, հզոր  
բան իր մարմինը շարժելով, պտույտ տվեց ոգի մեջ, թափահա-  
րեց, ծումնեց ու տարավ ինչ վոր մութ, հեռու տեղ...  
Հետո ամեն ինչ լոեց հավիտյան:

1919թ.



## ՍՈՂՈՄՈՆԻ ՃԱՅԱՐԱՆՈՒՄ

Դիլիջանում, յերբեմն առավոտները գնում երի Սողոմոնի  
ճաշարանը թեյելու: Սողոմոնն առհասարակ կողքի վրա յերկնցած  
եր լինում ճաշարանի առաջ ձգված հաստ գերանին: Նա հիսունի  
մոտ, բարձրահասակ, փալարեխ, մազերի մեջ հազվագյուտ սպի-  
տակ թելիկներ ունեցող, արծվաքիթ մարդ եր: Դեմքի թուխ, չաղ  
և արևկեզ տարածության վրա բազմաթիվ մսոտ կնճիռներ եյին  
խաչաձեռում: Ծնոտի տակ, կոկորդի յերկայնքնի վար մի մատա-  
չափ միս եր ժայռանում: Խոկ խոշոր աչքերն այնպես եյին հա-  
ռում մի վորեն կետի, վոր կարծես աշխարքի բոլոր մտքերը հա-  
վաքվել եյին այստեղ կամ ուրիշ առարկաներին նայելու կարեք  
չկար:

— Կարելի՞ յե ձեզ մոտ նախաճաշել, — հարցը յես, յերբ  
առաջին անգամ մոտեցա նրան:

— Ինչո՞ւ չե, համեցեք—պատասխանեց նա բամբ ձայնով,  
ծուլորեն քշելով քթի ծայրին ու բելիերին սպառնացող ճանճերը  
— գնացեք ստալավոն, ուզածնիդ կբերեն:

Ճաշարանը բավական ընդարձակ խանութի: Ճակատին բարձ-  
րանում եր հին, ընդարձակ պահարանը թեյի բաժակներով, չը-  
մաքրված ափսեներով, ձվերով, հացի կտորներով: Մեջտեղը մի  
յերկար սեղան խունացած, կեղտոտ սփոսցով: Սեղանի շուրջը  
դարսել եյին տախտակյա նեղ նստարաններ և մաշվելուց ճրճա-  
ցող աթոռներ:

Հինգ բոպեյից ավելի նստեցի, բայց վոչ վոք չմոտեցավ:  
Մինչ ճաշարանատերը միենույն դիրքով յերկնցած տաքանում եր  
արևի տակ, աչքերը կիսախոսի ինչպես քնաթաթախ հավ, ձեռ-  
ներն հուլորեն ձգած կողերն ի վար:

— Նախաճաշը կբերեն, թե վոչ, — բացականչեցի համբերու-  
թյունս հատած:

Նա մի փոքր թեքվեց և կանչեց,

— Աղջի Անուշկա, անուշկա...

Խանութի ներքնամասից դուրս յեկավ հնամաշ շորերով, միշահասակ, աշխատանքի մեջ բովված, բայց դեմքին վաղեմի գեղեցկության հետքերը մատնող մի կին, վոր գոգնոցով մաքրում եր ձեռները: Կրկնեցի խնդիրքս: Շուտով սեղանի վրա դրվեց կաթով լիքը բաժակը. մի պատառ հացով:

Խմում եյի կաթը և դիտում խանութից յերևացող հիանալի տեսարանը: Փռվել եր Դիլիջանի կանաչագեղ հովիտը: Բլուրի լանջն ի վար բազմաթիվ յեղենները կանգնել եյին փառահեղ, գմբեթաձև: Անտառի կանաչ գրկում ճերմակում եյին մի քանի փոքրիկ շինքեր, վորոնց թիթեղածածկ կտուրները փողփողում եյին արևի վոսկեփայլ շողերից:

Նախաճաշից հետո, բավական սպասեցի, վոր դրամը ստացող լինի, բայց մարդ չերևաց: Վեր յելա:

— Վորքան պիտի վճարեմ:

— Համեմ... խրխուց ծուլաբար ճաշարանատերը գերանի վրայից, կիսախուփ աչքերը ճագագցրեց, գեմքը կծկեց, կարծես նեղացավ զինքը խանգարելուն համար:

— Վորքան պիտի վճարել—կրկնեցի յես ջղայնացած:

— Կաթը խմեցիք, վերջացրիք:

— Այս:

Նա գլուխը քիչ բարձրացրեց և մի բութ հայացքով նայեց սեղանին գրված դատարկ բաժակին, յերևի ուղում եր ստուգել, խմբել եմ թե վոչ:

— Լավին եր, համով եր:

— Վոչինչ:

— Բայս, քեզ մատաղ, ես խոմ Մուքայել բիծայի ստալավոն չի, վոր ջրախառն կաթ տան մուշթարուն: Անհոգի մարդ շատ աշխարքի մեջ:

— Վորքան պիտի վճարել:

— Շատ եք շտապնւմ, վազ գործ ունեք, ինչ ե—ասաց նա դեմքին խաղացնելով մի հլու ժպիտ: Ապա թափահարելով ողը, կանչեց:

— Քը շատ ես սատանի ճանձերն ել մարդու հանդստություն չեն տալիս, թարս բան:

Ճանձերին հալածելով քիչ ուղղվեց և ասաց.

— Կաթը մեղ մոտ տասը կոպեկ արժենա, եժան, քեզ մատաղ:

Դրամը պարզեցի նրան, չվերցրեց և ձեռներով ցույց տվեց պահարանի բաց դարակը:

— Հրեն, գցի կասսան, մի մեծ բան չի, ձեզ ել նեղություն ենք տալի, բայց խաթըր արա:

Արծաթյա տաս կոտեկանոցը գցեցի նրա ցույց տված կասսան, զա քառակուսի արկդ եր, ուր բավական արծութ ու պղինձ դրամներ կային շաղ տված: Ճաշարանատերը նույնիսկ չնայեց իմ կողմը: Յերբ գուրս յեկա ճաշարանից, ասաց:

— Բարով գնաս, պակասության համար նեղանալ մի:

Հետեւյալ որը գնացի այնտեղ կեսորից հետո: Յերեք գյուղացի ճաշում եյին, տոլմա անուշ անում: Սողոմոնը դարձյալ միմույն տեղն եր, գերանի վրա: Վերջալույսի զեղնավուն ցոլքերն առատորեն թափկել եյին նրա վրա և մեղմորեն փայփայում նրա անհոգ ծուլությունը:

Անուշկայից թեյ խնդրեցի: Գյուղացիք վճարեցին ճաշի արժեքը և հեռացան: Թեյից հետո, Անուշկան չկար, դրամը գցեցի երեկվա պես նրանց կասսան, հեռացաւ: Յետեւից լսեցի Սողոմոնի խոպոտ ձայնը:

— Բարով գնաք, վազը համեցեք ճաշի, լավ տոլմա կա: Մեր Անուշկան համով կերակուր և պատրաստում, ուրիշ տեղերից ել եժան...

Նրանց մոտ ճաշել սկսեցի մի քանի որ հետո: Տանը հարմարություն չունեյի ճաշ պատրաստելու: Նրանց մոտ ամենալավ և ամենահամեղ կերակուրը տոլման եր: Մնացածները ջրալի եյին լինում, աղը շատ գցած կամ վորեե պակասություն ունենում: Բոլոր գործեր վարողը Անուշկան եր, ջուր բերողը, վառողը, մաքրողը, կերակուր յեփողը, մատուցանողը, իսկ ամուսինը թիզեհ եր քաշում կամ ճանձ վորսում գերանի վրա: Հաճախ ճաշի ժամանակ, յերբ հաճախորդները շատ եյին լինում (ամենաշատը 5—6 մարդ), Անուշկան ջղայնանում եր, դեմքը թթվում, զայրագին զոռում:

— Այս մարդ, քեզ ասում եմ վեր կաց, բավական և ճանձ վորսաս և քամի կուլ տաս: Մըի սեղանին մտիկ տու, փողերն հավաքի, դավթարումը գրի:

— Եյե...

Հորանջում եր Սողոմոնը քնից արթնացողի պես և վիզը շարժելով բարձրանում ինչպես չորացած ուռի: Մը պահ ուղղում եր ձիդ մարմինը, ապա դժգոհ, վոտներն իրարից քիչ հեռու զցելով,

ճոճանակի պես կռնակը հետ ու առաջ անելով, գալիս կանգնում եր պահարանի քով։ Քիթը սրբում եր փնչացնելով ինչպես ձի, փոնգտում այնպես ուժգին, վոր մեջքը կռանում եր և լորցունքի բազմաթիվ կաթիներ անձրեսում աջ ու ձախ կամ գտակը մի փոքր բարձրացնելով ծոծրակը քորում ընկուղի կճեպի պես ակոսելով ամբողջ դեմքը։ Յերբ հաճախորդը վերջացնում եր ճաշը, նա հարցնում եր։

— Ինչ անուշ արիր, քեզ մատաղ։

— Տուման։

Վերցնում եր փոքրիկ համրիչը և զցում։

— Ես քեզ տումա, յերեսուն կոպեկ։ Սուպի։

— Առանց սուպի։

— Սուպ կա վոչ, —քրթմնջում եր Սողոմոնը և ինչ վոր ուղղում համրիչի վրա, —հաց։

— Հացով։

— Ես ել քեզ հաց, հինգ կոպեկ, ընդամենը յերեսունհինգ կոպեկ, ձեր հաշիվը դրուստ ե, քեզ մատաղ։

Կային ճաշողներ ել, վորոնք «մշտական» մուշթարիներ եյին համարվում, բայց նրանց ուշ, ուշ եյի հանդիպում այնտեղ։ Նըրանք փող չեյին վճարում, այլ առանց բան ասելու, մոտենում եյին պահարանի մի ծայրին դրված տեսրում նշանակում իրենց պարտքը։ Սողոմոնը հազիվ եր նայում հաշվեմատյանին, հաճախ իսկի յել չեր նայում ստուգելու, թե ով ինչ գրեց։ Իսկ Անուշ-կան սեն սպիտակից ջոկել բոլորովին չեր իմանում։ Զարմանալի յեր հաճախորդների խղճին մատնված նրանց յուրահատուկ հաշվապահությունը։

Հետզիետե մշտական հաճախորդ եյի դառնում Սողոմոնի ճաշարանին։ Կացարանիս շատ մոտիկ եր։ Մածունն ու կաթը այնտեղ անարատ եյին և համեմատաբար եժան, իսկ կերակուրներից տողման՝ Անուշկալի խոհարարային արվեստի առանձին հմտությունն եր կազմում։

Մի անձրեւ որ, Սողոմոնը նստել եր խանութի ներսը, խարխուլ աթոսի վրա և թիզեր քաշում։ Յերբեմն ել անձրեսին հայնոյում, վոր հսպես անսիրտ թափվում ե ու մուշթարիք չեն կարողանում ճաշի գալ..։ Ստիպված յեղա յերկար սպասել ճաշարողանում ճաշի գալ..։ Սողոմոնն առիթից ոգտավելով Դիլիջանի անցյալից ու ներկայից զանազան ձանձրալի նորություններ եր պատմում։

— Ափսոս հին ժամանակներ, — ասում եր նա, — փող աշխա-

տել կար, ծով առուտուր, հիմի թաղա բան և դուրս յեկել, կոռպերատիվ իբր թե եժան և ծախում, մուշթարիք մեզնից խըրտնել, ենտեղ են գնում։ Ախալքը, գնալով ամեն բան թարսվում ե...

Յերբ անձրել դադարեց, յես վեր կացա և խնդրեցի, վոր ձաշի գինը մատյանում գրի, վորովհետև դրամ չունեյի քովս։

— Ինչ դավիթար, —կանչեց նա փոքր ինչնեղացած, —քիզ պես շենք շնորհքով մարդն ել գավթարում գրվի, կվճարես ելի, մըտածիլ մի...

Հաջորդ որը վճարեցի նույն որվա ճաշի գինը, պարտքը մոռացա, իսկ Սողոմոնը վոչինչ չասաց։ Յերրորդ որը նույնպես չհիշեց։

— Յես ձեզ պարտ մնացի յերկու որ առաջ, մոռացա վճարել, իսկ դուք չեք պահանջում։

— Յես բոլորովին չեյի հիշում, վոր պարտ եք մեզ —նա անտարբեր քաշում եր յերկարագունչ չիրուխը։

— Ուրեմն դուք այդպես մոռանո՞ւմ եք թե ով, վորքան և յերբ պարտ ե ձեզ։

— Դուխս խոմ գավթար չի, որական հազար մուշթարի յեզնում գալիս, վոր մեկը հիշեմ։ Թող ամեն մարդ՝ ինքն հիշի իր պարտքը։

— Բայս վոր այդպես շարունակվի, մի փառավոր որ տանուէ պիտի տար և ճաշարանը կողպեք պիտի։

— Եհ, —պատասխանեց նա ինքնավստահ, —փողն ինչ, վոր մարդս զբա համար խոսալ պիտի, մարդու սիրտը թող լավ լինի, Փողը համրած լընկուղի պես կզա, կզնա...։

Մի անդամ նկատեցի, վոր մի հաճախորդ, ոգտվելով Անուշ-կայի բացակայությունից և Սողոմոնի անտարբերությունից, ճաշի գինը վճարեց կիսով չափ, խաբելով, վոր հացը ինքն և բերել և ճաշել և առանց սուպի։ Հաճախորդի մեկնումից հետո միայն զիսի ընկա, թե բանն ինչումն ե և այդ մասին հայտնեցի Սողոմոնին։ այդ բոպեյին ներս մտավ նաև Անուշկան։

— Եհ, —ասաց Սողոմոնը գլուխը շարժելով —հարամությունով մարդ առաջ չի գնա, դալը մարդու վոտքը քարին կղիպչի, ուղիղը կուշտ կապրի։

— Հա, զու եղենց ասա, հողեմ գլուխի, —բացականչեց Անուշ-կան ջղային, —որ ցերեկով կթալանեն քեզ, խաբար չկա վրեգ։ Դրա համար ել լավ որ չենք տեսնում։ Գիշեր, ցերեկ աշխատում ենք ու միշտ վրա տալիս։ Այս ձեռքիս աշխատածը ձախը չի տես-

նում: Սեփական տուն ել ունենք, վարձու յենք տալիս ու տարենք հարյուր, յերկու հարյուր ըրեն վերցնում, ելի պարտքը վըզներին նստում ե, հանգիստ չի տալիս: Յերկու հոգի յենք, յերեխա չկա, ուտողը քիչ, աշխատանքը շատ, բայց ձեռներս դատարկ ե, խեր չկա միջին: Վաղ առավոտից մինչի ուշ գիշերը աշխատում եմ, հոգիս բերանս ե գալիս, գուրսը յես եմ, ներսը յես, իսկ եդ անիծածը պառկում ե գերանին, ճանձ ե քշում, հորանջում, մուշթարիքը գլխին ոյին են սարքում, ուտողն ոքողին, տարողը տարողին:

Կնոջ հանգիմանական խոսքերը Սողոմոնն ունինդրում եր կատարյալ համբերությամբ և անծպտուն, ինչպես հանցանըի մեջ բոնված աշակերտն ուսուցչին:

— Զե, հազար անգամ ասել եմ, նորից կասեմ,—շարունակեց կինը նույն տոնով—վոր դու տղամարդ չես, բո գլխին լաշակ պիտի գցեն, վոր նստես տուն իլիկ մանես, լավ իլիկ մանող կը-դառնաս...

Մի վերջին խոժոս, զայրազին հայացք գցելով ամուսնու կողմը, Անուշկան գնաց խոհանոց: Իսկ Սողոմոնը մստ գլուխը գեպի ինձ դարձրած ժպտում եր յերեխայի պես, ցույց տալով ծխից դեղնած տամաները: Թվում ե, թե շատ դյուր յեկան նրան Անուշկայի «սրամիտ» խոսքերը:

Յերեմին հաճելի յեր յերկար նստել այգ փոքրիկ ճաշարանում, ուր ճաշելու յեկող գեղջուկ ճամբորդները՝ հետաքրքիր դեպքեր եյին պատմում իրենց կյանքից, գայլերից, արջերից... Այստեղ ծանոթացա մի բարեգեմ, լայնթիկունք գյուղատնտեսի, վորի հետ բավական ախպերացանք: Գյուղական կյանքին լավ ծանոթ մարդ, վորի պատմությունները պակաս հետաքրքիր չեյին: Մի անգամ կունալով դեպի ինձ, նա ցույց տվեց խոհանոցից դինու շեշերը ձեռքին դուրս յեկող միջանասակ, թիկնեղ և բավականին չաղ մարդու, վորին հաճախ եյի տեսել այստեղ և կարծել, վորպես նրանց մոտիկ ազգականներից մեկը:

— Դիտեք ով ե,—ասաց զյուղատնտեսը ցած ձայնով:

Յես տարակուսանքով նայեցի նրան:

— Նա Անուշկայի յերկրորդ մարդն ե:

— Յերկրորդ մարդը,—հարցը դարձացած:

— Այսինքն Անուշկայի իսկական մարդը... հը, հը, զիտեր ելի... հը, հը:

Ու բրդաց լիաթոք:

Հետեւելով խոհանոցից դուրս յեկող մարդու շարժումներին վաղուց եյի նկատել, վոր նա այնպես և պահում իրեն, գնում, գալիս, ինչպես իր տանը: Հաճախ ժամերով փսփսում և խոհանոցում Անուշկայի հետ:

— Իսկ ինչ գործի յե այդ մարդը և ինչ անուն ունի:

— Հեջ, պարապին մեկը: Գալիս, ուտում, խմում ե, Անուշկայի հետ սիլի բիլի անելով, հը, հը... գնում: Քաղաքում նրան անվանում են չոփու կարո:

— Արդյոք Սողոմոնը տեղյակ ե այդ մասին:

— Սողոմոնը... նա խոմ տղամարդ չի: Վողջ բաղաքը խոսում ե, բերանի ծամոն գարձրել, բայց նրա ականջին ճանձերն են միայն բզզում, աստծու գառը: Ասենք, յեթե գիտենա յել, ինչ կարող ե անել, Անուշկան կնիկ տեղովը, թաշկինսակի պես նրան շուռ ու մուռ և տալիս:

Մի շաբաթով, ծանոթ զյուղատնտեսի հետ գնացինք Սևանա լիճը պառույտի: Վերադարձին անցանք Սողոմոնի մոտ ճաշելու և հանդիպեցինք: Հետեւյալ տեսարանի: Սողոմոնը նստել եր ճաշարանի խորքում, աթոռին, գիտի առաջ կուցել ու ձեռներով գլուխը բռնած՝ ընկղմել խորաթափանց մտքերի մեջ: Անուշկան ջղայնորեն գնում գալիս եր և մոլեգին հայացքներ նետում նրան:

— Տունս քանդեցիր, ելի, հիսուն մանեթ պարտք ունենք, բայց մեր կասսում հիսուն կոպեկ չկա: Մեր կասսում միշտ մըկներն են պար գալիս: Եսպես ել տնաքանդություն: Վաղը խանութի վարձն ել են պահանջելու: Պարտքատերն իր փողն ե ուզում, իսկ մեր սարսաղը առավոտից մինչի յերեկո ճանձ ե քըշում, հորանջում կամ բամբի յե կուլ տալիս:

Յերբ մենք նստեցինք, Սողոմոնը նայեց մեզ իր բութ, հուսակտուր հայացքով և բարեհոգությամբ ժպտաց:

— Ես ուր եր, ախպեր, մոռացաք մեզ ինչ ե, մուանալ միք: Հալբաթ պակասություն ենք ունեցել, հալալ արեք, մենք անուսում, անդալամ մարդ ենք:

Պատմեցինք մեր բացակայության պատճառը: Նա մի քանի բոպել լրեց և ապա շարունակեց:

— Հիսուն մանեթ պարտք ունենք, չեն սպասում, վոր մաս վճարենք: Դիմել են դատարան, ուզում են մեր գործը խանգարել, անաստվածություն, ախպեր: Զենք իմանում ինչ անենք...

— Ինչ պիտի անես,—Անուշկայի աչքերը վառվում եյին բարկության բոցերով,—գնաս պիտի նախրչի դառնաս կամ փա-

լան ուսիդ մշակություն անես: Քեզ պես սարսադ մարդու վերջն եղ ե...

Սողոմոնը գլուխը նորից ձեռների մեջն առավ և խորասուզվեց մտքերի ծովում: Այդ որը, շատ ճնշված ու խղճալի յեր նա:

Յերեք որ հետո նկատեցի մի հաղթանգամ մարդու, փորին առանձին ակնածանքով եյին վերաբերվում ճաշարանում: Մինչեւ իսկ Սողոմոնն իր ձեռքով ճաշը մատուցեց և ափսեմաքրիչը թեփին, դեմքին հլու, խոնարհ ժպիտ, նայում եր հաղթանգամ մարդու կողմը, դիտում նրա ձեռքի յուրաքանչյուր շարժումը, միշտ պատրաստ ծառայելու: Ճաշելուց հետո, մատնանշածս մարդը գնաց խոհանոց և բավական յերկար զրուցեց Անուշկայի հետ: Ապա Անուշկան ժպիտն յերեսին մինչեւ դուռն ուղեկցեց նրան:

Ճանապարհելուց հետո, Անուշկան զվարթ դեմքով դարձավ դեպի ինձ և մտերմորեն ասաց:

— Գիտես են մարդն ով եր (Անուշկան ամենքի հետ դու—ով եր խոսում), նա մսավաճառ Սեթոն եր, մեր պարտատերը: Յես նրան պատվեցի ճաշով, խոստացա ելի պատվել: Բացատրեցի մեր զրությունը: Ասացի, վոր մարդս անպետք ե, չի կարողանում ոգնել ինձ, ճանձ քշելու մեջ վարպետ, փող աշխատելու մեջ ախմախ: Մենակ կնիկ եմ, աշխատանքն ու հոգու շատ, ոգնական չկա, խողըցի համբերել և կամաց կամաց վճարենք պարագը: Համաձայնվեց: Մի տեսնեյիր ինչ ասլան տղամարդ եր, ե...

Անուշկայի աշքերը փայլեցին բերկրալից:

— Վայ, սադ ով, ա կնիկ... բացականչեց Սողոմոնը, կնոջ խելոքության վրա հիացած, զվարթ ծիծաղով խրխռաց և նստեց թռուին:

— Հըմ, ուրախանում ես, հա, քաչալ... Անուշկան ե, վոր տունդ պահում ե, թե չե վաղուց քամին քեզ թոցրել եր, ով գիտի վո՞ր անտեր աշխարհ...

Այդ ժամանակ ներս մտավ չոփուռ կարոն, մի փոքրիկ կապոց թեկ տակ:

Անուշկան հրճվալից, իսկույն դարձավ դեպի նա և մանրամասն պատմեց ուրախ լուրը:

Իսկ Սողոմոնը նայելով կարոյին և տեսնելով նրա ուրախությունը, ձեռները ծունկերին, ճաղատ գլուխն աթոռի թիկունքին ձգած՝ հրհուում եր փոքրիկ յերեխայի պես և շրթունքներն կիսաբաց, մտմտում:

— Տեսնում եր, ինչ կնիկ ունեմ, հատը չկա սադ աշխարքում...

## ԲՈՐԻՄ ԶԵՐԱՉԵՎԸ ԽՐԱՄԱՏՈՒՄ

Բորիս Զերաչեկ հիանալի կահավորված հինգ գեղեցիկ սենյակներ՝ բոլշևիկները զրավեցին և տվին յերկու բանվոր ընտանիքի, իսկ ըստ Զերաչեկի, թոկից փախած յերկու ավազակի: Թոնդ լինի այնպես, ինչպես նա յե մտածում, վորովհետև մինչև այսոր դեռ վոչ մի ճարտասան կամ իրավաբան, չի կարողացել Զերաչեկն համոզել, վոր նրա սեփական բնակարանը զավթող բանվորներն ավազակ չեն: Փաստն այս ե, վոր այժմ նա բնակվում է Կրամանողարքի հեռավոր փողոցներից մեկում, մի փոքրիկ սենյակում - մի մահճակալով, յերկու աթոռով և հասարակ մի սեղանով, միանշամայն բավարար կահարասիք, վորովհետև Զերաչեկ մինակ մարդ և ժամանակին շատ ծախելու պատճառով, չի ամուսնացել:

Բոլոր կալվածները գնացին ձեռքից, հոյաշեն թատրոնը, վոր տարեկան մի քանի հազար յեկամուտ եր բերում, քաղաքի բանուուկ վայրերում գտնվող բաղմաթիվ խանությունները, նույնիսկ պոկեցին յերբորդ գիմնազիայի մեծ շինության ճակատից այն մարմաբյա ցուցանակը, վորի վրա խոշորատառ գրված եր.

«Բորիս Զերաչեկ անվան տուն»:

Ո՛, փուչ, յերախտամոռ աշխարհ...

Բայց Զերաչեն անշուշտ հազար անգամ գոհ պիտի մնար, յեթե բոլշևիկներն այդքանով բավականանային: Մի որ ել փառավոր կերպով լծեցին նրան գործի: Սկզբում բաղմաթիվ քաղաքացիների հետ ուղարկեցին քաղաքի անսաքրությունները մաքրելու, հետո հրամայեցին քաղաքի շրջակայրում խրամատ փորել...

Իսկի լսված եր, վոր Զերաչեն իր կյանքում ձեռքը բանին տա, իսկ խրամ փորելը ծիծաղելի չե: Աշխարհի ստեղծագործությունից ի վեր պատահել ե յերբեք, վոր Զերաչեկի պես պատկանելի մարդուն՝ այդպիսի ծանր, ստոր աշխատանքի լծին... Բայց բոլշևիկների հրամանն ե՝ «կատարե կամ մեռիր»: Մինչ նա վոչ միայն չեր ցանկանում հեռանալ այս յերանելի աշխարհից, այլ մահվան մասին մտածելն անգամ ճամարում եր վոճրագործու-

թյուն։ Մահ... այն ել քառասուն տարեկան հասակում, յերբ նա այնքան հարուստ է և պիտի հարսանա անշուշտ (վորովհետեւ Զերաչեն ամեն բանի կհավատա, բայց բոլշեկիների հարատեսությանը յերբեք), առողջ ե, չաղ՝ ինչպես մասցու յեղ և բազմաթիվ գեղեցիկ կանայք, ինչպես առաջ, նորից պիտի շրջապատեն, յեթե նրա դրաններում կրկին զնդա ամենազոր վոսկին։

Իսկ այս հեղափոխությունը, վոր տակնուվրա արագ ամեն բան, բայց չկարողացավ և յերբեք ել չպիտի կարողանա տակնուվրա անել Զերաչեն նորին, ժամանակավոր ե...

— Այն, այն, ժամանակավոր բաներ են սրանք, աշխարհն եսպես յերբեք չի կարող ապրել, — ասում եր նա իր մտերիմներին, իհարկե այնպես, վոր մուկերն անդամ չկարողանան լսել։

Յերբ Զերաչեն, քաղաքացիների մեծ խմբում շարք ժամանակ առաջ ընդարձակ դաշտում խրամատներ փորելու համար, նախ մի լավ չորս կողմը դիտեց և յերբ համողվեց, վոր իրենց մոտ վոչ աչք կա, վոչ ականջ, մոտեցավ ծխախոտի հայտնի վաճառական իվան Զախարիչ Գոլովոչենկոյին և կամաց, խիստ կամաց ասաց.

— Այս բոլորն անցողական բաներ են, իվան Զախարիչ, շատ մի տիրի, նուսասատանի և մեր վիճակն այսպես չի մնա։

Իվան Զախարիչ Գոլովոչենկոյն, բարձրահասակ, կլոր յերեսով, մազոտ դունչով և հավի աշքերով մի մարդ, նույնալիսի զգությամբ շուրջ բոլորը նայեց և հառաչելով շշնջաց։

— Իհարկե, պարոն Զերաչեն, բայց յերբ աշխարհը նորից պիտի փոխվի, ահա գորդյան հանգույցը։ Հոգիներս դուրս յեկագ, ել հաւ չմնաց...

— Ե՛ն, ինչ անենք յեղբանք, մեր սկ բախտը. թարսի պիս մեզ և վիճակի այս դժոխային որերն ապրել...

Բայց խոսքը Զերաչենի բերանում կիսատ մնաց, վորովհետեւ բահ ու բրիչ բերին, բաժանեցին և հրամայեցին գործի անցնելու նա պիտի փորեր յերկու արշին լայն և նույնքան ել խորունկ մի փոս, սարսափելի բան...

Արգեն ժամի տասներկուսն եր Ամառվա տաք արեն այրում եր փերկից։ Կարճբոյ, գլուխը թրաշած, ծնոտի տակին քառորդ փուստի չափ ավելորդ մասի կտոր, մարմինը քառակուսի Զերաչեն վերցրեց բահը և վողորմելի ու շվարած՝ չորս կողմը նայեց։ Ինչպես փորե պիտի Կյանքումը տեսել եր, թե ինչպես կփորեն գետինը։ Իր աները, խանությունն ու թատրոնը, այնպես կառուցին, վոր ինքը չիմացավ, նա դրամ եր համրում միայն, հազարներ,

հարյուրհազարներ... Այն, մի զարմանաք, Բորիս Զերաչեն պատիվ ուներ հարյուր հազար ոռութիներ համրելու։ Իսկ թե ի՞նչպես եյին գիգիված այդ խոշոր գումարները։ Հիսուն տարի առաջ կ. Պոլակից յեկած հայրը, Մաթոս աղման, Բնաքը, թե ուրիշներն եյին աշխատել, միենույն չե։ Յերբ նահանգապետը, քաղաքագլուխը կամ պատկառելի քաղաքացիները, գալիս դիտում եյին նրա կառուցած այս կամ այն շենքը և հիանում, չեյին բացականչում, թող փառակոր մնա Բորիս Զերաչեն, վոր մեկը մյուսից գեղեցիկ այսպիսի շենքեր ե հիմնել, վոր կապալով տա կամ մեծամեծ գումարներով վարձ առնե։

Սակայն այդ որհնված, փառավոր մարդը կանգնել և դաշտում, բահը ձեռին ու խրամ պիտի փորե, ուր կարմիրները նստեն պիտի ու կովեն, այն ել վորոնց գեմ.. յուրայինների։

— Սարսափելի չե միթե...

Զերաչենի աջ կողմը աշխատում եր ծխախոտի վաճառականը, իսկ ձախը հայտնի փաստաբան Արբամ իսայիչ Շիրակովսկին, վորը մի ժամանակ ամբողջ չյուսիսային կովկասի գատաստանական աշխարհը զարմացրել եր իր հիանալի ճառերով, այժմ այնպիսի հասարակ շորեր եր հագել, վոր գոնապան Սերգեյը ծիծաղը չեր կարողանում զսպել ամեն անդամ, յերբ իր խաղեյինին տեսնում եր այդ վողորմելի հագուստների մեջ։

Ավելի հեռու աշխատում եյին ակնավաճառ Շվարցը, գործարանատեր Ասլանովը և ուրիշ քաղաքացիներ։

Զերաչեն թշերն ուռեցրեց և բահը զարկեց գետնին, մեկ, յերկու... բայց անիծյալ հողը վորքան պինդ ե, արևը չորացրել, ամրացրել եւ։

— Ես հողն ելքարի պիս պինդ ե, սատանան տանի, չի փիրվում։

— Այսպես զարկբահը, պարզ Զերաչեն, այսպես, — ասաց փաստաբանը գետին փորելու ձեզ ցույց տալով։

— Ընը, ընը... տնքում ե Զերաչեն և ամեն մի զարկին, կարասաչափ փորը խոպոտ ու խուլ մի հառաչանք և ուղարկում դուրս։

— Յեղբանք, մենք հող փորողներ ենք, վոր մեզ բերել են այստեղ. կյանքիս մեջ բահի յերեսը չեյի տեսել, ուր մնաց գետին փորելլը, այն ել ամառվա այս սաստիկ շոգին... — Ու մի քանի բոսք լուեց հետո շարունակեց, — բավական չեր, վոր կալվածներս, բընակարանս, կանկարասիքս ու բանկում պահ տված դրամս առին, ևսոր ել այստեղ են բերել. այսպես ել անխղճություն...

— Ա՛խ, չգիտեմ ինչ ասեմ, պարոն Զերաչե, առ մի չտեսընված բան ե, չլսված, չիմացված,—պատասխանեց Արքամ Իսայիչը, վոր բահի հետ այնպես եր շարժում փոքրիկ, ձկուն մարմինը, վոր կարծես ինքնաշարժ մեղենսա լիներ:

Մոտ կես ժամ Զերաչել չարչարվեց, ո՞նքաց հետապառ, հուսահատորեն և հոգնարեկ նայեց այս ու այն կողմ, քրտինքի խոշոր կաթիներ հոսեցին յերեսն ի վար, աչքերը մթնեցին ուժերի լարումից:

— Վճչ, ուժերիցս վեր և այս գործը, սիրոս սաստիկ բարախում, ծովի չափ քրտինքը պատել և մարմինս, վորել չեմ կարող:

— Բայց ինչ կարող ենք անել պիտի փորենք, թէ չե անիծված կարմիրների ձեռքից ազատում չկա, վայ նրան, ով նրանց բոռնցքի տակ կընկնի:

— Վոր չեմ կարող, ուժերս չեն ներում, իսոմ հող փորող մշակ չենք, վոր կարմիրների համար խրամ փորենք. թող իրենք փորեն, մեզ ինչ:

— Ախպեր, թող թողնեն բանվոր վարձենք, վոր մեր փոխարեն աշխատի, մենք այս գործի հարմար մարդ ենք, — ավելացրեց ծխախոտի վաճառականը վրդովված:

— Կարմիրներն հեջ կթողնեն, վոր մեր փոխարեն ուրիշներն աշխատեն: Մեր աշխատանքն ե նրանց պետք, — հայտարարեց Արքամ Իսայիչը:

— Ախըր մեզ ինչ, — ասաց Զերաչեն աշխուժությամբ, — մենք ինչ գործ ունենք կարմիրների հետ. սա բոլցեիկ ե, նա մենշեիկ, սա կարմիր, նա սպիտակ, թող իրարու միս ծամեն, մեզ ինչ, ջանըմ: Վաղը կանաչը պիտի յերեան զա, մյուս որն ել կապույտը, կանաչը պիտի հրամայի աղք զցել, արտաքնոց մաքրել, մյուսն ել քեզ հանդերձյալ աշխարհ կուղարկի, սա քաշվելիք կյանք ե...

— Գուցե մեր փորածը՝ բոլցեիկների գերեզմանը դառնա, պարոն Զերաչե, շատ դարդ մի անի, — ասաց ծխախոտի վաճառականը:

— Մենք մեր գերեզմանն ենք փորում, մեզ կենդանի, կենդանի թաղելու համար...

Բայց խոսքը բերանում կիսատ մնաց, Բորիս Զերաչել կայծակի արագությամբ սկսեց փորել և քարացած ու կարծրացած հողս այժմ դարմանալի կերպով փխրվեց, փափկեց... Զերաչեն թվաց, վոր աշխատանքներին հսկող կոմիսարի կարմիր

գլխարկը յերեսում ե հեռվից, սիրար զողաց հողմանար տերեկի պես, բոլոր ուժերը լարեց և փորած հողը սկսեց մի կողմ շպրտել արագորեն: Իսկ յերբ բավական ժամանակ անցնելուց հետո, վոչ կոմիսարը և վոչ ել նրա ստվերն յերեաց, նա աղատ շունչքաշեց, թաշկինակով ճակատի առատ քրտինքը սրբեց և ասաց.

— Արքամ Իսայիչ, ասա ինդղեմ, այս կյանքը կարելի՞ յետանել ե՞ր...

— Ի հարկե վոչ: Բայց ինչ կարող ենք անել: Կարմիրներն անհաղթ են, այժմ ուժն ու իշխանությունը նրանց ձեռքին ե, — պատասխանեց փաստաբանը և իր փոսից մի բուռ հող շպրտեց դուրս անքալով:

— Միթե ամեն ինչ վերջացավ, նրանց քիթն ու պոռնգը ջարդող չմնաց:

— Միզ մնաց վոր, ցարին փառավոր կերպով ուղարկեցին հանդերձյալ աշխարհ: Կերենսկին շունչն արտասահմանում ազատեց: Կոլչակին քշեցին և Սիբիրի սառուցյաներում խեղղեցին: Յուղենիչը քամու նման յեկավ և քամու պես ել ցաք ու ցրիվ յեղավ: Դենիկինին Սև ծովը զցեցին և անգլիական նախաստիները հազիվ կարողացան աղատել նրան: Իսկ լեհերն ինչ կարող են անել նրանք բոլշևիկների հախից չեն կարող գալ:

— Ապա Վլանդիկը: Ապրի բարոն Վլանդիկը: Հիշում ես անցյալ տարի մի որ հրավիրեցի ինձ մոտ ճաշի: Ինչ պատվական, ազնվական մարդ:

— Վլանդիկը հարվածեց բոլցեիկների թիկունքը, բայց անզուտ: Դեռ Նրիմից զունչը դուրս չհանած, կարմիրները շպրտեցին նրան կ. Պոլիս: Նա ել մի բան չկարողացավ անել...

— Ուրեմն ամեն բան վերջացավ: Իսկ այս խրամներն ինչու համար ենք փորում, — հարցըց իվան Զախարիչը հուսահատորեն նայելով ընկերներին:

— Մրանք զգուշության համար են միայն, ուրիշ վոչինչ, — պատասխանեց Արքամ Իսայիչը՝ ահարեկված ընկերներին ուղղելով փաստաբանական իր հանճարեղ հայտացքը:

— Ուրեմն դուք բոլորովին հույսը կտրել եք, — մրմիջաց Զերաչել ցավագինորեն նայելով:

— Հույսս չիմ կտրել, բայց լավ նշաններ չեն յերեսում, ջրառույզ ենք լինում, գահավիժում ենք սարսափելիորեն, մի հսկայական, գլխապույտ վայրեջը և այդ ամբողջ Ռուսաստանը, մի ամբողջ աշխարհ, յերկրագնտի վեցերորդ մասը...

— Այն, այն ջրասույզ ենք լինում, դուք իրավացի յեր, Արքամ իսայիշ, — ավելացրեց ծխախոտի վաճառականը, աղիողորմ հառաջ արձակելով, մոռութը մի քանի բոպե հենաց բանի կոթին և մաց մտածկոտ, աչքերը մի անորոշ կետի հառած:

Լոռություն: Զերաչկը թպրտում եր ջրաթաթախ հավի պես, իսկ անիծած բանը կարծես ինատ եր արել, թեթեղորեն չեր շարժվում, ակոսում, քերում եր իր ձեռները: Թոռ, զզվելի բան...

— Իսկ մեր գաշնակիցներն ինչ են մտածում, Անդիխան, Ֆըրանսիան... միթե այդպիս շուտ մոռացան մեղ, պատերազմի ժամանակ քիչ արյուն թափեցինք նրանց համար:

— Նրանք իրենց մասին են մտածում միայն: Նրանց շատ հոգն ե, թե մենք ինչ վիճակումն ենք, Նրանք ուզում են, վոր մեր յերկիրն այնպիս քայլայլի, վոր տնտեսապիս գերիշխեն և պատերազմի ավարը միայն իրենք վայելեն:

— Բայց չե՞ վոր կարող ե այս ախտը նրանց ել վարակել:

— Նրանք խոր մեղ նման հիմարներ չեն: Մի բան կմտածեն: Մենք եյինք, վոր մեր գերեզմանափորները դարձանք:

— Իրավ վոր գերեզմանափոր: Վորքան սոսկալի բան, յերբ մարդն ինքն իր ձեռքով իր գերեզմանն և պատրաստում...

— Ախը՛ր, այդ ինչեր եք խոսում, Արքամ իսայիշ, իվան Զախարիչ բացականչեց Բորիս Զերաչկը հուսահատորեն նայելով ընկերներին, — ինչու այդպիս հուսալրում եք մարդու, յես զեռ մեռնել չեմ ուզում, ախպեր, ինչ ժամանակ դտաք մեռնելու, զեռ ինչ կյանք եմ տեսել, վոր մեռնեմ...

— Ես ել չեմ ցանկանում մեռնել, — հայտարարեց իվան Զախարիչը, նորից սկսելով աշխատանքը, — ահազին քանակությամբ ծխախոտ եմ պահել, դեռ չծախած ինչպիս մեռնեմ:

— Իսկ յես խոշոր գումարներ ունեմ բանկում և մասնավոր մարդկանց մոտ տոկոսով, դեռ բոլորը չգանձած մեռնեմ, — ավելացրեց Զերաչկը:

— Խոսքս իմ և ձեր մահվան մասին չե, այլ ընդհանուր քայլայման մասին: Ո՞վ գիտե ինչեր պիտի դառնանք, յեթե այսպիս շարունակվի, — հայտարարեց փաստաբանը համոզիչ ձայնով:

— Հը՛մ, մի... մըթմթաց Զերաչկը և արցունքներից թացվեցին աչքերը: Միթե յերբեմիցե կարող ե այս աշխարհից հեռանալ Բորիս Զերաչկը, այն հազար անգամ հազար հարուստ, բյուր անգամ բյուր յերջանիկ մարդը... Սաստիկ վրդովված և մահվան

ուրվականից սարսափած, նստեց իր փորած փոքրիկ փոսի յեղերքին, գլուխը յերկու ձեռների մեջ, մտածեց:

— Փոքր, պարոն Զերաչկ, յետ մնացիր, հիմա այդ անիծածները կարող են դաշտում մի, — ասաց Գոլովչենկոն իր փոսից:

— Ե՞ն, յեղբայր, ուժ մնաց վրաս վոր, այնպիսի սոսկալի բաններ խոսեցիք, — պատասխանեց Զերաչկը առանց վլուխը բարձրացնելու:

— Համենայն դեպս, պիտի վոլորել: Պետք ե ցույց տանք, վոր մենք շատ անմեղ մարդիկ ենք, վոչ սկ, վոչ սպիտակ: Մենք չեզքներ ենք, վոչ սրա լավին ենք խառնվում, վոչ սրա վատին, խեղճ ու կրակ մարդ... Պետք ե այսպիս ցույց տանք մեզ:

— Վահ, Արքամ իսայիշ, ել չենք կարող համբերել, պետք ե փոխել այս կործանարար կյանքը: Կարմիրներին ստրուկ դառնալու միտք չունեմ:

— Ախը՛ր, զգուշ խոսե պարոն Զերաչկ: Ամեն տեղ այժմ մի ականջ կա: Մեծամասնականները գետնի տակից անդամ լսում են:

— Ե՞ն, յես այլիս չպիտի գողամ նրանցից, ինչ ուզում են թող անեն, վախեցողը չեմ, — հայտարարեց Զերաչկը վճռական, փայլեցնելով դեմքի մսակույտում կորած փոքրիկ աչքերը:

— Սը՛ս, ի սեր տստծո, ս՞ս...

— Թող, Արքամ իսայիշ: Թող իմանան, վոր յես Բորիս Զերաչկն եմ, լաքեց անգամ չարժեն նրանք, վորոնք այսոր հրամայող են դարձել, մեղ տիմարների տեղ հաշվել:

— Ոյս փառավոր ժամանակներն անցան, հիմա մենք պետք ե նրանց լաքեյություն անենք:

— Մենք, հը՛մ, յես նրանց ցույց կտամ, թե ով վորին կարող ե լաքել դառնալ: Մենք, թե այդ վոտերիկ, դատարկափոր Սիբիրից փախածները: Շուտով նրանց իզն ու թողը կարենք այս աշխարհից: Մենք նրանց...

Բայց խոսքը Զերաչկի բերանում կիսատ մնաց: Այս անգամ իսկապես յերեաց կարմիր գլխարկը: Ծրջիկ կոմիսարը նըղամ մոտենում քննելով փորված խրամները՝ սվինավոր մի բարմիր բանակայինի հետ:

Նա մոտ ըստաներկու տարեկան անբեիս, անմորուք յերիտասարդ եր: Սուր հայացը մի պահ զիտեց վողորմելի գիրը կանգնած Զերաչկին և ասաց:

— Դուք զեռ շատ բիշ եք փորել, ընկեր, լավ իմացեք, վոր մինչև չվերջացնեք աշխատանքը, ձեզ չենք թույլատրի գնալ:

Բորիս Զերաչել վիզը հավու պես կծկեց և այնպես խղճալի կերպարանք ընդունեց, վոր կարծես այդ ջահել տղից իր մեղքերին թողություն եր ինգրուրտ կոմիսարը շարունակեց ճանապարհը, բայց հանկարծ ի մեծ սարսափ Զերաչին՝ կրկին յետարձավ և նորից սուր հայացքով վոտքից ցգլուխ դիտեց նրան:

— Ինչպես ե ձեր ազգանուն, ընկեր:

— Իմ ազգան... նուն, ազգանունս Բորիսով ե, Բորիսով... թոթովեց Զերաչել լեզվակապ ու չնշահատ:

— Բորիսով, թե ուրիշ բան, ճիշտ ասեք,— հարցրեց կոմիսարը կասկածոտ աչքերով:

— Աստված վկա Բորիսով ե... զիտե՞ք, յես խեղճ ու կրակ մարդ եմ, ընկեր, այս, խեղճ ու կրակ մարդ:

— Դուք վաճառական չեյք, բազմաթիվ կարվածներ չունեյք:

— Յես... յերդվում եմ վոչ, այս ընկերները դիտեն, վոր յես վաճառական, կալվածատեր չեյի, այլ հասարակ մարդ:

— Իսկ ինչ գործով եյիք զրադվում:

— Յես... յես... մտմտաց Զերաչել շփոթված, լալկված:

— Այս մարդը կալվածատեր չե՞ր, — հարցրեց կոմիսարը դառնալով դեպի իվան Զախարիչն ու Արքամ Իսայիչը:

— Զգիտենք, ընկեր, մենք նրան չենք ճանաչում, առաջին անգամն ենք տեսնում, — հայտարարեցին նրանք խեղճ ճայնուի:

— Դուք ովքեր եք:

— Մենք... յես կրցկակար եմ, այս կոշկակար, — կմկւաց հայտնի փաստաբան Արքամ Իսայիչ Շիբակովսկին:

— Իսկ յես... յես ել ձկնորս եյի, կասպից ծովի ափերին ձկնորսությամբ եյի պարապում, - պատասխանեց ծխախոտի հարուստ վաճառական իվան Զախարիչ Գոլովչենկոն:

— Հա, հա, հա... բարձրածայն քրքջաց կոմիսարը և մի արհամարհական հայացք ձգելով յերեքի վրա, հեռացավ:

— Քիչ մնաց կրակն ընկնեյինք, ճակատագրական մի մազից ազատվեցինք, — փնթփնթաց Գոլովչենկոն կոմիսարի և կարմիր բանակայինի գնալուց բավական հետո:

Իսկ թե վորն եր այն ճակատագրական մազը, վորից հազիկ ազատվեց իվան Զախարիչը, այդ մասին նա լուսթյուն պահեց:

— Այժմ ջահել ջուհուլներն են մեզ հրամայողները, անմազ ու անբեխ լակոտներ: Աշխարհը տեսած, կյանքի չարն ու բարու

մեջ մազերը ճերմակած մարդ չկա մեջերնին, կրամնի մալարյոժ, հա, հա...

— Փորձված, աշխարհ տեսած մարդ՝ այսպիսի աշխարհավեր գործեր կկատարի: Սրա պես կաթնակեր ջահելներն են մեզ կառավարում, թու... — Բացականչեց Զերաչել և տիսուր, մշուշու կատահացքն ուղղեց հեռաւ, հեռաւ: Աշքերը լցվեցին անզոր կատահացքին արցունքներով, վորոնք մաշում, խեղդում եյին նրան:

— Ով գիտե, ինչ աղբակույտից դուրս յեկած մի տղասպանում ե մեզ, տակտորիչչ անվանում, տակտարիչչ, հա, հա... իբր թե տարբիներով միասին աղ ու հաց ենք կերել, առետուր, ընկերություն արել... վայ մեզ, ինչ վատթար որեր ենք ապրում, — հայտարարեց իվան Զախարիչը և այնպիսի ցաւկոտ հայացք հեռացող կոմիսարին, վոր կարծես ահա պիտի ցաւկի մոնետեց հեռացող կոմիսարին, վոր կարծես ահա պիտի ցաւկի մոնիկին ինչպես վարազ ու իր բոռնցքներով պիտի խեղճե կոմիսարին, բայց փոխանակ ցաւկելու, ավելի ու ավելի կրկնապատճարին, բայց կարչափ, վորչափ կարելի յե շուտ փորել վերջացնելու համար այդ անիծյալ փոսը:

— Ընդ, ընդ, ընդ... տնքտնքում եր Բորիս Զերաչել, սենք ավելի ճիշտ նրա վորն եր տնքում, վորովհետև շատ դժգու տիրովից, այսքան ծանր և անհամապատասխան գործի լծիւեր տիրովից, համար: Յեթե լուսահոգի հայրը Մաթոս աղան՝ հանկարծ դիմումը բարձրացներ հողի տակից և այս վիճակում տեսներ վորովին, անշուշտ լալ պիտի խնդար և բացականչեր:

«Այս, իմ խեղճ, իմ սիրելի տղաս, այդ ինչ դժնդակ որեր ես ապրում, իմ անուշիկ, թանգագին Բորիս...»

Արեւ մեղմիվ իջնում եր կապույտ յերկնքից: Հորիզոնը կարմրել շառագունել եր: Հեռվից յերեացող քաղաքի վրա իջել կոսկեփայլ փոշի: Կոսուրները փողփողում եյին հրափայլ ճաճանմից: Մի զով, ախորժելի հովիկ, վորտեղից վոր ե, սլալուզ չումից: յեկավ շոյեց աշխատողների քրտնապարար ճակատները:

Արքամ Իսայիչն ու իվան Զախարիչը դուրս յեկան իրենց փոսերից, բահը ձգեցին և խոտերի վրա նստելով սկսան հաց ուտել:

— Համեցեր, պարոն Զերաչ, մի պատառ ել դուք անուշ արեք, քաղցած կլինեք:

— Յես ընավ ախորժակ չունեմ, դուք անուշ արեք, — հայտարարեց Զերաչել շարունակելով աշխատանքը: Հացը կդնար բերակություն աշխատական ել, կյանքն ել պղտորել բան վոր, բոլշէիկները նրա ախորժակն ել, կյանքն ել պղտորել

հյին, թող աստվածը նրանց հախն ու դատաստանը տեսնի, ինչ փոք նրանք Զերաչէին արին, մտքից, յերեակայությունից գուրս բան եր...

— Հեյ, գիդի ժամանակներ, առաջ ինչպիսի խորտիկներ եյինք ուտում, ամենաթանգ ու ամենահամեղ քաղցրավենիք, այժմ այս ամայի գաշտում, մի կտոր հաց ու պանիր կրծոտելով ենք ապրում, ինչպես շնչն...—մրթմրթաց Արքամ Իսայիչը շարժելով ծնոտը:

— Այս, ինչպես շնչն...—պատասխանեց Իվան Զախարիչը, չոր հացը խրխուացնելով ատամների տակ:

Մինչ Զերաչէն այնպես եր տապլտկում հետապառ, ինչպես ծանր լուծ քաշող և տակավին անսովոր ձի: Յերբ ընկերները կրկն իջան իրենց փոսերի մեջ, նա խոր շունչ բաշեց, որբեց քրախնքը և ասաց:

— Ախ, փուչ, անիծյալ աշխարհ, այս ինչ ծանր խաչ է, փոք կրում ենք: Մեր տառապանքը Քրիստոսից ավելի յեղավ... և մի քանի վարկյան լուելուց հետո զարձավ դեպի փաստաբանը,— դուք ել մեղավոր եք մեր այս վիճակի համար, գիտեք հարդիլի բարեկամս, վրովինետե ձեզ մոտ դատվող ըոլշելի բայակներին, ամեն տեսակի թոկից փախածներին, փոխանակ փառավոր կերպով պատանայի զիրկն ուղարկելու, ուղարկում եյիք բանտ կամ Սիրիք և այսոր բոլորն ել ազատվելով յեկան նստեցին վզներիս:

— Իսկ դուք ինչո՞ւ այնքան ծանր վարձեր եյիք պահանջում կենողներից կամ բանվորներին լծում ծանր աշխատանքի, կտրում նրանց հալալ աշխատանքը, փոք նրանք այսոր զայրացած, այսքան անխնա ծառացել են մեր զեմ: Դուք ավելի շատ մեղք ունեք, — պատասխանեց Արքամ Իսայիչը լուրջ կերպով:

Զերաչէը գործը թողեց և խստադեմ նայեց փաստաբանին, ուղեց ինչ փոք տսել, բայց ծխախոտի վաճառականը միջամտեց:

— Ե՛, ախպէր, ինչ ժամանակ գտաք վիճելու: Այստեղ մեղավորն ու արդարը ջոկելու տեղն է: Տեսէք, արեն արդեն մայր և մտնում: Պետք ե շուտ վերջացնենք գործը:

Իվան Զախարիչի հաշտարար ճառը, յերկուստեք համովիչ եր: Բայց Զերաչէը չեր կարող մարսել փաստաբանի սուր գիտողությունը: Մի ժամանակ իր ամենազոր քսակից կախում ունեցող այդ մարդը, այսպես անխիղճ կերպով անպատվի՞ իրեն, լըսված բան է: Յեվ նա շրթունքները կրծեց և մեկ աչք կկոցելով, ասաց բարկաճայթ:

— ԶԵ, յեղբայր, մեր պատիվը ու արժեքը չենք գնահատում: Բարեկամն ու թշնամին ճանաչվում են գժբախտության ժամանակ. մինչդեռ նեղն ընկած պահում, վոչ թե պաշտպանում, այլ աշխատում ենք իրարու: տունը քանդել, Լավ մտաքերեցեք, Արքամ իսայիչ, թե մեր հարաբերություններն ինչպես եյին և վրբան բարիքներ եմ մատուցել ձեզ: Մի կարծեք, թե կյանքը միշտ այսպիս կմնա: Պետք ե լուրջ մտածեք ապագայի մասին և վոչ թե անազնիվ կերպով հարվածեք ձեր բարեկամին:

— Յես ձեր գեմ թշնամություն չունեմ, պարոն Զերաչէ, մտքես անդամ չի անցնում վորեկ վատություն անել ձեզ:

— Սնւտ եք ասում, քիչ առաջ եք, վոր կոմիսարի մոտ դաշտանեցիք ինձ, զլացաք վկայել, վոր յես ինդ ու կրակ մարդ եմ:

— Յես սովոր չեմ յերբեք սուտ խոսել և սուտ վկայություն տալ, այժմ ժամանակն այնպես է, վոր ամեն մարդ ստիպված է ավելի իր անձի մասին մտածել, քան ուրիշի, ձեր պատճառով վտանգի յենթարկելու միտք չունեմ, — հայտարարեց փաստաբանը կտրուկ: Մյժմ Բորիս Զերաչէը պետք չեր նրան, իսկ յեթե ժամանակները փոխվին ու Զերաչէի բսակը նորից լցվի, Արքամ Իսայիչը կրկն կարող է հիանալի կերպով բարեկամանալ նրա հետ, Բացի դրանից, Արքամ Իսայիչն իր փաստաբանական տաշզանդն ավելի թանգ եր գնահատում ազդի և հայրենիքի համար, քան Զերաչէի քսակը...

— Դուք ստոր մարդ եք, պարոն փաստաբան, ափսոս այժմ միայն ճանաչեցի ձեզ, — բացականչցից Զերաչէը փրփուրը բերանին, ներքին ծով հույզերի ամբողջ հեղեղը թափելով Արքամ Իսայիչի վրա, կարծես նա լիներ իր դժբախտության պատճառը:

— Դուք ավելի ստոր եք, քան յես, հիմար խոսքերի յեմիայն վարժ ձեր լեզուն, — պատասխանեց փաստաբանը նույնպես զայրացած ու գրգռված:

— Յես ձեզ ցույց կտամ, հիմար եմ խոսում թե խելոք, շառլատան...

— Դուք եք շառլատան...

— Ախը՛ր, ինչ տեղն եք գտել վիճելու, թողեք ի սեր ասածո, — միջամտեց Իվան Զախարիչը, վոր շատ անգամ եր հանգիստես յեղել նրանց վեճերին և ամեն անգամ ել ինքն եր հաշտարար գտապորը, բայց զարմանալի կերպով ամեն անգամ ել նրան այնպես եր թվում, վոր վեճը շատ սուր բնույթ ունի և

անհրաժեշտ ե նուրբ ու խելոք միջամտություն, վոր հետևանք՝ ները ճակատագրական չլինեն, վորովհետեւ ըստ ծխախոտի վաճառականի, յեթե Բորիս Զերաչեն ու Աբրամ Իսայիչն են իրարդեմ կովողը, այդ նշանակում ե, վոր աշխարհը յերկու ուժեղ բանակի յե վերածվել իրարդեմ մաքառելու համար և վորքան մեծ պատիվ ե մարդուս պայքարող աշխարհները խաղաղեցնել, նույնքան միծ պատիվ իվան Զախարիչին, յեթե նրան հաջողվի Զերաչեն ու փաստաբանին հաշտեցնել:

— Շուն, դուք համարձակվում եք այդպես վիրավորել ինձ, յես ձեզ ցույց կտամ...

Զերաչեն բառնցքները սեղմեց և կատաղի աչքերով նայեց հակառակորդին:

— Շունն եւ, եղն եւ դուք եք:

— Խնդ:

— Ավանակ:

— Ախըր, չի լինի պարոն Զերաչե, Աբրամ Իսայիչ, հանգստացեք, տեսեք ուրիշներն մեզ են նայում, ամոթ ե,—ասաց ծխախոտի վաճառականը, տեսնելով, թե ինչպես մի քանի քայլ հեռու աշխատող մարդիկ հետաքրքրությամբ նայում են:

— Ինչ ուզում ե, թող լինի, պետք ե նա իմանա, վոր աըխմար ե, ստոր, անարժան արարած, թող շատ չհաչե:

— Այդ բոլորը դուք եք, լավ կլինի դուք չհաչեք:

— Տո, յես քո... բացականչեց Զերաչեն և բահը վերցնելն ու հսկա փորը ցցել մեկ յեղափ: Փաստաբանն ել բահը պինդ բռնած առաջ անցավ և ինչպես ճակատամարտի պատրաստվող յերկու աքաղաղ, նրանք մոլեզնորեն նայում եյին իրարու, մինչ իվան Զախարիչը պատնեշի պես մնացել եր յերկուրի միջև:

— Պարոն Զերաչե, այդ ինչ եք անում, ուզում եք մեզ վըտանդի՞ մատնել, ինչ ե:

— Չե, իվան Զախարիչ, մի թողեք յես նրա գլուխը ջարդեմ, վոր լեզուն չերկարի և մեծ մեծ չխոսի, —մըմսաց Զերաչեն իր տեղում ճոճվելով և այնպես ցույց տվեց, վոր իրը ուզում ե առաջ գնալ, բայց իվան Զախարիչը դժբախտաբար չի թողնում, այլապես վաղուց փաստաբանի գլուխը ջարդ ու փշուր եր յեղել...

— Դե, ջարդեցեք տեսնեմ, համեցեք, —հայտարարում եր մյուս կողմից Աբրամ Իսայիչը:

Սակայն նույն վարկանին Զերաչեի աչքին ընկան իրենց կողմն յեկող յերկու կարմիր բանակայինի գլխարկ և ողի մեջ, մայր

մտնող արկի շողերից փայլող յերկու սվին, անմիջապես իր փոսը թռավ և դեմքի արտահայտությունը բոպեյապես փոխվեց: Նույնպես իրենց փոսերը թռան վաճառականն ու փաստաբանը և աշխուժորեն սկսան աշխատել:

Թե ինչպիսի ծանր վարկյան ապրեց Զերաչեն, ինչպես ուժդրին բարախեց սիրտը, այդ մասին միայն ինքը կարող ե վկայել: Այդ մահասարսուու մի դող եր, վոր ելեքտրահոսանքի պես անցավ ամբողջ մարմնովը:

Իվան Զախարիչը կասկածելով, վոր ընկերների վեճին համար են գալիս կարմիր բանակայինները, մտքում սաստիկ հայհոյեց ընկերներին, վորոնց հիմարության պատճառով, ինքն ել կարող եր վտանգվել: Կովել են ուզում, թող ուրիշ տեղ գնան, իրարու միս թող մի լավ ծամեն, ինձ ինչ...

Իսկ փաստաբանը իր փոքրիկ մարմինն առած, այնպես եր ընկղմվել փոսի մեջ, վոր հազիվ յերբեմն, յերբեմն գլուխը նրա ներկայությունն եր մատնանշում:

Կարմիր բանակայինները նրանցից քսան քայլաչափ հեռու, ճանապարհը փոխելով ծովեցին դեպի ձախ:

Առաջին ազատ շունչ քաշեց Բորիս Զերաչեն: Զեռները շալվարի գրապաններում, փորը դուրս ցցեց և շնչեց լիաթոք իրիկ-նային գովաշունչ ողը:

Քիչ հետո, վերահսկիչ կոմիսարն յեկավ և արձակեց աշխատող քաղաքացիներին, բայց Զերաչենին պահեց:

— Մինչև չվերջացնեք ձեր աշխատանքը, չեք դնա, ամենքը փորեցին պրծան, իսկ դուք խաղ եք անում:

— Ախըր, ընկեր կոմիսար, յես հող փորելը չեմ իմանում...

— Հըմ, —հայտարարեց կոմիսարը խիստ ձայնով—այժմ պետք ե դուք ել աշխատեք, հող փորել սովորեք:

Բորիս Զերաչեն աղիողորմ հայացքով շուրջ բոլոր նայեց: Ընկերները հեռացել եյին արդեն: Կոմիսարն ել կրկին շարունակեց իր ճամպան: Արդեն յերեկո յեր, աստղապայծառ, զով յերեկո:

Հուսահատորեն բահը կրկին ձեռքն առավ և նախքան փոսն իջնելը, նայեց խավարին և խոր, շատ խոր մտածեց... Յեկ յեթե հոչակալոր Շեքսպիրն այդ վայրկյանին գլուխը գերեզմանից դուրս հաներ ու տեսներ նրան փոսի յեղերքին մտամոլոր ու գլխիկոր կանգնած, անպայման պիտի բացականչեր.

«Այս մարդը շատ ավելի յե մտածում ու տառապում, քան իմ Համեմետը...»

1920 թ.

## ՈՒՍՏԱ ՄԱՐԳԱՐԻ ՄՏՄՏՈՒՔԸ

Ուստա Մարգարն աչքերը մեկ տասը դարձրած, ման եր գալիս գործարանում: Աշխատանքը վերջացել եր և բանվորները ցըվել եյին տուներնին: Մնացել եր միայն ուստան, գործարանը պահպանող այդ հինավորց, հավատարիմ զամբռը: Մորուքի թելերը մինչև կուրծքն անխնամ իջած մի լայնթիկունք մարդ, վորի դեմքին աշխատանքն այնքան կնճիռ և քանդակել, վորքան բնությունն ընկույզի կճեպին: Բարությամբ ծով նրա աչքերը մեքենաների ներկին պես սկ և գլուխը մազաշատ, վորի վրա ձմեռը դեռ նոր և սկսում ձյունել:

Կարճ ու մոխրագույն պլուզը հազին, լայն ու խունացած շալվարով ուստա Մարգարը, բայլում եր և ըստ սովորության մտմտում ինքնիրեն:

— Ես որ ել մի յերկու աթոռ ջարդվեց, ասենք դրանք խարխուլ եյին արդեն: Մեքնային կես ժամ ավելորդ տոկ բաց թուղին, զուր տեղ... պետք ե միշտ վնասն աչքի առաջ ունենալ, համվը դուզ պահել:

Ապա կանգ առնելով մի պսպղուն առարկայի մոտ, կուացավ ու իր մրոտ, կոշկուած ձեռներով վերցրեց փայլուն իրը:

— Բեեռ ե, մեր տղեքը վեր են զցել ու գնացել, տանեմ իր տեղը դնեմ, ամեն բան թնգ իր տեղումը լինի, պետք կգա:

Մատների արանքում յերկար շուռ ու մուռ եր տալիս ու պշպղում, կարծես ինչ վոր թանգարժեք իր լինի, մի անհրաժեշտ բան, վորը չպետք ե այդպես անխնա դես ու զեն զցել:

Ուստա Մարգարը կրկին ուշադրությամբ սկսեց դիտել շուրջ բոլորը:

— Եսենց ել անհոգություն, սղոցի բերանը վեր են զցել, իբր դեն շպրտելու բան լինի: Բերանը կա, կոթը վոչ, կոթն ամբացրիր, կարգին սղոց կրառնա, կորչելու բան չունենք, ախպեր...

Ու այդ առարկան ել վերցնելով պահեց ձեռքում:

— Ես ել եսնաքար ե, են մյուսն ել պտուտակ, թեպետ մի-

նը կոտրած՝ մյուսը ժանգոտ, բայց նեղ ժամանակ քեզ կողնեն: Ամեն մի կոտրած ու ժանգոտած բան, յեթե դեն շպրտենք, մեր պիտի համնենք...

Ուստա Մարգարը գործարանի կեղտու հատակին ընկած ուրիշ իրեր ել հավաքելով, մոտեցավ գործիքների մեծ պահարանին ու խնամքով դարսեց այնտեղ:

— Յեթե եսպես լավ չպահենք մեր տունը, քարը քարին կմամ: Մինչեւ հիմա աչքս ջուր դարձավ ես բոլորը պահպանելով: Սրանք կաթիլ-կաթիլ հավաքած, մեր բըտինըով շինած ապրանք են, աշխատավորի ապրանք, իմ կամ քո սեփականությունը խոս էն, ախպեր ջան, վոր ինչպես սիրտ ուզեց, վարվես հետը, աշշի, ախպեր ջան, վոր ինչպես միայն, թե ինչ ծանր դատում բանումից հետո յե ստեղծվում ամեն մի իր, թեկուզ դա ամենաչնչին բան լինի, որինակ ես բենոի կտորը: Պետք ե մեր աչքի լուսի պես պահենք...

Նա թըջած ավելով մաքըեց գործարանը, ավելիս աքլորի բծախնդրությամբ հետախուզում եր ավլուքը, իմանալու համար, թե վորես պետքական առարկա չկա ընկած:

Սերգեն մութն եր, յերբ գնաց իր պզտիկ ու իրեն պես անշուք սենյակն ընթրելու, շատ համեստ ընթրիք, ամենորյա սե շուք սենյակն ընթրելու, շատ համեստ ընթրիք, ամենորյա սե շաց, քիչ պահնիր և քիչ ել ճաշից ավելցած մսի կտորներ: Մենակ հաց, կարծեն ինչ վոր իր ճաշից ավելցած մսի կտորներ: Մենակ հաց գործարանը, բանվոր ընկերների ուրախ յերգն ու ծիպաշեկի գործարանը, բանվոր ընկերների ուրախ յերգն ու ծիպաշեկի գործարանը, մեքենաների աղմուկն ու այդ բոլորին հաջորդող համաժաղը, մեքենաների աղմուկն ու այդ բոլորին հաջորդող համաժաղը, լիովին բավարարում եյին նրա հոգու պահանջները:

Ընթրիքից հետո ուստա Մարգարը գնաց դուների կողպեքները նայելու: Ստուգեց բոլոր փականքները, ամրացրեց նիգերը և ապա փոքրիկ լապտերը ձեռքին՝ մտավ մեքենաների ընդարձակ գետնահարկը: Մեծ ու փոքր բազմաթիվ մեքենաներ, անիկ ներ, փայտ կտրող, յերկաթ կոող ու հալող, կանգնել եյին լուս, վիշապանման, շարք առ շարք, հանգստանում: ծանր, անդադրում աշխատանքից հետո՝ գիշերային այդ խաղաղ ժամին ննջում անհոգ՝ ինչպես յեղները գոմի մեջ:

Դեռ մի բանի ժամ առաջ, այդ արձանացած, թխաղեմ կենդանիներն աղմկում եյին, շփշփում, արձակելով ու վոլորելով իշքնց ջլեպինդ ձեռներն ու վոտները, մթնոլորտն լցնելով շաջով

ու շառաջով։ Ով գիտե, մարդկային քանի կոշտացած բազուկ գըր-  
կում և նրանց, քանի, քանի մըրկածուփ հոգիներ իրենց անուշ  
յերգերը խառնում նրանց աղմուկին, ներշնչում յեռանդ ու վողի,  
լարում, կյանքի կոչում ստեղծագործ ուժերը նրանց։ Այժմ ա-  
մենըը հանգստանում են, մրափում, նոր հույսերով ու յեռան-  
դով տոգորված վաղվան սպասում։

Մարգարի միտքը վերասացել եր քաղցրիկ հույզերի գիրկը։  
Մթնշաղով պարուրված չեչոտ դեմքը ժպտում բերկրալից և  
թվում եր թե, նրա ականջում տակալին զրում զբնգում եր ա-  
նիմեների հնասպառ շաչյունը։

— Հը՛, սատանի ճուտ, ձենդ փորդ ես քաշել հա, են վժնց  
եր, վոր ամբողջ որը բերանդ լայն բաց արել հրհում, շիշփում  
եյիր ինչպես աժդահա. հիմի հոգնել ես հա, քնում ես, իշ...

Զեռներով շոյեց կլորանիկ մի խոշոր մեքենայի մրոտ դունչը,  
շոյեց այնպիսի գուրգուրանքով, վոր կարծես հարազատ զավակը  
լիներ, շատ սիրելի և պաշտելի մի շնչավոր եյակ։ Կիսալույսում,  
լապտերի աղոտ ցոլքերի տակ, նրա միալփլուն, խոշոր աչքերը  
հառել եյին մեքենայի մերկ, վոլործուն թևերին, առնալան, ու-  
ժեղ լծակներին, ածխացած, զրահալատ լանջին։ Ու նրանք մը-  
թության մեջ իրար ականջն ի վար փսփսում եյին, մեղմիվ շշն-  
ջում իրենց հույզերն ու մտորումները, ընկլմում մտքերի ծով,  
հայացքը թափառուն շուրջը տիրող աղջամուղջի մեջ։ Ով գիտե,  
քանի տարի, քանի զիշեր, այդպես հանդիպել ու նայել են նը-  
րանք իրար, ապրել նույն հուշերն ու յերազները, համակել  
համատարած խաղաղությամբ ու լուսությամբ, ավելի ու ավելի  
մտերմացել ու ընտելացել ըմբռնել լիովին իրենց արժեքն ու  
գոյությունը այս աղմկոտ աշխարհում։

— Իսկ դու, փոքրիկ ճախարակ, եղ ինչ խաղաղ ննջում  
ես, հանգիստ քննու, Բայց առավոտը վաղ վեր կաց, վորպեսզի  
աշխատես։ Թե չե կմնաս անշարժ, անկյանք ու մի որ ել ժան-  
դուտած, խարխլած քեզ կծգեն մի մոռացված անկյունն...

Ուստան մեկ մեկ զննեց մեքենաները, սոնիները, լծակները,  
պտուտակները, պսպուն ատամները ժանիքավոր, թոկերն յեր-  
կաթյա, խարտոցները պողպատակուու, նրանց փոշիները մաքրեց։

— Ես մեր զիժ Սերգոյի մեքենան ե, — մըմնջաց նա ձեռքը  
դնելով վիշապաթե անիվի յուղոտ ուսերին, — ինքն ել տիրոջ պես  
զիժ, ենպիսի զալմազալ և սարքում, վոր ականջդ կխանա։ Իսկ

յեթե թողնես, ով գիտե ինչ ավեր ու կոտորած սարքի գործա-  
րանում, կապը կտրած գազանի պես։

«Մաշինիստ կուզմինը ես ճախարակի մոտն ե կանգնում,  
ախպեր, խղճով աշխատող մարդ ե, հալալ լինի իր քրտինքը,  
սիշտ բանում ե, գոնե մի ըոպե հանգիստ շունչ առնի։ Իսկ ես  
լծակը շարժող Միխոյի աչքերը միշտ կարմրած են, դեմքն անհոգ,  
դարդ չունի, մին մին արազի շիշը ծածուկ բերնին և զնում ու  
զորս դու պատվիրեցեր կոնծում...»

«Իսկ ես աժդահա անիվը պտտում ե մեր Քոլիձեն, մի սար-  
սաղ մարդ, բայց արջի չափ ուժեղ, տաս մարդու զործ և կատա-  
րում...»

Մեքենաների արանքից անցնելիս, յերեմն այս կամ այն  
մեքենայի թեր կամ յերկարած զունչը՝ զարնվում ե նրա գլխին  
և ուսերին, կանգ ե առնում ուստան, յերկամբ, յերկար նայում  
հանցավորին, վորը կարծես զդալով իր մեղքը, գլուխը ծած,  
լուս սպասում ե նրա հանդիմանության։

— Ատնպ, — կանչում ե ուստան համապարփակ լոռւթյունը  
խանգարող իր խոպոտ, բաս ձայնով, — ախ, դու ոյինբազ, յես քեզ  
խանգարող իր խոպոտ, բաս ձայնով, տեմնում ես, վոր անցնում եմ, ու-  
զում ես, վոր մի լավ թակեմ քեզ...

Բայց նա վոչ թե թակում ե, այլ խանդաղատանքով, ներ-  
քին ինքնարավականությամբ ժպտում, դեմքի մկաններից կազ-  
մելով հաղար ու մի կնճիռ։ Իրեն պես շնչավոր և թվում այդ չա-  
րածնի մեքենան, վոր զիշերային մենության մեջ, բախտակցում  
ե նրան, ունկնդրում լուս նրա խոներն ու մտմտուքները։

Գետնահարկից զուրս զալով ուստա Մարգարն անցավ գործա-  
րանի մյուս մասերը, մենավոր վանքում ապրով և գիշերներն ան-  
քուն շրջող վանականի պես։ Կարգի բերավ, դասավորեց հաջորդ  
որդի աշխատանքին անհրաժեշտ բոլոր իրերը։ Այդ գործը տեղեց  
բավական յերկար։

— Ամեն ինչ պատրաստ պահեմ, վոր լուսածեզին բանվոր-  
ները գան ու զուր ժամանակ չկորցնեն։ Թեղ աշխատանք կարգին  
առաջ գնա, իսկ բարաքյաթ շատ լինի մեջը...


Ուշ զիշերին հոգնած ու խոնջած վերադարձավ իր սենյակը,  
բաճկոնակը հանեց ու յերկնցավ տախտակյա մահճակալին։ Այս-  
պես պառկած, հայացքը հառում եր մի մութ, անորոշ կետի ու  
պես պառկած, յերկար մտածում։ Մտածում այն մասին, թե արդյոք  
յերկար, յերկար մտածում։ Մտածում այն մասին, թե արդյոք  
ամեն բան կարգի բերվեց, կորսված կտմ պակաս մնացած բան

չմանց, և վորովհետև միանգամից չեր կարողանում պատկերացնել գործարանն իր ամբողջությամբ, ընկնում եր մտորումների գիրկը և յենթարկվում ինքնահաշվեավության: Յերբ վերջի վերջո համողվում եր, վոր ամեն ինչ իր տեղումն է, կանոնավոր, հոգին տոգորվում եր ինքնագոհության պայծառ զգացմունքով, ժամանակում մանկական անմեղությամբ, հորանջում ու ննջում խաղաղ, անխոռվ, առավոտը վաղ զարթնելու և առորյա ծանր աշխատանքին լծվելու:

Իսկ յեթե վորեն բան պակաս լիներ, կորսված, ուստա Մարգարն իսկույն կբարձրանար ճոճելով իր հաղթ ու բարձր հասակն ինչպես բարդի, մորուքի ալեմազ թելերը կխտտեր հուզված ու փոքրիկ լապտերը վառելով, քայլերն կուղղեր դեպի գործարան և ինքնիրեն կմտմտար.

Դնամ տեսնեմ այսինչ բանը վորտեղ եր դրված, ինչի՞ իր տեղումը չի. գնամ մի լավ աչք տամ, կարգի բերեմ...

1921 թ.



## ՏԵՐ ՍԻ ՄՈ Ն Է

Տեր Սիմոնը նստել եր յեկեղեցու գավիթում, մի լայնգիրկ կրծղի վրա և հայացքը դեպի փողոց՝ այցելույի սպասում: Յեկել եր իրիկվա ժամերգությունը կատարելու, բայց հակառակ տոնական որ լինելուն՝ մարդ չեր գալիս յեկեղեցին:

«Մերկ պատերի համար աղոթելու չեմ... մտմտում եր նաթախծոտ, դեմքին մոայլ ամպ, զլուխը ձեռներին հենած, իսկ փարաչայի խունացած փեշերն ազատորեն գետնին փոված՝ լիզում եյին նրա փոշին:

Յեկեղեցում իշխում եր թանձր աղջամուղը, Պատկերներն ու վարագույրները թաղվել եյին ստվերի մեջ: Աղոթատեղում մեղմիկ պլազում եյին յերկու մոմ, վորոնց վտիտ ցոլքերը հազիվ լուսավորում մի փոքրիկ տարածություն:

Քահանան քարի պես անշարժվել եր: Խորշոմած դեմքը թըթված ու խոժող, տամուկ աչքերն անթարթ նայում եյին արտացոլելով հոգեկան ծանր տափապ, ինչպես քաղաքի արվարձանում խանութի դռանը նստած խանութպանը, վոր ամբողջ որը հուսահատորեն նայում ե ամայի փողոցի յերկայնքն ի վար՝ հաճախորդի սպասում:

Փողոցի լույսերն արդեն վառվում եյին, մութն եր դուրսը: Աստղերը պլազում եյին կապտալանջ յերկնօրում: Մարդիկ զբունում եյին անհոգ ու զվարթ:

«Գոնե մի յերկուս գային... մտածում եր տեր Սիմոնը և յերբ մայթի վրա լսվում եր մի վոտնաձայն, նրա սիրտը բարախում եր ուժգին, աչքերի խորքում փալփլում հույսի աղոտ ճառագայթ: Բայց իզնւը... Անցորդները շարունակում եյին իրենց ճամբան, ամեն մեկն իր գործին, առանց նույնիսկ նայելու յեկեղեցու կողմը:

Տիրացուն, մի կարճոյ, կորաքամակ, ալեհեր մարդ, դուրս յեկալ յեկեղեցուց քահանայի շուրջառը ձեռքին և կանգնեց մի քանի բոպե լուս, մտածկոտ:

— Տեր հայր, — ասաց տիրացուն անհամարձակ, — արդեն ուշ ե, ժամասացությունը պիտի սկսել:

Տեր Սիմոնը, խոր քնից արթնցողի պես, մի թույլ շարժում դորձից և գլուխը բարձրացնելով միգապատ աչքերն ուղղեց նրան։ Տիրացուն կրկնեց իր խոսքերը։

— Եսկ ուսմ համար աղոթենք, մարդ չկա յեկեղեցում.՝

Յեվ մի քանի ըստե լուելուց հետո, քահանան գլուխը խորհրդավոր կերպով շարժեց և ավելացրեց.

— Զիս իմանում, վոր մարդիկ մոռացել են յիկեղեցին, անաստված դառնել...

Ճնշող լուսաթյուն։ Փողոցում հնչեց յերիտասարդ զույգերի արձաթահնչյուն, բարձրագոչ ծիծաղը։ Դիմացի տան բաց պատուհանից լսվում եյին դաշնամուրի ուրախ հնչյունները։ Կառքերը, ավտոները սլանում եյին դղբղալով, աղմկելով։

«Մի ժամանակ ասեղ զցելու տեղ չկար, այնքան մարդ եր գալիս... մտածում եր քահանան զլուխը կրկին ձեռների մեջ առնելով և հայացքը հառելով մի մութ, անորոշ կետին: Նույնպիսի մտորումների գիրկն ընկղղմել եր ալեռոր տիրացուն, թիկնելով ժամի դոան լայնացիր վեմին:

Ահա կռացած, չորացած մի պառավ, կամացուկ, գողզող քայլերով յեկավ, սրբատաշ բարը համբուրեց յերկյուղածությամբ և ներս մտավ, նրան հետեւեց մի աղքատ, գողզոջուն ծերուկ: Տեր Սիմոնի մթագնած դիմքին խաղաց ցուրտ ժպիտ, վեր յելավ, մառախուղի մեջ գծագրելով իր բարձր, պարթև հասակը և ջղային քայլերով դիմեց գեպի աղոթարան: Հոգին մռայլ եր, փոթորկված: Ի՞նչ ոգուտ այդ յերկու աղքատ ծերուկից: Ի՞նչ շահ յեկեղեցուն, իրեն: Նրանք չեյին կարող նվիրաբերել, յեկեղեցին աղքատացել եր, անշուքացել, իսկ իրենք--ինքն ու տիրացուն—զըրամի մեծ կարիք ունեյին, ծանր հօգսերի մեջ ելին գտնվում:

Տիրացուն նրա ուսերին զցեց վոսկեկար շուրջառը և վառ-  
վաղ մոմերից մեկը բռնեց ձեռքին։ Խաչակիսքելով յերեսը քահանան  
սկսեց ժամերգությունը։ Նրա շրթունքները շարժվում եին արա-  
գորեն, ձայնը հնչում եր մերթ բարձր ու զիլ, մերթ խուլ ու  
խզմզված, ինչպես աշնան խիստ քամուց ճարճատող չորացած ծա-  
ռը։ Աղոթքի, սաղմոսի կտորներն արտասանվում եին կցկուր,  
աններդաշնակ, միալար ու տաղտկալի։ Հաճախ տեր Սիմոնի մռայլ  
հայացքը դառնում եր գեպի ժողովատեղին և յերբ պատի տակ  
կծկված ու ջերմագին աղոթող այս յերկու աղբատից բացի մարդ

չեր գտնում, աչքերը վառվում եյին անզոր բարկության բոցով, հոգին դառնանում, փոթորկվում եր: Աղոթքի կտորների հետ շըր-թունանիս ոռուս ելին թոշում արտօնած ու հայնոյանք:

— Տիուառեւ, սահման մի տանի, կարճ կտրիր, պրծնենք...

Բայց տիրացուն, վոր բարեխիղճ, աստվածավախ մարդ եր,  
սովորություն եր գարձել այս կամ այն աղոթք ասել վոգեոր-  
գած և ամբողջությամբ. քահանան կտրում եր նրա խոսքը և վե-  
ջին բառերն արտասանելով ավարտում աղոթքը: Կրծատ ժամա-  
սացություննից հետո, տեր Սիմոնը մի պահ կանգնեց մտախոհ,  
զնալ արդյոք աղոթողների մոտ, գուցե մի բան տան, թեև այն-  
քան աղքատ տեսը ունեն, վոր հազիկ թե նրանց մաշված հագուստ-  
ներից մի բան դուրս գա:

«Գնամ, ով գիտե, գուցի լինի... և քահանան ավետարանը ձեռքին, հանդիսավոր դեմքով մոտեցավ յերկու աղոթողներին, վարոնք ջերմագին համբուրեցին ավետարանի վոսկեղոծ շապիկը, մինչ քահանան ուն, թափուտ հոնքերի տակից փոքրիկ, պլալուն աշքերը հառել եր նրանց ձեռներին, վորոնք իր աջը գցեցին պղնձեցին հինգկոպեկանոցներ: Դրամն արագործն կորավ փարաջայի խոր զրպաններում և տեր Սիմոնը նորից վերադարձավ աղոթարան: Յավով վերհիշեց անցյալը, այն յերանելի որերը, յերբ յեկեղեցին լիքն եր հասարակությամբ, այն ել ինչ ընտիր, պատկառելի հասարակություն: Պայծառորեն մտարելում եր, թե վոր յերեկելի առեւրականը, վորաեղ եր կանգնում: Ահա այստեղ, վորորկ, գրկաչափ սյունի մոտ կանգնում եր գորգավաճառ Արիսողոմը, խաչելության այն յուղաներկ պատկերի առաջ աղոթում եր հարուստ վաճառական լուսահողի Մաթոս աղան, այն խաչափայտի քաղը հայտնի ալլագաճառ Առաքել Նիկիտիչը... Վար մեկը թվեր: Իսկ ինչ յեղան այդ պատկառելի ծխականները, բոլորն ել կորան, գնացին, վոմանք հոգիներն ազատեցին ես անիծյալ աշխարհից, վոմանք կորցրին իրենց հարստությունը, քյասիբացան, շատերն ել յերեսները դարձրին յեկեղեցուց, անհավատ դարձան... Ո՛, աշխարհ, աշխարհ, ինչպիս առաջաւելու կ տեսն աշխարհին...

Ըստ առաջին պատմության՝ առաջին առաջարկը կատարվել է Առաջին պատմության մեջ, քահանան շուրջառը հանեց, ծածկեց զբու  
խարկն և արագորեն դիմեց դեպի դուռը։ Զգաց, թե ինչպես տի-  
րացուն մասախուզի միջից իրեն եր հառել աշքերը։ «Ուզում է  
ստացած կոպեկներս հետը բաժանեմ, սարսաղը չի իմանում, զոր-  
դրանք ինձ ել հերիք չեն ու գրպանումս մկներն են պար գալիս».

Քայլերն ուղղեց դեպի տուն։ Ճանապարհին մտածում եր,  
թե ինչպես հանդիպի կնոջը։ Յերեխաների հագուստներն մաշվել  
են, կոշիկ և հարկավոր, բազմաթիվ հոգսեր կան, վորոնց համար  
դրամ և պետք։ Իսկ դրամ չկա։ Վաղուց ե, վոր վոչ մեռել կա,  
վոչ կնունք։ Բոլորը ծնվում ու մեռնում են առանց տերաերի, իսկ  
պսակվողներն ել դիմում են՝ են անիծյալ տեղը, են, են դժոխց  
դուռ—զագուշ։

Ակամա խտուց փարաջայի լայնարձակ գրպանը, վորտեղից  
լովեց պղնձյա կոպեկների խուլ զրնդոցը… Հեյ գիտի, մի ժամա-  
նակ վորքան խաչնամբույր, մեռելոց, պսակելոց և տնորհնեք եր  
վերցնում, իսկ պսակահացն ու մեռելահացն անպակաս եյին։ Մի  
կարող եր այս յերանելի աշխարհից հեռանալ, առանց տեր Սիմո-  
նին մի լավ կերցնելու և խմեցնելու…

Կինն իրիկվա թեյասեղանը պատրաստել, ամուսնուն եր սպա-  
սում։ Ինքնայեռը ճրթճրթում եր սեղանի վրա։ Քահանան յեկավ,  
նստեց դիվանին, շոյելով մազառատ մորուքը, թթվելով դեմքը։

— Հըմ, տերտեր, եսոր մի բան ընկամով ձեռքդ, — հարցրեց  
կինը մաքրելով բաժակները։

— Վ՞որ որն ե ընկել, վոր եսոր ել ընկնի, վոչ կնունը կա,  
վոչ մեռել։ Գերեզմաններն անզամ մոռացել են, որհնել չեն տալիս։

— Վայ, անսատվածներ, տունս բանդվում ե, յերեխեքս ան-  
կոշիկ մնացին։ Յեղած չեղածը ծախում ուտում ենք։ Մինչև յերբ  
այսպես։

— Ինչ արած, իրիցկին, — պատասխանեց քահանան մտախոհ  
և նստեց սեղանի մոտ, — ձեռքումս ճար չկա, պիտի համբերենք։

— Համբերել… մինչև յերբ, ինչ հույսով, չոգիներս դուրս  
յեկավ համբերելով։

Կինը մոտեցավ ինքնայեռին և սկսեց թեյ լեցնել։ Յերեխա-  
ները հավաքվել սեղանի շուրջն աղմկում եյին։

— Մայրիկ, — ասաց մեծ աղջիկը խզելով լսությունը, — այսոր  
դպրոցում դասագիրք ու տետրեր պահանջեցին, վաղն անպայման  
պիտի ունենամ։

— Իսկ իմ կոշիկների կրունկը Փչացել ե, այլևս չի կարելի  
հագնել, — հայտարարեց տամներկու աարեկան վորդին՝ Արտավազ-  
դը, — իմ ընկերներն արդեն նոր բաճկոնակ են հագել, իմս մաշվել  
ու պատառուավել ե։

— Տեսնում ես, դեռ մի ճար մտածի, թե չե ես վիճակն ան-  
կարելի յե տանել։

Ասաց կինը դառնությամբ և դժգոհ աչքերով նայեց լուռ  
թեյող ամուսնուն։


— Ինչ կարող եմ անել այ կին, — պատասխանեց ամուսինը  
ճնշված, — արհեստ չգիտեմ, վոր արհեստով պարապեմ, ուրիշ աշ-  
խատանքների յել ընդունակ չեմ։ Դեհ, դու ասա, ինչ ճար կարող  
եմ անել։

— Եղ ե, ելի, քահանաներիդ վախճանը, — ըրթմնջաց կինը  
վրզովված, — յերբ տերտերությունը բան չի տալիս, ժողովուրդը  
յերեսը գարձնում է յեկեղեցուց, դուք մնում եք շշկված, ուրիշ  
դործի անպետք, բաղցած…

Արցունքի յերկու կաթիլ պսպղացին տեր Սիմոնի աչքերի  
խորքում և շրթունքները պըլկեցին ներքին հուզմունքից։

Իսկ Արտավազը մտաբերեց այն որվա լեզվի գասին անցած  
հոդվածը՝ ձրիակերների ու պարազիտների մասին։ Դանատուն վեր-  
լուծության ժամանակ նրանց շարքին զասել եր նաև քահանանե-  
րին, իսկ զասամիջոցին մի քանի շարաճճի տղա, լեղվակովի ժա-  
մանակ, ծաղրել եյին նրան «ձրիակերի վորդի» անվանելով… Բար-  
կությունից և ինքնասիրությունից Արտավազդի դեմքը կարմրեց  
և մի ուշադիր, զննող հայացք ձգեց հօր վրա, կարծես առաջին  
անգամն եր տեսնում։ Դիտելով նրա մազոտ դեմքը, թավամազ մո-  
րուքը, ճաքճաքած սալի պես ճակատը և սև վիճաջան, անա-  
խորժ զգացմունքով լցվեց։ Ինչու իր հայրը փարաջա յե կրում,  
քահանան յե դառել, ուրիշ գործի անընդունակ, ընկերներն ել  
ծաղրում են, ինչ ամոթ… մտմտաց նա և ընկդմեց մոայլ խո-  
հերի մեջ։

Ամբողջ ընտանիքը թեյում եր լուռ, ընկճված…



## ՈՎ Ե ՄԵՂԱՎՈՐ

«Միթե սպիտակները հաղթեցին և կյանքը նորից պիտի փոխվի...»

Մտածում եր մետաղագործ բանվոր Ալեքսեյը՝ փողոցում, իր տան դռանը կանգնած, տիրությամբ դիտելով շտապ կերպով նահանջող կարմիրներին։ Կամավորական բանակի առաջավոր մասերը մոտենում եյին քաղաքին։ Տեղի յեր ունենում ուժեղ հրացանաձգություն և թնդանոթամարտ։

Նահանջողներն անցնում եյին փողոցից, մարդկանց, ձիերի ու սայլերի ճիչն ու ճոխնչը բռնել եր չորս կողմ։

«Բայց ինչու մերնք ուշացան, չլինի մի բան և պատահել...»

Մտմտաց Ալեքսեյը և մոայլ, մշուշապատ աչքերը հառեց փողոցի յերկայնքն ի վար, հեռու, հեռու...»

Ի գուր, իր վորդիները չկային, վանյան ու Միշան, վոր մի քանի որ առաջ ռազմաճակատն եյին մեկնել սպիտակների դեմ կովելու։ Մեկ մյուսից կտրիմ, սիրելի, անզուքական վորդիներ։

Հայրը ժամերով կանգնած՝ անհամբեր սպասում եր նրանց, հոգին ծանր մտքերի մեջ, դեմքը ձմռան յերկնքի պես մառախուղված։

Նահանջող կարմիր բանակայիններն հայտնեցին, վոր վանյան ու Միշան վողջ և առողջ, գտնվում են զորքի վերջին մասերի մեջ։

Ահա վերջապահներն են անցնում, իսկ իր վորդիները չկան։ Արդյոք բան չպատահեց, վատ բան...»

Թնդանոթները գոռացին խիստ մոտ ու փողոցները բոլոր ամայացան։ Ահա մի քանի կարմիր ձիավոր, վորնք սրարշավ, փոթորկի պես անցան և փողոցը մնաց բոլորովին թափուր, ինչ վոր ծանր, դժողակ անակնկալի սպասուն։

Սառն ջուր մաղեցին Ալեքսեյի վրա, մի դաժան միտք չարչարեց ուղեղը, աչքերը փայլեցին բոսոր։

«Չգնալ նրանց յետեկց, չփնտռել զավակներին...»

Արագորեն ներս մտավ բակը։ Տան կենողները՝ ամեն մեկն իր բնակարանում պահված, սրտատրով հետևում եյին դեպքերի ընթացքին։ Նրա մուայլ հայացքը մի վարկյան բարձրացավ յերկուրդ հարկը, գործարանատերն ել ապրում այնտեղ, Միրզարեգովը։ Լուսամուտի ապակիին կամած մի զույգ փոքրիկ, փայլուն աչքեր նկատեց, վորոնք համառորեն իրեն եյին նայում։ Այդ լուս հայացքի մեջ, նա կարդաց արհամարհանք, հեգնանք և հրճվալից ժպիտ։

Ալեքսեյը մտավ ներքնահարկի իր անշուր սենյակը և մահակն ու գլխարկն առնելով, յետ գարձավ կրկին։ Պատուհանի ապակիից պսպղացող աչքերը, կարծես իջնում եյին, մերձենում իրեն, ծռմովում, խնդում թունալից... Ծաղրում, հեղնում եյին արդյոք...»

«Բայց իր վորդիները պետք ե վոր գային, չե՛ վոր ընկերները տեսել եյին նրանց. գուցե յեկել եյին ու անցել։ Միթե կարելի յե, վոր անցնեյին նրանք ու չայցելեցին իրեն, գեթ վերջին անգամ։ չե՛, մի բան կա...»

Նրա հոգում թունավոր ոձի պես սողաց մի չարատանջ կասկած։

Այդ վարկյանին, փողոցում խիստ մոտիկ, տեղի ունեցավ կարձատեկ հրացանաճգություն ու լսվեցին մարդկային կատաղի ձայներ։ Ալեքսեյը ցնցվեց, կարծես նրան եյին կրակում, մի պահաչքերին մթնեց ամեն ինչ բոլոր առարկաները շփոթ՝ խառնվեցին իրար։ Զար նախազգացումը ճմլեց սիրտը և մահակը ձեռքում պինդ բռնած, առաջ անցավ։

Փողոցում վոչ մեկ շարժում, չորս կողմ աղբակույտեր, սայւերի ջարդված անիքներ և սոնիներ, սատկած ձիերի լեշեր։ Բայց լեբն ուղղեց փողոցի անկյուն, այնտեղ, ուր փողոցները խաչաձևում եյին իրար, ինչ վոր բան նկատեց... Վոտները թուլացան, մերժեցին այլես առաջ գնալ, ձեռները դողացին, արյունը սառեց յերակների մեջ։

«Ո՞ւս...—հառաջեց նա ցավագին, յերկու ձեռքով բռնեց գլուխը, շշմեց։ Փողոցի մեջտեղը փովել եյին յերկու մարմին, արյան փոքրիկ լճակներով վողողուն, յերկուքն ել անշնչացած։ Վանյան ու Միշան եյին նրանք, իր վորդիները...»

Վանյան ընկել եր կոսակին, հայացքն անթարթ յերկինքն ի վեր սկսում, մարած աչքերում աղոտ մի ցոլք կար թասած, քիչ առաջվա կովի կատաղության, թե մահվան սարսափն արհամար-

Կոհ ժպիտը: Միշան պառկել եր յերեսն ի վար, զլուխը ջախջախված թրի ծանր հարվածից, արյունաթաթախ աջ թեր սեղմել եր հրացանի բունին, իսկ ձախ ձեռքի յեղունդները խրել հողի մեջ: Գանգի կիսկսված մասում, լերթացած արյան միջից, նշմարվում եյին ուղեղի գեղնավուն շերտերը... Յերկու քայլ հեռու, մի ուրիշ դիակ ել կար, փափախին սպիտակ ժապավեն կարած մի կողակ, կուրծքը հոշոտված թրի անխնա հարվածից:

Ալեքսեյն իսկույն ըմբռնեց ամբողջ իրողությունը: Սպիտակները քաղաքն եյին մտել արդեն, իր ուշացած վորդիներին չեր հաջողվել ժամանակին հեռանալ, գուցե ցանկացել եյին հանդիպել իրեն վերջին մնաս բարեկ և ընկել դարանած թշնամու խաչած կրակի տակ...

Կատաղության և հուսահատության արցունքները հոսեցին աչքերից, խորշոմած գեմքին պատկերվեց անհուն ցասում:

«Չգնալ, չգտնել զավակները սպանողներին, վրեժինդիր լինել...

Բայց փողոցը ամայի յեր, հեռվից լսվում եյին հրացանների ձայներ, վերեկց մեղուի պես բզզում եր թշնամու սավառնակը:

Իրենց տան կողմից լսվեց ինչ վոր ուրախ բրքիչ...

Ալեքսեյն նայեց այն կողմը և նկատեց մի մարդ, վոր պատուհանը բացած նայում եր: Նրա մթամած հայացքին պատկերվեցին մի զույգ թունոտ, սպառնական աչքեր, վորոնք պսպղում եյին, հրճվում, խրտվիլակի պես այլանդակ ու ծամածուռ, սողում, հեղնում եյին նրան...

Յետ դարձավ Ալեքսեյն ինչպես վարագ մոլեգին, ուղեղում մեխած ինչ վոր միտք, դաֆան, ահավոր միտք...

Իրենց գուռը հասած պահուն, լսվեցին ուռաների հախուն, հաղթական ձայներ, ձիերի դոփյուն, սուրերի շաջուն: Կամավորական զորքերն եյին նրանք:

Միաժամանակ լսվեց մի բամբ, հրճվագին ձայն:

— Ուռա, ապրեք յերեխեք, ջարդեցէք աշխարհը կործանող շանկորդիներին...

Այդ բամբ ձայնը վերեկց եր լսվում, յերկրորդ հարկի բալկոնից և Ալեքսեյը լավ գիտեր, թե վորի՞ ձայնն եր... Խրտվիլակի պես վոստոտելով առաջ վաղեցին յերկու փայլուն աչքեր, վորոնց մեջ նա տեսավ արյան լիճ ու այդ լճի մեջ լող տվող յերկու դիակ...

— Եօյ, Շարյ խրան...

Ամբողջ բակը թնդաց մի խոպոտ ձայնով, վոր կանչում եր ուրախ, ցնծագին:

— Վայ, շնուն... մրմիջաց Ալեքսեյը, բարկության կայծը հրգեհ դարձած, այրեց նրա եյությունը, կուրծքը խփում եր մուրճի պես, մահակը պինդ սեղմվեց ձևոքում և ինչպես գաղաղած վազր, խոյացավ գեղի յերկրորդ հարկը, կնճռոտ, մազառատ գեմքին շառագույն բոց, աչքերն ուռած ու կարմիր... Հիսունհինգամյա այդ խաղաղ, աշխատասեր մարդը, վոր բառասուն տարի շարունակ գործարանների մին ու ծխի մեջն եր մաշել կյանքը, յեզան համբերությամբ, հանուն մի պատառ հացի, այժմ սանդուիի աստիճաններն եր բարձրանում հեասպառ, ինչպես մրբիկը սպառնական ու անխորտակ:

Ճանապարհին մի քանի անգամ կանգնեց, աստիճանները խոռսափում եյին վոտների տակից, զլուխը պտտվում եր հողմաղացի պես, աչքերը մթնում, շունչը կտրվում...

Ահա հասավ յերկրորդ հարկի ընդարձակ բալկոնը: Շքեղագարդ սեղանի մոտ, իր կարձլիկ, կուղիկ մարմնով նստել եր Միքարեկովը, քաղաքի հայտնի հարուստներից մին, տերն այն գործարանի, վորտեղ քսան տարուց ալելի աշխատում եր Ալեքսեյը: Յոթը հիանալի կահավորված սենյակներից, կարմիրները խծկել եյին նրան մի փոքրիկ սենյակի մեջ, ուր մի ամբողջ տարի «յուրայիններին» եր սպասում սրտաճաք, մի տարի շարունակ՝ հասարակ շորերի մեջ, մինչև գետին գլուխը խոնարհած, հավու պես վիզը կծկած.. Այժմ ահա, ազատ շունչ եր առնում վերջապես, հազել եր լավագույն շորերը և զինի յեր կոնծում իր քսանամյա գեղաչի կնոջ՝ Մարիա Ստեփանովիայի հետ:

Ալեքսեյին տեսնելով, Միքարեկովը մի վայրկյան մնաց շփոթված, ապա իսկույն գեմքի կնճռները կիտեց, աչքերին տվեց վես, գոռոզ արտահայտություն և ասաց:

— Հըմ, Ալեքսեյ, լակոտներդ փորձում եյին ծլկվել, համատեսալը ինչպես գետին փոփեցին, շանսատակ յեղան. կարմիր եյին գարձել, հա, հա... կարմիր...

Յեկ ծիծաղեց նա քահ, քահ, կծկելով չորացած գեմքը, աչքերը խոժոռելով:

— Ուզում եյիք առանց ցարի, շարունակեց Միքարեկովը մոլեգին, — առանց խաղեյինի ապրել, համ. յերկիրն առանց տիրոջ կարմիր և կառավարվել, առանց կուլակի ու գաղանակի: Մի տարի Ռուսաստան առանց ցարի, գործարանս առանց խաղեյինի

յեր, տեսան վոնց քարուքանդ յեղան։ Դուք աշխարհս կործանել գիտեք միայն, տակն ու վրա անել։ Որենք, աստված, մեծ ու փոքր, ձեզ համար դատարկ բաներ են։ Հեյ, Ալեքսեյ, դուն ել եյիր կարմիր դառել, կարմրել, համ, համ...

«Երեկվա վոտրոբիկ, քաղցած չների պես ման յեկող մարդիկ, երեկվա աղբ զցողներ, լարեյներ, ուզում եյին իշխան դառնալ, աշխարհի կարգերը շրջել, տավարիշչ անել բոլորին, համ, համ... աղբ զցողն ու յես տավարիշչ պիտի դառնայինք, համ, համ...»

«Հըմ ուզում եյիր յես ել քեզ ընկեր դառնայի, համ. դու, վոր սոված շան նման այս ու այն անկյուն եյիր թավալում, մի կտոր հացի համար կոշիկներիս փոշին անգամ պատրաստ եյիր լիզել վոր խղճալով քեզ ու տղաներիդ գործարանս բերի, աշխատանք տվի և ապրում եյիք հանգիստ, գոհ չեղաք, ուզեցիք վզներիս նստել, քանդել ամեն ինչ, համ։ Վոհ, այլս չպետք ե խղճալ ձեզ, յերես տալ գործի դնել, այլ պետք ե ձեր գլուխներն այնպես ջարդել վոր իդն ու թողլ կտրվի աշխարհի յերեսից...»

Սաստիկ բարկությունից Միրզարեգովի մարմինը ճոճվում եր աթոռի հետ միասին, բոռնցքի հարվածներ տեղում սեղանին, ուզում եր փշրել, ջախջախել բոլոր նրանց, վորոնք համարձակում են նրա դեմք դուրս դաւ, հակառակել։

Մինչ Ալեքսեյը կանգնել եր բալկոնի յերկաթյա ճաղերի մոտ, իրենից հաղար անգամ հաղար հարուստ, բյուր անգամ բյուր յերջանիկ տիրոջ հանդեպ, աչքերը մոլեգնորեն չուծ, զեմքը բոցավառ, յերկնքի այն փայլատակումին պես, վորին հետեւում ե ամպերի մարտնչում, զոռում—գոչում, ճակատագրական փլուզում...»

— Յեվ դուք մտադիր եյիք իշխաններ դառնալ մեզ, ձեր եշի խելքով, դատարկ գրպաններով հրամայել, ստրկացնել մեզ, համ... ձեր...»

Սակայն Միրզարեգովի խոսքը կիսատ մնաց, արագ վոստյունով մի մարդ ցատկեց զեպի նա, հաստ մահակը մի ակնթարթ բարձրացավ ողի մեջ և ասենայն արագությամբ իջավ նրա գըլ-խին։ Նա դողդողաց, ձեռները հուսահատորեն թափահարեց, աչքերից բաղմաթիվ կայծեր ցայտեցին, մի խուլ աղիողորմ դուռց դուրս թռավ բերանից ու մարմինն աթոռի հետ միասին տապալվեց զետին։ Զղային մի քանի ուժգին ցնցում, ձեռների ու վոտների պիրկ գալարում, զեմքի և աչքերի ծամածում, բերանից դուրս ժայթքեց արյան մի փոքրիկ, փրփրախառն ալիք...»

Մարիա Ստեփանովնան սարսափից մի պահ քարացած մնաց։ Ապա վեր թռավ, աղիողորմ ճիչեր արձակեց և վազեց շնչառպառ՝ հարկաններից ոգնություն խնդրելու։

— Խի, խի, խի...»

Լսվեց խուլ, յերկարատև քրքիջ և Ալեքսեյը գաղաղած ու մոլեգին, մահակի անխնա հարվածներ տեղաց Միրզարեգովի արդեն անշնչացած դիակին։ Անզուսպ կատաղությունից զեմքի մկանները կապտել եյին և աչքերը դուրս եյին թռչում իրենց խոռոչից։

Մարիա Ստեփանովնայի աղեկտուր կանչերից, բազմաթիվ մարդիկ վերև բարձրացան ու շրջապատեցին Ալեքսեյին։ Ահա նրան քաշում, քաշքում են, հրում, հրմշտկում, մահակը խլում ձեռքից և հարվածներ տեղում գլխին, կողերին, կռնակին։

Ո՞վքեր են այդ անծանոթ մարդիկ, ինչու հրում են, քաշքում, չեն թողնում, վոր Ալեքսեյը ավելի ուժգին հարվածի, սիրտը հովանա...»

Վորդիների արյունթաթախ դիակները պատկերացան աչքերին և կարծես զրդում եյին առաջ գնալ, մին ել հարվածել...»

Բայց գլուխը պտույտ ե տալիս։ Վոտներն ուժահատ ծալվում են, աչքերին պատել մշուշ, մառախուլ։ Այս ուր են տանում նրան, ուր ե մահակը, ինչու չեն թողնում, վոր շարժվի։

Բազմության միջից, հանկարծ, Ալեքսեյի ճզմված, խոշտանգված մարմինը բարձրացավ, փնչաց ինչպես կատաղած առյուծ և ուղղվեց զեպի գետնին անշարժ պառկած նախկին խաղեյինը։

— Խի, խի, խի...»

Քրքջաց Ալեքսեյը, գեմքը շառագունած, կարմիր, ապա նորից ճզմվեց մարդկանց հարվածներից և ընկալ ուժասպառ...»



## ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

Վաղ առավոտ Յերկինքը ներկվել եր ծիրանեվառ փայլով: Դեռ չծագած արեի լուսասիյուռ, վտիտ շողերը վանում եյին, ցրում մինչաղը: Լեռների լանջերին իջած ճերմակ, նուրբ մշուշը կամաց, կամաց նոսրանում եր, ցանուցիր զառնում անհուն կապույտում:

Անտառածածկ բլուրների լանջն ի վեր ձգվող ճանապարհով գնում եր Սերոբը գերանդին ուսած: Շտապում եր գեղի խոտհարք:

«Հիմի տղերքը քաղում են... մտածում եր նա, ավելի ու ավելի արագացնելով քայլերը, հոգին յեռում եր աշխատանքի անզուսպ յեռանդով: Բայց խոտհարքը բավական հեռու յեր, անտառների խորքում տարածված սարալանջին: Չորի յերկայնքն ի վեր ոճապույտ ուղին դեռ յերկար պիտի ձգվի, մի քանի մեծ և փոքր բլուրների շրջանը գծի, համնելու համար աշխատանքի վայրը:

Ախորժելի, զովաշտնչ զեխյուռը սլոլում, շոյում եր նրա արեւականը ճակատը և անուշ սարսուռով պատում ամբողջ մարմինը: Վորքան հաճույքով անցնում եր Սերոբն այդ զով, գեղատեսիլ վայրերից: Ճանապարհն ակոսված եր սայէրի և անասունների հետքերով. այս ու այն կողմ թափել եյին խոտերի քանդված խուրձեր, չոր ծղոտներ և կենդանիների փեյին:

Ահա անտառի խորքում մի բացատ: Այնտեղ բարձրանում եյին ցորենի վոսկեծածան հասկերը: Քաղեց մի բանի հասկ, պըտղեց, բերանը զցեց վոչ բոլորովին պինդ խոշոր հատիկները: Ծամում եր մեծ ախորժակով և ինքնիրեն մտածում.

«Իմ արտն ել հասել ե արդեն, շուտով պիտի հնձեմ ու կալսեմ, աջողություն թող լինի, ամեն բան կարգի կընկնի...»

Սերոբն ուրախ ե, վորովինեակ անցյալ տարվան համեմատած պիելի առատ բերք ե ստանալու և պատերազմից քայքայված իր տնտեսությունը կամաց, կամաց պիտի բարվորվի:

«Մի ջուխտ յեղ պիտի գնեմ, սայլի սոնիները թաղացնեմ, տանս ոճորքը փշացել ա, նորոգեմ. կնոջա՞ են Վարդիշաղիս հա-

մար մի ձեռք շոր կարել տամ, յերեխես գպրոց տանեմ, ուսումի տամ, վոր սեն սպիտակից ջոկել իմանա և մեղ նման անբան առասուն չլինի. ամեն ինչ բարով, խերով կարգին կընկնի, թող ջանսաղություն լինի միայն...»

Ու ինքն իր մեջ ամփոփված, Սերոբը տարվում եր իր գործերի, անտեսության և ապագայի հոգսերով: Յերբ մտքում մի բարեհաջող ծրագիր եր մշակվում, արևից խանձված, բարեկազմ գիմքին շողջողում եր մի կենարար ժպիտ, իսկ յերբ ծրագրի իրագործման շուրջը հավաքվում եյին բազմատեսակ խոչընդոտներ, ժպիտն իսկույն մարում եր գեմքին, ճակատի ակոսներն ամփոփվում եյին և աչքերն ավելի փոքրանալով, արտահայտում լըջություն և մտահոգություն:

Շուտով նա թողեց սայլերի ճամբան և բանեց մի մեծ բլուրի զառիվերն ձգվող նեղ շավիղը: Այդպես ավելի յեր կարձվում ուղին: Բլուրի ծառախիտ գագաթը՝ յերկնքի կապույտ լանջին ձգվել եր կանաչագեղ գորգի պես: Պուրակների միջից մեղմիվ խոխոջում եր վճիտ ու պաղպաջուն վտակը, ներդաշնակելով մի քաղցրալուր յերածշտություն:

Մի քանի հարյուր քայլ հազիվ եր անցել յերբ Սերոբը ներքեւի ճանապարհից լսեց ինչ վոր աղմուկ: Կանգնեց: Ուշադրությամբ գիտելով, ծորափին նկատեց շուր յեկած սայլ և մի մարդ, վոր շարունակ զոռողություն եր յեզների վրա: Ավելի մոտ գնաց, ճանաչեց, հարեան գյուղացի Հասոն եր:

«Բն, իսկնձի սայլը շուր ա յեկել, գնամ քոմակ անեմ...»

Արագորին իջնելով բլուրն ի վար՝ հասավ գեաքի վայրը: Ճանապարհի զառիթափին, մի քարքըստ տեղ, շրջել եր ցորենի բազմաթիվ խուրձերով բեննված սայլը, թեքվել զեպի ձոր. յեղները վիզերնին ծոած յուծի ծանրության տակ իջել եյին զառիթափին, հեռում ու փնջում, հազիվ կարողանալով հավասարակշռությունը պահել: Թվում եր, թե ահա սայլը յեղների հետ միասին պիտի սլա և գահավիթի ձորը: Սոնին ջարդվել եր և աջակողմի անիվը դուրս թուշելով տապալվել մի կողմ: Ցորենի գեղը բանդիելով, խուրձերը բայցայլել ու թափվել եյին ճանապարհի վրա աջ ու ձախ:

— Բարի լուս, ախաղեր, ես ինչ դժբախտություն ա պատահել քիզ:

Ասաց Սերոբը մոտենալով Հասոյին:

Վերջինս քրանաթաթախ, փոշեպատ ու հոգնած գլուխը լարձ-

րացրեց, տեսնելով նրան ուրախացավ և պատասխանեց ընկնդած.

— Տեսնում ես հարեան, եղ անիծած զառիթափին, տավարը խրանեց, սայլը շրջվեց ու մնացի եսպես շվար կես ճանապարհին. յեղներն ել թարսի պես կանգնել են ու համառում շարժվել տեղիցը. Վախում եմ, վոր խեղճերի վոտքը վնասված լինի:

— Հըմ, — բացականչեց Սերոբը և վճռական շարժումով զընալով դեպի անասունները, ավելացրեց, — դեհ, յեկ միասին սրանց վերև բերենք:

Մի կողմ դնելով գերանսդին, նա բռնեց յեղների կոտոշներից, մի քանի անգամ թեթև հարվածեց նրանց մեջքին:

— Դեհ, շարժվեցիք, մատաղ ձեզ, քոմակ արեք, ամոթ չի ձեզ նման մենծ տավարին, վոր եղաքես ճկուել կանգնել եք. ինատի վախտ գտաք, մին բոյերին մտիկ, մին ել եսպես ծույլ, ծույլ կանգնելուն. դե, հա, դե...

— Դեհ, հա, դե...

Կրկնեց Հասոն հրելով կենդանիներին, բայց նրանք վզները ծուած, վոտները լայն լայն ձգած, մեջքը կըած, կանգնել եյին անշարժ, թարսվել, քարացել.

— Ի՞ն, հարեան, յեղներդ ինատ են արել, բարկացել, վոր սայլը շատ ես բարձել. զրուցի հետները, խրատի, քաղցր, անուշ խոսքեր ասաւ:

Հասոն փոշոտված թիով սըբեց ճակատի քրտինքը և սկսեց շոյել փայփայել կենդանիների ջլեպինդ մեջքը:

— Դեհ, վեր յելեք, մատաղ ձեր ձեռին ու վոտին, զործոյ յերեսի վրա մնաց, արել ծագել ա ու կախ ընկել յերկնքից, հաշքանիս ել նեղություն ենք տալի:

— Ինչ նեղություն, ախպերս, հարեանը հարեանի համար աստեղծվել, նեղ որերին պիտի ոգնենք իրար:

Սակայն նրանց փայփայանքն ու խրատներն իդուր եյին. Յեղներն ուժգնորեն փնչում եյին՝ թթածակերից զուրս ժայթելով լսլինքի պղպջակները, Հասոն ու Սերոբը ջղայնացան, գոռզուացին, կոտոշներն ու պոչերը թափ տվին, մտրակեցին. Սայլի քիթը միացյալ ուժերով քիչ առաջ ծոեցին և ծանր, համառ ձիգերից հետո հաջողվեց յեղներին վերև բարձրացնել և գահավիժումից ապահովել սայլը:

— Հիմի արձակի տավարը, թնդ շունչ առնեն, գնան արածան:

Ազատվելով ծանր լծից և ընկնելու վտանգից, յեղները մի բանի անգամ թափահարեցին մեջքը, հետացին ու փոնդտացին:

— Խեղճերը շատ թարս եյին ընկել, կողքերը քոր ա դալիս, քիչ մաժի, ձեռներով խտախ, թող հովանան:

Հասոն շիեց կենդանիների մարմինը, նրանք հանգստացան և շտապեցին գեպի ըլուրի գոշին գորգի պես պատած արոտը:

— Հիմի, ես քո սայլի սոնին պիտի սարքենք, անիվը տեղը զցենք. լավ ջարդ են կերել, — ասաց Սերոբը ուշադրությամբ դիտելով սայլի վնասված մասերը:

— Նախ պիտի խորձերը ներքեւ բերել, պարզել սայլը, վոր կարելի լինի զործի անցնել:

— Դու նեղություն քաշի մի, — պատասխանեց Հասոն զգացված, — զործիդ գնա, հրեն արեգակն յեկել նստել ա բլրի ծերին, խոտհարքում տղերքը վորքան խոտ են քաղել. ինչ վոր քոմակ արիր, բոլ ա:

— Ե՛, Հասոն ջան, յես վոր գնամ, զու վոնց պիտի զբատես սայլու, դժվար ե, ուստա մարդու զործ, իսկ յես հասկանում եմ քիչ ու միշ, սայլը չնորոգած զնացողը չեմ:

— Վայ, սազ ո՛լ հարեան, թե չե սայլը մնալու յեր ես անտեր համբին, ով գիտե մինչեւ յերբ:

Նրանք յեռանդով սկսեցին վերանորոգել սայլի վնասված մասերը. Զարդված ու տեղից խախտված սոնին փոխարինեցին նոուով, ապա զետին տապալված ծանրաշարժ անիվը հրելով մոտեցրին բիզի և ամրացրին. Այս դժվարին աշխատանքը տեսց չորս ժամեցից ավելի:

Արել բազմել եր յերկնքի լանջին, ինչպես մի հրեղեն, լուսավառ կանթեղ: Կանաչագեղ ձորին և սաղարթախիտ անտառներով, պիտի վոսկեփայլ փոշի: Բլուրի մարդաշատ գոշը թավիշի պես շոյում եր մարդկային տեսողությունը:

Հասոն բարձրացել, գարսում եր սայլի վրա Սերոբի տված խուրձերը: Քիչ հետո բոլոր խուրձերը տեղավորեցին և սայլը բարձվեց:

Յերկու հարեանները հոված ու քրտնաթաթավ՝ կանգնեցին իրար քով: Սերոբն ասաց.

— Դեհ, հարեան, հիմի յես կարող եմ հանդիսա սրտով գնալ իմ զործին:

— Վորքան չնորհակալ եմ, յոլուա՛շ, — հայտարարեց Հասոն բռնելով նրա ձեռքը, թուխ, արեախանձ գեմքին ուրախության

փայլ, բերկրավից աչքերը հառելով նրան,—բայց քիչ ել պիտի խլեմ քո վոսկի ժամանակից, նստիր աղ ու հաց ուտենք միասին, հոգնած ու քաղցած ենք, խաթըր արա:

— Շնորհակալ եմ, նեղություն քաշիլ մի:

— Զանը մ, ինչ նեղություն, մերժիլ մի, ախաղեր մարդ ենք, մեկ աստղի տակ ապլել ու մեծացել, աշխատող, ունչպար մարդ: Աշխարքում բարի հարեանությունից ել լավ բան կա: Առանց աղ ու հացի բաց չեմ թողնի:

Սերոբը չմերժեց: Ճամբի յեղերքին ընտրեցին մի հովասուն, մարդաշատ տեղ և նստեցին վոտները ծալապատիկ: Հասոն բացեց խուրջինը: Մի մեծ շոր փոեց խոտերի վրա, դարսեց լավաշ հաց, պանիր, սոխ և աղ: Նրանք սկսեցին մեծ ախորժակով ուտել, յերկուրն ել չափազանց հոգնած եյին և սոված: Հասոն անհուն գոռնակությամբ և շնորհակալությամբ լի աչքերով նայում եր Սերոբին և շարունակ խնդրում, վոր ուտելուց չամաչի:

— Անուշ արա, յոլդաշ, բեղամաղ մի անի, գիտեմ վորքան լավ ե, յերք մարդը մարդու, ունչպարը ունչպարի քոմակ ե անում, յերբ հայի և թուրքի մեջ խտրություն չկա. թե չե, իրար տունը քանդելով մարդ չենք դառնա:

— Մեր մեջ խտրություն գցողը մեր են առաջին գուշմանն ա: Մեզ հարկավոր արարի հարեանություն, իրարու քոմակ պիտի անենք, վոր շաւնչ առնենք, ապրենք:

— Դրուստ ա, հարեան, —ասաց Հասոն, կտրեց լավաշի մի մեծ կտոր, կոլուց գլանածեւ և սկսեց ուտել ուռեցնելով մազառատ թշերը: Այժմ նա մտածում եր, թե ինչ ձեռվ մի որ ել ինքը լավություն անի Սերոբին:

— Հարեան, —խոսեց նա փոքր լսությունից հետո, —ես տարի վժնց ա հունձգ, մի բան կմնա, թե չե:

— Հունձգ անցած տարվան համեմատած ավելի լավ ա, բայց տավարի նեղություն ունեմ, զիտես ելի, գործերս նոր եմ դրստում, —պատասխանեց Սերոբը, սոխի կանաչ բաշերը թաթախելով աղի մեջ և ճպճպացնելով բերանը:

— Մի որ յեղներս տամ քեզ գործերդ կարգի բեր, լավության փոխարեն լավություն ե պետք, մարդ մարդով ե կանգուն:

— Սաղ ոլ, սաղ ոլ, հարեան...

Այդ առաջարկը շատ ձեռնտու յեր Սերոբին: Լծկանի մեծ պակասություն եր զգում: Հասոյի յեղները կարող եյին բավականին թեթեցնել իր գործերը և Սերոբը ուրախացած՝ այս ան-

գամ ինքը սկսեց մտածել, թե ինչպես մի նոր լավություն ևս անի հարեանին:

Յերբ նրանը վերջացրին նախաճաշը, Հասոն փաթաթեց, խուրջինի մեջ տեղափորեց ուտելիքի մնացորդները, աղա յեղներին քշեց դեպի սայլը: Նրանը մեծ ախորժակով թարմ խսու ուտելուց խաղում եյին, ցատկուում, նոր ուժերով լցված: Սերոբը շոյում եր նրանց գորշամազ դոշը և ասում:

— Հըմ, ոյինբազներ, խելոքացաք, համ, ուրիշ անդամ ել եղապիսի գժություններ չանեք, թե չե, զորս դու պատվիրեցեր, մի լավ պիտի թակեմ:

— Չե, իմ յեղները լավ անսառն են, մի քանի որից հետո կդնան հարեանին գոմակ անելու, այնպես չե:


Կանչեց ուրախ Հասոն, լծեց սայլը, նստեց և սայլի քիթն ուղղեց զեպի տուն, կրկին ու կրկին շնորհակալություն հայտնելով Սերոբին:

— Դեհ, զուրբան, քաշեք, հա քաշեք, մատաղ ձեր դոշին, ձեր վոտներին ջլեպինդ, հեյ, հեյ, հոյ, հոյ...

Ապա լավեց նրա զիւ բարձրանչյուն յերգը, թրքական մի անուշ տիսուր հորովիլ, վոր թնդացնելով սար ու ձոր հաղար ու մի արձագանքներով գնում տարածվում եր հեռու, հեռու...

Սերոբը գոհ սրտով, բլուրն իվար իջնող արեի հրապարական շողերի տակ, գերանդին ուսած, սկսեց բարձրանալ մարդաշատ զառիվերը: Մեծ ցանկություն զգաց ինքն ել հնչեցնելու մի ուրախ յերգ, բայց շատ ափսոսաց, վոր Հասոյի պես բարձր, զբնգուն ձայն չուներ...

1922 թ.



## ՆԱԽԿԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Նախկին վաճառական Մանուկյանը, խիստ հուզված քայլում եր սենյակում, ձեռները կանթել եր կոնակին, նիհար, ակոսավոր գեմքը խոժոռ, աչքերում ծով բարկություն:

«Զե, եղ չեղավ, են անիծածն իր ասածի տերն ե, չի լսում... Գոնե մի կամ յերկու հաղար մանեթ տային...

Մտմտաց նա, կանգնեց մի պահ, հայացը բեկոնց մի անոռոշ կետի և ապա կրկին քայլեց:

Դուռը մեղմիվ բացվեց, ներս մտավ միջահասակ լիքը մարմնով, կապտավուն գոգնոցով կինը, մոտեցավ պահարանին և ինչ վոր տեղավորեց այնտեղ:

— Հըմ, — ասաց Մանուկյանը դառնալով դեպի կինը, — տեսամբ ինչպես աղջիկը փոխվեց, ուր և նախկին ճեղ, համեստ ծուշանիկը, կոմյերիտ դարձավ թե չե, հոգով, սրտով փոխվեց, անվերջ կարդում եռ ու գրում, ծոտի, մոտի բաներով զրադգում, գիշերներն ուշ և տուն գալիս, ժողով ունի, գեկուցում, անզրագիտություն ե լուծարքի յենթարկում... յիս ինչ գիտեմ, հաղար ու մի զահրումար: Այժմ ել վորոշել ե գյուղ գնալ, գյուղացիների մեջ աշխատել...

— Դու չեյիր, վոր սկզբում հորդորեցիր նրան կոմյերիտ գրվել, — պատասխանեց կինը հուզված, հակատին թափված մաշերի փունջն ուղղելով:

— Յես զրդեցի կոմյերիտ դառնալ վոչ թե զիշերներն ուշ տուն գալու, սրա նրա համար աշխատելու, այժմ ել գյուղեր գըշնալու, այլ վորպեսզի մի լավ պաշտոն ձեռք բերի, համտան վարձը քիչ տանք, համ ել լավ սոճիկ ստանա, չես իմանում, վոր ժամանակները թարավել են, առևտուրի մեջ շահ չի մնացել, մեզ պես առևտրականի յերեսատեղ չկա, լավ փող ստացողներն այժմ կարմիրներն են կամ կարմրանման մարդիկ:

— Իսկ յիս չեյի ցանկանում, վոր աղջիկս նրանց մեջն ընկներ, վոր այսոր թողնի մեզ ու զնա, իմ միակ զավակը, — ասաց

կինը, սրբելով աչքերի խորքում պսպղացող արտասուրի կաթիւները:

— Յես նրան խրատեցի, վոր յերեսանց այնպես ձեացնի, վոր իբր կարմիր ե, նրանց խոսքերին ականջ զնի, բայց չնավատա, բերնով այն, իսկ սրտում վահ ասի, մինչեւ վոր մի լավ պաշտոնի տիրանա, տեսնենք վերջն ինչ կլինի: Բայց անիծածն այնպես ներկվեց, վոր իսկական կարմիր դարձավ: Ախաղեր, եղ կոմմունիստների բարողները՝ Քրիստոնի խոսքերից շատ զորեղ յեղան, հիմա աշխարհի մեծ մասը նրանց ե լսում: Մեր աղջիկն ել միշտ բանվորից ու գյուղացուց ե խոսում, բան ու գործ թողած՝ նրանց մասին ե մտածում, կազեթների մեջ ինչ վոր բաներ դրում, մեծ, մեծ բըթում, իսկ փաղ... մի քանի կոպեկ ե միայն տուն բերում...

— Հըմ, տիս, — հառաչեց կինը և նստեց թավշապատ բաղմոցում, ընկճպած, դեմքին մոայլ ամպ:

— Փողի մասին չի մտածում, հեջ, կարծիս միտք ունի ձրի աշխատել, մի քանի մասեթի համար այդքան գլուխը ցավացնել. զոնե մի բան ստանա՞ր, ամսական յերկու, յերեք հարյուր ոուբլի... Հիմա յել ուզում ե սար ու ձոր ընկնել, գյուղացիների մեջ աշխատել, եղ վոջլոտ, կեղտոտ, անրան անասունների մեջ, վայ ախմախ...

Մանուկյանը գլուխը ջղայնորեն շարժեց, ապա ձեռները շալվարի գրպաններում, մի քանի ցասկոտ հայացըներ նետեց այս ու այն կողմ և զլիարկն առնելով անից գուրս գնաց:

\* \* \*

Յերկու որ հետո, Շուշանիկը, մոտ քսան տարեկան, միջնակարգ դպրոցն ավարտած, բարեկազմ, խաժաչվի մի աղջիկ, ճանապարհորդական իրերն եր պատրաստում ու տեղավորում պայուսակի մեջ:

Յերեկո յեր, Ամառային պայծառ, տաք յերեկո, Սենյակում կանգնել եր գաղջ, խեղիչ ողը: Շուշանիկը թեերը քշտած մինչեւ արմունկներն աշխատում եր, հավաքում զրերը, թղթերը, բոլոր այն նյութերը, վորոնք անհրաժեշտ եյին գյուղերում աշխատելու համար:

Մայրը նստել եր թախտին և տիրամած աչքերով նրան եր նայում:

Դուռը բացվեց և շեմքին, սենյակի կիսալույսում պատկերվեց նոր մոայլ դեմքը:

— Հըմ, խելքի չեկար, ասած պիտի կատարես, հա՞ :

— Ե՞ն, հայրիկ, այդ մասին այլիս կարիք չկա խոսել, յես պարտավոր եմ գնալ, վորոշված ե, անհրաժեշտ ե, պիտի գնամ, — պատասխանեց Շուշանիկը սառնարյուն, առանց վլուխը բարձրացնելու, զրքերից մի կապոց կաղմելով:

— Վորոշումը հենց քեզ համար ե, ուրիշները փառավոր ունիկ ստանան, այստեղ նստեն, դու գնաս գյուղ աշխատելու...

— Յես շեշտեցի, վոր ավելորդ ե այդ մասին խոսել: Փյուղերը շատ են, կարիքը ծով, ուղարկվածները բազմաթիվ: Յես բացառություն չեմ կազմում:

Հայրը լսեց, ճակատի խորշումներն ամփրփիլեցին, արտահայտելով զայրույթ և մատհովություն:

— Մի աղջիկ ունեմ, այն ել ձեռքիցս առնում են, վայ իմ սկըախուր...

Մրթմթաց մայրը և վշտահար կոծեց ծունկերը:

— Ինչ պատահեց վոր, կգնամ ու նորից կվերադառնամ, — ասաց աղջիկը հանգիստ:

— Զե, չեմ ուզում, դու պիտք ե չգնաս, — ասաց մայրը հուսահատ:

— Այն, դու չպիտք ե գնաս, — ավելացրեց հայրը վճռական, — դա քեզ հարմար գործ չե:

— Տունս բանդում ես, չես իմանում, վոր առանց քեզ չեմ կարողանում ապրել:

— Զե, մայրիկ, դու պիտի ուրախ լինես, վոր աղջիկդ լավ, ոդտակար գործի յե գնում: Բացի այդ, մեզ մոտ յերկաթյա կարգավահություն ե, վոչ վոք իրավունք չունի վորոշումները խախտել:

— Լավ, իմացանք ձեր յերկաթե կարգապահությունը, բայց վորքան փող են տալիս, սկզբից մի հազար, յերկու հազար մանեթ կտան, վոր գնաս, — հոր աչքերը փոքրացան, սուզվեցին խոռոչների մեջ և փայլեցին ինչ վոր շողով:

— Այնքան կտան, վոր կարողանանք ապրել, ավելին ինչի յե պետք:

— Հըմ, — ասաց հայրը ջղայնորեն, — ուրիշները թող լավ գրստեն իրենց, այստեղ նստեն, իսկ դու այդքան քիչ փող ստունա և գյուղեր գնաս:

— Փողի համար խոմ չեմ գնում, վոր այդքան նեղ հաշիվ-

ների հետեւից ընկնեմ. գաղափարական գործում, դրամը յերկրորդական տեղն և գրավում:

— Դու գյուղի կյանքին չես դիմանա, փափուկ մեծացած աղջիկ ես, քեզ հարմար չե...

— Վոչինչ, մայրիկ, կվարժվենք, պետք և ամեն կյանքի սովորել...

— Լավ, լավ, գնա, — բրթմանաց հայրը հեգնոտ, — ձրի սրա նրա համար աշխատի, յերբ գյուղում վոջի, կեղտի, փեյինի, անսառնների պես անբան մարդկանց մեջ ապրես, այն ժամանակ կհիշես մեր խոսքերը...


Այս ասելով, Մանուկյանը մտավ մյուս սենյակ և գուրս չեկավ թեյելու: Իսկ Շուշանիկի մայրը, արցունքներն աչքերին, աղջում եր, թափանձում, վոր աղջիկը ձեռք վերցնի իր մտադրությունից, բայց վերջինս լուս, սառնարյուն, իրերն եր հավաքում ու կապկապում...

\* \* \*

Առավոտ վաղ, Մանուկյանը իր սենյակի պատուհանից նկատեց, թե ինչպես մարդատար ավտոմոբիլը յեկավ և կանգնեց իրենց տան առաջ: Մեջը նստել եցին յերկու ջահել տղա, կրծքներին կարմիր ժապավեն կարած: Քիչ հետո, Շուշանիկն իջավ պայուսակը ձեռին, մազերը կտրած, զլխին տղամարդու գտակ, նստեց տղաների կողքին և ավտոն սլացավ դեպի կայարան՝ թոշունի պես:

Մանուկյանը մի քանի րոպե նայեց ամայի փողոցի յերկայնքն ի վար և ապա գնաց մյուս սենյակը: Կինը նստել եր գտավորակին, զլուխը յերկու ձեռների մեջ, տարվել տիտոր մըտքերով:

— Հըմ, այ կնիկ, — ասաց ամուսինը ծանր, ծանր, — տեսամ աղջիկդ վոնց թուավ յերկու ջահել տղի հետ: Եղ անիծած բոլշեվիկները՝ մարդու հոգով, մարմնով մերում են, կարմիր ներկում: Նրանց հետ չի կարելի հանաք անել: Բայց գոնե մի կամ յերկու հազար մանեթ ես զլխից տային...



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Զեթ ծախող Ակո	3
2. Լաշակս զլիսիդ լինի թող	23
3. Ծուռ Վոսկո	32
4. Որիորդ Ռիմա	71
5. Հնավաճառ Ռսման	77
6. Մի մանկան կյանքից	89
7. Սողոմոնի ճաշարանում	111
8. Բորիս Զերաչևը խրամատում	119
9. Ռւստա Մարգարի մտմտուքը	132
10. Տեր Սիմոնը	137
11. Ռով ե մեղավոր	142
12. Հարեաններ	148
13. Նախկին վաճառականի ընտանիքում	154

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

*Մինչև այժմ զանազան ամսագրերում և հանդեսներում լույս են տեսել հեղինակի հետելյալ գեղարվեստական գրվածքներ.*

1. Անթառամ ծաղիկներ . . . . . (վեպ)
2. Կին մը . . . . . (պատմվածք)
3. Քեռին . . . . . »
4. Խավարի մեջ . . . . . »
5. Առաջին ձյուն . . . . . »
6. Պապաշան . . . . . »
7. Կնյազ Բագրածեն . . . . . »
8. Սայլապան Ոհանը . . . . . »
9. Մահկան թերթեր . . . . . (պատկեր)

### ԱՌԱՆՑԻՆ ԳՐՁՈՎ ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

*Ժողովածու յերկերի . . . . . I հատոր*

### ՊԱՏՐԱՍՎՈՒՄ Ե ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

*Ժողովածու յերկերի . . . . . II հատոր*

*Հեղինակի կամքից անկախ պատճառներով սպրուել են մի քանի սխալներ, վորոնցից կարևորներն են՝*

տպված հ	եջ	տող	պետք ե լինի
Բանդիմանուն	28	27	Բանդիմանուն
խրեց	23	21	խրեց
կան Վոսկոյին	38	18	Վոսկոյին
վոր քաղքին մեջ	40	16	քաղքին մեջ
վորովհետե	44	35	վորովհետե
խաթուն	68	16	խաթունը
այնես	85	8	այնպես
արհամարկոն	144	1	արհամարկոն

ԳՐԱՅԻ 1 Ռ. 20 Կ.

ՔԱՆԱԿՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ 20% ԶԵՂՃ

Դիմել ուլ. Դумбадзе (бывш. Вельяминовская) 14 Պետ-  
հրատի գրախանութ կամ հեղինակին Елизаветинская 74:

ՀՀ Ազգային գրադարան



NL0333359

31623